(ըստ Գ. հոլմ.)

Ասոնք մասնական անուններուն հետը կըբանին. Ո՞վ ոք. ո՞ ոք. ո՞ր ոք. ո՞ր ինչ. ու միատեղ կըհոլովին. ո՞յր ուրուք. ո՞ւմ ումեք. զո՞ ոք. ո՞յք ոմանք. զո՞յս ոմանս. յո՞յց կամ յորո՞ց ոմանց. որո՞ւմ իմիք, որո՞վ իւիք եւլն:

Ի՞նչ. Նախդրիւ կըբանի գրոց մէջ, յի՞նչ, առ-ի՞նչ, զի՞նչ: Ասոր սեռականն է որ աշխարաբար կըսենք, ընդէ՞ր, կամ ինչո՞ւ: Բայց զի՞նչը ուղղականի տեղ ալ կըբանի. զի՞նչ շահ է. դր ի՞նչ փայտայ է. զի՞նչ է այդ. առ ի՞նչ է: Իրմով ալ կրկնած կըսվի, զի՞նչ ինչ:

Մէկ քանի հարցական հոլովք կան՝ որ յատուկ

ուղղական մը չունենալով, կրնանք թիւրքին հոլովքը ըսել · Օր · սեռ · նէ՞յին · տրակ · նէ՞յէ կամ նէյէ · բաց · նէտէ՞ն · պատմ · նէ՞տէ, իբրեւ թէ՝ գլխէ՞ · գործ · նէ՞ իլէ · ասոնք կընշանակեն, ինչո՞ւն · ի՞նչ բանի · ինչէ՞ն · ինչո՞վ · ինչո՞ւ համար :

Քանի՞ · քանո՞յ կամ ույ · 'ի քանո՞յ · քանո՞վ :

Քանիք, քանեա՞ց · 'ի քանիս · քանեա՞ւք կամ օք :

Մինակ ալ կըբանի, ուրիշ բառի հետ ալ · Օր · Քանո՞յ գնեցեր · քանիի՞ ծախու առիր : Քանեա՞ց կանանց · քանի՞ կնիկներու :

Հարցական կերպով կըբանին ասոնք ալ · Ո՞րպի-սի · ի՞նչպիսի · ի՞նչ կերպ · նէ՞ թարզ : Ո՞րքան · ո՞րչափ · ի՞նչ ղըտար · նէ՞ գըտար : Ասոնց հոլովքը տես վարը : (49)

---

## 49 · Մերձաւորական անուանք :

Մերձաւորական անուն կըձեւանայ՝ երբոր աս բառե-րը պէս, քան, չափ, կըկապվին ցուցական կամ այլ դե-րանվան վերջը : Օր ·

Այսպէս, սոյնպէս · աս կերպ · պու թարզ · պէօյլէ :

Այդպէս, դոյնպէս · ատ կերպ · շու թարզ · շէօյլէ :

Այնպէս, նոյնպէս · ան կերպ · օլ թարզ · էօյլէ :

Ասոնց հոլովքը ըստ (29) Այսպիսւոյ · պիսում · պիսեաւ : այսպիսիք · պիսեաց · պիսեաւք կամ եօք :

Այսքան, սոյնքան · Այսչափ, սոյնչափ : ասխըտար · պու գըտար :

Այդքան, դոյնքան · Այդչափ, դոյնչափ : ատխըտար · շու գըտար :

Այնքան, նոյնքան · Այնչափ, նոյնչափ : անխըտար · օլ գըտար :

Ասոնցմէ քան ով ձեւացածը կըհոլովվի (ըստ 15) այսքանոյ, նով կամ նեաւ · այնքանիք կամ քանք, քա-նեաց · քանեաւք · (Տե՛ս 29)

Իսկ չափին հետ կապածը՝ սովորաբար նախդրիւ կըբանի · Օր · յայսչափ, զայսչափ · քիչ տեղ, այսչա-փից : Ասանկ իմանալու է վերը դրածն ալ, որքան, որչափ :

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

## Դերանուան վրայ.

50. Երկրորդ մասն բանի կըսուի Դերանուն. որ անուանի տեղ դրուող բառ մը. ուստի ունի Թիւ, հոլով, հոլովումն։

Ունի մէկ աւելի բան մը, որ Դէմք. որ զատ զատ անձ, կամ բանին կարգը, սորան կըցուցանէ. ու երեք են, առաջին, երկրորդ, երրորդ։

Առաջին դէմ է խօսողը, երբոր իր անուան տեղը ես կըսէ։ Երկրորդ դէմ է որուն հետ որ կըխօսի, ու անունը տալու տեղը՝ դու կըսէ։ Երրորդ դէմ է որու վրան կըխօսի, ու անոր անունը ըսելու տեղը կըսէ՝ նա, ինքն, իւր։

Նմանապէս բանին կարգը կու սորան կըցուցանեն, երբոր անձ մը կամ իրք մը երկու խօսողին մօտ է, կըսէ՝ աս, այս, սոյն։ Այն որ լսողին մօտ է, կըսէ դա, այդ, դոյն։ Ան որ երկու խօսողէն ալ հեռու է, կըսէ՝ նա, այն, նոյն։

51. Զորս կերպ կըբաժնուի դերանունը. էական, ցուցական, որ վերի գրածներն են. ստացական, որ վերիններէն կըշինուի. յարաբերական, ու աս մէկն է՝ որ։ Ամէն դերանուններու արմատը, քեօքը՝ աս երեք գիրն է, ս, դ, ն, ու ասոնք են պատճառ որ դերանունը դէմք ու կարգ կըցուցանէ. սն առջի դէմքը ու կարգը կըյայտնէ. դն՝ երկրորդը, նն երրորդը։ Ասոր համար աս երեք գիրը կըսենք՝ դիմորոշ յօդ։

Ուրիշ բառերու վերջը կպչելով, անոնց դէմքը կամ կարգը կըցուցանէ; կամ թէ աւելի ուժ և զարդ կուտայ։ Անուններուն վերջը աշխարաբար ալ կըբանեցընենք՝ երբ կըսենք, գլուխս, գլուխդ. որ կիմացուի՝ իմին գլուխը, քուկին գլուխը։ Երբ կըսենք, Արքայս, կիմացուի, աս որ թագաւոր է, կամ աս թագաւորը, կամ իմին թագաւորը։ Արքայդ, դու որ թագաւոր ես, կամ ատ թագաւորը, կամ քու թագաւորը։ Արքայն, նա որ թագաւոր է, կամ ան թագաւորը, կամ անոր թագաւորը։

Առանց դերանուանց, բայերուն, և ուրիշ մասանց ալ ձայնը փակչելով ուժ կուտայ. ինչպէս. զոր ես առնեմ. աս որ ես կընեմ՝ զոր ես արարի. ան որ ես ըրի։ զոր դու ասես. ատ որ դուն կը-սես։ զոր ասէմ, կմ ասէք. ան որ կըսեմ, ատ որ կըսես։ Ասոր նման պէտի իմացվի ուրիշ տեղեր ալ՝ որ քերականութես մէջ շատ անգամ կըբերենք։ (տես. 372։)

Հիմակ բուն դերանուանց հոլովմունքը դնենք կարգով։

## 52. Անձական Դերանուանք։

### Առաջին Դէմք։

| | Եզակի. | | | Յոգնի. | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ուղ. | Ես. | ԵՍ. | Պէն. | Մենք. | ՄԵՆՔ. | Պիզ. |
| Սեռ. | իմ. | ԻՄ. | պէնիմ. | մեր. | ՄԵՐ. | պիզիմ. |
| Տրա. | ինձ, ցիս, առիս. | ԻՆԾԻ. | պանա. | մեզ, ցմեզ, առ մեզ. | ՄԵԶԻ. | պիզէ. |
| Հայց. | զիս. | ԻՍ. | պէնի. | զմեզ. | ՄԵԶ. | պիզի. |
| Բաց. | յինէն. | ԻՆԾԷ. | պէնտէն. | 'ի մէնջ. | ՄԵԶԷ. | պիզտէն. |
| Գործ. | ինև. | ԻՆԾՄՈՎ. | պէնիլէ. | մեւք։ | ՄԵԶՄՈՎ. | պիզիլէ։ |

### Երկրորդ Դէմք։

| | Եզակի. | | | Յոգնի. | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ուղ. | Դու. | ԴՈՒՆ. | Սէն. | Դուք. | ԴՈՒՔ. | Սիզ. |
| Սեռ. | քո. | ՔՈՒ. | սէնին. | ձեր. | ՁԵՐ. | սիզին. |
| Տրա. | քեզ, ցքեզ, առ քեզ. | ՔԵԶԻ. | սանա. | ձեզ, առ ձեզ. | ՁԵԶԻ. | սիզէ. |
| Հայց. | զքեզ. | ՔԵԶ. | սէնի. | զձեզ. | ՁԵԶ. | սիզի. |
| Բաց. | 'ի քէն. | ՔԵԶԷ. | սէնտէն. | 'ի ձէնջ. | ՁԵԶԷ. | սիզտէն. |
| Գործ. | քեւ. | ՔԵԶՄՈՎ. | սէնիլէ. | ձեւք։ | ՁԵԶՄՈՎ. | սիզիլէ։ |

Դիտողութիւն. Աս երկու դերանուանց յոգնակի գործիականը՝ շիտակ գրելու է ՄԵՒՔ, ՁԵՒՔ. ետքի ատենը մոլեր է գրել, ՄԵԱՒՔ, ՁԵԱՒՔ. անկից ալ եղեր է, ՄԵՕՔ, ՁԵՕՔ։

## ԵՐՐՈՐԴ ԴԷՄՔ:

| | Եզակ. | | Յոգն. | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Ինքն. | Ինքը. | Ինքեանք. | Իրէնք. |
| Սեռ. | ինքեան. | Իրէնը. | ինքեանց. | Իրէնցը. |
| Տր. | ինքեան, առ ինքն. | Իրէն. | ինքեանց, առ ինքեանս. | Իրէնց. |
| Հայց. | զինքն. | Զինքը. | զինքեանս. | Զիրէնք. |
| Բաց. | յինքենէ. | Իրմէն. | յինքեանց. | Իրէնցմէ. |
| Գործ. | ինքեամբ. | Իրմով: | ինքեամբք: | Իրէնցմով: |

Դիտելիք. Դերանունս՝ ինքն, մինակ երրորդ դէմք կըցուցանէ. մէկալ դերանուանց հետը բանի նէ, ամէն դէմքի և կարգի կըծառայէ, և միատեղ կըհոլովի. զոր օր. ես ինքն, իմ ինքեան, մեր ինքեան: Դուն ինքն, քո ինքեան, քեզ ինքեան: Նմանապէս կըլլայ՝ Սա ինքն, սորա ինքեան. նա ինքն, նորա ինքեան եւլն:

## ԱՅԼ ԵՐՐՈՐԴ ԴԷՄՔ:

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | (չունի) | | ....... | |
| Սեռ. | իւր. իւրեան. | Իրէնը. | իւրեանց. | Իրէնցը. |
| Տր. | իւր, իւրեան, առ իւր. | Իրէն. | իւրեանց. | Իրէնց. |
| Հայց. | (չունի) | | ....... | |
| Բաց. | յիւրմէ. | Իրմէն. | յիւրեանց. | Իրէնցմէ. |
| Գործ. | իւրև, իւրեամբ. իւրեաւ. | Իրմով. | իւրեամբք. | Իրէնցմով: |

Դիտելիք. Դերանունը իւր՝ եականի պէս չունի ուղղական և հայցական՝ թէ՛ եզակի, թէ յոգնակի. բայց երբոր ստացական առնըվի նէ, ասոր ինքը ուղղական է. ինչպէս վարը կըտեսնես: (54) Այս պաղի տեղ յոգնակի Իւրեանք, զԻւրեանս. որ աւելի աշխարաբար է: Ասոր հոլովքը, ինչպէս ինքն դերանուանն ալ՝ չորրորդ հոլովման նման է: (20)

---

## 53. Ցուցական Դերանուանք.

Երկու կերպ ցուցականն որ վերը յիշեցինք, (50) Սա, Դա, Նա, կըցուցանեն անձ մը կամ իրք մը. զոր օր. աս մարդը կամ բանը. ատ մարդը կամ բանը. ան մարդը կամ բանը. կամ տաճկերէն՝ շու քիմսէ, շու

չէ ևն. ուստի լնգերերնին կըցանին: Իսկ Այս, Այդ, Այն, կըցուցանեն միայն՝ աս, ատ, ան. ուստի կըսենք՝ այս կեանք. այդ այր. այն փառք: Նմանապէս Սոյն, Դոյն, Նոյն, աւելի սաստիկ կըցուցանեն, ամբողջ աս, ամբողջ ատ: Ասոնց հոլովմունքը:

| | Եզակ. | | Յոգն. | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Սա. | Ասիկա. | Սոքա. | Ասոնք. |
| Սեռ. | սորա. | ասորր. | սոցա. | ասոնցր. |
| Տր. | սմա, առ սա. | ասոր. | սոցա, առ սոսա. | ասոնց. |
| Հայց. | զսա. | ասիկա. | զսոսա. | ասոնք. |
| Բաց. | 'ի սմանէ. | ասկէ. | 'ի սոցանէ. | ասոնցմէ. |
| Գործ. | սովաւ. | ասով. | սոքաւք կամ օք: | ասոնցմով: |

Նմանք կըհոլովին մէկանոնք ալ. Դա, դորա. Դոքա, դոցա: Նա, նորա. Նոքա, նոցա. ևն: Ասոնց յոգնականը քիչ տեղ կըլլայ՝ Սայք, սայց. Դայք, դայց. Նայք, նայց:

| | Եզակ. | | Յոգն. | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Այս. | Աս. | Այսք, այսոքիկ. | Ասոնք. |
| Սեռ. | այսր, այսորիկ. | ասորր. | այսց, այսոցիկ. | ասոնցր. |
| Տր. | այսմ, այսմիկ, առ այս. | ասոր. | այսց, այսոցիկ, առ այսոսիկ. | ասոնց. |
| Հայց. | զայս. | զաս. | զայսոսիկ. | զասոնք. |
| Բաց. | յայսմանէ. | ասկէ. | յայսց, յայսցանէ. | ասոնցմէ. |
| Գործ. | այսու, այսուիկ. | ասով: | այսոքիւք, այսոքիմբք: | ասոնցմով: |

Նմանք կըհոլովին՝ Այդ, այդր կամ դորիկ. այդք ևն: Միայն այնին յոգնական նախդրիւը կընայ ըլլալ՝ յայնս, զայնս. իսկ այդին չըլլար՝ յայդս, զայդս. Թէ որ տեղ մը յայսս, զայսս, գտնվի նէ, այսին յոգնակին չէ, այլ կամ եզակի այն դիմորոշ յօդ է, կամ թէ անուն է, այս, այսոց, որ սատանայ կընշանակէ. ու նախդրիւ յոգնակին կըլլայ՝ յայսս, զայսս:

Դիտողութիւն. Ասոնց եզակի գործիականը՝ լաւ ձեռագրաց մէջ գրած կայ՝ այսիւ, այդիւ. այնիւ. պակսի տեղ ալ՝ այսով, այդով, այնով. իրենց հնչումը մօտ ըլլալուն համար կերպ կերպ կըգրվի: Յոգնականն ալ երբեմն կըգրեն՝ այդոց, այնոց. այսուք, այդուք, այնուք. բացառականն ալ՝ յայսցանէաց, յայդցանէաց, յայնցանէաց:

| | Եզակ. | Յոգն. |
|---|---|---|
| Ուղղ. | Սոյն. | Սոյնք, սոքին. |
| Սեռ. | սորին, սորուն. | սոցին, սոցուն, սոցունց. |
| Տրա. | սմին, առ սոյն. | սոցին, առ սոսին, առ սոյնս. |
| Հայց. | զսոյն. | զսոյնս, զսոսին. |
| Բաց. | (չունի) | 'ի սոցունց. |
| Գործ. | սովին, սովիմբ: | սովիմբք, սոքիմբք. սոքումբք: |

Ասանկ կը հոլովին, Դոյն, դորին. դոյնք, դոքին, դոցին եւն: Նոյն, նորին. նոյնք, նոքին, նոցին եւն:

Ասոնց եզակի բացառականը պէտք ըլլայ նէ, կըսենք՝ 'ի սոյն, 'ի սմին. գր. 'ի սոյն օրէ. աս օրվանէս. 'ի սմին տեղւոջէ. աս տեղէս: Զգուշանալու է չհոլովել, սոյնոյ, սոյնով, սոյնոց եւն:

---

## 54. Ստացական Դերանուանք:

Ստացական կիմացվի այն դերանունը՝ որ իրեք դէմքին ունեցածը կընշանակէ. ուստի կըձեւանայ եական և ցուցական դերանուանց սեռականէն, որ կըլլայ նոր ուղղական մը, ու նորանց կը հոլովի: Տեսանք վերը որ եականներուն եզակի և յոգնակի սեռականը կըլլայ իմ, մեր. քո, ձեր. իւր, իւրեանց. Նմանապէս ցուցականներունը՝ սորա, սոցա. դորա, դոցա, նորա, նոցա: Ասոնք կըլլան զատ ուղղական, և կը հոլովին ըստ Գ. հոլով. եզական և յոգնական. օրինակի համար մէկը հոլովենք:

| | Եզակ. | | Յոգն. | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | իմ. | իմին. | իմք. | իմիններ. |
| Սեռ. | իմոյ. | իմինին. | իմոց. | իմիններուն. |
| Տրա. | իմում, առ իմ. | իմինի. | իմոց, առ իմս. | իմիններուն. |
| Հայց. | զիմ. | իմինը. | զիմս. | իմինները. |
| Բաց. | յիմմէ. յիմոյ. | իմինէն. | յիմոց. | իմիններէն. |
| Գործ. | իմով. | իմինով. | իմովք: | իմիններով: |

Ասանկ կը հոլովին մէկալները:

Մեր. մերը, մերին. մերոյ, մերում, զմեր, 'ի մերմէ. մերով: մերք, մերոց, զմերս, 'ի մերոց, մերովք:

Քո․ քուկին․ քոյ, քում, զքո, 'ի քումմէ, քով։ Քոյք, քոց, զքոյս, 'ի քոց, քովք ։

Ձեր․ ձերը, ձերին․ ձերոյ, ձերում, զձեր, 'ի ձերմէ, ձերով։ Ձերք, ձերոց, զձերս, 'ի ձերոց, ձերովք ։

Իւր․ իրենը․ իւրոյ, իւրում․ զիւր․ յիւրմէ, իւրով։ Իւրք, իւրոց, զիւրս, յիւրոց, իւրովք ։

Սորա․ ասորը․ սորայոյ, սորայում, զսորայն, 'ի սորայոյն․ սորայով։ Սորայք, սորայց, սորայոց, զսորայսն, 'ի սորայոց, սորայովք ։

Սոցա, ասոնցը․ սոցայոյ, սոցայում, զսոցայն, 'ի սոցայոյն, սոցայով։ Սոցայք, սոցայոց, զսոցայսն, 'ի սոցայոց, սոցայովք ։

Դորա․ ատորը․ դորայոյ, րայում․ րայով։ Դորայք, րայց կմ րայոց․ րայս, րայովք ։

Դոցա․ ատոնցը․ դոցայոյ, ցայում, ցայով։ Դոցայք, ցայց կմ ցայոց, ցայովք ։

Նորա․ անորը․ նորայոյ, րայում․ րայով։ Նորայք, րայց կմ րայոց, րայովք ։

Նոցա․ անոնցը․ նոցայոյ, ցայում․ ցայով։ Նոցայք, ցայց կմ ցայոց, ցայովք ։

Ասոնց ուղղականը կմ հայցականը ՍԴՆ գիր ունենայ ծայրը նէ, իրենը չէ, գիտցող յոդ է․ ու սովորաբար անանկ կըրանին այլ հոլովքն ալ․ որպ սորայս, դորայդ, նորայովդ, 'ի նորայոցն ևն ։

55․ Գիտելի․ Կան ուրիշ ստացական՝ որ վերի բուն ստացականներէն կելլեն ։ Մէկ մը՝ անոնց ուղղականին կըփակչի աս մասնիկը ին․ որպ իմային, մերային, ճերային, իւրային կամ իւրենցային․ Նշանակութիւնը մէկ է, և ասոնք ալ կըհոլովին անոնց պէս, որպ իմայոյ կմ իմայնոյ, իմայով, իմայինք, իմայոց, իմայովք․ ևն․ կամ իւրենցայոյն, իւրենցայոց ևն ։ Աղէկ գրուածքի մէջ՝ աւելի առանց նուէ կըսեն՝ իմայոյ, մերայոյ, քան թէ իմայնոյ, մերայնոյ ։

Մէկ մընալ ին մասնիկը անոնց սեռականին կըփակչի, իմոյին, քոյին, մերոյին, ձերոյին, իւրոյին ։ Ասոնք նախադրիւ միայն կըլլան եզակի և յոգնակի․ որպ յիմոյին, զիմոյին, իմոյինք, զիմոյինս, ևն ։

Միայն քոյնը ունի իրեն զատ հոլովք. Ու քոյդ, քոյում. 'ի քոյդ. քոյով. Քոյինք, քոյոց, զքոյինս. 'ի քոյոց, քոյովք:

---

## 56. Յարաբերական Դերանուն:

Այս պզտի բառը՝ որ, և իրեն կրճատը՝ ո, կըվի յարաբերական դերանուն, անոր համար որ խօսքի մէջ եղած վերի կամ վարի անունը՝ կամ այլ բառ առաջ կըբերէ, անոր տեղը կըդրուի, ու ամէն դէմքի ալ կըծառայէ:

Իրենց հոլովքը կըլլայ հարցականին պէս. (48) Ու որդ, որը, որում, ում. զոր, զո, յորմէ, կամ յորդ. յումմէ. որով: Որք, որոց, ույց, զորս, զոյս, յորոց, յույց, որովք:

Ասոր ուժը և գործածութիւնը կուզես իմանալ նէ, մէկ քանի օրինակ տանք:

* Ես եմ որ խօսիմ. ‖ (Ես եմ որ կըխօսիմ կոր:) հոս եսին տեղը դրուեցաւ:

* Դու՞ ես որ գալոցն ես. ‖ (Դո՞ւն ես որ գաս պիտի): հոս դուն առաջ բերաւ:

* Զյովսէփ զայրն Մարիամու՝ յորմէ ծնաւ Յս: ‖ Յովսէփ Մարիամայ էրիկը՝ որունմէ ծնաւ Յս. հոս յորմէն առաջ բերաւ զՄարիամը, ու անոր տեղը դրուեցաւ:

* Որ 'ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ բանն. ‖ հոս վարի անունը առաջ կըբերէ. Ու այն բանն կամ խօսքը՝ որ հրեշտակներու ձեռքով խօսուեցաւ:

---

## Վարժութիւն.

57. Աշակերտը երբոր անվանց և դերանվանց ամէն կերպը, հոլովքը սորվեցաւ միտք առաւ նէ, պէտք է երկու քանի վարժութիւն տալ որ սերտածները աղէկ իմանալով, միտք պահէ ու բանեցընէ: Մէկ մը տըրվի իրեն գրաբառ խօսքեր, որ աշխարաբար դարձընէ, ու մէկին մէկին ընտրէ թէ ինչ անուն կամ դերանուն է, ո՛ր հոլով և հոլովումն

է , կամ ինչ Թիւ է : Մէկմալ տըրվի աշխարաբար խօսքեր , որ ինքը անոնց գրաբառը շինէ : Աս եր-կուքին ալ մէկ քանի օրինակ դնենք , որ անոնց կեօրէ վարժապետն ալ ընել տայ աշկերտին բեր-նովըլլայ , գրովըլլայ :

## Գրաբառը Քննել ու ընտրել :

(1) * Յաւուրս Հերովդի արքայի : ‖ Հերովդէս Թագաւորին օրերը :

(2) * Յերկրէ քումմէ , յազգէ քումմէ : ‖ Քու երկրէդ , քու ազգէդ :

(3) * Ինձ որ տրուպս եմ ամենայն սրբոց : ‖ Ինծի որ ամէն սուրբերուն (կամ հաւատացեալներուն) էն ցածն եմ :

(4) * 'Ի տաճարէ սրբոյ իւրմէ : ‖ Իրեն սուրբ տաճարէն :

(5) * Զօրութբ եւ փառօք բազմօք : ‖ Ուժով ու շատ փառքով :

(6) * Յո՞ ով 'ի ձէնջ հայր : ‖ Ձեզմէ ո՞ր հօրը :

(7) * 'Ի խաւարէ 'ի լոյս , 'ի մահուանէ 'ի կեանս : ‖ Խաւարէն՝ լուսին , մահէն՝ կեանքին :

(1) Յաւուրս , յոգնակի նախդրիւ տրական կամ ներգոյական օրին . Հերովդի , յատուկ անուն սեռական . արքայի , հասարակ անուն եզակի սեռական , երկուքն ալ առջի հոլովման :

(2) Յերկրէ , յազգէ , երկուքն ալ հասարակ անուն՝ եզակի բացառական , երկրորդ հոլովման , իրենց ուղղականը՝ երկիր , ազգ : Նմանապէս քումմէ եզակի բացառական քո ստացական դերանուան :

(3) Ինձ , եզակի տրական եսին . որ ուղղական յարաբերական՝ ինչը առաջ կըրբերէ . տրուպս , ածական անուն ուղղական , ս-ն գիմորոշ յօդ . ամենայն , հանրական անուն եզակի ուղղական , բայց սեռականի մտքով . սրբոց յոգնակի սեռական սուրբ ին , երրորդ հոլովման :

(4) 'Ի տաճարէ , եզակի բացառական , ուղղականը՝ տաճար , երկրորդ հոլովման : սրբոյ , եզակի բացառական առանց նախդրի , ուղղականը սուրբ , երրորդ հոլովման . իւրմէ , ստացական իւրին եզակի բացառականը :

(5) Զօրութբ , եզակի գործիական , ուղղականը զօրութիւն , չորրորդ հոլովման : փառօք , յոգնակի գործիական անեզական անվանը փառք : բազմօք , յոգնակի գործիական ածական անվանը բազում , երկուքն ալ երկրորդ հոլովման :

(6) Յո՛ ով , եզակի նախդրիւ տրական հարցականին ո՞ ով : 'Ի ձէնջ , յոգնակի բացառական երկրորդ դէմքի դերանվանը դու , դուք : հայր , եզակի նախդրիւ հասարակ անվանը հայր , հօր . որ պիտի ըսէր . ցո՛ ով հայր 'ի ձէնջ :

(7) 'Ի խաւարէ , եզակի բացառական , ուղղականը խաւար , երկրորդ

(1) * 'Ի նմանէ, և նովաւ, և 'ի նոյն ամենայն։ Անձն բանը անկէց, ու անով, ու անոր, (կմ իրեն։)

---

## 58. Աշխարհաբարը դարձընել գրաբառ։

| Աշխարհաբար. | Գրաբառ. |
|---|---|
| Թագաւորին վախէն։ | Յերկիւղէ արքային։ |
| Աղէկ կարգով։ | Բարւոք կարգաւ։ |
| Մարդը երկու բանէ, հոգի-էն, մարմինէն։ | Մարդն յերկուց իրաց, 'ի հոգւոյ, 'ի մարմնոյ։ |
| Ած ստեղծօղ, մարդը ստեղծ-ուած։ | Ած՝ արարիչ, մարդն՝ արարած։ |
| Այ ծառայելը՝ մարդուս փառքն։ | Պաշտօնն Այ փառք մարդուն։ |
| Երկան լեզուն՝ կարճ խելքի նշան։ | Լեզու երկայն՝ կարճ մտաց նշանակ։ |
| Մունջերուն լեզուն՝ ձեռքը։ | Լեզու համրոյ՝ ձեռնն։ |
| Առաջինէն տղուն անունը՝ Պետրոս։ | Անուն անդրանկին՝ Պետրոս։ |
| Երկու մանչ, երեք աղջիկ։ | Երկուս ուստերս, երիս դստերս։ |
| Ամէնը հինգ զաւակ։ | Ընդ ամենն հինգ որդի։ |
| Անոնցմէ մէ՞կը աղէկ։ | Մի 'ի նոցանէ բարի։ |
| Ան որ խօսք մտօղ, ամչկոտ։ | Նա որ հնազանդ, ամօթ-խած։ |
| Երկու ձեռքով բանուկ։ | Յերկոցունց ձեռաց աջո-ղակ։ |
| Մէկը քսանըչորս տարվան։ | Մին քսանև չորից ամաց։ |
| Միւսը՝ տասնըութը։ | Միւսն՝ ութուտասանից։ |
| Իրենց դէմքը՝ մէկ, ու բա-րքերնին՝ պաշխ։ | Կերպարանք խորեանց՝ նոյն, բարք նոցա՝ այլ։ |

հոլովման. 'Ի լոյս, եզակի նախդրիւ տրական, ուղղականը լոյս, լուսոյ, երրորդ հոլովման։ 'Ի մահուանէ, եզակի բացառական, ուղղականը մահ, մահու, հինգերորդ հոլովման։ 'Ի լերանց, յոգնակի նախդրիւ տրական, անեզական անվանբս լեառն, լերանց, երկրորդ հոլովման։

(1) 'Ի նմանէ, եզակի բացառական. նովաւ, եզակի գործիական ցուցական դերանվանը։ 'Ի նոյն, եզակի նախդրիւ տրական նոյն ցուցականին։ ամենայն, հանրական անուն՝ եզակի ուղղական։

Ամէն մարդ իւր իրէն բարեկամ , իւր իրէն թշնամի : | Ամենայն մարդ անձին խորում բարեկամ , անձին խորում թշնամի :

Իմին այսչափ խօսքը՝ հերիք քեզի : | Այսքան բանք իմ բաւական քեզ :

Աս օրինակներուս կէօրէ կրնայ վարժապետը նման խօսքեր ձեւացընել , աշակերտին առջեւը դնել , նոյն աւելի ան բառերով ըլլայ որ քերականութեանս մէջ գրած է : Նոյն վարժութիւնը տալու է՝ երբոր բայերը եւ մէկալ մասունք բանին կըսորվի աշակերտը :

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## Հարկաւոր գիտելիք Անուան վրայ :

Անուան վեց պարագաները կարճ խօսքով դրինք են առաջ . (2) կըմնայ այլ գիտնալու բաները հոս ծանուցանենք . որ աշակերտը անվանց հոլովմունքը սերտելէն ետքը աղէկ ու դիւրին կըհասկընայ , ու շուտ միտք առնելու համար՝ հարցում ու պատասխանով դնենք :

### Անուան բաժանումը :

59. Հց. Անունը պլինտառաջ քանի՞ կըբաժնըվի :
պտս. Երկու , Գոյական և Ածական :
Հց. Գոյական անունը ո՞րն է :
պտս. Ան է որ բուն իրք մը , բան մը կընշանակէ , ու մինակ լսելով կիմացվի . ինչպէս Մարդ , Ջուր , Երկաթ , Միտք , Գիտութիւն եւն :
Հց. Ածականը ո՞րն է :
պտս. Ան է որ բանի մը տեսակ անանկ ըլլալը կընշանակէ , ու մինակ չիմացվիր , կուզէ ուրիշ անունի քով դրվիլ . ինչպէս Բարի , Չար , Կարծր , Արդար , Երկնային . զերէ երբոր Բարի ըսենք նէ , կուզէ

քովը անուննալ իմանալու՝ թէ ո՞ր բանը բարի է ; մարդ մի, խօսք մի, գործք մի ։

60. Հց. Ինչո՞վ ճանչնալու է՝ որ անունը գոյական, որը ածական ըլլալը ։

Պտ. Դիւրին կանոնը աս է . առաջ գիտնալու է անունին նշանակութիւնը . ետքը նայէ որ հետը կրնա՞յ մի ըսվիր բան բառը . թէ որ ըսվի նէ, ածական է . թէ որ չըսվիր, գոյական է . ինչպէս կըսենք սովորաբար, աղէկ բան, գէշ բան, անուշ բան, շիտակ բան . իմացիր որ՝ աղէկ, գէշ, անուշ, շիտակ, ածական են ։ Բայց չենք ըսեր, աղէկութիւն բան, անուշութիւն բան, կամ աթոռ բան, հաց բան, կրակ բան . ասով կիմանաս որ աղէկութիւն, անուշութիւն, աթոռ, հաց, կրակ, գոյական են ։ Օրինակ քեզի տրուած անունը . որ մէկ մը կընշանակէ՝ ստեղծած իրք մը, բանին շէնքը . աս մտքով չըսվիր՝ շէնք բան, կիմանաս որ գոյական է ։ Մէկ մալ կընշանակէ՝ ըրած, եղած . աս մտքով կըսվի տրուած բնութիւն . իմացիր որ ածական է ։

61 Հց. Ուրիշ նշանով կրնա՞նք մի ընտրել գոյականը՝ ածականէն ։

Պտ. Հրամմեցէք . շատ անուն իրենց վերջքէն կիմացվի . անոնք որ կըվերջանան ութիւն, ում, ումն, ուստ, իստ, ուրդ, անք, ոց, սովորաբար գոյական են . զ. օ. բարութիւն, գոչումն . լալիւն, փախուստ, հանգիստ, ժողովուրդ, պարծանք, խարտոց ։

Իսկ անոնք որ կըվերջանան որ, ին, կան, ղին, եալ, ող, ելի, յատուկ ածական են . զ. օ. երկնաւոր, երկրային, մարմնական, հոգեղին, սիրեցեալ, սիրող, սիրելի ։

Ասոնցմէ զատ՝ միջական անունները (38.) ցուցական և ստացական դերանունք (53, 54) ամէնը ածական են ։ Իսկ դերանունք էական, ցուցականքը աս, դա, նա, և յարաբերականը որ, ասոնք գոյական են ։

62. Հց. Ածականը միշտ գոյական մը ունի՞ իր քովը ։

Պտ. Շատ անգամ յայտնի չիկայ, այլ զօրութեամբ, իր ծածուկ տակովը կիմացվի . երբոր կը-

սենք, Այդ բարի սիրելի է, ածականը բարի՝ ունի գոյականը այր: Բայց երբ ըսենք, բարին է սիրելի, հոս գոյականը զօրութիւն կիմացուի, որ բարի մարդն կամ գործն:

63. Հց. Հինչ կըլլայ՞ որ ածականը գոյականի պէս բանի:

պտ. Հրամմերես. կայ անուն որ շէնքին կողմանէ ածական է, բայց գոյականի պէս կըբանի, ու զատ ածական ալ կունենայ. ինչպէս՝ Բժիշկ, շէնքը նայինէ՝ բժշկող, ողջացընող ըսել է, կամ բժշկութիւ գիտցող, ու ածական է. բայց սովորաբար կընշանակէ՝ հէքիմ, որ գոյական է, ու կըսուի՝ Բժիշկ ճարտար, վարպետ հէքիմ:

Մէկմալ կըլլայ որ եզակին ածական է, ու յոգնակին կըլլայ գոյական. ինչպէս Հայրենի, Հօրենական ըսել է, ածական է. բայց Հայրենիք, Հօրը երկիրը, օջը, ստացուածքը կընշանակէ, գոյական է:

## Ածական անուան բաժանումը:

64. Հց. Ածական անունը կըբաժնուի՞:

պտ. Հրամմերես. սովորութիւն եղեր է իրեք բաժնել, դրական, բաղդատական, գերադրական:

Հց. Դրական ածականը ո՞րն է:

պտ. Ան է որ բանի մը սանկ, անանկ ըլլալը պարզ ինք իրեն կընշանակէ, առանց ցըցնելու ինչխըտար ըլլալը. որ բարի, լուսաւոր, մեծ ևն, մինակ կընշանակեն բանի մը բարի, լուսաւոր ըլլալը. բայց չեն ցուցաներ՝ ինչխտար բարի կամ լուսաւոր է:

Հց. Բաղդատական ածականը ո՞րն է:

պտ. Ան է որ դրականին նշանակութիւնը կըմեծցընէ, քան զուրիշը աւելի ըլլալը կըցուցանէ:

Հց. Հապա գերադրականը ո՞րն է:

պտ. Ան է որ դրականին նշանակութիւնը էն եօքի չափը կըմեծցընէ, քան զամէնը աւելի ըլլալը կըցուցանէ:

65. Հց. Հիմա ըսէ ինծի, դրական ածականը ի՞նչպէս կըլլայ բաղդատական և գերադրական:

պտ. Այս լեզու, ինչպէս հոռմին ու լատինը,

որ աննշան մասնիկ մը կցելնելով դրականին՝ կընէ բաղդատական և գերադրական. ինչպէս Հոռոմին բաղդատականին՝ տէրօս, գերադրականին՝ տատօս: Լատինը բաղդատ. իօր, գերադրականին՝ իսսիմուս. օր. գրավիս, ծանր. գրավիօր, տահա ծանր. գրավիսսիմուս, խիստ ծանր: Իթալիան լեզուն յատուկ իրմէն չունի զատ մասնիկ, այլ լատինէն կառնէ: Իսկ մեր Հայու լեզուն աս կերպը հիչ չունի, ինչպէս տաճկինն ալ չունի. ասոր համար վերը ըսի թէ սովորութիւն եղեր է իրեք բաժնել, նայելով Հոռոմին ու լատինին:

66. Հց. Ատանկ է նէ, մենք ի՞նչպէս կիմացընենք բաղդատականը ու գերադրականը:

Պտ. Բաղդատականը մէկ մը կըշինենք գոյն բառը կցելնելով վերջը. մէկ մըն՝ առաջքը կամ վերջքը դնելով սաստկացընող բառ մը առանց կըցցնելու. ուստի վերի դրականները՝ բարի, լուսաւոր, մեծ, կըլլան բաղդատական՝ բարիգոյն, լուսաւորագոյն, մեծագոյն: կամ, առաւել բարի, ևս լուսաւոր, մեծ ևս. որ ըսել է՝ տահա բարի, աւելի լուսաւոր, տահա մեծ:

Նմանապէս գերադրական կընենք՝ մէկ մը դրականին կամ բաղդատականին ալ առաջքը կցելնելով ամե, գեր, մեծ, երից կամ ևս. օր. ամենաբարի, այսինքն խիստ բարի. ամենամեծ. այսինքն էն մեծը. գերամաքուր, խիստ մաքուր. մեծափառագոյն, փէք փառաւոր. երիցփափաքեան, շատ փափաքելի. ևսամեծ, էն մեծը: Մէկ մըն՝ դրականին կամ բաղդատականին քովը դնելով ուրիշ սաստկացընող բառ մը. օր. ևս մեծագոյն, վեհագոյն ևս, չարի թշուառին, յոյժ զօրաւորագոյն, անհնարին չար, ամենևին գեղեցիկ, երիցս աւելի:

Այս ուրիշ կերպ ալ՝ որ դրականը կըկնելով կըդրուի կպուցած, կամ մէկմէկու մօտ. օր. մեծամեծ, չարաչար, ծանր ծանր, նոր նոր, սուրբ սուրբ ևն:

## Գոյական անուան բաժանումը:

67. Հց. Գոյական անունը քանի՞ կըբաժնըւի:
Պտ. Իրեք, Յատուկ, Հասարակ, Հաւաքական:
Հց. Յատուկ անունը ի՞նչ է:

պտխ. Ան է որ մէկ եզական իրք մը նշանակելու գրուած է, մարդ մը, քաղաք մը, կամ ուրիշ տեղ մը: որ. Ադամ, Նոյ, Աբրահամ, Տրդատ, Նարայ, Սասուն, Աղէն, Հայաստան, Մասիս, Տիգրիս. եւլն:

հց. Հասարակ անունը ի՞նչ է:

պտխ. Ան է որ գրուած է շատի ալ, մէկի ալ ըսելու. որ. մարդ, քար, լեռ, քաղաք, հովիւ եւլն. զերէ մարդ, քար՝ հէմ շատ մարդու եւ քարի կըսուի, հէմ մէկի ալ:

հց. Հաւաքական անունը ո՞րն է:

պտխ. Ան է որ եզական ձայնով շատ բանի միատեղ կըսուի, զատ զատ մէկի մը չըսուիր. որ. ժողով, ազգ, բանակ, հօտ եւլն: Ասանկ անունները շատի մէկէն կըսուին. մէկ մարդու չըսուիր ժողով կամ ազգ, մէկ զինուորի չըսուիր բանակ: Բայց որովհետեւ շատ ժողով, շատ ազգ կրնայ ըլլար, ատոր համար յոգնակի ունին, ժողովք, ազգք եւլն:

68. հց. Կրնա՞յ ըլլար որ յատուկ անունը հասարակ ըլլայ, կամ հասարակը ըլլայ յատուկ:

պտխ. Յատուկ անունը թէեւ շատի ըսուի, միշտ յատուկ կըմնայ. ինչպէս Յովհաննէս, Գրիգոր, Անտոն, շատ մարդու կըդրուի, բայց միշտ եզականի մտքով:

Իսկ հասարակ անունը երբոր մէկ եզական մը ցուցանելու համար առնըւի նէ, կըլլայ յատուկ. ինչպէս Վարդ, Շուշան, ծաղիկը իմանանք նէ, հասարակ է. բայց երբոր մարդու կամ կնկան անուն, կըլլայ յատուկ:

69. հց. Ածական անունը չի՞ բաժնըւիր յատուկ, հասարակ եւլն:

պտխ. Նայելով ածականին նշանակութիւնը, միշտ հասարակ է, մէկի ալ՝ շատի ալ կըսուի: Միայն պազի ածական երբոր մարդու անուն դրուին նէ, կըլլայ յատուկ. ինչպէս Սրբուհի ածական է, գոյականի հետ կըբանի, սրբուհի կոյս. բայց կնկան յատուկ անուն կըլլայ:

70. հց. Անուան բաժանումը բաւական սորվեցար. կուզե՞ս ուրիշ բաներն ալ սորվիլ:

պտխ. Հրամերես. կըբաղձամ անուան Պարագայքը տեղնիտեղը գիտնալ:

Հց. Խիստ բարի. աղաչ ընէ նայիմ, ի՞նչ կիմանաս պարագայ:

Պտ. Կիմանամ ան կերպը կամ ան մասնաւոր բաները որ անուան վրայով կըմտածուի, ու անոր շէնքը կամ փոխուիլը կըհասկըցնէ:

Հց. Քանի՞ պարագայ ունի անունը:

Պտ. Սովորածիս կէօրէ վեց պարագայ է. Սեռ, Ձեւ, Տեսակ, Թիւ, Հոլով, Հոլովումն. կըխնդրեմ որ մէկիկ մէկիկ ինծի հարցընես:

---

## Սեռք Անուան:

71. Հց. Անուան սեռը ի՞նչ է, և քանի՞:

Պտ. Սեռ ըսել է, և կիմացուի թէ անունը մը ինչ սօյ բան կընշանակէ, ուստի չորս կըբաժնըուի. Արական, Իգական, Հասարակ, Չէզոք:

Հց. Արականը ո՞րն է:

Պտ. Այն յատուկ կամ հասարակ անունն է՝ որ միայն արուի կամ էրքէկի կըսուի. ինչպէս Մովսէս, Պետրոս, կամ հայր, եղբայր, աներ, քեռահայր, Թագաւոր, կամ ցուլ, եզն, աքաղաղ ևն:

Հց. Իգական անունը ո՞րն է:

Պտ. Այն է որ միայն էգի կամ մէկի կըսուի. ինչպէս Մարիամ, Կատարինէ, Սողոմէ. կամ Մայր, Քոյր, զոքանչ, քեռամայր, դշխոյ. կամ կով, էգն, մարի ևն:

Հց. Հասարակ անունը ո՞րն է:

Պտ. Այն է որ արուի ալ, էգի ալ կըսուի. ինչպէս Մարդ, որդի, Թոռն, Թռչուն, ոչխար, ձի, կամ Մարգարէ, Երգեցիկ ևն:

Հց. Հապա չէզոք անունը ո՞րն է:

Պտ. Այն անունները որ հիչ մէկը չեն նշանակեր, այսինքն ոչ արու, ոչ էգ. սաանկ են բնական ու շինծու բաներու անուանքը. նմանապէս գիտութեանց, առաքինութեանց, մոլութեանց անուանքը. օր. Ջուր, օդ, հող, Մարմին, Ծառ, Քար, Հոգի, Փառք, Աթոռ, ևն:

72. Հց. Այս սեռքը ո՞ր անուան վրայ կըմտածուի, գոյականի՞ն թէ ածականին:

Պտ. Իւրեն գոյական անունի կըվայլէ. բայց ածականին ալ կըսուի երբոր արուի կամ էգի, կամ երկուքին ալ կըպատշաճի. ինչպէս Ծեր, աղքատ, կանանի,

անունք երիկ մարդու միայն կըսուին, արական են ։ Իսկ պառաւ, մանկամարդ, մայր, արամբի, ծնուցիչ ևն, կնկան միայն կըսուին, իգական են ։ Ա՛ն կայ ածականք որ երկուքին ալ կըսուին, հասարակ են ․ ինչպէս բարի, դժբաղդ, երէց, կրտսեր, գեղեցիկ, տգեղ, իմաստուն ևն ։

73․ Հց․ Հասարակ անունը երբոր ուզենք արուի կամ էգի վրայ իմանալ նէ, ի՞նչպէս կըզատենք ։

պա․ Ո՛րովը կըդնենք ուրիշ բառ մը ․ զր․ ձուկը հասարակ է ․ երբոր երիկ մարդ կուզենք իմացընել նէ, կըսենք այր ձուկ ․ երբոր կընիկ, կըսենք՝ էգ ձուկ ․ ասանկ կըսենք՝ արու առիւծ կամ աղուանի, մատակ ձի, աղջիկ տղայ ։

74․ Հց․ Ի՞նչ անուան վերջքէն ալ կըզատուի՞ արականը ու իգականը ։

պա․ Հրամերես ․ կայ մէկ քանի վերջք որ հռոմէն կամ եբրայականէն մնած է ․ անոնք որ էս, ոս կըվերջանան նէ, արական են ․ ա, է վերջացածը՝ իգական ․ զր․ յովհաննէս և յովհաննա ․ հերովդէս և հերովդիա ․ յուստինոս և յուստինէ ․ անտոնիոս և անտոնիա ․ ևն ։

Կան ուրիշ բառեր կամ մասնիկներ որ անուան ծայրը դրուելով, իգական կընեն ․ ինչպէս ենի, ուհի, անոյշ, դուխտ ․ զր․ վարդենի, վարդանուհի, վարդանոյշ, սահականոյշ, խոսրովիդուխտ ․ որ կընշանակեն՝ վարդին կամ վարդանին աղջիկը, սահակայ կամ խոսրովի աղջիկը ևն ։

Ասոնց մէջը աւելի կըբանի ուհի մասնիկը, յատուկ կամ հասարակ անուան կպչելով ․ զր․ Տիգրանուհի, տիգրանայ քոյրը ․ Աշղամդէուհի, Աշղամդէսի քոյրը ․ Քրմուհի, քուրմի կնիկ, կամ քուրմ կնիկ ․ մարգարէուհի, մարգարէի կնիկ, կամ մարգարէ կնիկ ։ Քահանայուհի, իրիցկին կամ քահանայ կնիկ ․ վկայուհի, մարտիրոս կնիկ ․ խնամուհի, խնամացի կնիկ ։

---

## Ձև անուան ։

75․ Հց․ Անուան ձևը ի՞նչ է ։

պա․ Արմատի մէկ անուանին կերպը, ձևուածքը,

պինչումը, երբոր մտածենք թէ անունը ինքիրմէ՞ն է, թէ ուրիշմէն ձեւացուցած է։

Հց. Քանի՞ է անվան ձեւը։

Պխ. Երեք. պարզ, բարդ, բաղադրեալ։

Հց. Պարզ անունը ո՞րն է։

Պխ. Այն է որ ուրիշ բառէ խառնուած չէ, ու սկիզբն ալ չէ փոխուած, այլ իրեն բունը կը պահէ. ինչպէս հոգի, լոյս, տուրք ևլն։

Հց. Բարդ անունը ո՞րն է։

Պխ. Այն է որ նշանական բառերով կապած, մէկ անուն եղած է ձայնաւոր գրով մը՝ ա, ե, է. օր. սա բառերէն՝ հոգի, բնակ, լոյս, խրատ, պարգեւ ևլն, կը կապվի՝ հոգաբնակ, հոգելոյս, հոգէխրատ, հոգէպարգեւ։ Երբոր երեք բառէ կապած ըլլայնէ, կըսվի յարաբարդ. ինչպէս դաբանաւէր, որ շինած է սա երեքէն, դ, բան, աւէր։

76. Հց. Բաղադրեալ անունը ո՞րն է։

Պխ. Այն է որ առաջքը ունի գիր մը կամ աննշան մասնիկ մը առանց ձայնաւորի կապած։ Ասանկ գիրը կամ մասնիկը կըսվի բաղադրական, ու ետեւի անվան նշանակութիւնը կամ ներհակը կըփոխէ, կամ կըմեծցընէ, ու շատն ալ գոյականը ածական կընեն։ Ասանկ մասնիկ դերանվան հիչ չիփակչիր։

Հց. Ատոնք ո՞րն են՝ ըսէ տեսնեմ։

Պխ. Նշանակութիւն փոխող մասնիկը կըսենք եղծական. և ատոնք են. ա, ան. կամ ամ, տ, չ, բ։ Իսկ սաստկացընողը, շ, ըն, ըմ, ըմբ։ Ատոնց օրինակը. Կամայ, ակամայ. օր. նաչարի։ Ծուխ, ածուխ. օր. քէօմիւր որ մուխ չի հաներ։ Արատ, անարատ։ Բաւ, անբաւ կամ ամբաւ։ Գեղ, տգեղ։ Կար, տկար։ Գոյ, չգոյ։ Ողջախոհ, բողջախոհ։ Ողջ, բողջ։

Իսկ սաստկացընողքը, Ինչ և շինչ։ Աչացու և շաչացու։ Արդ և շարդ։ Ոստ, օր. ցաթկելը. ըմբոստ, դուրս ցաթկող, գլուխ քաշող։ Բեր. ըմբեր։ Թաց, ընթաց։

77. Հց. Ասոնցմէ զատ ուրիշ բաղադրական մասնիկ չիկա՞յ մի։

Պխ. Կան մէկ քանի մը որ յատկապէս բաղադրական չեն, ինչու որ կամ իրենք զատ նշանակութի

ունին, և կամ ձայնաւորով կըկապվին բառին սկիզ-բը, ու երբեմն բառին վերջն ալ կանցնին. ու ա-սով աւելի բարդ անուն կընեն, քան թէ բա-ղադրեալ ։

Հց. Ըսէք նայիմ ո՞րն են ատոնք ։

պտ. Ատոնք են. դժ կամ տժ. ան. ապ. արտ, տար. բաց. հակ. համ կամ հոմ. բաղ կամ ճաղ. բազ կամ բաջ. պար. շար. մակ. ներ. տի. ու իւրաքանչիւրը կերպ կերպ կըփոխեն նշանակութիւնը ։ զբ. Պատեհ, դժ-պատեհ ։ Գոհ, տժգոհ ։ Ըան, ապաքան ։ Այլ, ար-տակայ ։ Ակաց, տարակաց ։ Յայտ, բացայայտ ։ Ճառ, հակաճառ ։ ձայն, համաձայն ։ անուն, հոմանուն ։ դատ, բաղդատ ։ առեալ, բաղառեալ ։ գայ, պարագայ ։ գիր, մակագիր ։ կուռ, ներկուռ ։ կին, տիկին ։

78. Հց. Ըաղադրեալ անունը բաւական գիտես եղեր. հիմա բարդ անուններին մէկ քանի գիտնալիքը հարցընեմ ։ Ո՞ր բառերէն կամ մասանց բանին կըլ-լայ բարդութիւն ։

պտ. Առաջ աս կըսեմ որ՝ ինչ մասունքէն բար-դութիւն ըլլայ նէ, ամէնը անուն կըսեպվի ։ Իսկ թէ որէն կըլլայ, Շաղկապէն և Միջարկութենէն հիչ չըլլար ։ Ըայէն ալ՝ միայնով բայ չըլլար, այլ անոր արմատէն կըլլայ ։ Մնացած մասունքներէն ամէնէն կըլլայ բարդ ։ ինչպէս .

Դերանունէն, որ միշտ առաջ կըդրվի. զբ. ինքնա-ծին. մերաչէրդ. ժոյնաշունչ. ինքնագործ. նոյնագոյ. ա-սանկ են վերբերական անվանքը. այսպէս, որքան, այնչափ ևն ։ (49)

Ըայից արմատէն, որ անունին վերջը կըդրվի. զբ. Մարդատեաց, ոսկեհայեաց, աշխարհակեցոյց, ևն ։

Ընդունելութէն, որ առաջ ալ, վերջն ալ կըդըր-վի. ինչպէս ընտրեալ, օրհնեալ, երգելի, կըլլայ՝ ընտրե-լակեց, ամենօրհնեալ, բազմերգելի ։

Նախադրութէն ու Մակբայէն, որ միշտ առաջ կըդրվին. ինչպէս նախադիր, ընդ, առ, կըլլայ՝ ընդ-արձակ, առաջնորդ ։ մակբայէն՝ արդ, միշտ, դեռ, կըլ-լայ, արդիւնական, մշտական, դեռաբոյս ։

79. Հց. Ասանկ բարդած անվանքը գոյակա՞ն են, թէ ածական ։

պտ. Սովորաբար ածական կըլլան՝ թէ և իրենց պարզը գոյական ըլլայ. ինչպէս արծաթ, ոսկի, երկաթն ալ գոյական են, բարդը՝ արծաթասէր, ածական է ։ Ուրիշ բարդ կայ որ բարդութեան մէջ գոյական մնայ. զր. ժամանաչափեր, անձրևաջուր, ջրհաղացներ ։

80. Հց. Ի՞նչ նոյն մէկ անունէն կըլլա՞յ մի բարդ ։

պտ. Հրամերես. շատ միավանկ անուն ինքիրմով կըբարդըվի՝ նշանակութիւնը սաստկացընելու համար. ու աս կըլլայ մէջը ձայնաւոր դնելով, կամ առանց անոր ալ. զր. ծեծածեծ. չարաչար. դեղադեղ. պէսպէս. արծարծ. վաղվաղ. ծործոր ։

Ասանկ բառերուն երբեմն ետքի կէս առջի գիրը կըձգվի, ձայնը անուշցընելու համար. կամ թէ ուրիշ բաղաձայն մը կըխօթվի. ինչպէս առջինին օրինակ՝ աս անվանքը փոխ, տար, հեղ, կրկնելով կըլլան՝ փոփոխ, տատար, հեղեղ. ասանկ են՝ կակաղ, թոթով, շոշափ, թաթաւ, որ պիտի ըլլար, կաղկաղ, թովթով, շաղփշաղփ, թաւթաւ ։ Ետքինին օրինակ՝ յար, աղխ կրկնելով կըսենք՝ յարմար, աղխամաղխ, որ կիմացվի՝ յարյար, աղխաղխ ։

81. Հց. Երբոր այլևայլ անունէ կըլլայ բարդութիւնը, հի՞նչ փոփոխութի՞ւն կըլլա՞յ մի ։

պտ. Հրամերես. իրեք կողմանէ փոփոխութիւն կերևնայ. զր. թուոյն, հոլովքին, և հոլովման ։

Հց. Թուոյն կողմանէ ի՞նչպէս փոփոխութիւն կըլլայ ։

պտ. Պարզ անուն մը որ սովորաբար եզակի չիբանիր, (112) բարդութեան մէջը առաջ դրվի, վերջը դրվի, եզական կըբանի. ինչպէս փառք, կամք, միտք, հրաշք, մեղք, կըբարդըվին՝ փառասէր, մեծափառ. կամաչար, յօժարակամ. մտայոյզ, բարձրամիտ. հրաշակերտ, նորահրաշ. մեղապարտ, բազմամեղ ։

82. Հց. Հոլովքին կողմանէ ի՞նչ փոփոխութի՞ւն կըլլայ ։

պտ. Ետքի դրած անունը չի փոխվիր սովորաբար. բայց առջևի անունը՝ ինչպէս որ կըփոխվի սեռականը նէ, անանկ կըմտնէ բարդութեան մէջ, ձգելով ետքի ձայնաւորը կամ վանկը ։ Ասոր այն անվանք որ առանց փոխվելու՝ միայն ձայնաւորով մը

կըլլան սեռական, ձգելով նոյն ձայնաւորը կըմիանան ետեւի անվանը. ինչպէս Բան, բանի, իին ձգելով կըբարդըվի՝ բանաւէր. նմանապէս Գործ, գործոյ, ձգելով ոյն կըբարդըվի, գործատնեայ։ Իսկ անվանք որ կըփոխվին իրենց սեռականին, անանկ կըմնան բարդութեան մէջ, ձգելով յետի ձայնը, կամ ձայնաւորը. ինչպէս օգուտ, սեռ. օգտի, կըբարդըվի՝ օգտակար։ Անանկ՝ Իղձ, ըղձի, ըղձադատամ։ Հուր, հրոյ, հրաւէտ։ Մանուկ, մանկան. մանկավարժ։

Կայ որ սեռականը լման կըպահէ բարդութեան մէջ, կամ ուղղական կըդըվի, կամ գործիական. որ. Աստուած եւ Աստուածածին. Արեանարբու, եւ արեանարբու. Վրէժխնդիր եւ վրիժառու. Կնաւէր եւ կնոջաւէր, կանացածին. Աստղագէտ եւ աստեղագէտ։ Այրակերպ եւ առնակերպ։ Տանուտէր եւ տնարար։ Ձեռակերտ եւ ձեռնակերտ, ձեռբակալ, գործիականէն ձեռամբ։

Իսկ անվանք որ յոգնակի կըբանին՝ հոլովականով ալ կըբարդըվին. ինչպէս, Մեղագործ եւ մեղսագործ. Օրինադիր եւ օրէնսդիր։ Ասոր վրայ շատ այլ գիտնալիք կայ ընդարձակ քերականութեան մէջը. (Համար 578։)

83. Հց. Ապա հոլովման կողմանէ ի՞նչ փոփոխութիւն կայ բարդութեան մէջ։

Պխ. Հասարակ բարդութեան մէջ ետքի անունը միայն պիտի հոլովվի նէ, շատ անգամ կըլլայ որ պարզ անունը կըփոխէ իրեն հոլովումը. անանկ որ Երդ եւ Հինգերորդ հոլովման անվանքը կըլլան առջի կամ երկրորդ հոլովման պէս. որ. Բոյս, բուսոյ, բարդածը խոտաբոյս, կըհոլովվի՝ խոտաբուսի, սից։ Գործ, գործոյ. Բարեգործ, բարեգործի, ծաց։ Զէն, զինու. Սպառազէն, զինի, զինաց։

Ասանկ իմանալու է բաղադրեալ անվան վրայ ալ. որ Անգործ, ծի, ծից կամ ծաց. Անզէն, զինի, զինաց։ Անարատ, տի, տից, եւ ոչ տոյ, տոց։

Կայ մէկ փոփոխութիւն մըն ալ, որ պարզը մինակիքէն չի հոլովվիր (132), կամ յոգնակի չի բանիր նէ, բարդութեան մէջ կըհոլովվի յոգնակի ալ. որ. գուն, գար, գոյն, մինակ չեն հոլովվիր. բայց կըհոլովվին ածա-

ղան, նի, նից։ Խելագար, րի, րաց. ընտանեայլ, փայ-
լի, լից։ Նոյն յոյս, սէր, միայն յոգնակի չեն բանիր.
բայց կըլլայ՝ Յուսոյ, յուսայոյսք, յուսից. սիրոյ.
սիրոյսք, սից կամ սաց։ Արեւէր, սիրաց։

84. Հց. Ինչո՞ւ համար ըսիր, հասարակ բարդութեան մէջ ետքի անունը միայն կըհոլովուի. հապա առջի անունն ալ հի՞չ չի՞ հոլովուիր։

պտ. Միտքըս աս է՝ որ հասարակ ըսելով իմացընեմ երբոր երկու բառը կապուին ա, ե, է, ի, ձայնաւորով. զէրէ ասանկ բարդածին ետքի անունը միայն կըհոլովուի. ինչպէս վերը դրած բառերուն վրա կերեւայ։ Բայց կայ որ՝ ու, և, ձայնաւորով կըկապուի. ան ատենը կընայ առջինն ալ հոլովուիր. ինչպէս այրուձի կամ այրեւձի կըլլայ՝ այրուձիոյ, կամ առնուաձիոյ, առնեւձիոյ, ղայրեւղձի։ Նոյնպէս կամ եղե-նաւոր, կըլլայ՝ եղեռնաւոր, ղեղեռնաւոր։

85. Հց. Կապող ձայնաւորը ե՞րբ է, է, կըդրուի։

պտ. Ան ատենն որ առջի անունը ի կըվերջանայ. օր. Բարի, բարեկամ. Գերի, գերեդարձ, գերեվար. Որդի, որդեգիր։

Բայց առանց ասոր ալ կըլլայ որ այբին տեղը է, ե դրուի. ինչպէս՝ Աղաջար, աղանիաղ, Ծնած ըսելուն՝ կըսենք, ապիկար, ապենիազ. քնէած։ Ասանկ կըլլայ՝ կորագլուխ և կորեգլուխ. գլխաբաց և գըլխեբաց։

86. Հց. Երբոր առջի անունը ձայնաւոր վերջանայ, կամ ետքինը ձայնաւոր պաշլայէ նէ, ան ատենը կապող ձայնաւոր կըդրուի՞ մի։

պտ. Շատ կերպով կըլլայ. կայ որ ետքինին ձայնաւորը կապ կըլլայ. օր. Բանաւորգել. Բաշխերան. Դծծնաւոր. հաստա ևն։ Կայ որ երկուքին ձայնաւորն ալ կըպահուի. օր. Բարեատեայ. Հոգեընկալ։

Բայց շատն ալ առջինին կամ ետքինին ձայնաւորը կըձգուի. օր. Հոգեհրգող. Բարեբար, տր բարի արար. Գենարբու կամ գինեարբու. տր գինի արբու. Բարեւաց, տր բարի ասաց. Ազաշխար, տր ազգ աշխար։

Ասանկ տառ մը կամ վանկ ալ ձգել կըլլայ երբեմն՝ բառը կարճ կամ անուշ գալու համար. ինչպէս Նաւակայս ըսելուն՝ կըսենք Նաւակայս. փոխարէն

տեղը՝ փողոց․ արտահանածին՝ պղնձուած․ ճարտարա-սանին՝ ճարտասան ։ Այսպէս ալ անուններն բարդա-ծը կըսենք, ձեթոր, ադամեան, յորդոր էլ ։

## Տեսակք անուան ։

87․ Հց․ Անուան տեսակը ի՞նչ է, և քանի՞ ։
Պտ․ Ան է որ անունը իր տեսքովը պահելի, կամ թէ տեսքը փոխուած ըլլայ․ ասոր երկուք է, նախադիր և ածանցական ։
Հց․ Ո՞րն է նախադիր անունը ։
Պտ․ Ան է որ իրեն բուն շէնքը ու նշանակութիւնը կըպահէ․ ինչպէս երկիր, երկին ։
Հց․ Ածանցական անունը ո՞րն է ։
Պտ․ Ան է որ մէկ աննշան մասնիկ մը ունենալով վերջը կպած՝ կըփոխէ անուան շէնքը ու նշանակութիւնը․ ասանկ մասնիկ՝ գիր մը ըլլայ, վանկ մը ըլլայ՝ կըսուի ածանցականներ․ ինչպէս երկրաւոր․ երկնային․ հոս մասնիկքը աւոր, ին, ածանցականներ են, միջի այբը կապող ձայնաւոր է ։
88․ Հց․ Ածանցական անունը ինչո՞վ կըզատուի բաղադրեալ և բարդ անուններէն ։
Պտ․ Անով որ բաղադրեալը իր առաջքը կունենայ աննշան մասնիկը առանց կապող ձայնաւորի․ ինչպէս անլոյս․ (76) իսկ ածանցականը վերջքը կունէ աննշան մասնիկը կապող ձայնաւորով․ ինչպէս լուսաւոր ։ Բարդ անուններն ալ կըզատուի, որ ան նշանակուն բառով կապուած է․ (75) ինչպէս լուսաբեր, սրբալոյս ։ Ասոր բարդ ու բաղադրեալ անունը՝ տեսակին կողմանէ նախադիր է․ իսկ սալթ ածանցականը՝ ձեւոյն կողմանէ պարզ է ։ Չորսին ալ օրինակ առմ․ ջուր, պարզ և նախատիպ է․ անջուր, բաղադրեալ նախատիպ․ ջրաւէտ, բարդ նախատիպ․ անջրաւէտ, բաղադրեալ, բարդ, ածանցական՝ ալ մասնիկով ։ Իսկ թէ որ սալթ ջրաւ բառը նայինք, կըլլայ պարզ ու ածանցական ։
89․ Հց․ Նախատիպ անունը ի՞նչ կանոնով կըմիանայ աննշան մասնիկին հետը ։
Պտ․ Անունին բարդութեան կանոնով կըլլայ․ թէ մէկ մը ձայնաւոր կապ ունի ա, է, ու ․ (75) Մէկ

ման՝ նախադասութիւնը իր սեռականովը, կամ ուղղականո-
վը կամ անանախդիր հայցականով, երբեմն ալ գոր-
ծիականով կըփակչի մասնիկներն. (82. 127) վարի
օրինակներովը կերևնայ բացածըս։

90. Հց. Ածանցականակերտ մասնիկները ո՞րն են և ի՞նչխըրատար, ըսէ նայիմ։

պտ. Որովհետև անիմաստ մասնիկ պիտի ըլլայ, պէտք առաջ գուցս համելու են այն մասնիկքը որ մինակ ալ բան կընշանակեն. ինչպէս տըտ, ձև, չէնք ըսել է. ցան, կերպ. նար, ուժ. գար, աւրած. եայ, խօսք. ուն, ուժ՝ ունիմին արմատը։ Ասոնք ա-սոնցմէ բարդ անուն կըլլայ, չէ թէ ածանցական. որպ. Աստուածարդ. հրաշալուն. օգտակար. ցասագար. խաբե-բայ. գիտուն. խօսուն ևն։

Մնացած մասնիկքը որ աւելի անիմաստ են, շատ կերպ կայ, ու նախադասութիւն նշանակութիւնը կերպ կերպ կըփոխեն. կան ալ որ նշանական ըլլալու կարծիք կուտան. և ասոնք են. ած. եմ. ուած. ակ. ակն. այ. այն. ան. անդակ. ատ. ատ. ար. աց. գին. գի. եակ. եայ. եան. եաց. եկ. եղ. եղի. եղէն. եմ. եշտ. եստ. էն. էց. ընդակ. թիւն. ծէտ. ծոտ. ի. իւ. իկ. իճ. իմ. ին. իչ. իստ. իտ. իր. իքն. լի. կան. կեր. կէն. կի. կին. կոտ. կու. ճան. նակ. նի. նոց. շի. ոգ. ող. ոց. ոյթ. ոյկ. ոյն. ոյր. ոյց. ոնց. ոտ. ոտի. որ. որդ. ոց. ու. ուկ. ուհի. ունդ. ունի. ունչ. ուչ. ուստ. ուտ. ուրդ. պան. պանէկ. ստան. տակ. րան. րեմ. րորդ. ցի. ցու. ուէտ. ուոր. փէայ. օթ. օն. օտ։

91. Հց. Այս մասնիկքը քանի՞ կերպով կըփոխեն անվան նշանակութիւնը։

պտ. Կարճ ըսելով, տասներեք կըդնենք, և ա-սոնք են. 1. Հայրանունական. 2. Ազգական. 3. Գոր-ծողական. 4. Արտադրական. 5. Անձնականական. 6. Պա-րունակ. 7. Ունականական. 8. Արտածական. 9. Նուաղա-կան. 10. Յարանուն. 11. Մերձական. 12. Նմանա-կան. 13. Ստացական։

92. Հց. Հայրանունականը ո՞րն է։

պտ. Ան է որ կըփակչի հօրը կամ ազգին անուա-նին, կամ քաղքին, կամ վարպետին. որպ. Աբրահա-մեան. Պօղոսեան. Քրիստոնեայ. Երուսաղէմցի. բա-

քելացի, Արշակունի. Խուժէք. Պղատոնական. Արե-ւի. Քաղկեդոնեա։

93. Հց. Սեռականը ո՞րն է։

պտ. Այն է որ ունեցողին անուանը կըփակչի, կամ անոր հետ հաղորդութիւն մը, խնչիկ մը ունի. զր. Հոգեկան. եղական. արեւելեայ կամ արեւելեան. կամոյ. ուրկոլայ. վաղորդեայն կամ վաղորդայն. կարեւոր. գործաւոր. հողեղէն. առաւօտեան. մեղացեալն. մերոյն. քոյին. առնացի. յայտնի. արմաւենի. երկաթի. առնի կամ արանցի. աղանի. մորթի. ընէք. նաւազնացէք. եռաչխուհեակ. գեղջուկ։

94. Հց. Գործողականը ո՞րն է։

պտ. Այն է որ նախատիպին կպչելով՝ անոր ընողը կամ գործիքը կընշանակէ. զր. Սղոց. խորոց. կշռորդ. ցանցորդ. խթան. պատան. վիրապատ. բացարան. պահակ կամ պահնակ. ուղղչակ. մարտք. սրբիչ. պատերազմիկ. ուտիճ. արբու. այցելու. աղաչաւոր. յաղթական. տեսուչ. ընկալուչ. պահակէր. գործի. ողորմած։

95. Հց. Արդիւնականը ո՞րն է։

պտ. Այն է որ նախատիպին եղածը կընշանակէ. զր. Արարած կամ արարուած. շինած կամ շինուած. դիպուած. զանգուած։ Ասկէց ալ կրկին ածանցում կըլլայ. զր. կռած և կռածոյ. կոփած և կոփածոյ։

96. Հց. Յարմարականը ո՞րն է։

պտ. Այն է որ նախատիպին փակչելով անոր յարմարութիւնը կամ տակ ինկնալը կըցուցանէ. զր. Մահացու. կիզանուտ. անառիկ. անդարձ. կամիկ. անցական. զարմանաւոր. հաճոյ. անուղղայ. օժանդակ կամ օժընդակ. վտարանդի։

97. Հց. Պարունակը ո՞րն է։

պտ. Այն է որ նախատիպին տեղը կամ ծածկոցը կըցուցանէ. զր. Արքայարան. ծաղկոց. հիւրանոց. ծառաստան. կայան. պատեան. սանտառան. ընկուզուտ. կացուրդ. տապան. ձեմելի։

98. Հց. Ստացականը ո՞րն է։

պտ. Այն է որ նախատիպին ունեցողը կընշանակէ սեռականին պէս. զր. Թեւաւոր. բանական. բազ-

մաչկայ · երկթեւեան · լեզուանի · ծարաւի · անուանի, մնացի · խոհեմ · ուշիմ · մտերիմ · հաւատարիմ · դիպան · իմոլան · իւրեանցան · կարօտ · ծանօթ · զգօն · կտրօն · արդասու · հասակ · եակ, գոյակ · գանձանակ · ձախող · նկարէն · բաժին · աղտաղտէն · հատոր · մոլոր · պարոյր · պարոյկ · ողջոյն · բոլորշի ։

99. Հց. Ստացականը ո՞րն է ։

Պտ. Ան է որ նախատիպին շատութիւն կցուցանէ. որ. զուարթագէն · աշեղ · աղտեղի, մեղի · այգաւէտ · ծաղկոտ · զազրոտի · հասու · ազդոյ · խաղաղոտ · փաղփաղուն · ծակոտկէն · յաղթկու · ցասկոտ · խորխորատ · սքանչելի ։

100. Հց. Նուաղականը ո՞րն է ։

Պտ. Ստացականին դէմ, նախատիպին նշանակութիւնը պզտիկցընել մը կընշանակէ. որ նաւակ · անուշակ · պատանեակ · ձորձիկ · դստրիկ · այրուկ · մակոյկ · ականջակ · ծայրակ · այրի ։ (Երկրնէն պակսած ։)

101. Հց. Յարանունը ո՞րն է ։

Պտ. Ան է որ նախատիպին մէկ յարումը մը, հաւէս մը կցուցանէ. որ գինեձան · խրախճան · ախտաժէտ · նենգաւոր · պագշոտ ։

102. Հց. Մերայականը ո՞րն է ։

Պտ. Ան է որ նախատիպին նշանակութիւնը վերացեալի պէս կցուցանէ. որ մուալլէֆը. որ. ազատութիւն · գողութիւն · հնչիւն · կորուստ · ձանձրոյթ · հարած կամ հարուած · գովեստ · հրաժեշտ · համբերութիւն · յագուրդ · կրօն · շնորհակ · զայրոյթ · ուռոյցվրիպակ · յիշատակ · հրաւիրան · պատուհաս · ներբողեան ։

103. Հց. Նոյնականը ո՞րն է ։

Պտ. Ան է որ նախատիպին նշանակութիւնը շատ կամ քայտնի չփոխեր. մէկմէկու տեղ կըրանին նոյն մտքով. որ. կոյս և կուսան · կերպ և կերպարան · խառն և խառնակ · թշուառ և թշուառական · տխպ և տխպար · գէջ և գիջին · կենդան և կենդանի · կշիռ և կշռորդ · երեկ և երեկոյ · օտար և օտարոտի · դի և դիակն · գումար և գումարտակ · ծեր և ծերունի · վայել և վայելուչ · անջուր և անջրդի ·

անտոհմ և անտոհմէկ · նոր և նորոգ · անտէր և անտէրունչ · ամէն և ամենայն · դոյզն և դուզնաքեայ · կաթ և կաթիլ ։

104 · Հց · Թուականը ո՞րն է ։

պտ · Այն է որ վերը յիշած մէկ քանի մասնիկ կը միանան թուական անունի, ու անոր նշանակութիւնը շատ կամ քիչ կը փոխեն · ինչպէս իր տեղը խօսեցանք (40 · 43) զր · միակ · երկեակ · քառորդ · չորրորդ · երեքին · հնգապատիկ · երիր ։ կիս միական · նախկին կիս նախկի · առաջին կիս առաջի · վեցեկի ևն ։

105 · Հց · Ածանցական անունը գոյակա՞ն է թէ ածական ։

պտ · Ասանկ որոշելու է · վերացական ածանցեալները ամէնը գոյական են ։ Մէկալներուն՝ որուն որ նախադասը ածական է, իրեն ածանցեալն ալ կը մնայ ածական · իսկ երբ նախադասը գոյական է, անոնց ածանցեալը որը գոյական կը մնայ, և շատը ածական կը փոխուի · որ իրենց նշանակուէն ընտրելու է վերը գրած կանոնին կէօրէ ։ (60)

106 · Հց · Հիչ կըլլա՞յ որ մէկ անունը երկու իրեք ածանցում ունենայ ։

պտ · Հրամերես կըլլայ, ու անանկը կըսվի եռածանց · զր · նախադասը հայր, կածանցի՝ հայրենի, հայրենեան, կամ հայրենական ։ Նախադասը մի, կըլլայ՝ միակ, միական, միականութիւն ։ Նախադասը խաւար, կըլլայ խաւարին, խաւարչոտ, խաւարչին, խաւարչոտական ։ Ասոնց նման կան շատ այլ կրկնածանց ։

107 · Հց · Հապա կա՞յ որ նախադասը ածանցականի նշանակութիւն բանի, ու ածանցականը նախադասի մտքով ։

պտ · Ասանկ ալ կը գտնըվի · զր · ոսկի, մանուկ, իբրև նախադասի՝ գոյական են · բայց երբ ըսենք անօթ ոսկի, մանուկ հասակ, ածանցականի պէս կը նշանակեն՝ ոսկեղէն, մանկական ։ Ասոր դէմը՝ Էական, Ծնական, ձայնը ածանցական է, բայց միտքը երբեմն կիմացվի՝ Էն, Ծն ։

108 · Հց · Ուրիշ կերպով ալ կըլլա՞յ որ նախադասը ածանցականի նշանակութիւն ունենայ ։

պտ · Նախադասին սեռականը շատ անգամ ծայ-

րը ունենալով՝ ն կամ ք, ստացական ածանցականի պէս կընշանակէ. օր. Ած, սեռականը այ, կըլլի այն, այք, ու կընշանակէ՝ աստուածային, աստուածայինք. և երբ ըսենք զաստուածոյն, կիմացուի՝ զաստուածայինսն: Ասանկ Քրիստոսեայք, ըսել է քրիստոնեանք: Մարմնոյք, մարմնաւորք. Երկրեայք, երկրաւորք: Գերանուանց ալ նմանապէս, նորինք, նոցինք, որոյն, որոյք. (54) ու կըհոլովին՝ զմարմնոյսն, զերկրեան, զնորինսն ևն:

---

Խնդիրք ուսման:

109. Հց. Անուան թիւը որ եզական և յոգնական կըսենք, ինչո՞վ կըզատուի մէկմէկէ:

պտս. Յոգնականի նշանը է աս գրերը ք, ց, ս, երբոր ասոնք եզակի ուղղականին կամ սեռականին ծայրը կըփակչին. ինչպէս կերևնայ հոլովմանց մէջը:

110. Հց. Քանի՞ կերպով ալ կըլլայ յոգնական:

պտս. Հրամեցէք. երկու կերպ ալ ունինք. մէկ մը առանց նայելու եզականին՝ մասնիկ մը կըփակցընենք՝ որ հէմ ձայնը, հէմ նշանակութիւնը շատ կըցուցանեն. և ասոնք են. այք, եայք, որայք, որեայք, օրէք, էք, իք, ուանք, անք, ոյք, քեան, քին: Օր.

Աղախին. աղախնայք. (ղուլայէխներ). Այգեստան, այգեստանեայք. (էգիներ.) Վանք, վանորայք, կամ վանօրեայք, (վանքեր.) Արտ. արտորեայք, (թառլաներ.) Գիւղ, գիւղօրէք, (գեղեր.) Այծ, այծէք. (այծեր.) Գրաստ, գրաստիք, (գոմեշներ.) Ատամն, ատամունք. (ակռաներ.) Մեղք, մեղուանք. (մեղքեր.) բաշխ, բաշխայք. (պարգևք, թէվզի.) Ամենեքեան կամ ամենեքին: (տես 46.)

Երկրորդ կերպը՝ մասնիկ մը կըփակցընենք որ ձայնը եզական է, բայց նշանակութիւնը յոգնական, անանկ որ եզական հոլովով միայն կըբանի, և շատի միայն կըլլի. և ասոնք են. անի, եան, եար կամ եր, ենեար, եան, ան, էի, ուի կամ ուտի: Օր.

Աշտ, աշտանի. (սօյղատներ.) Խոզ, խոզեան. (խոզեր.) Վարժ, վարժեար. (գիտուններ.) Լեարդ, ներդեր. (սինկիրներ.) Խուժ, խուժան. (հովլի.) Քաղաք, քաղաքենեար. (քաղաքներ.)

ծակ, ծակոտի. (ծակեր.) Ոսկր, ոսկերոտի. (ոսկոր-ներ.) մարդ, մարդիկ. (մարդեր.) զօր, զօրականք. (ասկեր ։)

111. Հց. Ռամիկ մասնիկները ածանցական ալ կըլ-նեն. ուստի ինչպէս զատելու է յոքնականէն ։

պա. Ռամիկ կըզգամի որ ածանցականը սովորա-բար ածական է, ու յոքնակի ալ կըհոլովի. բայց յոքնակի եզանը՝ գոյական է, և յոքնակի չիհոլո-վիր. որ ետևը կընէ ածանցական՝ աբեղէն, որ ա-բեղեցի. և կըլլայ՝ աբեղեղենք, եանց. բայց եո-ղնակը չըլլար՝ խողեանք ։ Ոյսպէս մեռելոտի, եր-րև ածանցական՝ մեռած հոտած, կըսվի՝ մեռելոտի գործք. յոքնակի ալ կըսվի՝ մեռելոտիք, տեաց. բայց չըսվիր՝ ոսկերոտիք, տեաց ։

112. Հց. Ռամիկն անուն կըքանի՞ միշտ՝ թէ ե-զական, թէ յոքնական ։

պա. Ոճրևելի լեզուաց սովորութիւն է որ պաղի անուն յոքնական միայն կըքանեցընեն, և կըսվի անեզական. ինչպէս հայու մէջ, բարք, փառք, խելք, կեանք, աղօթք ևն ։

Կարգի անուն եզակի միայն, որ անյոքնական կըսվի. ինչպէս յոյս, սէր, ջան ևն ։

Կարգին աւելի յոքնականն կըքանի. ինչպէս շնորհք, օրէնք, ընչք, անուրջք, յոյզք ևն ։

Կարգի անուն աւելի եզական. ինչպէս Վախճան, Պէշ. յէթ, հուր, հանգիստ ևն ։

Կան անուանք ալ որ մէկ նշանակութեամբ կամ հոլո-վով կըքանին յոքնակի կամ եզակի, բայց ուրիշ նշա-նակութեամբ կամ հոլովով չըլլար անանկ ։ որ անուանը Պէշ՝ բայի հետ կըլլայ եզակի ուղղական կամ հայցա-կան, որ մեղ է, մեղ դնել կամ առնել. որ ըսել է՝ մեղադրանք, փոսս ընել. բայց մինակ չըլլար, մե-ղի, 'ի մեղէ, մեղիւ ։ Ոյսպէս Պէտք, բայով կամ նա-խադրութեամբ կըքանի եզական, միտ դնել, 'ի միտ առնուլ, զմտաւ ածել, ըստ մտի ևն. բայց մինակ չըլլար՝ միտ, մտի, զմիտ, մտաւ ։ Ռամիկ ալ կամք, բայով կամ նախադրութեամբ, կամ գործիական հոլով կըքանի եզական, որ կամ է, ըստ կամի, կամաւ. բայց մինակ չըլլար՝ կամ, զկամ, 'ի կամէ ։

113 . Հց . Յոքնակի ուղղականը ծայրը ք ունի կըսես . ու անոր նախդրիւ տրականը և հայցականը քէն՝ սէ կըփոխէ . կըհարցընեմ թէ աս կանոնը միշտ կըպահվի՞, թէ երբեմն ուրիշ կերպ ալ կըլլայ :

պխ . Երբեմն անեզական անունը ուղղականին քէն սէ կըդնէ . օր . փոխանակ դնելու՝ պէտք , կեանք , երախտիք , աւետիք , կըսվի՝ պէտս , կեանս , երախտիս , աւետիս :

Ասոր դէմը՝ նախդրիւ տրականը կամ հայցականը՝ ք կըպահէ . ասանկ կըսվի , մինչև ՚ի նիւթեղէն մարմնաւորք , օր . ՚ի նիւթական մարմինաւորս : զօրեղն , զբեծն , օր . զօրեղան , զբեծան : Անկէին գլուխք , օր . զգլուխս :

---

Հոլովք անուան :

114 . Հց . Առջի հոլովը ինչու՞ ուղղական կըսվի :

պխ . Անոր համար որ բուն իրքը կամ նշանակած բանը շիտակ կըցուցանէ . որ մէկալ հոլովքը անանկ չեն նշանակեր , այլ իրքին մէկ ունեցածը , կամ անոր վրայով բան մը կիմացընեն :

115 . Հց . Սեռական հոլովը ինչ կիմացվի :

պխ . Կընշանակէ անունին սոյն եղածը , անոր ունեցածը . օր . ուղղ . մարդ , բուն իրքը կըցուցանէ . սեռ . մարդոյ , ըսել է՝ մարդունը , օր . մարդուն տունը , ապրանքը , հոգին են . ու երբոր ուրիշ անվան քովը դրվի նէ , անոր յատկացուցիչը կըսվի . օր . մահ մարդոյ , մարդուն մահը : հաց հրեշտակաց , հրեշտակներուն հացը : ՚ի զօրութէ մարմնոյ , մարմինին ուժէն :

116 . Հց . Հիչ սեռական հոլովը կառնէ՞ նախդիր ի , կամ զ :

պխ . Իրեն նշանակութիւնը չուզեր նախդիր . բայց կըպատահի որ քովի անվան նախդիրը իր վրայ կըդրվի շատ տեղ . օր . յօգնականութենէ այս՝ ընելու տեղը , կըսվի , յայս օգնականութենէն : զաստեղաց գլխոյ , օր . զգլխոյս աստեղաց : (տես 281 .)

Մէկմըն կայ որ բուն սեռականին վրայ կըդրվի զ , ու նախադրութիւնի ուժ ունի , վրայ կընշանակէ . ինչպէս զքարէ , զգետնէ , զահէ , զամօթէ , ըսել է՝ քարի վրա , գետնի վրայ , վախի՝ ամօթի վրայ .

117. Հց. Տրական հոլովը ի՞նչ կիմացուի.

Պտս. Անանկ կըփոխէ ու մէջ կըբերէ անուանը՝ որ իբրև թէ անոր բան մը տալու կամ ընելու, կամ խրկելու ըլլար:

Հց. Բոլոր հոլովմանց մէջը (10) թէ երկու կերպ տրական կայ, մէկ մը ծայրը կըփոխուի, Վերջահոլով կըսուի. մէկալը՝ նախդիր կառնէ սկիզբը, ու նախդրիւ տրական կըսուի: Ասոնք նշանակութե կողմանէ ի՞նչ տարբերութիւն ունին:

Պտս. Իրենց նշանակութիւնը մօտ ըլլալով, մէկ մէկու տեղ կըդրուին. Օր., առ իշխանն գրեցոր՝ ընելու տեղը, կըսուի՝ առ իշխանին գրեցոր: Այսպէս կըսուի, տամ երոց բարեկամի, և առ տամ իմ բարեկամին: Մէկ խօսքի մէջ երբոր շատ տրական անուն գտուի նէ, մէկը վերջահոլով կըդրուի, մէկալը նախդրիւ. Օր. Ա... տամ հաւատ ... մեծամեծաց, շնորհաւորաց են:

118. Հց. Վերջահոլով տրականը նախդիր չառներ հիչ:

Պտս. Կառնէ նախդիր ՚ի, յ. առ՚ի. բայց չիմնար յատուկ հոլով, նախադրութեան ուժ կունենայ. որ տեղինները ներգոյական հոլով ըսին. Օր., ՚ի քաղաքի, երկրի մէջը կամ վրան. ՚ի տեղւոջ, յեկեղեցւոջ. տեղւոյն մէջ, եկեղեցւոյ մէջ: ՚ի տան, յանդի, տան մէջ, թառլայի մէջ ևն:

119. Հց. Նախդրիւ տրականը հիչ տարբեր նշանակութիւն կունենա՞յ մի:

Պտս. Շատ բերես. ց նախդիրով շատ տեղ կընշանակէ՝ մինչև, մինչվան. Օր. ցաւուրս ցայսօրիկ, ըսել է՝ մինչվան ան օրերը: ցյագ, մինչվան կշտանալ. ցերեկոյ, մինչվան իրիկուն:

Երբեմն ալ ՚ի նախդիրով կընշանակէ՝ համար. Օր. ՚ի փրկութիւն, փրկութեան, ազատելու համար: ՚ի խրատ, խրատի համար:

Կայ որ գործիականի ուժ ունի. Օր. ՚ի ձայն, ձայնով ըսել է. ՚ի սուր, սրով. ՚ի զօրութիւն, զօրութեամբ, ուժով:

120. Հց. Հայցական հոլով ի՞նչ կիմացուի:

Պտս. Ներգործականին վրայ ղ աւելցընելով, ուզելու կամ փնտռելու պէս կընշանակէ: Բայց շատ ան-

գամ զ նախդիրը յայտնի չի դրուիր եզականին ալ, յոգնականին ալ. ան ատենը կըսուի անորոշ կամ ա-նորոշէր հայցական։

Հց. Ի՞նչ անուան, կամ ո՞ւր տեղ կըլլայ զ նախդիրը ձգել։

Պտ. Միջական և յատուկ անուանց, նմանապէս դերանուանց չըլլար ձգել. ուստի չըսուիր՝ կոչեաց Մանն. առաքեաց պետրոս. անարգէ զս, կամ նա. այլ պիտի ըսուի, զՄանն, զՊետրոս, զիս, զնա։ Միայն մերբերականները, գթուականը, և յարաբերական որը՝ երբեմն կըլլան առանց զայի։

Կըմնայ որ հասարակ անուանք միայն բանին անորոշ հայցական, ան ալ երբոր դիմորոշ յօդ չունենան. ուստի կըսուի, շինեաց տուն. ծնաւ որդի. տնկեաց այգի. բայց ո՛չ, զտունն, զորդին, զայգին։

121. Հց. Նշանակութէ կողմանէ գիտնալու բան մը ունի՞ հայցական հոլովը։

Պտ. Հրամերես. մէկ մը գործիականի պէս կընշանակէ պաշի տեղ. ինչպէս զայս օրէնօք, ըսել է՝ այսու օրինակաւ. կամ պատկեր շնաոք, ըսել է՝ պատկաւ։ (տես 402.)

Մէկմալ երբոր բառը նշանակէ՝ ատեն, եղանակ, ներգործական ուժ ունի. զի զտիւ, զգիշեր, ըսել է՝ ի տունջեան, ի գիշերի, եւ ցորեկվան ատեն, գիշերվան ատեն։ զամառն, զգարուն, ամըավան մէջ, գարնան մէջ։

122. Հց. Բացառական հոլով ինչո՞ւ կըսուի։

Պտ. Բառը համար որ ուղղականէն բանալը զանելու, կամ ելլելու պէս կընշանակէ. կամ թէ անկեց բան մը կըլլայ։

123. Հց. Բացառականին է կամ ; նախդիրը ինչ զանց կառնուի՞։

Պտ. Կըլլայ մէկ քանի տեղ։ Մէկ մը երբոր նոյն անունը խօսքին մէջ կրկնած է տրական և բացառական հոլովով, նախդիրը առջինին միայն կըդրուի շատ անգամ. զի դրանէ ՚ի դուռն. քաղաք ՚ի քաղաքէ. ամ յամէ. կենաց ՚ի կենս եւն. որ պիտի ըլլար՝ ՚ի դրանէ ՚ի դուռն. ՚ի քաղաք ՚ի քաղաքէ եւն։

Երկրորդ, երբոր առջևը նախադրութի մը կայ

նէ, ան կըլլայ նախդիրի տեղ. Օր. առ ամօթոյ, Օր. խայտառակութեան համար : ըստ նոցանէ, անոնցմէ ետեւ. որ պիտի ըլլար, առ յառաջ. ըստ 'ի նոցանէ :

Երրորդ. երբոր մէկ խօսքի մէջ շատ բացառական անուն կայ՝ և շաղկապով, առջինին նախդիրը ետքինին ալ կըծառայէ. Օր. 'ի սոխոյ և ծաղկաց. 'ի ձկանց և կենդանեաց : Նմանկ կըլլայ նախդրիւ տրականին ալ. Օր. 'ի շինուածս և քրիստոնեայս. առ պետրոս և յովհաննէս :

Չորրորդ. կըլլայ որ անունը ինքիրմէ յ գիր ունի, ան նախդիրի տեղ կըբռնէ՝ տրականին ալ. ասանկ՝ 'ի յաւիտենից 'ի յաւիտեանս ըսելու տեղը կըսվի, յաւիտենից յաւիտեանս :

124. Հց. Բացառականը զայ նախդիր կառնէ՞ :

Պտս. Կառնէ՝ բայց նախադրութեան ուժ կունենայ, որ ետքինները պարագայական հոլով ըսին. Օր. զծառոյն, ծառին վրա ըսել է. զքէն, զնոցանէ, քու վրա, անոնց վրա. կամ քեզի համար, անոնց համար :

125. Հց. Ինչ կըլլայ՞ որ բացառականի նախդիր ունենալով ալ՝ նշանակութիւնը փոխվի :

Պտս. Հրամմերես. երբեմն գործիականի պէս կընշանակէ. Օր. փոքր յանձնէ, ըսել է՝ անձամբ, կամ մարմնով պզտիկ : Ըմբռնել 'ի ցրտոյ, կամ ցրտով, տէկնէկով :

Երբեմն ալ նախադրութեան մտքով կընշանակէ՝ ետքը, համար, դէմ. Օր. յետ, տարիէն ետքը : 'ի հարձակմանէ, 'ի խնդիր փրկոյն, կամ սրտնեղութեան համար, ձանր աշխատանքին համար : Օգնական 'ի թշնամեաց, կամ թշնամեաց դէմ :

126. Հց. Գործիական հոլով ինչ կիմացվի :

Պտս. Նման հոլովմն որ ուղղականին ձայնը փոխելով, կըցուցանէ անով բան մը ըլլալը :

Հց. Ինչ նախդիր կառնէ՞ գործիականը :

Պտս. Կառնէ զայ նախդիրը, ու նախադրութեան միտք մը վրան կաւելցընէ. որ ետքինները պարագայական հոլով ըսին. զէրէ կընշանակէ՝ մէկ բանին բոլորտիքը, էթրաֆը, ամէն դի, կամ վրան. Օր. զտամբ, տանը էթրաֆը. զեկեղեցեաւ, եկեղեցնայ չորս դին. զոսկերօք, ոսկորներուն վրան. զանձամբ,

ամմէնուն չորս գին, կէս վրան. շէնէ, շէէ, ձիուճա-խմին, քուկին, անոր վրան :

127. Հց. Գործիական հոլովով ինչ բարդութի՞ւն կ'ածանցում կըլլա՞յ :

պխ. Հրամերես. բարդ. կըլլայ քիչ բառի. (82) ինչպէս գործիականէն ջեռամէ կըլլայ՝ ջեռբաշլ, ձեռքով բռնած. ասանկ ձեռագլերդ, ՚ի մերակերպ :

Բայց ածանցում շատ կըլլայ. ինչպէս ջեռամէ-ջէ, թրամէէ, ճանամէէ, ծովորովէն, գլխովէն, ոտքովէն, ծմովան, ծորովէ ևն, որ մակբայի պէս կընշանակեն : (221)

128. Հց. Կըլլա՞յ որ գործիական անուն մը նո-րէն հոլովի :

պխ. Ասանկ ալ կըգտնըվի. ինչպէս բնաւ, ծայր, ըմեն կընշանակէ, կըհոլովի՝ բնի, բնաւ. աս կըլ-լայ ուղղական՝ բնաւ, բնաւի, զբնաւ. բնաւք, բը-նաւից, բնաւիւք. ամմէնը ըսել է : Ասանկ սակ, չափ ըսել է. գործիականը սակաւ, չափով, քիչ-կըլլայ՝ սակաւու, սակաւք, սակաւուց : Այսպէս ու-րիշ անուանք ալ քննելու են :

---

Հոլովմանց անուան :

129. Հց. Տասը հոլովմունք դրինք առաջ. (7) ու ցըցուցինք թէ ինչպէս անուանք իրենց վերջովը կերպ կերպ կըփոխվին : Հիմայ կըհարցընեմ թէ ինչո՞ւ միակերպ չենք հոլովեր գրաբառին մէջ, ա-նանկ ինչպէս աշխարաբարը ամմէն անուն միակերպ կըվերջացընենք սեռականը, բացառականը, գոր-ծիականը՝ ին, էն, ով. զր թագաւորին, թագաւո-րէն, թագաւորով. կարգին, կարգէն, կարգով. մարդէն, մարդով. տնէն, տնով. տեղէն, տեղով ևն : Գրաբառն ալ ասանկ ընէինք նէ, աղէկ չէ՞ր մի, որ սորվելու ալ խօլայ կըլլար :

պխ. Իրաւ է որ սորվօղին թեթև կըլլար, բայց գրաբառ լեզուն գիտութեց լեզու ըլլալով, հար-կաւոր էր և պիտոլական տարբեր հոլովք ունենալ իրեք պատճառի համար : Առաջ որ գրաբառին մէջ անուանք կան որ տարբեր բան կընշանակեն. թէ

որ անոնց հոլովքը միակերպ ըլլար նէ, նշանակութիւը չէր զատուէր · ինչպէս ունինք Թուզ, ինձիր · Թիզ, խարբըշ · Թէ որ երկուքն ալ հոլովէինք՝ Թզին, Թզէն, Թզով, չէր իմացուէր՝ ինձի՞ր հասկանալու է՝ թէ խարբըշ · ուստի զատելու համար առջինը կընենք, Թզոյ, Թզով · երկրորդը՝ Թզի, Թզաւ ։ Ասանկ ունինք Լուր, լսելը, խապար · Լիր, լիցք, լեցուածք · զատելու համար՝ առջինը կը հոլովենք՝ լրոյ, լրով · երկրորդը՝ լրի, լրիւ ։

130 · Երկրորդ · կըլլայ որ մէկ անուն մը երկու իրեք տարբեր բան կընշանակէ · հոլովքէն միայն պիտի զատուի · օր Գայլ, կընշանակէ՝ ղուրտ, և քելէփչէ · առջինը կը հոլովենք՝ գայլոյ, լով · երկրորդը՝ գայլի, լիւ ։ Այսպէս Որթ, հորթ կմ տանա ըսել է, հէմ ասմա · առջինը՝ որթու, թուց · երկրորդը՝ որթոյ, թով, թոց ։ Օդ, հավա, և ս փապուճ · առջինը՝ օդոյ, օդով · երկրորդը՝ օդի, օդիւ ևն ։

Երրորդ · Թէ որ ամմէն անուն մէկ կերպով հոլովէինք նէ, կըլլար որ խօսքի մէջը շատ անուն գտնըվելով, նոյն ձայնը միշտ լսուէր պիտի · որ շատ արգելք է լեզուին գեղեցկութեան · խօսուածքի մէջ փոփոխութիւը համ կուտայ, մէկ կերպ ձայնը ձանձրութիւն կբերէ ։ Աս պատճառներուս համար հնարած է տարբեր հոլովմունքը ։

131 · Հց · Ասանկ է նէ, հա՞րկ է որ իւրաքանչիւր անուն զատ հոլովման տակը երթայ · հիչ կըլլա՞յ որ նոյն մէկ անունը այլևայլ հոլովում ունենայ ։

Պտ · Իրաւ որ հոլովմունքը զատ են, բայց առջի և երկրորդ հոլովումը իրարու դրացի ըլլալով, կըպատահի որ մէկին տակի անունը երբեմն մէկալին պէս ալ կը հոլովի, կմ մէկ հոլովքը, կմ եզականը՝ յոգնականը մէկալէն փոխ կառնէ · օր անունը Նշան սովորաբար կը հոլովի ա ի հմ · նշանի, նաւ, նաց, նաւք · բայց երբեմն ալ, նիւ, նից, նիւք ։ Շնորհ, եզականը՝ շնորհիւ, յոգնականը աւելի՝ շնորհաց, հաւք ։ Նիւթ · նիւթոյ, թով, թոց · կմ թի, թիւ, թից ։ Մարմին, մարմնոյ, կամ մնի ։ Եկեղեծ, ծի, ծաց կմ ծից ։ Կամուրջ, ջի, ջաց կմ ջից ։ Լաւագոյն,

գունից կը նայ. ասանկ ամմէն բաղդատական ա-նուն երկու կերպով ալ կը հոլովին։ (տես. 18. 24.)

132. Հց. Որովհետեւ հոլով և հոլովման են երկու պարագայ անվան, պէ՞տք է որ ինչ անուն ըլլայ նէ միշտ հոլովենք։

Պտս. Պէտք չէ. ամմէն լեզու ունի սովորութիւն որ պարզ անուն նախդիրով մինակ կը բանեցընէ. ասանկը կըսուի նախդրիւ հոլովելի։ Պարզ անուն ալ և ո՛չ նախդիրով կը բանեցընէ. որ կըսուի անհոլով։

Մեր լեզուին մէջը նախդրիւ կը հոլովին պարզ բարդ անվանք որ շատ վանկ ունին, և հոլովելը երկան կը՛ անշնորհք կըլլայ. օր. ճշմարտապատոյց, շրջնա-շրջնայաշար, ընդդիմաշառեղ, լն։

Իսկ անհոլով կը բանին շատ բայերու արմատնե-րը, որ սովորաբար մինակ ալ չենք բանեցըներ, այլ կամ բարդութեան մէջ, կը՛ ածանցեալ. ասանկ են քաղք, քայլ, շան, արի, ձան լն։ (տես 83.)

---

## Դերանուան վրայ դիտելիք։

133. Հց. Անվան պարագաները ըսիր. հապա դերանուանն ալ պարագայ չունի՞ մի։

Պտս. Ունի մէկ քանի պարագայ, բայց իր տեղը բաւական ըսինք (50)։ Անոր յատուկ պարագան դէմքն է՝ որով կը զատուի անուններէն։ Ունի վեց հոլովք անուններին պէս։ Սեռ հիչ չունի. այլ արուի ալ, էգի ալ նոյն դերանունը կըսուի։

134. Հց. Հապա ձեւ չունի՞ դերանունը։

Պտս. Յատկապէս նայելով չունի ձեւ. այլ բոլորը պարզ են։ Բաղադրեալ չըլլար, թէ առաջքը չխառ-ներ անոնց մասնիկ՝ անուններին պէս։ Իսկ թէ որ նշանական բառի հետ կապուի նէ, չխմնար դերա-նուն, կըլլայ անուն. կը՛ մակբայի նշանակութիւն կառնէ. օր. ինքնածին, այլագործ, ինքնաստաց, իւրաքանչիւր, այդպէս, նոյնպէս, նոյնագոյ, այսչափ, լն։ Ասանկ են վերբերական անվանքը. (49)

Անանք բարդ դերանուն սեպէր՝ երբոր իրարու

հետ կըբանին. զի՛ եւ ինքն, դուն ինքն, ինքը ինքն. սոյն ինքն նոյն: կամ սոյն այս, դոյն այդ են:

135. Հց. Կարէ դէմք չունի՞ մի դերանունը:

պտ. Ունի իրեն տեսակը. զոր նախադրեալ են էական և ցուցական դերանուանքը, (52.) որ ուրիշ դերանունէ չեն ձեւանար: Ածանցական են ստացականքը՝ որ ածականներէն կելլեն, ու դերանունէն կըծնան: (54)

Բայց անոնք որ վերջքը ունին մասնիկ ջան, նոյ, ոյր, բեան, անուն կըսեպվին. զերէ իրենց հոլովքն ալ, նշանակութիւն ալ անունի պէս կըլլան. ինչպէս իւրաջան, այսանայ, ինքնատար, իւրաբեան:

136. Հց. Ուրիշ կերպ ածանցում ալ կըլլա՞յ դերանուանց:

պտ. Կայ մէկմալ, որ դերանուան՝ և մանաւանդ ցուցականին հոլովածը կըլլայ նոր ուղղական, և յոգնակի կըհոլովվի. զոր նախին բացառականը ՚ի նմանէ, ՚ի նոյանէ, կըլլայ՝ ՚ի նմանէք, ՚ի նոյանէք, որ կընշանակէ՝ անորմէ կամ անոնցմէ եղածները: Նմանկ ջախին բացառականը ՚ի ձէնջ, կըլլէն՝ ՚ի ձէնջք, ՚ի ձէնջից: Նմանապէս ներգոյական բառն հոլովքըս, ՚ի սմա, ՚ի դմա, ՚ի նմա, կըլլայ՝ ՚ի սմայք, ասոր մէջ եղածները. ՚ի դմայք, ատոր մէջ եղածները. ՚ի նմայք, անոր մէջ եղածները: Ասոնք կըհոլովվին ալ, զ՚ի սմայս, ՚ի սմայոց, ՚ի սմայովք են:

137. Հց. Գործածութեան մէջ հիմ կըլլա՞յ որ դերանուան հոլովքը մէկմէկու տեղ դրվին:

պտ. Ստացական և ցուցական դերանուանց կըլլայ որ մէկ հոլովը մէկալին տեղ կըբանի, կի՛ յոգնականի տեղը՝ եզական. ինչպէս կըսվի, յայսմ պատճառէ, որ պիտի ըլլէր՝ յայսմանէ: Նմանկ՝ այսմ խորհրդով, փոխանակ՝ այսու: Բոցովքս այսմիկ, փոխանակ սյսոքիւք: Յամէ նշանաւ, փոխանակ քով: Յերրորդ ծոցոյն, փոխանակ յիւրմէ: (տես 345. 350. 359.) Այսքան տեղեկութիւն բաւական է անվան և դերանուան պարագայից վրայ. ասկէց ետքը Բայը տեսնենք:

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.

## Բային վրայ։

138. Երրորդ մասն բանին կըսուի բայ, որ խօսուածք կամ ըսուածք կընշանակէ, ինչու որ բայը անուններին կամ դերանուններին հետ գալով, կըձևանայ ըման խօսք մը. ու առանց բայի խօսուածք չըլլար։

Բայ ինչ ըլլալը կըսենք, * Բառ որ նշանակէ ներգործութիւն, կամ կիրք՝ ժամանակաւ, թուով, և դիմօք։ այ անանկ բառ մընէ որ ներգործութիւն, ընել մը կընշանակէ. կամ կիրք, կրել մը, ըլլըվիլ կամ ըլլալ մը կընշանակէ. ժամանակաւ, իրեն ատենովը. թուով, եզական կամ յոգնական. դիմօք, առջի դէմքով, կամ երկրորդով, կամ երրորդով։ Ասոնց օրինակ, եմ, լինիմ, շարժեմ, շարժիմ, լուանամ, ունիմ, գնամ։ Ասոնք ո՛րը ըլլալ կընշանակեն, ո՛րը ընել, ո՛րը ըլլըվիլ. Երբոր խօսքի մէջ կըսենք, Պետրոս շարժէ, կընշանակէ ընել մը իր ժամանակովը ու եզական թըւովը, ու երրորդ դէմքովը, այ պետրոսը հիմայ կըշարժէկոր։ Երբոր ըսենք, մեք շարժեցաք, կընշանակէ առջի դէմքով, յոգնական ու անցած ատենի մէջ. այ մենք առաջուց շարժեցինք։ Երբոր ըսենք, դու շարժեսցիս, կընշանակէ ըլլըվիլմը ետքի ատենով, եզական երկրորդ դէմքով, այ դուն շարժըվիս նէ։

## Բայերուն բաժանումը։

139. Բայը ալինտ առաջ կըբաժնըվի երկուք, էական և ածական։

Էական բայը ան է՝ որ մինակ ըլլալ կընշանակէ, ու մէկալ բայերուն իբրև թէ կանոնն է՝ իրենց ձևանալուն կողմանէ. և աս չորսն են. Եմ, Գոմ, Եղանիմ, Լինիմ։

Որովհետև ամէն բայ անունէն կելլէ, ասոնց արմատն ալ անուն է. եմը կելլէ՝ է անունէն, որ

ըսել է՝ եղած բան մը. ասանկ գոյանալը՝ գոյ անունէն, եղանալը՝ եղէն, ըլնալը՝ ըլէն։

Առդական բայ կիմացըվի այն ամէն բայերն որ ընել մը, կամ ըլլըվիլ մը կը նշանակեն։

Մերի կարճ խօսքովը իմացուցինք բային բուն պարագաները, որ աս վեցն են. Սեռ, ժամանակ, թիւ, դէմք, խոնարհումն, եղանակութիւն։

Բայերուն սեռը։

140. Չորս է բայից սեռը. Ներգործական, Կրաւորական, Չէզոքական, Հասարակ։

Ներգործականը կը նշանակէ բան մը ընել ուրիշին, կամ բան մը հասըլ ընել. ք. Առնեմ, գրեմ, ըսել է՝ իրք մը կառնեմ, բան մը կըգրեմ։

Կրաւորականը կը նշանակէ ուրիշէն բան մը կրել, կամ ըլլըվիլ. ք. առնիմ, գրիմ, ըսել է՝ ուրիշէն կառնըվիմ, կամ կըգրըվիմ։

Չէզոքական կամ չէզոք, հիչ մէկը չէ ըսել է. ք. ոչ ուրիշի ընել, ոչ ուրիշէն ըլլալ, այլ ինքիր մէջը ընել կամ ըլլալ. ք. Գնամ, Աշխատիմ, ըսել է՝ ես ինծմէ կերթամ, ես ինծմէ կաշխատիմ։ Թէեւ որ չէզոք բայը ներգործականի ձայն ունենայ նէ, կըսըվի ներգործականներու, ինչպէս է գնամը. հապա թէ կրաւորականի ձայն ունենայ՝ ինչպէս աշխատիմը, կըսըվի կրաւորականներու։

Հասարակը չէզոքին դէմ՝ մէկ ձայնով հէմ ընել կը նշանակէ, հէմ ըլլըվիլ ուրիշէն. ք. դատիմ, ըսել է՝ ուրիշը կըդատեմ, դատաստան կընեմ, եւ՝ ուրիշէն կըդատըվիմ։

Բայերուն ժամանակը։

141. Ընելը կամ ըլլալը ատենի մը կապված է, ատենով ալ պիտի կատարըվի. աս կըսըվի ժամանակ բային. եւ իրեք է. Ներկայ, որ հիմա ընել կամ ըլլալ կը նշանակէ. անցեալ, որ անցածը՝ եղածը կը նշանակէ. եւ ապառնի, որ ետքը ընել կամ ըլլալ կը նշանակէ. ք. Գրեմ, հիմա կըգրեմ. գրեցի, առաջ գրեցի. գրեցից, պիտի գրեմ։

### Բայերուն թիւը, դէմքը:

142. Աս պարագաները յայտնի են. երբոր բայը մէկի մը ընել կամ ըլլալ նշանակէ նէ, կըլլայ եզական թիւ. երբ ընողը կամ ըլլօղը շատ են, կըլլայ յոգնական:

Նմանապէս երբ ընողը կմ եղօղը կըխօսի, կըլլայ առաջին դէմ. երբ ընօղին կըխօսի, երկրորդ. երբ ուրիշ ընօղի վրայ կըխօսի, երրորդ. այսինքն ես գրեմ. դուք գրեիք. նոքա գրեցին:

### Բայերուն խոնարհումը:

143. Բայը իր ծայրը կերպ կերպ փոխելով, կըցուցանէ ժամանակը, թիւը, դէմքը. աս փոփոխմունքը կըսուի խոնարհումն. այսինքն ինք իր մէջ իջնալ ելլել, կերպ կերպ դառնալ. ինչպէս երբ կըսենք՝ գրեմ, գրէի, գրեցի, գրեցից, գրեա՛ ևն, աս կըսուի խոնարհիլ:
Այն բայ որ ասանկ փոփոխութիւնը միակերպ ու լման կիջնայ. և աս կըսուի կանոնաւոր խոնարհումն: Այն ալ որ մէկ կանոնով չերթար, որ անկանոն կըսուի. թէ որ ժամանակ մը կամ թիւ մը պակսի նէ, պակասաւոր. թէ որ մէկ ժամանակը տարբեր կերպով ըլլայ, արտաքոյ կըսուի. հապա թէ որ երեք դէմքը լման չունի, կըսուի դիմաւորէ:
Ասանկ փոփոխվելով, բային նշանակութիւն ալ տարբեր կերպ կունենայ, որ եղանակ բային կըսուի, ու չորս են. Սահմանական, Հրամայական, Ստորադասական, Աներևոյթ: Ասոնց ինչ կերպ նշանակելը կերևնայ վարի օրինակներովը:

### Բայերուն ըստորդութիւնը:

144. Ան բայերն որ տարբեր վերջք ունին, իրենց խոնարհումն ալ տարբեր կըլլայ. աս կըսուի ըստորդութիւն, այսինքն հաղորդութիւն, ընկերութիւն, անոր համար որ նման վերջք ունեցող բայերը՝ մէկմէկու հաղորդ են, նման խոնարհում ունին:
Ասանկ տարբեր վերջքը չորս են, այսինքն ԵՄ, ԱՄ, ՈՒՄ, ԻՄ. ասով բայերուն ըստորդութիւն ալ չորս կըլլայ. այսինքն Շարժեմ, Լուանամ, Հեղում, Ստանիմ:

Ինչ որ մինչև հիմայ խօսեցանք բայից պարագաներուն վրայ, կարգով մէկանց դնենք ու ցուցանենք չորս լծորդութիւններուն պատկերքովը, որ աշկերտը մէկ նայուածքով կըտեսնէ անոնց կերպ կերպ փոփոխիլը ·

## Չորս Լծորդութիւնք կարգաւ ·

### Սահմանական եղանակ ·

#### Ներկայ ժամանակ ·

| Լծորդ · | Եզակի · | | | Յոգն · | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ա · Շարժ . . . | եմ · | ես · | է · . . . | եմք · | էք · | են · |
| Բ · Լուան . . . | ամ · | աս · | այ · . . . | ամք · | այք · | ան · |
| Գ · Հեղ . . . | ում · | ուս · | ու · . . . | ումք · | ոյք · | ուն · |
| Դ · Ուսան . . | իմ · | իս · | ի · . . . . . | իմք · | իք · | ին · |

#### Անցեալ ժամանակ անկատար ·

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Շարժ . . . | էի · | էիր · | էր · | էաք · | էիք · | էին · |
| Լուան . . . | այի · | այիր · | այր · | այաք · | այիք · | ային · |
| Հեղ . . . | ուի · | ուիր · | ույր · | ուաք · | ուիք · | ուին · |
| Ուսան . . | էի · | էիր · | էր · | էաք · | էիք · | էին · |

#### Անցեալ ժամանակ կատարեալ ·

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Շարժ · | եցի · | եցեր · | եաց · | եցաք · | եցիք · | եցին · |
| Լուա · · | ցի · | ցեր · | աց · | ցաք · | ցիք · | ցին · |
| Հեղ · · | ի · | եր · | հեղ · | աք · | իք · | ին · |
| Ուս · · | այ · | ար · | աւ · | աք · | այք · | ան · |

#### Ապառնի ժամանակ ·

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Շարժ . . . | եցից · | եսցես · | եսցէ · | եսցուք · | եսջիք · | եսցեն · |
| Լուա . . . | ցից · | սցես · | սցէ · | սցուք · | սջիք · | սցեն · |
| Հեղ . . . | ից · | ցես · | ցէ · | ցուք · | ջիք · | ցեն · |
| Ուս . . . | այց · | ցիս · | ցի · | ցուք · | ջիք · | ցին · |

### Հրամայական եղանակ ·

#### Ներկայ ժամանակ ·

Շարժեա, մի շարժեր · շարժեսցէ, մի շարժեսցէ ·
շարժեցէք, մի շարժէք · շարժեսցեն, մի շարժեսցեն ·
Լուա, մի լուանար · լուասցէ, մի լուասցէ ·
լուացէք, մի լուանայք · լուասցեն, մի լուասցեն ·

Հեղ, մի հեղուր. հեղցէ, մի հեղցէ.
հեղէք, մի հեղուք. հեղցեն, մի հեղցեն:
Ուսիր, մի ուսանիր. ուսցի, մի ուսցի.
ուսարուք, մի ուսանիք. ուսցին, մի ուսցին:

Ապառնի ժամանակ.

Շարժեսջիր կամ շարժեսցես, . շարժեսցէ.
շարժեսցուք, շարժեսջիք, . շարժեսցեն:
Լուասջիր, կամ լուասցես, . լուասցէ.
լուասցուք, լուասջիք, . . . լուասցեն:
Հեղջիր կամ հեղցես, . . . հեղցէ.
հեղցուք. հեղջիք, . . . հեղցեն:
Ուսջիր կամ ուսանիջիր, . . ուսցի.
ուսցուք, ուսջիք կամ ուսանիջիք, ուսցին:

Ասոնց վրա ալ դիր մէ մասնիկը վերինին պէս:

Ստորադասական եղանակ.

Ասոր ներկայ ժամանակ կըլլայ Սահմանականի Ներկան:

Ապառնի ժամանակ:

Շարժ. եցեմ. եցես. եցէ. եցեմք. եցէք. եցեն.
Լուան. այցեմ. այցես. այցէ. այցեմք. այցէք. այցեն.
Հեղ. . ուցում. ուցուս. ուցու. ուցումք. ուցուք. ուցուն.
Ուսան. իցիմ. իցիս. իցի. իցիմք. իցիք. իցին:

Աներևոյթ եղանակ.

Շարժել. (հլվ) շարժելոյ. 'ի շարժել. շարժելով.
Լուանալ. . լուանալոյ. 'ի լուանալ. լուանալով.
Հեղուլ. . . հեղլոյ. 'ի հեղուլ. հեղլով.
Ուսանել. . . ուսանելոյ. յուսանել, ուսանելով:

Ընդունելութիւն.

Ներկ. Շարժող. շարժեցող. Լուացող. Հեղօղ. Ուսանող:
Անց. Շարժեալ, եցեալ. Լուացեալ. Հեղեալ. Ուսեալ:
Ապառ. Շարժելոց, լի. Լուանալոց, լի. Հեղլոց, լի. Ուսանելոց, լի:

Ասկէց ետքը կարգը կըբերէ որ բայերուն խոնարհմունքը զատ զատ շարենք, ու էն առաջ էական բայերունը, որ մէկալներուն արմատն են. էմ բայը ան բայերուն արմատն է՝ որ կըվերջանան էմ, ամ, ըմ. իսկ գոյը՝ ում վերջացած բային:

# ՅՕԴՈՒԱԾ Ը.

## Օժանդակ բայերու խոնարհումը.

145. Օժանդակ բայերը չունին լման ամէն ժամանակ և եղանակ. ուստի պակասաւոր ըլլալով, մէկմէկէ կըլեցընեն իրենց պակասութիւնը. ինչպէս կերևնայ առջևըտ իւրաքանչիւրոց վրայ:

---

### Օժանդակ բայը ԵՄ.

Սահմանական ներկայ.

Եզա. Եմ, ես, է. Պէն իմ. սէն սին. օ տըր.
Յոգն. եմք, էք, են. Պիզ իզ. սիզ սիզ. օնլար տըր:

Անցեալ անկատար.

Եզա. Էի, էիր, էր. Իտիմ, իտին. իտի.
Յոգն. էաք, էիք, էին. Իտիք, իտինիզ. ըտըլար:

Անցեալ կատարեալ չունի, եղանիմէն կառնէ:

Հրամայական.

Եզա. Եր, եղիր, օլ: Յոգն. էք, երուք. եղէք, օլուն:

Ստորադասական.

Եզա. Իցեմ, իցես, իցէ. ըլլամ, ըլլաս, ըլլայ. օլամ ևէ:
Յոգն. իցեմք, իցէք, իցեն. ըլլանք, ըլլաք, ըլլան. օլաքՀևէ:
Աներևոյթ. Ել, ելոյ, ելով. ըլլալ, օլմաք:
Ընդ. անց. Եալ, եղած, օլմուշ: ապառ. ելոց, ըլլալու, օլաճաք:

146. Դիտողութիւն ա. Ասոր հրամայականը մինակ չիբանիր, այլ կըլլայ Ո՛ղջ եր, էք կը՛ երալք. որ ողջ կեցիր կը՛ ըլլայ. սա՛ղ օլ կը՛ օլասըղ: Սովորաբար ընէմինը կըբանի, եր, երուք: Իսկ ընդունելութիւնը եալ, մինակուլ կայ գրեանց մէջ, ու կըհոլովի (տե՛ս 15) եալ, ելոյ, եալք, ելոց:

147. Դիտողութիւն բ. Կըտեսնես որ սա եական բայը փակցելով մէկու կանոնաւոր բայերուն վերջը, անոնց եղանակը և ժամանակը և թիւքը կըձևացընէ. որպէս Շարժեմ, շարժես, շարժէ. շարժեմք, ևն: Հրամայականը էր, կընէ՝ մի՛ շարժեր. Ստորադասականը իցեմ, կընէ՝ շարժիցեմ. նմանապէս

աներևոյթը, ընդունելութիւնը, շարժել, շարժեալ, շարժելոց։ Ասով կիմացվի որ մնացած ժամանակներն ալ էական բային ուժովը կը ձևանայ․ այսինքն շարժեցի, շարժեցից, շարժեսցուք, շարժեա՛, շարժեսջիր, շարժեցէք ևն․ Թէպէտ գրեանց մէջ մինակ չերևնար։

## 148. Անկանոն բայը ԳՈԼ.

Սահմանական ներկայ.

Եզ. Գոմ, գոս, գոյ. կամ, կաս, կայ.
Յոգն. գոմք, գոյք, գոն. կամք, կաք, կան.

Անցեալ անկատար.

Եզ. . . . . գոյի, գոյր . . . . կայի. կար.
Յոգն. . . . . . . գոյին . . . . . կային.
Ստորադաս . . . . գուցէ . . . . կայ նէ.
. . . . գուցեն . . . . կան նէ.
Աներևոյթ. Գոլ, գոլոյ, գոլով. կենալ, ըլլալ.
Ընդունելի. Գոյող, ողի, ղաւ. եղող.

Դիտողութիւն ա. Ասոր մէկ քանի դէմքը չիդրենք, գրեթէ գրեանց մէջ չերևնար. բայց կընար ըլլալ, գոյե, գոյաք, գոյեք, գոյցեմ, գոյցես, գոյցեմք, գոյցեք։

Դիտողութիւն բ. Գոլ բայը կը նշանակէ՝ կամ, կըլլամ. ինչպես երբ կըսվի. Ոչ գոյ ոք իմաստուն, այսինքն չիկայ մէկ խելացի մը։ Ոչ գոյր նոցա տեղի. այսինքն չիկար անոնց տեղ։ Բայց շատ անգամ պարզ էմի նշանակութիւն ունի. ինչպես *Բացականացն գոս բաղձալի. այսինքն հեռու եղողներուն բաղձալու մը ես։

## 149. Անկանոն բայը ԵՂԱՆԻՄ.

Սահմանական ներկայ.

Եզ. Եղանիմ, եղանիս, եղանի. կըլլամ, կըլլաս, կըլլայ.
Յոգն. եղանիմք, եղանիք, եղանին. կըլլանք, կըլլաք, կըլլան.

Անցեալ անկատար.

Եզ. Եղանէի, եղանէիր, եղանէր. կըլլայի, կըլլայիր, կըլլար.
Յոգն. եղանէաք, եղանէիք, եղանէին. կըլլայինք, կըլլայիք, կըլլային.

Անցեալ կատարեալ.

Եզ. Եղէ կամ եղայ, եղեր, եղև. եղայ, եղար, եղաւ.
Յոգն. եղաք կամ եղեաք, եղէք կամ եղայք, եղեն. եղանք, եղաք, եղան.

Ապառնի.

Եզ. Եղէց, եղիցիս, եղիցի. ըլլամ, ըլլաս, ըլլայ.
Յոգն. Եղիցուք, եղիջիք, եղիցին. ըլլանք, ըլլաք, ըլլան.

Հրամայական ներկայ.

Եզ. Եղիր, մի եղանիր, եղիցի. Եղիր, մ'ըլլար, ըլլայ.
Յոգն. եղերուք, մի եղանիք, եղիցին. Եղէք, մ'ըլլաք, ըլլան.

Ապառնի.

Եզ. Եղիջիր, եղանիցիս, եղիցի. պիտի ըլլաս, պիտի ըլլայ.
Յոգն. եղիցուք, եղիջիք կամ եղանիջիք, եղիցին. պիտի ըլլանք ևն.

Ստորադասական ներկայ կըլլայ ինչպէս սահմանականը.

Ապառնի.

Եզ. Եղիցիմ կամ եղանիցիմ, ցիս, ցի. ըլլամնէ, ըլլասնէ, ըլլայնէ.
Յոգն. եղիցիմք կամ եղանիցիմք, ցիք, ցին. ըլլանքնէ, ըլլաքնէ, ըլլաննէ.
Աներև. Եղանել կամ եղանիլ, նելոյ, նելով. ըլլալ.
Ընդուն. անց. Եղեալ, եղելոյ, լով. եղած.
ապառ. եղանելոց, եղանելի. ըլլալու, ըլլալի.

Գիտելի. Հրամայականը եղէր, գրենք կարգէն համար, որ աւելի աշխարհաբար կըլլանի. գրոց ըննէմնը կըսուի՝ չէր.

---

## 150. Լծական բայը ԼԻՆԻՄ.

Սահմանական ներկայ.

Եզ. Լինիմ, լինիս, լինի. կըլլամ, կըլլաս ևն.
Յոգն. լինիմք, լինիք, լինին. կըլլանք, կըլլաք ևն.

Անց. անկատար.

Եզ. Լինէի, լինէիր, լինէր. կըլլայի ևն.
Յոգն. լինէաք, լինէիք, լինէին. կըլլայինք ևն.

Անց. կատարեալ Եղանիմին կառնէ.

Ապառնի.

Եզ. Լիցիմ, լիցիս, լիցի. . . ըլլամ, ըլլաս ևն.
Յոգն, լիցուք, լիցիք կամ լիջիք, լիցին. ըլլանք, ըլլաք ևն.

Հրամայական ներկայ.

Եզ. Լե՛ր, մի՛ լինիր. լիցի. ըլլա՛ կամ եղի՛ր, մի՛ ըլլար, ըլլայ.
Յոգն. Լե՛ք կամ լերո՛ւք, մի՛ լինիք. լիցին. եղէ՛ք, մի՛ ըլլաք, ըլլան.

Ապառնի.

Եզ. Լիջի՛ր կամ լինիջի՛ր, լիցիս, լիցի. ըլլաս պիտի, ըլլայ պիտի.
Յոգն. Լիցո՛ւք, լիջի՛ք կամ լինիջի՛ք, լիցին. ըլլաք պիտի ան :

Ստորադասական ներկայ, ինչպէս Սահմանականը :
Ապառնի.

| | | |
|---|---|---|
| Եզ. | Լինիցիմ, լինիցիս, լինիցի. | ըլլամ նէ, ըլլաս նէ ան. |
| Յոգն. | լինիցիմք, լինիցիք, լինիցին. | ըլլանք նէ, ըլլաք նէ ան. |
| Աներև. | լինել. լինելոյ. լինելով. | ըլլալ ան. |
| Ընդուն. ներկ. | Լինող, ողի, ողաւ. | ըլլող. |
| անց. | լինեալ կամ լեալ. | եղած. |
| ապառ. | լինելոց, լինելի : | ըլլալու : |

Գիտելիք. Ընդունելութիւն լինող, քիչ կըբանի. անոր տեղը կըդնենք՝ լեալ կամ եղեալ. երկուքը՝ լեալ, լի-ներոյ, նախդրիւ կըհոլովին, զլեալն, ընդ լիներոյն :
Ասկէց ետքը չորս լծորդութեանց խոնարհմունքը զատ զատ շարենք :

---

# ՅՕԴՈՒԱԾ Բ.

## Առաջին լծորդութեան վրայ :

151. Այն բայերն որ սահմանականը եմ կըվեր-ջանայ, առջի լծորդութիւն ըսինք (144). բայց ասոր մէջ ալ չորս կերպ խոնարհում կայ, որ կըտարբերի կատարեալ ժամանակին ձայնովը. վերջը ոմանք կըվերջանան՝ եցի. ոմանք միայն՝ ի. ոմանք՝ ացի. ոմանք ալ ոյի : Աս ետքինը կըսվի անցողական բայ, որու վրայ զատ խօսինք. (157 164) հիմակ իրեքին խոնարհմունքը մէկանց շարենք ներգործական բայերուն, ու ետքը իրենց կրաւորականնալ զատ դնենք քովէ քով :

# Առաջին լծորդութեան երեք օրինակք։

### Սահմանական ներկայ.

Եզա. Շարժեմ, ժես, ժէ. կըշարժեմ, ևն.
Հանեմ, հանես, հանէ. կըհանեմ, ևն.
Ասեմ, ասես, ասէ. կըսեմ, ևն։
Յոգն. Շարժեմք, շարժէք, շարժեն. կըշարժենք, ևն.
Հանեմք, հանէք, հանեն. կըհանենք, ևն.
Ասեմք, ասէք, ասեն. կըսենք, ևն։

### Անցեալ անկատար.

Եզա. Շարժէի, շարժէիր, շարժէր. կըշարժէի, ժէիր, ժէր.
Հանէի, հանէիր, հանէր. կըհանէի, նէիր, նէր.
Ասէի, ասէիր, ասէր. կըսէի, կըսէիր, կըսէր.
Յոգն. Շարժէաք, շարժէիք, շարժէին. կըշարժէինք, ժէիք, ժէին.
Հանէաք, հանէիք, հանէին. կըհանէինք, նէիք, նէին.
Ասէաք, ասէիք, ասէին. կըսէինք, կըսէիք, կըսէին։

### Անցեալ կատարեալ.

Եզա. Շարժեցի, շարժեցեր, շարժեաց. շարժեցի, ժեցիր, ժեց.
Հանի, հաներ, եհան կամ հան. հանեցի, հանեցիր, հանեց.
Ասացի, ասացեր, ասաց. ըսի, ըսիր, ըսաւ.
Յոգն. Շարժեցաք, շարժեցիք, շարժեցին. շարժեցինք, ցիք, ցին.
Հանաք, հանիք, հանին. հանեցինք, նեցիք, նեցին.
Ասացաք, ասացիք, ասացին. ըսինք, ըսիք, ըսին։

### Ապառնի.

Եզա. Շարժեցից, ժեսցես, ժեսցէ. պիտի շարժեմ, ժես ևն.
Հանից, հանցես, հանցէ. պիտի հանեմ, նես ևն.
Ասացից, ասասցես, ասասցէ. պիտի ըսեմ, ևն.
Յոգն. Շարժեսցուք, ժեսջիք, ժեսցեն. պիտի շարժենք ևն.
Հանցուք, հանջիք, հանցեն. պիտի հանենք ևն.
Ասասցուք, սջիք, սցեն. պիտի ըսենք ևն.

### Հրամայական ներկայ.

Եզա. Շարժեա, մի շարժեր, շարժէ, մի շարժեր,
շարժեսցէ. թող շարժէ.
Հան, մի հաներ, հանէ, մի հաներ,
հանցէ. թող հանէ.
Ասա, մի ասեր, ըսէ, մի՛ըսեր,
ասասցէ. թող ըսէ։
Յոգն. Շարժեցէք, մի շարժէք, շարժեցէք, մի շարժէք,
շարժեսցեն. թող շարժեն։
Հանէք, մի հանէք, հանեցէք. մի հանէք,
հանցեն. թող հանեն.

Ասացէք, կամ ասէք, մի ըսէք, մըսէք
ասէք, ասասցեն· թող ըսեն:

Ապառնի·

Եզ· Շարժեսջիր, կամ շարժեսցես, շարժեսցէ· շարժէս պէտք է·
Հանջիր կամ նիջիր; հանցէ· հանէս պէտք է·
Ասասջիր կամ ասասցես, ասասցէ· ըսէս պէտք է·
Յոգն· Շարժեսջիք, շարժեսջիք, շարժեսցեն· շարժէնք պէտք է·
Հանջիք, հանջիք կամ նիջիք, ցեն· հանէնք պէտք է·
Ասասջիք, ասասջիք, ասասցեն· ըսէնք պէտք է:

Ստորադասական ներկայ ինչպէս Սահմանականը:

Ապառնի·

Եզ· Շարժիցեմ, ժիցես, ցէ· շարժեմ նէ էն·
Հանիցեմ, նիցես, նիցէ· հանեմ նէ էն·
Ասիցեմ, ասիցես, ասիցէ· ըսեմ նէ էն:
Յոգն· Շարժիցեմք, ժիցէք, ժիցեն· շարժէնք նէ էն·
Հանիցեմք, հանիցէք, հանիցեն· հանէնք նէ էն·
Ասիցեմք, ասիցէք, ասիցեն· ըսէնք նէ էն:

Աներևոյթ·

Շարժել, Հանել, Ասել· ըլ· ըրլ·

Ընդունելութիւն:

Ներկ· Շարժող կամ շարժեցող· Հանող· Ասող կամ ասացող· ողը·
ողու:
Անց· Շարժեալ կամ շարժեցեալ· Հանեալ· Ասացեալ:
Ապառ· Շարժելոց· Հանելոց· Ասելոց:

153· Գիտելի ա· Ընդունելութիւն ներկայ ու անցեալ երկու կերպ դրինք, որ շարժող և շարժեցող, շարժեալ և շարժեցեալ· նմանապէս ասող և ասացող· զերէ առջինին օղ և եալ մասնիկները բուն արմատին կըփակչին, շարժող, շարժեալ· ասող· իսկ երկրորդին կըփակչին կատարեալին· որ շարժեցող· շարժեցեալ, ասացող, ասացեալ: Ասանկ իմացիր մէկալ բայերուն, որուն որ ներգործականը կամ կրաւորականը ունի եց մասնիկ կատարեալին մէջը, անոնց միայն կրնայ եցող, եցեալ: Ասոր համար հանեմին չըլլար՝ հանեցող, հանեցեալ· զերէ անոր հիչ մէկ ժամանակին չիկայ եց մասնիկ· նմանապէս իրեն տակը եղած բայերն ալ չեն ըլլար եցող կամ ցեալ:

154. Դիտելիք Է. Ներկայ ընդունելութիւնը ցոյց տըւինք. բայց գիտնալու է որ հին և շիտակ գըրվածքները աւելի ողով կըդնեն, շարժող, հանող, ասացող ևն. ցոյց գրելը ետքը մտեր է։

155. Դիտելիք Ը. Ուրիշ լեզուներու մէջ սահմանական և ստորադասական եղանակը ունին աւելի անցեալ ժամանակ, որ մէկը կըսեն յարակատար, մէկալը գերակատար. ինչպէս մեր աշխարաբարին մէջն ալ կըսենք՝ շարժեր եմ, շարժերէի, շարժած ըլլամ. կամ ըսեր եմ, ըսերէի ևն։ Բայց գրաբարին մէջ չունինք յատուկ խոնարհում ասանկ ժամանակներու. այլ անցեալ ընդունելութիւնը կըմիացընենք էական բային ժամանակին հետ. ու կըսենք յարակատար դնելով. շարժեալ եմ, հանեալ եմ, ասացեալ եմ։ Գերակատար կըսենք, շարժեալ էի, հանեալ էի, ասացեալ էի։ Նմանապէս ստորադասականին անցեալ կըսենք, շարժեալ իցեմ, հանեալիցեմ, ասացեալ իցեմ։ Նոյնն կըլլայ էական բայերուն ալ, եղեալ եմ, իցեմ, լեալ եմ, էի, իցեմ, նմանապէս իմանալու է միացեալ ընդրութեանց վրայ։

---

## 156. Վերը դրած ներգործական բայերուն կրաւորականը։

### Սահմանական ներկայ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Եզ. | Շարժիմ, | ժիս, | ժի. | կըշարժիմ ևն. |
| | Հանիմ, | հանիս, | հանի. | կըհանվիմ ևն. |
| | Ասիմ, | ասիս, | ասի. | կըսվիմ ևն. |
| Յոգն. | Շարժիմք, | շարժիք, | շարժին. | կըշարժինք ևն. |
| | Հանիմք, | հանիք, | հանին. | կըհանվինք ևն. |
| | Ասիմք, | ասիք, | ասին. | կըսվինք ևն։ |

### Անցեալ անկատար.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Եզ. | Շարժէի, | շարժէիր, | շարժէր կամ ժիւր. | կըշարժըվէի ևն. |
| | Հանէի, | հանէիր, | հանէր կամ նիւր. | կըհանվէի ևն. |
| | Ասէի, | ասէիր, | ասէր կամ ասիւր. | կըսվէի ևն. |
| Յոգն. | Շարժէաք, | շարժէիք, | շարժէին. | կըշարժըվէինք ևն. |
| | Հանէաք, | հանէիք, | հանէին. | կըհանվէինք ևն. |
| | Ասէաք, | ասէիք, | ասէին. | կըսվէինք ևն։ |

Անցեալ կատարեալ.

Եզ. Շարժեցայ, շարժեցար, շարժեցաւ. շարժըլըցայ են.
Հանայ, հանար, հանաւ. հանըլըցայ են.
Առացայ, առացար, առացաւ. առըլըցայ են։
Յոգն. Շարժեցաք, շարժեցայք, շարժեցան. շարժըլըցանք են.
Հանաք, հանայք, հանան. հանըլըցանք են.
Առացաք, առացայք, առացան. առըլըցանք են։

Ապառնի.

Եզ. Շարժեցայց, շարժեսցիս, շարժեսցի. շարժիլիմ պիտի են.
Հանայց, հանցիս, հանցի. հանըլիմ պիտի են.
Առացայց, առասցիս, առասցի. առըլիմ պիտի են։
Յոգն. Շարժեսցուք, շարժիջիք, շարժեսցին. շարժիլինք պիտի են.
Հանցուք, հանիջիք, հանցին. հանըլինք պիտի են.
Առասցուք, առիջիք, առասցին. առըլինք պիտի են։

Հրամայական.

Եզ. Շարժեաց, կամ շարժեցի՛ր, ժիջի՛ր, մի՛ շարժի՛ր,
շարժեսցի՛. շարժըլէ՛ են.
Հանի՛ր, հանիջի՛ր, հանցի՛ս, մի՛ հանիր, հանցի՛.
հանըլէ՛ մէկ դի են.
Առիջի՛ր, առաջի՛ր, առասցի՛ս, մի՛ առիջիր, առասցի՛.
առըլէ՛ են։
Յոգն. Շարժեցարո՛ւք, մի՛ շարժիք. շարժեսցի՛ն. շարժըլըցէ՛ք են.
Հանարո՛ւք կմ հանայ՛ք, հանիջի՛ք, հանցի՛ն. հանըլըցէ՛ք մէկ դի են
Առացարո՛ւք, առիջի՛ք, առասցի՛ն. առըլեցէ՛ք են։

Ստորադասական ներկայ ինչպէս Սահմանականը։

Ապառնի.

Եզ. Շարժիցիմ, ժիցիս, ժիցի. շարժըլիմ նէ են.
Հանիցիմ, նիցիս, նիցի. հանըլիմ նէ են.
Առիցիմ, առիցիս, առիցի. առըլիմ նէ են.
Յոգն. Շարժիցիմք, ժիցիք, ժիցին. շարժըլինք նէ են.
Հանիցիմք, նիցիք, նիցին. հանըլինք նէ են.
Առիցիմք, առիցիք, առիցին. առըլինք նէ են։

Աներևոյթ.

Շարժիլ, Հանիլ, Առիլ. ելոյ, ելով։

Ընդունելութիւն.

Անց. Շարժեալ կմ ժեցեալ, շարժելի. Հանեալ, Առացեալ.
Ապառ. Շարժելոց, Հանելոց, հանելի. Առելոց, առելի։

Գիտելիք. Աս կրաւորականները կրնան էական բայով ալ ձեւանալ. որ Շարժեալ լինիմ, կմ լինել.

շարժեալ եղէ կամ եղեց. շարժեալ լեր. շարժեալ լինիցիմ եւն.

---

## Չորրորդ կերպ առաջին լծորդութեան.

157. Ասացինք (151) թէ եմ վերջացած բայերէն կայ որ ուցանեմ կը վերջանայ, եւ խոնարհումն ալ տարբեր կըլլայ. որ կըսուի անցողական բայ. գէրէ ընելը անանկ կընշանակէ որ ուրիշին կանցընէ, ուրիշին ալ ընել կուտայ. ինչպէս զօրացուցանեմ ըսել է՝ ուժ կուտամ, կընեմ որ մէկը ուժովնայ.

Անցողականը կը ձեւանայ չէզոք բայերէն, ներգործականներէն քիչ կըլլայ. անոնց կատարեալին ծայրի ձայնաւորը կը ձգենք, մնացածը կը փակցընենք ուցանեմին հետ. զՊ չէզոք բայ է զօրանամ. իրեն կատարեալը՝ զօրացայ. ձգելով այ ձայնաւորը, կընենք՝ զօրացուցանեմ. Ասանկ ամաչեմ. կտր. ամաչեցի. ձգէ իմին, կըլլայ ամաչեցուցանեմ. Զարհուրիմ. կտր. զարհուրեցայ. զարհուրեցուցանեմ. Շիջանիմ. կտր. շիջայ. շիջուցանեմ. Զարթնում. կտր. զարթեայ. զարթուցանեմ.

Ասանկ բայից խոնարհումը կըլլայ Շարժեմին պէս. իրենց հրամայականը սահմանականին կէսը կըլլայ. երբոր – գիրէն կարես. զՊ զօրացուցանեմ, ձգէ ուցանեմ, մնացածը զօրացո՛ կըլլայ հրամայական. Օրինակի համար դնենք մէկ խոնարհումը.

Սահմ. Ներկ. Ամրացուցանեմ. նես. նէ. նեմք. նէք. նեն.
Անկատար. Ամրացուցանէի. նէիր. նէր. նէաք. նէիք. նէին.
Կատարեալ. Ամրացուցի. ցուցեր. ցոյց. ցուցաք. ցուցէք. ցուցին.
Ապառնի. Ամրացուցից. ցուսցես. ցուսցէ. ցուսցուք. ցուսջիք. ցուսցեն.
Հրամայ. Ամրացո՛. մի ամրացուցաներ. ամրացուսցես. ամրացուսջիք, ամրացուցանիջիր, ամրացուսցէ, ամրացուսցուք, ամրացուցէք, ամրացուսջիք, ամրացուսցեն.
Ստորադ. Ամրացուցանիցեմ. նիցես. նիցէ. նիցեմք. նիցէք. նիցեն.
Աներեւ. Ամրացուցանել. Ընդուն. Ամրացուցանող կամ ցուցող. ամրացուցեալ. ամրացուցանելոց.

Ասոր կրաւորականն ալ կրնայ խոնարհիլ ինչպէս շարժիլը. իբր Ամրացուցանիմ. ամրացուցայ. ամ-րացուցայց. ամրացուսջիք. ամրացուցանիցիմ ևն. (տես 192.)

Յետ իմանալուն առջի լծորդութենէ կերպ կերպ խոնարհմունքը, պէտք է որ աշակերտը սերտէ մէկ քանի բայ, որ իւրաքանչիւր օրինակին պէս կըխո-նարհին. ու բերնով կամ գրելով ալ անոնց ամէն եղանակը եւ ժամանակը ձեւացընէ.

---

158. Բայք որ Շարժեմին պէս խոնարհին.

Ներգործականք.

| | | |
|---|---|---|
| Ազդեմ. | դեցի. դեամ. | Իմաց տալ. հապէրլէմէք. |
| առակեմ. | կեցի. կեամ. | առաջ բերել. խալք ընել. |
| բեւեռեմ. | ռեցի. ռեամ. | գամել, մըխլամաք. |
| գանեմ. | նեցի. նեամ. | ծեծել, թակել. տէօյմէք. |
| գրաւեմ. | ւեցի. ւեամ. | ինք առնել. զապթ ընել. ռէհին դնել. |
| ըմբերանեմ. | նեցի. նեամ. | պապանձեցընել. աղզըն գափամաք. |
| ըմպեմ. | պեցի. պեամ. | խըմել. իչմէք. |
| թելադրեմ. | դրեցի. դրեամ. | խրատ տալ. էօյիւտ վէրմէք. |
| ծախեմ. | խեցի. խեամ. | խարճել, հատցընել. |
| կազմեմ. | մեցի. մեամ. | շինել, խազըրլըղ ընել. |
| ձաղեմ. | ղեցի. ղեամ. | մասխարա ընել. |
| ձաղկեմ. | կեցի. կեամ. | չըպխով ծեծել. |
| ճանաչեմ. | չեցի. չեամ. | ճանչնալ. տանըմաք. |
| ճառեմ. | ռեցի. ռեամ. | պատմել. զրուցել. նագլ էթմէք. |
| մարզեմ. | զեցի. զեամ. | կրթել. սորվեցընել. էօյ-րէթմէք. |
| նուաճեմ. | ճեցի. ճեամ. | տակ առնել. զապթէ ալմաք. |
| որոնեմ. | նեցի. նեամ. | փընտռել. արամաք. |
| պատրեմ. | րեցի. րեամ. | խաբել. ալդաթմաք. |
| պարտեմ. | տեցի. տեամ. | յաղթել. եէնմէք. |
| ջամբեմ. | բեցի. բեամ. | կերցընել. եէտիրմէք. |
| սպառեմ. | ռեցի. ռեամ. | հատցընել. տիւքէթմէք. |

Ներգործականներդ չէզոքականք։

| | | |
|---|---|---|
| Ամաչեմ · չեցի · չեա՛ · չեալ կամ չեցեալ · | | Ամչնալ · ուտանմագ։ |
| ապաշաւեմ · ւեցի · ւեա՛ · | | փիշման ըլլալ, վազ գալ։ |
| դանդաչեմ · չեցի · չեա՛ · | | եբեբըքլէլ։ |
| զանգիտեմ · տեցի · տեա՛ · | | վախնալ, գօրգմագ։ |
| խուսեմ · սեցի · սեա՛ · | | մէկ դի քաշուիլ · սըվըշմագ։ |
| Ճեմեմ · մեցի · մեա՛ · | | քալէլ · կէզինմէք։ |
| մեղանչեմ · չեցի · չեա՛ · | | մեղք ընել · ղարար տալ։ |
| յամեմ · մեցի · մեա՛ · | | ուշանալ · կէճիքմէք։ |
| նիրհեմ · հեցի · հեա՛ · | | մրափել · ույուգլամագ։ |
| չուեմ · ուեցի · ուեա՛ · | | ճամբայ ընել · եօլա չըգմագ։ |

Կրաւորականներդ չէզոքականք և հասարակք, որ Շարժիմին պէս կըխոնարհին։

| | | |
|---|---|---|
| Ապրիմ · րեցայ · րեա՛ց · | | Ապրել, եաշամագ · կէչինմէք։ |
| բնակիմ · կեցայ · կեա՛ց · | | տեղ մը կենալ · օթուրմագ։ |
| դադարիմ · րեցայ · րեա՛ց · | | դադրիլ · դուրմագ։ |
| երևիմ · րևեցայ · րևեա՛ց · | | երևնալ · կէօրինմէք։ |
| հրաժարիմ · րեցայ · րեա՛ց · | | ետ կենալ · վազ կէչմէք։ |

159. Ասոնցմէ ոմանք են աւ կըվերջանան՝ կըլլան ներգործակերպ, իբր բնակեմ, դադարեմ, հրաժարեմ, ու կըխոնարհին ներգործականին պէս, բնակեցի, դադարեցի ևն։

| | | |
|---|---|---|
| Բարբառիմ · ռեցայ · ռեա՛ց · | | Խօսել և խօսուիլ։ |
| դատիմ · տեցայ · տեա՛ց · | | դատել և դատուիլ։ |
| խորհիմ · հեցայ · հեա՛ց · | | մտմտալ և մտածուիլ։ |
| խօսիմ · սեցայ · սեա՛ց · | | խօսել և խօսուիլ։ |
| խոստովանիմ · վանեցայ · նեա՛ց · | | խոստովանութիւնք ընել և խոստովանուիլ։ |
| կամիմ · մեցայ · մեա՛ց · | | ուզել և ուզուիլ։ |
| շահիմ · հեցայ · հեա՛ց · | | շահ ընել և շահուիլ։ |

Ասանկ բայերը աւելի ներգործականի նշանակութ̄ կըբանին, թէպէտ ձայնը կրաւորականի ըլլայ · ուստի բարբառիլ, դատիլ, խոստովանիլ, ըսել է՝ կըխօսէր, կըդատէր, կըխոստովանէր։

Նորբոր կրաւորական նշանակութիւն պէտք ըլլայ ի-մացընել, եական բայով աւելի կըբանին, ինչ գա-տեալ էղի, էղի կամեցեալ, խօսեալ ըէնէջէ եւն.

---

160. Բայք որ Ճանէմին պէս կըխոնարհին, աւե-լի անոնք են որ անէմ կամ անէմ կըվերջանան. պա-կի ժամանակ ալ կըխոտորին։

Ներգործական բայք։

Աճեմ. աճի. եաճ կմ աճ. Բուէրէլ. չէբէրմէք։
անխձանեմ. անխձի. անէձ. անէձէլ. նաւլէբ տալ։
արկանեմ. արկի, արկ կմ եարկ. ձգել, նետել, արագման։
բեկանեմ. բեկի. եբեկ. կոտրել, փըռման։
բերեմ. բերի. եբեր. բերել, չէբերմէք։
գտանեմ. գտի. եգիտ. հր. գիտ. գտնել. պուլմաք։
եղծանեմ. եղծի. եղծ. աւրել. ճմլէլնէլ. պօզ-մաք։
զատանեմ. զատի. զատեաց. հր. զատեա. զատէլ. այըրմաք։
լուծանեմ. լուծի. ելոյծ. հր. լոյծ. արձըկէլ, չէօզմէք, սէօք-մէք։
լուցանեմ. լուցի. ելոյց. լոյց. վառել. եագմաք։
հարկանեմ. հարի. եհար. հար. զարնել. վուրմաք։
մուծանեմ. մուծի. եմոյծ. մոյծ. մըտցնել. խօթել. սօգ-մաք։
սոգտանեմ. սոգտի. սոգտեաց. հր. սոգտեա. ծըծարել. այըրմաք։
ցուցանեմ. ցուցի. եցոյց կմ ցոյց. ցուցնել, կէօսդէրմէք։

Ասոնց ոմանք էմ ալ կըվերջանան. որ. անիծեմ, բեկէմ, եղծեմ, զատեմ. ամ ատենը՝ շարժեմին պէս կը-խոնարհին, անիծեցի, զատեցի եւն։ Ասոնց բարդածն ալ, վերածեմ, յեանարկեմ, նորատեղծեմ, կըլլայ՝ վե-րածեցի, ձեռնարկեցի, նորատեղծեցի։

## ՙՆերգործական չէզոք։

Անցանեմ. անցի. անց. — Անցնիլ. կէչմէք։
ելանեմ. ելի. ել. — Ելնել. չըգմաք։
իջանեմ. իջի. էջ. — Իջնալ. ինմէք։
համբերեմ. բերի կա՛մ բերեցի. — Համբերել. սապր էթմէք։
յանցանեմ. յանցեայ. եաւ. եայց. յանցի՛ր. — Խօսքէ կա՛մ օրէնքէ անցնել. կիւնահ էթմէք։

161. Կրաւորակերպ չէզոք, և համառօտ բայք որ ՙանիմ են, պէս կըխոնարհին։

Ագանիմ. ագայ. ագի՛ր. (իբրև հագուստ, զոր հագնիլ.) — Գիշերը տեղ մը կենալ, գօնագ էթմէք։
անկանիմ. անկայ. անկի՛ր. — Ընկնիլ, տիւշմէք։
բուսանիմ. բուսայ. բուսի՛ր. — Բուսնիլ, պիթմէք։
զբօսանիմ. զբօսայ. զբօսի՛ր. — Զէֆք ընել. սէֆալանմաք։
զգաստանիմ. զգաստայ. զգաստի՛ր. — Յածնալ, քաշլիլ։
մածանիմ. մածայ. մածի՛ր. — Կպչիլ, թութուշմաք։
նստիմ. նստայ. նի՛ստ. — Նստիլ. օթուրմաք։
ջեռանիմ. ջեռայ. ջեռի՛ր. — Տաքնալ, ըսընմաք։
սնանիմ. սնայ. սնի՛ր. — Սնիլ. պէսլէնմէք։
Ծնանիմ. ծնայ. ծնի՛ր. — Տօղուրմաք և տօղմաք։
ուսանիմ. ուսայ. ուսի՛ր. — Էօյրէնմէք և էօյրէնիլմէք։
սկսանիմ. սկսայ. սկսի՛ր. — Պաշլամաք և պաշլանմաք։
վարկանիմ. վարկայ. վարկի՛ր կա՛մ վարկեա՛. վարկեալ կա՛մ կուցեալ. — Սայմաք և սայըլմաք։
տանիմ. տարայ. տա՛ր. — Կէօթիւրմէք և կէօթիւրիւլմէք։

Ասանկ կըխոնարհին ան կրաւորակերպ չէզոքները որ չիմ կըվերջանան։

Երկնչիմ. երկեայ. երկի՛ր. (ընդունել.) երկուցեալ. — Վախնալ. գօրգմաք։
Թաքչիմ. քեա՛. քի՛ր. քուցեալ. — Պահըտիլ, սագլանմաք։

Թռչիմ, և Թռանիմ. Թռեայ. Թռչիլ, ուչմաք։
  Թռիր. Թռուցեալ.
կորնչիմ. կորեայ. կորիր. Կորսուիլ. Գայպ օլմաք։
  կորուսեալ.
մատչիմ. մատեայ. մատիր. Մօտենալ. Եաքլաշմաք։
  մատուցեալ.
մարտնչիմ. մարտեայ. տիր. Կռուիլ. Ճէնկլէշմէք։
  մարտուցեալ։

162. Դիտողութիւն Ա. Այս հասարակ և չէզոք բայերուն ստորադասականը երկու կերպ կըլլայ. զ. օ. ծնցիմ և ծնանիցիմ. ուսցիմ և ուսանիցիմ. վարկիցեմ և վարկանիցիմ. տարցիմ և տանիցիմ։ Նմանապէս, երկիցեմ և երկնչիցիմ. Թաքիցեմ և Թաքչիցիմ. կորիցեմ և կորնչիցիմ ևն։

Դիտողութիւն Բ. Հասարակ բայերը ներգործական մտքով կառնեն ող մասնիկ. ուստի կըսուի ծնող և ծնանող. ուսող և ուսանող ևն. Նմանապէս, փախող, խօսող, ճաշող և ճաշեցող ևն։

163. Այն բայերն որ ունէին պէս կըխոնարհին, քիչ կան. այսինքն.

Գիտեմ. գիտնալ. գիտեմք. գիտացի. գիտաց. հր. գիտեա. գիտացից. գիտիցեմ. գիտող. գիտացեալ։ Կրաւորական չըլլար՝ Գիտեմ. այլ էական բայով, գիտացեալ լինիմ ևն։ Այս Գիտանամ կամ Գիտենամ, որ ներգործական է։ տես (174)

Կարեմ. Կրնալ. գատիր օլմաք։ Կարացի. կարաց. կարացից. հր. կարացիր, կամ կարող լեր. կարացեալ։ Կրաւորական չըլլար Կարեմ. ու կրաւորական մտքով հիչ չիբանիր. այլ չէզոքի պէս։ Երբոր Կարեմը կար կարել իմացուի, կըխոնարհի շարժեմին պէս իր կրաւորականովը։

---

164. Անցողական բայք։

Լաւ իմանալու համար՝ ասոնց պարզը գնենք իր կատարեալ ժամանակովը, ուսկից կըձևանայ ան-

ցուցանել. և պաղլին ալ ց գրին տեղը կըդնեն՝ կամ ղ, ձայնը մօտ ըլլալուն համար ։

Ապրիմ. ապրեցայ. Ապրեցուցանեմ. ապրեցնել. փրկել ։

Արբենամ. արբեցայ. Արբեցուցանեմ. գինովցնել, արբշռեցնել ։

Թաքչիմ. թաքեայ. Թաքուցանեմ. պահընել. ծածկել ։

Կեամ. կեցի. Կեցուցանեմ. կենդանացնել. ողջացնել ։

Մեղայ կէտր. Մեղուցանեմ. մեղք գործել. մեղանչել ։

Ելանեմ. ելի. Ելուզանեմ. ելուզի, ելոյզ, եւ ելուզեալ. դուրս հանել ։

Ընկլնում. ընկլայ. Ընկլուզանեմ. ընկլո. թաթխել. ընկղմել ։

Կորնչիմ. կորեայ. Կորուսանեմ. կորո. կորսնցնել. կորուստ ընել ։

Փլանիմ. փլայ. Փլուզանեմ. փլո. փլցնել. քակել ։

Արբի. Արբուցանեմ. խմցնել. խմեցնել ։

Զգենում. զգեցայ. Զգեցուցանեմ. հագցնել. հագուեցնել ։

Լնում. լցի. Լցուցանեմ. լեցնել. լեցուցանել ։

Լսեմ. լսեցի. Լսեցուցանեմ, լուայ. Լուուցանեմ. լսել տալ. իմացնել ։

Ծանեայ. Ծանուցանեմ. ճանչցնել. ծանօթացնել ։

Հատանեմ. հատի. Հատուցանեմ. կտրել. վճարել ։

Ուսանիմ. ուսայ. Ուսուցանեմ. սորվեցնել. սովորեցնել ։

---

165. Առաջին բայի առաջին լծորդութիւնը ։

Ներգործական ԱՌՆԵՄ. ընել. շինել ։

Սահմ. Առնեմ. նես. նէ. նեմք. նէք. նեն ։
Առնէի. նէիր. նէր. նէաք. նէիք. նէին ։

Կատ. Արարի. արարեր. արար. արարաք. արարիք. արարին ։

Ապառ. Արարից. արասցես. արասցէ. արասցուք. արասջիք. արասցեն ։

Հրամ. Արա՛. արասջի՛ր կամ առնիջի՛ր. մի՛ առներ.

արասցէ. արասցուք. արարէք. արասջիք
կամ առնիջիք. մի առնէք. արասցեն.

Ստոր. Առնիցեմ. նիցես. ցէ. առնիցեմք. նիցէք, կամ արասցէք. նիցեն.

Աներ. Առնել. Ընդուն. Արարող. (քիչ առնող.) արարեալ. առնելոց.

Ասոր կրաւորականը ԼԻՆԵԼԻ պէս կընշանակէ.

Սահ. Առնիմ. նիս. նի ևն. Առնէի, ինչպէս ներգործականը.

Անց. Արարայ. արարար. արարաւ. արարաք, արարայք. արարան.

Ապառ. Արարայց. արասցիս. արասցի. արասցուք. առնիջիք. արասցին.

Հրամ. Առնիջիր. արասցիս. մի առնիր. արասցի. առնիջիք. մի առնիք. առնիցին.

Ստոր. Առնիցիմ, ցիս ևն.

Աներ. Առնիլ. նելոյ. Ընդուն. արարեալ. (ոչ արարեցեալ.) առնելի, առնելոց.

166. Այլ ներգործական ԴՆԵԼ.

Սահ. Դնեմ. դնես. դնէ. դնեմք. դնէք. դնեն. դնէի ևն.

Անց. Եդի. եդիր կամ եդեր. եդ. եդաք. եդիք. եդին. (իբր աշխարհաբար դրին)

Ապառ. Եդից. դիցես. դիցէ. դիցուք. դիջիք. դիցեն.

Հրամ. Դիր. դիջիր. մի դներ. դիցէ. դիք կամ դիջիք. մի դնէք. դիցեն.

Ստոր. Դնիցեմ. ցես, ցէ ևն.

Աներ. Դնել. դնելոյ. լով. Ընդուն. դնող. եդեալ. դնելոց. (քիչ դրեալ)

Ասոր կրաւորականը.

Սահ. Դնիմ. նիս ևն. Դնէի ևն, ներգործականին պէս.

Անց. Եդայ. եդար. եդաւ. եդաք. եդայք. եդան.

Ըղձա. Եդայց . դիցես . դիցէ . դիցուք . դիջիք . դիցեն :
Հրամ. Դիջիր . դնիջիր . դիցես . մի դներ . դիցէ . դիցուք . եդարուք . կամ դնիջիք . մի դնիք . դիցեն :
Ստոր. Դնիցիմ . ցիս են :
Աներ. Դնել . դնելոյ : Ընդուն . եդեալ . (ոչ դրեցեալ) . դնելի . դնելոց :

Ասոր պարզին չըլլար դրօղ, դրեալ, բայց բարդածը՝ վերադրեմ, դիմադրեմ, բանադրեմ, կըխոնարհի գործեմին պէս . ուստի կըլլայ՝ վերադրեի . վերադրեցի, վերադրող, վերադրեալ են :

---

Պակասաւոր բայք առաջին լծորդութեան :

167. Ներգործական Ուտեմ, Կերի :

Սահ. Ուտեմ . ուտես . ուտէ . ուտեմք . ուտէք . ուտեն : Ուտէի են :
Կատ. Կերի , կերեր . եկեր . կամ կերայ . կերար . կերաւ . կերաք . կերիք կամ կերայք . կերին կամ կերան :
Ըղձա. Կերից կամ կերայց . կերիցես . ցէ . կերիցուք . րիջիք . րիցեն :
Հրամ. Կեր , կերիջիր . ուտիջիր . մի ուտեր . կերիցէ . կերիցուք . կերէք կամ կերայք . կերիջիք . մի ուտէք . կերիցեն :
Ստոր. Կերիցեմ, կամ ուտիցեմ . ցես . ցէ են :
Աներ. Ուտել . Ընդուն . կերող . կերեալ . ուտելոց :
Ասոր կրաւորականը . Ուտիմ . տիս են : Ուտիցիմ կամ կերիցիմ, ցիս են : Ուտիլ . ուտելի կամ կերելի : Անցածը ներգործականին պէս , կամ եական բայով . կերեալ եղէ , եղէց , լինիցիմ են :

168. Այլ ներգործական Արբի . որ պակասը կառնէ ըմպեմէն :

Սահ. Ըմպեմ, ըմպէի են :
Կատ. Արբի . արբեր . արբ կամ էարբ . արբաք . արբիք . արբին :

Ապառ. Արբից. արբցես. արբցէ. արբցուք. արբ-
ջիք. արբցեն:
Հրամ. Արբ. արբջի՛ր. արբցե՛ս. մի՛ ըմպեր. արբ-
ցէ՛. արբցո՛ւք. արբէ՛ք. արբջի՛ք. մի՛ ըմ-
պէ՛ք. արբցե՛ն:
Ստոր. Ըմպիցեմ, ցես եւն:
Աներ. Ըմպել. Ընդուն. ըմպօղ. ըմպեալ կամ
արբեալ. ըմպելոց:

Ասոր կրաւորականը էական բայով միայն կըլլայ, ըմպեալ, կամ արբեալ լինիմ եւն:

---

169. Այլ պակասաւոր համարակ Ունիմ. իրեն պակասը կառնէ Կալնումէն, որու սահմանականը քիչ կըբանի:

Սահ. Ունիմ. նիս. եւն: Ունէի, նէիր եւն:
Անց. Կալայ. կալար. կալաւ. կալաք. կալայք.
կալան:
Ապառ. Կալայց. կալցիս կամ ցես. ցի կամ ցէ.
կալցուք. կալջիք կամ ունիջիք. կալցին
կամ ցեն:
Հրա. Կա՛լ կա՛մ կա՛. կալջի՛ր. կալցի՛ս կամ ցե՛ս.
կամ ունիջի՛ր. մի՛ ունիր. կալցի՛. կա՛մ ու-
նիցի՛: Կալէ՛ք կամ կալարո՛ւք. կալջի՛ք.
մի՛ ունիք. կալցի՛ն:
Ստոր. Ունիցիմ, ցիս եւն:
Աներ. Ունել կամ նիլ. նելոյ: Ընդուն. ունօղ.
կալեալ. (ոչ ունեցեալ) ունելի, ունելոց:

Ասոր կրաւորականը էական բայով ալ կըլլայ, կալեալ լինիմ, եղէ եւն:

Ունիմէն կըշինուի ընդունիմ, որ խապուել ընել. կը-խոնարհի՝ ընկալայ. ընկալայց. ընկա՛լ. ընդունիցիմ. ընդունող. ընկալեալ. ընդունելի: Քիչ տեղ շարժեմին պես, ընդունեցի. ընդունեա՛. ընդունել:

Այս բարդածը ակնունիմ, ու միայն կըխոնարհի, ակնկալայ. ակնկալայց. ա՛կնկալ: Նոյնպէս վերջանայ էմ: Ընկալեմ, Հիւրընկալեմ, Տիեզերակալեմ, ան ժամանակը ամենեւին շարժեմին պես կըխոնարհի ներգործական ալ, կրաւորական ալ:

### 170. Բայք պակասաւորք:

Պարտիմ, իբրեւ հասարակ բայ, պարտական եմ ըսել է. անխտիր խոնարհում ունի. Պարտիմ, տիս. եւն. Պարտէի եւն. Պարտեցիմ, ցիս եւն:

Մարթիմ, իբրեւ կրաւորական, կրնամ ըսել է. կը խոնարհի, մարթիմ. թիս եւն: Մարթեցիմ, ցիս եւն: Իսկ որ ըլլայ ներգործէր կամ ներգործայ, ա-նոր սահմանականը աւելի ներգործական է:

Գոլ, միայն հրամայականը կայ. կընշանակէ՝ ե-ղէ՛, եղէ՛: Ըլլայ, գողջիր, գողցես, գողցէ. գող-ցուք, գողէք, գողջիք, գողցեն:

---

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

### Երկրորդ Լծորդութեան Վրայ:

171. Երկրորդ լծորդութիւնը ան բայերուն է՝ որ ամ կը վերջանան. ու երկու կերպ կը գտնուի. մէկին կատարեալը կը վերջանայ ի կամ ցի, և ապառնին էց, առջի լծորդութեան ներգործականին պէս. ու մէկալինը՝ այ, այց, առջինին կրաւորականին պէս:

Երկուքին օրինակը դնենք մէկանց աս ներգոր-ծական բայերուն վրայ. Լուանամ. վըլանալ. եայ-գամաք. Խոստանամ, խօսք տալ. սէօզ վէրմէք:

Սահմանական ներկայ.

Լուանամ. նաս. նայ. լուանամք. նայք. նան:
Խոստանամ. նաս. նայ. նամք. նայք. նան:

Անց. անկատար.

Լուանայի. նայիր. նայր. նայաք. նայիք. նային:
Խոստանայի. նայիր. նայր. նայաք. նայիք. նային:

Անց. կատարեալ.

Լուացի, լուացեր, լուաց. լուացաք, ցիք. ցին:
Խոստացայ, ցար, ցաւ. խոստացաք, ցայք. ցան:

Ապառնի.

Լուացից, ասցես, ասցէ. լուասցուք. ասջիք, ասցեն:
Խոստացայց, ասցիս, ասցի. խոստասցուք. ասջիք. ասցին

Հրամայական.

Լուա՛ , կա՛մ լուաջի՛ր , լուասցէ՛ս · մի՛ լուանար · լուասցէ ·
Լուասցո՛ւք · լուացէ՛ք · լուաջի՛ք · մի՛ լուանայք ·
լուասցէ՛ն ։

Խոստացի՛ր , խոստաջի՛ր · մի՛ խոստանար · խոստասցի ·
Խոստասցո՛ւք · խոստացէ՛ք , խոստացարո՛ւք , խոստաջի՛ք ·
մի՛ խոստանայք , խոստասցի՛ն ։

Ստորադասական.

Լուանայցեմ · ցես · ցէ · ցեմք · ցէք · ցեն ։
Խոստանայցեմ · ցես · ցէ · ցեմք · ցէք · ցեն ։
ԱՆԵՐ. Լուանալ · խոստանալ · նալոյ · լով ։
ԸՆԴ. Լուացող · լուացեալ · լուանալոց ։
Խոստացող · խոստացեալ · խոստանալոց ։

172. ԳԻՏԵԼԻՔ. Այս լծորդութեան բայերը, և աւելի սոսկ ամ վերջացածը, քիչ կըգտնուին կրաւորական ձայնով, մանաւանդ սահմանականի ներկան · այլ էական բայով, կամ ներգործականը կրաւորականի տեղ կառնուլի ։ Օրինակի համար լուանալին կրաւորականը դնենք ։

| | |
|---|---|
| Սահ. | Լուանիմ, նիս , նի · նիմք · նիք · նին ։ |
| Անկ. | Լուանայի [illegible] · և ոչ լուանէի ։ |
| Կատ. | Լուացայ · ցար , ցաւ , ցաք , ցայք , ցան ։ |
| Ապառ. | Լուացայց · լուասցիս · սցի · սցուք · սջիք · սցին ։ |
| Հրա. | Լուա՛ , կա՛մ լուացի՛ր · լուաջի՛ր · լուասցի · լուասցո՛ւք · լուաջի՛ք , լուացարո՛ւք · լուասցի՛ն ։ |
| Ստոր. | Լուանայցիմ · նայցիս · ցի · ցիմք · ցիք · ցին ։ |
| Աներ. | Լուանիլ · լուանալոյ · Ընդու. · լուացեալ · լուանալի ։ |

Այսուհետև դնենք աս լծորդութեան մէկ քանի բայ, իրենց կրաւորականնալ ծանուցանելով ։

173. Ներգործականք լուանամին պէս ։

Աղամ, աղալ. [illegible] ։ աղացի , աղա՛ · աղայցեմ ։ Կրաւ. , աղացեալ լինիմ, աղացայ , աղացիք · աղայցիմ ։

Ամամ, Թափել. Վաթել. Տէօքմէք ։ ամացի, ամա՛. կրաւ. ամացայ. ամացի՛ր. ամայցիմ ։

Բանամ, Բանալ. Աչմաք ։ բացի. բացեր. եբաց. բա՛ց ։ կրաւ. բանիմ. բացայ. բացայց. բացի՛ր. բանայցիմ ։

Բառնամ. Վերցնել. Գալտըրմագ ։ բարձի, բարձեր, եբարձ, բարձ. բառնայցեմ. բարձից, բարձեալ ։ Կրաւ. բառնիմ. բարձայ. բառնայցիմ. բարձայց. բարձի՛ր. Այսպէս համբառնամ կամ ամբառնամ, իբրև ներգործական, Վեր վերցնել. համբարձի ևն ։ Կրաւ. համբարձայ. ձայց, ձի՛ր ։ Ասանկ կըխոնարհի չէզոք նշանակութ. ալ ։

Զգամ, զգալ, իմանալ. տույմաք ։ զգացի, ցեր, զգաց. զգացից. զգա՛ ։ Կրաւ. զգացեալ լինիմ ևն ։

Թանամ, Թրջել. Իսլաթմաք ։ թացի. թա՛ց ։ կրաւ. թանամ, կամ թացեալ լինիմ. թացայ. թացայց. թանայցիմ ։

Լամ, լալ. աղլամաք ։ լացի, ելաց, լա՛ց. լայցեն ։ կրաւ, լացեալ լինիմ ևն ։

Խոկամ, Մտմտալ. Տիւշիւնմէք ։ խոկացի կամ խոկացայ. խոկա՛. խոկայցեմ. կրաւ, չըլլար ։

Կարդամ, Կարդալ. Օգումաք. Կանչել, Չաղըրմաք ։ կարդացի. կարդա՛ ։ կրաւ ևն. կարդացեալ լինիմ. կարդացայ ։

Հաստատամ, Հաստատել. Բինամաք ։ հաստատացի. հաստատա՛. հաստատայցեմ ։ կրաւ, հաստատացեալ լինիմ, հաստատացայ. հաստատացայց, հաստատայցիմ ։

Ողբամ, Խեղճ լալ. Իյնլէմէք ։ ողբացի. ողբա՛ ։ կրաւ. ողբացեալ լինիմ ։

Չեզոքական լուանամին պէս ։

Անսամ, Խօսք մտել. Գուլագ էթմէք ։ անսացի, անսա՛. անսայցեմ ։

Գնամ, Երթալ. Կիթմէք ։ գնացի. գնա՛ ։

Եռամ, Եփ ելլել, Գայնամաք ։ եռացի. եռա՛ ։

Կամ, Կենալ. Տուրմաք ։ կացի. եկաց, կա՛ց ։

Մնամ, Մնալ. Գալմաք ։ մնացի, մնա՛ ։

Տոկամ, Դիմանալ. Տայանմաք ։ տոկացի. տոկա՛ ։

Ասոր տակը կըխոնարհի կեամ, ապրիլ. եաշամաք.

բայց տարբեր կերպ ունի · որ Անկատ · կէի , կէիր , կէայր · կէաք , կէիք , կէին ։ Անցեալ · կեցի , կե-ցեր , եկեաց , կեցաք , կեցիք , կեցին ։

Ապառ · կեցից , կեցցես , կեցցէ , կեցցուք , կեց-ջիք , կեցցեն ։

Հրամ · կեաց , մի կեար · կեցջիր · կեցէք , կեցջիք ։

Ստոր · կեցցեմ կամ կեայցեմ , ցես եւն ։ ընդուն · կեցող , կեցեալ , կելոյ ։

174 · Ներգործականք խոստանամին դէմ ։

Անգիտանամ , չգիտնալ · պիլմէմէք ։ անգիտացայ · ցայց · ցիր ։

Գիտանամ կամ գիտենամ , գիտնալ · պիլմէք ։ գիտացայ · ցայց · ցիր , կամ գիտա ։

Գողանամ , գողնալ · չալմագ ։ գողացայ · ցայց · ցիր ։

Զլանամ , չէ ըսել , չիտալ · ինքեար էթմէք ։ զլացայ · ցայց , ցիր ։

Զղջանամ , փիշման ըլլալ ։ զղջացայ · ցայց · ցիր ։ Կայ զղջամ · զղջացի · զղջա ։

Իմանամ , իմանալ · անլամագ ։ իմացայ , ցայց · հր · իմա , իմացիր , իմաց ։ կրաւ · իմանիմ · նիս · եւն · իմա-նայցիմ · ցիս եւն · միացածը ներգործականին պէս , կամ էական բայով ։

Հոգամ , հոգ տանիլ · գայղըրմագ ։ հոգացայ , ցայց · ցիր · կամ հոգա ։ Երբեմն , հոգացի · ցից ։

Մերկանամ , լաթը հանել · սօյունմագ ։ մերկացայ · ցար , ցաւ , կամ մերկաց , ցայց , ցիր ։ Երբեմն · մեր-կացի , ցից ։

Մոռանամ , մոռնալ · ունութմագ ։ մոռացայ , ցայց · մոռա կամ մոռացիր ։ կրաւ · մոռանիմ · մոռա-նայցիմ · կամ մոռացեալ լինիմ , եղէ եւն ։

Յղանամ , ծոցուոր ըլլալ · կէպէ օլմագ ։ յղացայ , ցայց · ցիր ։ Այս բայը հասարակ է , որ յղանալ տղայն , եւ յղացվիլ ։

Որսամ , ձուկ կամ թռչուն բռնել · աւլամագ ։ որսացայ · ցայց · որսա ։

Ստանամ , ձեռք բերել , ունենալ · էլէ կեթիրմէք ։ ստա-ցայ · ցայց · ցիր ։ կրաւ · ստացանիմ , նիս , կամ ստացեալ լինիմ եւն ։

Չէզոքականք խոստանամին դէս :

Ամրանամ, պնդիլ ամրանալ. սըղընմաք : ամրացայ, ցաւ. ցի՛ր :

Արբենամ, գինովնալ. սարհօշլանմաք : արբեցայ, ցաւ. ցի՛ր :

Անձկամ կամ անձկանամ, բաղձալ. արզուլանմաք : անձկացայ, ցաւ. անձկա՛. Այսպէս բաղձամ. բաղձացայ, ցաւ. ցի՛ր, կամ բաղձա՛ :

Գթամ, գութ ունենալ. րահմ էթմէք : գթացայ. ցաւ. ցի՛ր, կամ գթա՛ :

Դառնամ, դառնալ. տէօնմէք : դարձայ. ցաւ, դա՛րձ կամ դարձի՛ր :

Դողամ, դողալ. թիթրէմէք : դողացայ կամ ցի, ցաւ. դողա՛ :

Ընթանամ, վազել. գօշմաք : ընթացայ. ցաւ. ընթա՛ կամ ընթացի՛ր, կամ ընթա՛ց :

Ջանամ, ջանք ընել. գայրէթ էթմէք : ջանացայ. ցաւ. ջանացի՛ր կամ ջանա՛ :

Ցնծամ, խիստ ուրախանալ. սէվինմէք : ցնծացայ, ցաւ, ցնծա՛ :

Փութամ, արտորալ. աճէլէ էթմէք : փութացայ, ցաւ, ցի՛ր, կամ փութա՛ :

---

Անկանոն բայք երկրորդ լծորդութեան :

175. Ներգործական ՏԱՄ.

Սահ. Տամ, տաս. տայ. տամք. տայք, տան :
Տայի, տայիր, տայր. տայաք, տայիք, տային :

Կատ. Ետու, ետուր, ետ. տուաք, ետուք, ետուն :

Ապառ. Տաց, տացես, տացէ. տացուք, տաջիք, տացեն :

Հրամ. Տո՛ւր կամ տաջի՛ր, տացես, մի՛ տար, տացէ :
տացո՛ւք, տո՛ւք կամ տաջի՛ք, մի՛ տայք, տացեն :

Ստոր. Տայցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք. ցեն :
Աներ. Տալ. լոյ, լով : Ընդուն. տուող, տուեալ, տալոց :

Ասոր կրաւորականը, Տուեալ լինիմ է : Տուայ, ար, աւ, տուաք, այք, ան : Տացիս, ցի : Տայցիմ, ցիս : Տուեալ կամ տուեցեալ. (ոչ տրեցեալ.) տալի :

### 176. Անկանոն բայ ԳԱԼ.

Սահ. Գամ, գաս, գայ. գամք, գայք, գան :
Գայի, գայիր, գայր. գայաք, գայիք, գային :
Կատ. Եկի, եկիր, եկն. եկաք, եկիք, եկին :
Ապա. Եկից, եկեսցես, եկեսցէ. եկեսցուք, եկեսջիք, եկեսցեն :
Հրամ. Եկ, եկեսջիր, մի գար, եկեսցէ. եկայք, եկեսջիք, մի գայք, եկեսցեն :
Ստոր. Գայցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն :
Աներ. Գալ. լոյ, լով : Ընդուն. եկեալ, գալոց :

### 177. Այլ անկանոն բայ ՅԱՌՆԵԼ.

Ասոր սահմանականը առջի լծորդութեան վերջքը ունի. բայց այլ ժամանակքը երկրորդ լծորդութեան կըմօտենայ :
Կատ. Յարեայ, եար, եաւ. եաք, եայք, եան :
Ապա. Յարեայց, յարիցես, ցէ. յարիցուք, յարիջիք, րիցեն :
Հրա. Արի, յարիջիր, կամ յառնիջիր, մի յառներ, յարիցէ :
յարիցուք, արիք, կամ յարերուք, յարիջիք, յառնիջիք, մի յառնէք, յարիցեն :
Ստոր. Յարիցեմ կամ յառնիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն :
Աներ. Յառնել. նելոյ : Ընդուն. յարուցեալ, յառնելոց :

---

### Պակասաւոր բայք երկրորդ լծորդութեան :

178. Այս լծորդութեան պակասաւորը կըսեպենք նաև ան բայերն որ իրենց սահմանականը կըլե-

ցընեն առջի ըծորդութեն բայէն, ու մնացած ժամանակը երկրորդին պէս կըխոնարհին։

Նման է՝ ծանեայ, սահմանականը ճանաչեմ։ լուայ, սահմանականը՝ լսեմ։ մեղայ, սահմանականը մեղանչեմ։

### 179. Ներգործական, ԾԱՆԵԱՅ.

Եզ. Ծանեայ, եար, եաւ. ծանեաք, եայք, ծանեան։

Ըղձ. Ծանեայց, նիցես, ցէ. ծանիցուք, նիջիք, նիցեն։

Հրմ. Ծանի՛ր, ծանիջի՛ր, նիցե՛ս, մի՛ ճանաչեր, ծանիցէ՛։
ծանիցո՛ւք, ծանի՛ք կամ ծաներո՛ւք, ծանիջի՛ք, ծանիցե՛ն։

Ապառ. Ծանիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն։

Ընդուն. Ծանուցեալ. (քիչ, ծանեալ.)

Մնացած ժամանակը՝ ճանաչեմէն, նմանապէս կրաւորականը անկէց կառնէ. կամ անցողականէն՝ ծանուցանիմ, ծանուցայ, ցայց ևն. կամ էական բայով, ծանուցեալ լինիմ ևն։ Միայն ստորադասականը կըլլայ, ծանիցիմ, ցիս ևն։

### 180. Ներգործական ԼՈՒԱՅ.

Եզ. Լուայ, լուար, լուաւ. լուաք, լուայք, լուան։

Ըղձ. Լուայց, լուիցես, իցէ. լուիցուք, իջիք, իցեն։

Հրմ. Լո՛ւր, լուիջի՛ր, լուիցե՛ս, մի՛ լսեր, լուիցէ՛. լուիցո՛ւք, լուարո՛ւք, լուիջի՛ք, մի՛ լսէք, լուիցե՛ն։

Ապառ. Լուիցեմ կամ լսիցեմ, ցես, ցէ ևն։

Ընդուն. Լուեալ. լսելոց։

Կրաւորականը, լսիմ. լսիցիմ կամ լուիցիմ. լսիլ, լսեցեալ, լսելի։ Մէկալ ժամանակը էական բայով, լուեալ կամ լսելի եղէ. լուր կամ լու եղև. լո՛ւր լե՛ր, լսելի՛ լիցի ևն։

### 181. Զեղչական ՄԵՂԱՅ.

Կատ. Մեղայ, մեղար, մեղաւ. մեղաք, մեղայք, մեղան։

Ըղձ. Մեղայց, մեղիցես, ցէ. մեղիցուք, ղիջիք, ղիցեն։

Հրմ. Մեղի՛ր, մեղիջի՛ր, մեղիցե՛ս, մի՛ մեղանչեր. մեղիցէ՛.
մեղիցո՛ւք, մեղիք կամ մեղարո՛ւք, մեղիջի՛ք, մի՛ մեղանչէք, մեղիցե՛ն։

Ստոր. Մեղիցեմ, ցես, ցէ. ցեմք եւն։

Ընդուն. Մեղուցեալ, մեղանչելոց։

### 182. Այլ պակասաւոր բայք, Երթամ, Չոքայ.

Սահ. Երթամ, երթաս, երթայ. երթամք, թայք, թան։
Երթայի, թայիր, թայր. երթայաք, թայիք, թային։

Կատ. Չոքայ կամ չոգայ, քար, քաւ. չոքաք, քայք, չոքան։

Ըղձ. Երթայց, թիցես, ցէ. երթիցուք, թիցէք, թիցեն։

Հրմ. Ե՛րթ, երթիջի՛ր, երթիցե՛ս, մի՛ երթար, երթիցէ՛.
երթիցո՛ւք, երթա՛յք, երթիջի՛ք, մի՛ երթայք, երթիցե՛ն։

Ստոր. Երթայցեմ կամ երթիցեմ, ցես, ցէ եւն։

Աներ. Երթալ։ Ընդուն. երթող, երթեալ, երթալոց։

---

## ՅՕԴՈՒԱԾ Դ.

### Երրորդ Լծորդութեան վրայ։

183. Մնաց ծանուցանել երրորդ լծորդութեան խոնարհումը՝ ան բայերուն որ -ամ կըվերջանան. և աս ալ երկու կերպ է, մէկին կատարեալը և ապառնին կըվերջանայ է, էց. մէկալինը՝ այ, այց՝ Երկուքն ալ մէկանց դնենք աս ներգործական

բայերուն վրայ․ Հեղում, վաթել, տէօքմէք ։ Ըն-
թեռնում, կարդալ, օգումաք ․

Սահմանական ներկայ ։

Հեղում, հեղուս, հեղու․ հեղումք, հեղոյք, հեղուն․
Ընթեռնում, նուս, նու․ ընթեռնումք, նույք, նուն․

Անց․ անկատար ․

Հեղուի, հեղուիր․ հեղոյր․ հեղուաք, ղուիք, ղուին ։
Ընթեռնուի, նուիր, նոյր․ ընթեռնուաք, նուիք, նուին․

Անց․ կատարեալ ․

Հեղի, հեղեր, եհեղ կամ հեղ հեղաք, հեղիք, հեղին․
Ընթերցայ, ցար, ցաւ․ ընթերցաք, ցայք, ցան ։

Ապառնի ․

Հեղից, հեղցես, հեղցէ․ հեղցուք, հեղջիք, հեղցեն ։
Ընթերցայց, թերցցիս, ցի․ ընթերցցուք, թերցջիք, ցին ։

Հրամայական ․

Հեղ, կամ հեղջիր, հեղցես, մի հեղուր, հեղցէ․
հեղցուք, հեղէք կամ հեղջիք․ մի հեղուք, հեղցեն․
Ընթերցիր, կամ ընթերցջիր, ընթերցցիս, մի ընթեռնուր,
ընթերցցի․ ընթերցցուք, ընթերցէք կամ ընթերցարուք,
ընթերցջիք, մի ընթեռնուք, ընթերցցին ։

Ստորադասական ․

Հեղուցում, ցուս, ցու․ ցումք, ցուք, ցուն ։
Ընթեռնուցում, ցուս, ցու․ ցումք, ցուք, ցուն ։

Աներ․ Հեղուլ, լոյ․ Ընթեռնուլ, նլոյ ։
Ընդ․ Հեղող, հեղեալ, հեղլոց ։ Ընթերցող, ընթերցեալ, ընթեռնլոց ։

Ասոնց կրաւորականը քիչ ժամանակ կըլլանի․ Ընթեռնումը ըլլար՝ ընթեռնանիմ․ ընթեռնանեցայ եւն․ այլ եական բայով, ընթերցեալ լինիմ, եղեւ եւն․ Այս ընթերցանեմ, որ զատ ներգործական ունի․ որու ընդունելութիւնը ընթերցանելի, կընշանակէ՝ ընթերցող, կարդացող ։

Իսկ հեղնամը քիչ տեղ ունի կրաւորական հանդէսին պէս․ օր․

Սահ․ Հեղանիմ․ նիս եւն ։ Հեղանէի, նէիր եւն ։
Անց․ Հեղայ, ղար, ղաւ․ հեղաք, ղայք, ղան․
Ապա․ Հեղայց, ցիս, ցի, հեղցուք, ջիք, ցին․

Հրամ. Հեղէր, հեղցես, ցէ. հեղարուք, հեղջիք, ցին:

Աոր. Հեղանիցիմ, ցիս ևն:

Ընդուն. Հեղեալ, հեղլի:

---

184. Ռաջի օրինակին բայերը շատը ներգործական են կամ հասարակ. և ոմանք ալ կրաւորին:

Առաւելում. էֆզունլէնմէք, չողալմաք. արթըրմաք: առաւելի. առաւելից. առաւել կամ առաւելցես: Աոր. առաւելայ, լայց, առաւելլիր. որ աւելի չէզոքի պէս կըբանի:

Առնում. առնել. ալմաք: առի, առեր, էառ կամ առ. ա՛ռ: Աոր. առայ, ար. աւ. առայց. ցիս. ցէ: Հին չըլլար, առնանիմ, առեցեալ, կամ հրամ, առէք:

Արգելում. արգիլէլ. մանի օլմաք: արգելի, լեր. արգել: Աոր. արգելայ, արգելայց, արգելլիր:

Գելում. ճըղմէլ. սըխմէլ: գելի. գել:

Գիզում. դիզել. եըղմաք: դիզի, եդեզ, դիզեա՛:

Զեղում. լեցնել. թօլտուրմաք: զեղի. զեղ: Աոր. զեղայ. զեղայց:

Զենում. մորթել. պօղազլամաք: զենի. եզեն, կամ զեն. զե՛ն: Աոր. զենանիմ. զենայ. զենայց. զենլիր:

Ընկենում. ձգել, նետել, դըրագմաք. աթմաք: ընկեցի, ցեր, ընկէց կամ ընկեայ. ընկեցից. ընկեա՛: Աոր. ընկեցայ. ցայց. ընկեցիր. բայց չըլլար ընկէնանիմ:

Թողում. թող տալ. գօյվէրմէք: թողի, եթող կամ թող. թո՛ղ: Աոր. թողանիմ (քիչ,) թողայ. թողայց. թողանիցիմ:

Լնում. լեցնել. թօլտուրմաք: լցի, ելից կամ լից, լի՛ց: Աոր. լնանիմ (քիչ.) լցայ. լցայց. լնանիցիմ:

Խնում. խփել. խըթամաք: խցի, եխից կամ խից. խի՛ց: Աոր. խցանիմ. խցայ:

Կասում. ցորեն կասել. հարմանլամաք: կասի, կասեաց. կա՛ս:

Յաւելում. աւելցնել. գաթմաք: յաւելի, յաւել.

յաւե՛լ ։ Ապառ . յաւելայ . լայց . յաւելլի՛ր .

185. Դիտել. Ա. Աս բայերէն՝ որոնք որ եմ կը-վերջանայ նէ, ինչ՝ արգելեմ, առաւելեմ, դիզեմ, կասեմ, կըխոնարհին շարժեմին պէս ։ Իսկ որոնք անեմ վերջանան, ինչ՝ դիզանեմ, խցանեմ, կիզանեմ, իրենց անկատարը և ստորադասականը կըլլայ հաւնեմին պէս ։

186. Դիտել. Բ. Կրաւորականի սահմանական ներկայ անիմ վերջանալը յատուկ է ան բայերուն՝ որ համեմին տակը կերթան. ուստի ուրիշ լծոր-դութեան բայերուն քիչ կըլլայ ասանկ կրաւորական. այլ կամ ներգործականը կըդրվի կրաւորականի մտքով, կամ էական բայով կըլլայ ։ Ոմանք ալ ուիմ կըվերջացընեն դնելով, առնուիմ, տրտըլուիմ, ճուիմ, ինուիմ. բայց աշխարաբարի կերպ է . գրոց մէջ զգուշանալու է ։

187. Աւլ բայք ընթեռնումին պէս , շատ չէնք ։

Զգենում . հագնիլ . կէյմէք ։ զգեցայ , ցայց ։ Ապառ. զգեցեալ լինիմ ։

Հանում . կտոր գործել, տօգումագ ։ հանայ . հա՛ն ։

Սկսնում . պաշըլայել . սկսայ . սկսի՛ր ։

Այտնում . ուռենալ, շիշմէք ։ այտեայ . այտի՛ր . այ-տուցեալ ։

Երդնում . երդուըննալ , եէմին էթմէք ։ երդուայ . եր-դուայց . երդուի՛ր . երդնուցում . երդուեալ ։

Զարթնում . արթըննալ . օյանմագ ։ զարթեայ . զար-թի՛ր . զարթուցեալ ։

Զբօսնում . էգլէնմէք ։ զբօսայ . զբօսի՛ր . զբօս-նուցում . զբօսեալ ։

Հեծնում . հեծնիլ . պինմէք ։ հեծայ . հեծի՛ր . հեծե՛ք ։

Յենում . կռթնիլ . տայանմագ ։ յեցայ . յեցի՛ր . յենու-ցում . յեցեալ ։

Ոստնում . վեր ցատկել, սըչրամագ ։ ոստեայ . ոստի՛ր . ոստնուցում . ոստուցեալ ։

Պակնում . խիստ վախնալ, էօրքմէք ։ պակեայ . պակի՛ր . պակնուցում . պակուցեալ ։

Ցասնում . սրտողիլ . էօֆքէլէնմէք ։ ցասեայ . ցասի՛ր . ցասուցեալ ։

Ըղձական. անօրինական, փոխանը անձնական. քաղցեայ. քաղցիր. քաղցեալ։

---

# ՅՕԴՈՒԱԾ Ն.

## Դիմազուրկ բայերն վրայ։

188. Դիմազուրկ կ՚անուանեմ բայ թէ որ աղէկ նայինք նէ, միայն աներևոյթ եղանակը, և ընդունելութիւնը կրնայ ունիլ. զէրէ ասոնք հիչ դէմք մը չեն ցուցաներ. այլ մէկը ընել կ՚ըլլալ կըցուցանէ, և մէկալը՝ եղածը կամ ընելուքը։

Հապա քերթողքը դիմազուրկ կըսեցեն ան բայը՝ որ սովորաբար երրորդ դէմքով կըբանի եղական և յոգնական։ Ասանկ բայ մեր լեզուին մէջ չիկայ. այլ յարմարցընելով կըլլայ իրեք կերպ. իբր դիմազուրկ ըստ նշանակութեան. դիմազուրկ ըստ սովորութեան. դիմազուրկ ըստ կազմութեան։

## Դիմազուրկ ըստ նշանակութեան։

189. Այն բայերն որ անզգայ և անբան բնութեան գործք մը կամ կիրք մը կընշանակեն նէ, յատկապէս առջի և երկրորդ դէմքով չեն բանիր. որովհետև անանկ գործքը չիպատշաճելով մարդու, չըլլար որ մարդ մը ուրիշ մարդու ըսէ. այլ միայն մէկ երրորդի վրա կրնայ ըսեր։ Ասանկ են ան բայերն որ կընշանակեն բնական պատճառներուն գործքը, տարերքի, կ՚տնկոց, կ՚անասնոց, ևն.

Ամպէ, անձրևէ, ցօղէ, հեղեղատէ, ձիւնէ, ճառագայթէ, առաւօտէ, մըրկէ, փայլատակէ, պտղաբերէ, մռնչէ, կաղկանձէ, բառաչէ են, որ կըխոնարհին շարժեմին պէս։ Կամ, այգանայ, առաւօտանայ, երեկոյանայ, գիշերանայ, լուսանայ, խաւարանայ, հրանայ, որոտայ են, որ կըխոնարհին խոստանամին պէս։

Ահա աս կերպ բայերը՝ երբոր բուն նշանակութեամբ առնըվին նէ, կըբանին երրորդ դէմքով ամէն ժամանակ, եղական և յոգնական. իբր Ամպք անձրևեն. ամպերը անձրև կընեն։ Գետք հեղեղատեսցեն. գետե.

րը կոխեցին, դաշմիշ եղան ։ Աստեղք ճառագայթէին. աստղերը կըփայլէին ։ Արեգակն խաւարանայր. արեւը կըխաւարէր ։ Փայտք հրացան. փայտերը հրահրեցան, բռնկեցան ։ Առիւծ մռնչէ. թէ որ առիւծը մռնչայ, կանչէ են ։

Բայց ասանկ բայերը երբեմն նմանութեամբ բանականի ալ կըսուին, կամ հոգեւոր գործքի վրայ. ան ատենը իրեք դէմքն ալ կըբանին ։

Դիմազուրկ բայ զօրութեան ։

190. Կան կրաւորական և չէզոք բայեր՝ որ սովորութիւն եղեր է երրորդ դէմքի վրայ բանեցընել. թէպէտ իրեք դէմքն ալ ունին ։

Ասանկ է՝ թուի, երեւի, կարծի, լսի, հաւանէ կամ հաւանի, պատահէ, հանդիպի, պիտի, ցաւէ կամ ցաւի են ։

Ասոնց խոնարհումը կըլլայ առջի լծորդութեան պէս. միայն ետքի երկուքը երրորդ դէմքով կըլլան. պիտէր, պիտէին. ցաւէր, ցաւեաց, ցաւեսցի են ։

Դիմազուրկ բայ նմանութեան ։

191. Նմանութեան կամ շէնքի կողմանէ դիմազուրկ կըսենք, որ պաշի անուն էական բայի երրորդ դէմքին ընկերանալով կըբանի եզական կամ յոգնական ։

Ասանկ կըլլայ՝ անկ է, արժան է, անհնար է, բարւոք է, ժամ է, ժամք են, հարկ է, մարթ է, յայտ է, շատ է, պարտ է, վայել է, պէտք են, օրէն է, օրէնք են, փոյթ է, օգուտ է, 'ի դէպ է են ։

Աս կերպ դիմազուրկը՝ շարադրութեն մէջ կուզէ որ քովը գտնըւի տրական հոլովով դերանուն մը, ու մէկ աներեւոյթ բայ մը. զր * Կամ եղեւ ինձ կարդալ գրել քեզ. || ինծի կամք եղաւ, կամ ուզեցի կարդալ գրել քեզի. ուր կըտեսնես որ կայ ինձ, տրականը ինձն, և աներեւոյթը գրել.

# ՅՕԴՈՒԱԾ Ժ.

## Ընդհանուր գիտելիք բայերու վրայ։

192. Ինչ որ բայի սեռքին և լծորդութեան վրայով սերտելու բան կար նէ, մինչև հիմայ կարգով գրինք, և աշկերտը միտք առաւ. մնաց իմանալ մէկ քանի գիտնալու բաները՝ բային գործածութեան կողմանէ, և այլ պարագաները։

Նախ. Այն ներգործականքը որ եմ կվերջանան, համարձակ ունին իրենց իմ վերջացած կրաւորականը, ինչպէս կերևնայ առջի լծորդութենէ. (156) Միայն անցողականին մէջ տարբերութիւն կայ, ան որ կվերջանայ սոսկ ուցանեմ, իրեն կրաւորականն ալ կըբանի ամէն ժամանակ. օր. Մատուցանեմ, մատուցանիմ, մատուցայ, ցայց, մատուցանիցիմ։ Կորուսանեմ, կորուսանիմ, կորուսայ, կորուսանիցիմ են։ Բայց անոնք որ կվերջանան եցուցանեմ, ացուցանեմ. օր. Ապրեցուցանեմ, զօրացուցանեմ, իրենց գլխաւոր ժամանակը շատ չիբանիր կրաւորական. չըսվիր՝ ապրեցուցայ, զօրացուցայ են, այլ անոնց տեղը չէզոքը կըսվի՝ ապրեցայ, զօրացայ։

Իսկ ներգործականքը որ ամ, ում կվերջանան, քիչ տեղ կայ որ իրենց կրաւորականը իմ վերջանայ. ինչպէս իր տեղը ծանուցինք. (112. 184) Հապա նախնեաց գործածութիւը, մանաւանդ Ածաշունչին մէջ, ասանկ բայերը կըբանեցընէ հասարակի պէս, այ̃ ներգործական և կրաւորական նշանակութ̃բ, սահմանականի ներկան, անկատարը, և երբեմն կատարեալը. օր. * Ծով ոչ լնու. || ըսել է, ծովը չիլեցվիր։ * Թանային ճանապարհք իմ. || այ̃ կըթրջըվէին իմ ճամբաներըս։ * Սառուցն նորա յայտնի իմացաւ. || այ̃ անոր բռընկիլը յայտնի իմացվեցաւ։

193. Երկրորդ. Կրաւորակերպ չէզոքն որ իմ կվերջանայ, շատ անգամ եմ կընեն նախնիքը, ու աներևոյթը՝ ել. օր. բնակիմ, դադարիմ, պատկառիմ ըսելուն տեղը, կըդնեն՝ բնակեմ, դադարեմ, պատկառեմ. և ան ատենը շարժեմին պէս կըխոնարհէին։

Աս պատճառաւ կըլլայ որ էն վերջացածը՝ ան-ցողական նշանակութիւն կառնէ. ուստի աշխատեն կընշանակէ՝ աշխատեցուցանեմ. հնազանդեն, հնա-զանդեցուցանեմ։

194. Եօթներորդ. Բուն կրաւորականը երբեմն հա-մարակ բայի պէս՝ ներգործականի նշանակութիւն կուտայ. որ քովի հայցական անուներն յայտնի կը-մացվի. օր. Արկան հանդերձ. արկեր զլոյս, կիմացվի՝ զարկ, զարկեր. օր. ձգեց, ձգեցին։ Նմանք, Բաժա-նեցան զաւար, ըսել է՝ բաժանեցին։ Լուացայց զձեռս իմ. օր. լուացից։ Եդաւ զթագ. օր. եդ, դրաւ։ Գտայց զփրկութիւն, օր. գտից, գտնեմ։

195. Ութերորդ. Ասոր շատ անգամ ըսինք թէ կրաւորականները եական բայով ալ կըձեւանան։ Ասոր վրայ մէկ մը գիտնալու է որ չէզոք բայն ալ եականով կըլլայ երբեմն. օր. Նստէր, անկաւ, էջցեն ընելու տեղը՝ կըդնեն, նստեալ էր, անկեալ էր, էջեալ լիցին։ Նմանք սաստկացեալ լինէր, օր. սաստկա-նայր. լինի թագաւորեալ, օր. թագաւորէ. նմանեալ լիցին, օր. նմանեսցին ևն։

Մէկալ գիտնալուն է որ ներգործական բայը եականով ձեւանալով ալ՝ կըպահէ երբեմն ներգոր-ծական նշանակութիւնը՝ քովը հայցականով. օր. * Զոր իւրովք աչօք տեսեալ լինէր. ‖ ըսել է, զոր տեսանէր։ Նմանք, զԶմծ գուշակեալ լինի. օր. գուշակէ, ծանու-ցանէ։ Եղեն զգեցեալ զն̃. օր. զգեցան։ ընկալեալ լինին զպատուհաս. օր. ընդունին։

196. Իններորդ. Նախնեաց գործածութիւնը աղէկ հասկընալու համար, գիտնալ պէտք է՝ որ բայից ժամանակները կամ եղանակները երբեմն իրա-րու տեղ կըդրվին. օր. Գործեցէք, տուէք, արարէք, հատուցէք, պատմեցէք, որ բուն հրամայական են, կըդրվին կատարեալի տեղը, օր. գործեցիք, տուիք, արարիք, հատուցիք, պատմեցիք ևն։ Նմանա-պէս Մնասջիք, դարձջիք, երկիջիք, լուասջիք, սրբեսջիք, արդարասջիք, յարիջիք ևն, որ յատուկ հրամայական են, կըդրվին կատարեալի տեղ. օր. մնացայք, դարձայք, երկեայք, լուացայք, սրբե-ցայք, արդարացայք, յարեայք։

Սոր ներհակը՝ սահմանականի ներկան և կատարեալը կըդնեն հրամայականի տեղ. օր. լսէք, տուէք, խնդրէք, կիմացուի՝ լուարուք, տուայցէք, խնդրեցէք. Նմանապէս բարկացայք, կալայք, որոշեցայք, հնազանդեցայք, զգաստացայք, կիմացուի՝ բարկացէք, կալէք, որոշեցարուք, հնազանդեցարուք, զգաստացարուք։

197. Սանկ գործածութեան մէջ ուր տեղ որ հրամայականի մտքով իմանալու է նէ, վրան շեշտ կըդրուի՝ որ կատարեալէն զատուի. բայց հիմակու շարադրութե մէջ աղէկ է չիբանեցընել աս կերպը, որ կարդացողը չիշփոթի։ Նաև ինչպէս որ կըտեսնաս, միայն յոգնականին կըլլայ իրարու տեղ դնել կատարեալը ու հրամայականը. իսկ եզականին չիկայ սովորութի նախնեաց մէջ. միայն քիչ տեղ աշխարհաբարին պէս՝ սահմանականի ներկան երրորդ դէմքը կըդնեն հրամայականի տեղ. օր. շարժէ, էնապատուիրէ. Նմանապէս Թէ պահէ, Թէ հաստատէ ըսելու տեղը, կըդնեն երկրորդ դէմքով Թէ պահեա, Թէ հաստատեա։

Աս ալ գիտնալու է՝ որ սահմանականի ժամանակները, հրամայականին, և ստորադասականին՝ իրարու տեղ շատ կըդրուին. օր. գամ, տամ կըսուի գայցեմ, տայցեմ ըսելու տեղը. Երթայցես, Երթայցէք, փոխանակ ըսելու, Երթիցես, Երթիջիք։ Առնուցուք փոխանակ՝ առջիք։ Հանցես, փոխանակ՝ հանիցես։ Թողացուս, փոխանակ՝ թողցես ևն։

---

### Աներևոյթ եղանակին վրայ։

198. Լծորդութենց մէջը դրինք ամէն բային աներևոյթը, որ կըլլայ սահմանականին դէմը փոխելով ել. միայն թէ իմ վերջացած բայերուն՝ նաև կրաւորականին կմ կրաւորակերպ չէզոքին՝ սովորաբար իլ կընեն նախնիքը. իսկ իլ կըդնեն ուր տեղ որ հարկաւոր է կրաւորական նշանակութիւնը իմացընել, ու ներգործականէն զատել. օր. Թշնամանել և թշնամանիլ. անպատուել. և անպատուիլ. հարկանել և հարկանիլ. բամբասել և բամբասիլ. Սանկ

ները երբոր հոլովել պէտք ըլլայնէ, միշտ էլ կըդը-
նէն. ուստի հիչ չըլլար, Թշնամանելոյ, հարկանե-
լոյ, բամբասելով, այլ՝ Թշնամանելոյ, բամբասելով.
որ կընշանակէ՝ նախատելու, բամբասելով ևն։

Անոր համար աներևոյթ ըսվեցաւ, զերէ սոսկ ներ-
գործութիւն մը, ըներ մը, ըլլըլիլ մը կընշանակէ,
ինք իրեն չիցուցաներ ոչ դէմք, ոչ ժամանակ, ոչ
թիւ։ Իրեն նշանակութիւնը բայի պէս է, բայց խո-
նարհում չունենալով, անունի պէս կըհոլովվի (տե՛ս
15) եզական միայն, զբ Շարժել, ժելոյ, 'ի շար-
ժել, զշարժել, 'ի շարժելոյ, շարժելով։

199. Աներևութին հոլովածը կըսվի դերբայ,
ձի բայի տեղ. զերէ շատանգամ բայի ուժ ունի,
և բայի պէս ժամանակ մը կամ դէմք մը կիմացընէ
քովի բառին ուժովը. զբ երբ ըսենք. 'ի դնտանել իմ,
կիմացվի՝ երբոր տեսնեմ, կամ տեսայ։ Առնելով նոյա-
ղայս, կիմացվի՝ երբոր ըսին աս բանը։

Նմանապէս առանց հոլովելու երբոր ըսենք,
Հրամայեաց նոցա լուել, զօրութիւն կիմացվի, հրա-
մայեաց նոցա՝ զի լուիցեն. հոս ստորադասականի
մէջը տըվաւ՝ յոգնական երրորդ դէմք։ Դարձեալ.
մի ստարոտի նամարէլ յէլ. հոս հրամայականի ուժ
կուտայ յոգնակի. ձի մի համարիցիք։

200. Երբոր ասանկ սահմանականի կամ ստորա-
դասականի ուժ ունենայ նէ, կամ թէ դիմաւոր
բայով դրած է, ինչպէս գալով գայցէ, օրհնելով
օրհնեցից ևն, ան ատենը միշտ բայի գործք կընէ։
Իսկ երբոր դիմորոշ յօդ մը ունի, կամ քովը ածական
մը կայ, կամ ուրիշ բայի տեղ կըլլայ, անժամանակը
անունի տեղ կանցնի. զբ, «Տէրելդ ամենեցուն՝
խնայել տայ քեզ յամենայն.» ուր տէրելդ դիմորոշ յօ-
դով անունի պէս կընշանակէ, կընար ըսել՝ տէրու-
թիւդ, իշխողութիւդ, իսկ խնայել ստորադասականի
ուժ ունի. ձի զի խնայեսցես։

---

## Ընդունելութեան վրայ։

201. Յիշեցինք իւրաքանչիւր բայից խոնարհման
տակը իրենց ընդունելութիւնը. որ քերթողները զատ

մասն բանի կընծայեն. հոս անոր գլխաւորները դնենք։

Անորոշեղանակը ըսուեցաւ, որ կընշանակէ հաղորդականութիւն, իմաստ ըլլալը, խապուլ ընելը. գործ բայէն կըշինուի, ու բայի պէս ժամանակ մը կըցուցանէ առանց դէմքի։ Անունի պէս կըհոլովուի եզական և յոգնական. ու առով հաղորդ կըլլայ բային և անունին, երկուքէն ալ յատկութիւն կընդունի։

202. Ժամանակի կողմանէ՝ երեք կըսեն, ներկայ, անցեալ, ապառնի։ Ներկայ ընդունելութիւն սեպեցին ետքի քերականները ան որ ող կամ օղ կըվերջանայ. որ. շարժող, տեսող, փարող, ուտող։ Բայց աղէկ նայելով, աւելի ածականի անուն ըսելու է՝ ող մասնիկով. (98) իրեն հոլովումը կըլլայ (տախ. 13) եզական և յոգնական. որ. շարժողէ, շող, շոյ, շով։

Ող մասնիկը չիփակչիր ամէն բայի. էական բայերուն եմ, եղանիմ, չըլլար. գոլին կըլլայ՝ գոյող. լինիլին քիչ տեղ՝ լինող։ Ան չէզոքներուն որ ամ կըվերջանան, նմանապէս չիմ, ամ վերջացածին, և կրաւորականներուն չիփակչիր։

203. Անցեալ ընդունելութիւն է եալ վերջացածը. որ. շարժեալ, տեսեալ, փարեալ, խալեալ, մտադրեալ։ Ամէն բայէ կըշինուի. ու երբոր առանց հոլովքի ունի քովը տէր բայի մը յայտնի կամ ծածուկ, միշտ բայի ուժ կունենայ. որ. * Եւ տեսեալ Յի զհաւատս նոցա. ‖ տ. տեսնալով Յն անոնց հաւատքը. հոս Յս է տէր բային տեսեալ։ Դարձեալ. * Հայեցեալ ընդ իս զարմանայք. ‖ հոս տէր բային ծածուկ է. տ. դուք հայելով իմին վրաս կըզարմանաք։

Բայց երբոր անցեալ ընդունելութիւնը հոլոված է, կամ թէ քովը գոյական մը ունի, ան ատենը անուն է. որ. Բանն տեսեալ, բանից տեսելոց, բանս տեսելոցն. տ. բանածին կէօրէ։ Արտեմնաս որ իրեն հոլովումը կըլլայ (տախ. 15) տ. շարժեալ. ժելոյ. ժելում, ժելով. ժեալք, ժելոց, ժելովք։ Յոգնակի նախդրիւ հոլովքին՝ շատ անգամ ս գիրը կըպահուի, մանաւանդ երբոր ս գիմորոշ կապած ունենայ. առանց կըսուի՝ ընտրեալս մեզ. ի քարշեալս, ի խոցեալս։

Անցեալ ընդունելութիւնը շատ տեղ ողի նշանակութիւն կառնէ, և անոր տեղը կդրուի, չէ թէ միայն ան բայերուն որ ող չիփակչիր, հապա անանց ալ որ ողով կըլլան . զր. գոչող, ծառայող, խոստովանող, շահեցող՝ ըսելուն տեղը կդրուի՝ գոչեալ, ծառայեալ, խոստովանեալ, շահեցեալ ։

204. Ապառնի ընդունելութիւն է լոց, լի վերջացածը . զր. շարժելոց, շարժելի, առնլոց, առնլի ևն ։ Առաջինը ամէն բայի կըփակչի, ու նշանակութիւնը հետ ներգործականի կըլլայ, հետ կրաւորականի, հետ չէզոքի . զր. շարժելոց՝ հետ շարժելու ըլլալը կնշանակէ, հետ շարժուելու ։ Իրեն հոլովքը նախդրով միայն կըլլայ . զր. 'ի շարժելոցն, զշարժելոցն, շարժելոցք, զշարժելոցսն ։

Իսկ լի վերջացածը կըփակչի կրաւորական և չէզոք բային . կըհոլովուի (ըստ 29) շարժելի, ժելեաւ . ելեաց, ելեաւք ։ Բայց նշանակութեան կողմանէ՝ նախնիք շատ անգամ ողի տեղով կըբանեցընեն, մանաւանդ յոգնակին . զր. ընթերցանելիք, կիմանան ընթերցողք . բերելիք, բերողք . գուշակելիք, գուշակողք . լսելիք, լսողք . առնելիք, առնօղք . գործելիք, գործողք . կոչելի, կոչող . ստանալի, ստացող . տալի, տուող ևն ։

205. Անցեալ և ապառնի ընդունելութիւնները յնկերանալով էական բային ժամանակաց հետը, կերպ կերպ ժամանակ կըցուցանեն . ինչպէս առաջ ծանուցեր ենք ։ (155) Ասոր վրա գիտնալու է որ էական բայը ետև առաջ կրնայ դրուիլ . ու թէ որ շատ ընդունելութիւն քովէ քով գտնուին նէ, մէկ էականը հերիք է . զր. գտեալ եմ կամ էի, կամ իցեմ . և եմ գտեալ, էր գտեալ, իցէ գտեալ, գործելոց եմ, իցէք գործելոց, լսելոց էք . ևն ։

Ասանկ կըսուի * Արդ իմ զքեզ ողջունեալ էր, և զգա ապրեցուցեալ ||. Հոս առջինին էրը ետքինին ալ ծառայեց, որ ըսել կուզէ . Հիմա ես քեզ մեռուցեր էի, ու ատիկա խաղցեր էի ։ Դարձեալ . * Զոր սպանեալ և ապրեցուցեալ և մեռուցեալ էր ։ || Հոս իրեք անցեալ ընդունելութեան մէկ էրը օգտեց ։ Դարձեալ . * Գնալոց իշխեցոց էր ոծորդին . || Հոս ալ եր-

կու ապառնի ընդունելութեան մէկ էր ծառայեց.

206. Նաև գիտնալու է նէ ընդունելութեան վրայ, որ շատ անգամ ինքը մինակ՝ էական բայով ունի ուժ ան գիմազուրկին՝ որ բու նաշմարէ ըսինք: (191) Սատի փոխանակ ըսելու՝ պատրաստ է խնդրել, արժան է դառնալ ևն, կըսվի, խնդրէլի է, դօնանչըլը է, տանալը է, արչանէլի է: Նաև կիմացվի* Օ՞ւ այս է մեզ տուէլի և յուսէտ գործէլի. || այ ասիկա պէտք է որ ըսենք և միշտ գործենք:

Հյան այլ գիտնալու բաներ Ներևոյթ եղանակին և ընդունելութեան վրայ. ասխրտար կարծ տեղեկութիւնը ունենալէն ետքը, կըթողունք որ աշկերտը երթայ ընդարձակ քերականութենէն իր պակասը լեցընէ: Նոյնց ծանուցանել այլ երկու պարզ բայից, որ է չէ, դէօօլ:

207. Նայնիս չէը անունէն կառնըվի, ուստի երեք է ըր անվան. (75) այ դորը, որ պարզ անունէ կըձևանայ. ինչպէս դաթարէմ, հասթամ, գէթամամ, ևն:

Նոդթարէալ, որ բաղադրեալ անունով, կամ աննշան մասնիկով չինած է. ինչպէս անդարեմ, անհասթամ, անգէթամամ, դէչարամամ, չէամամ, կամ, ըշէրգանէմ, ըրնչէնոսմ, դանոչանէմ ևն:

Նորդ բայ է՝ որ բարդ անունէ կըշինվի. ինչպէս դօթուսուիրէմ, ձէրադարօնէմ, ձէրամէթամամ, ընդոսդոնոսմ. գէնահարէմ ևն:

208. Նաև խոնարհման վրայ գիտնալու է, որ երբոր դորը կըվերջանայ ամ, ում, անոնց բաղադրեալը և բարդը միշտ կըխոնարհի պարզին պէս. այ ձէրաբաթամամ, ձէրամանոսմ, կըխոնարհին ինչպէս բաթամամ, ատանոսմ: Նմանապէս էմ վերջացածը՝ որ կըխոնարհի շուրծէմին տակը, անոր բաղադրեալն ալ, բարդն ալ կըխոնարհի պարզին պէս. այ բօրէգօրծէմ, անօրգէմ ևն, կըլլան ինչպէս գօրծէմ, յօրգէմ:

Նայց մէկալ էմ վերջացածը՝ որ հանէմին տակը կըխոնարհի, երբոր բարդ ըլլայնէ, կըփոխէ երրեմն, կըլլայ շուրծէմին պէս. ինչպէս ածէմ, ածէ, ած, բարդածը՝ ձէրածէմ, կըլլայ՝ վերածեցի. վերածեամ: Նոյնպէս բէրէմ, բէրէ, բէր, բարդածը՝ ձէրաբէրէմ, կըլլայ՝ վերաբերեցի, վերաբերեամ:

209. Բային տեսակը՝ անունին պէս երկու է. (87) նախատիպ և ածանցեալ: Նախատիպ է որ արմատ բառէ կը ձևանայ առանց աննշան մասնիկի. ինչպէս գործեմ, սիրեմ, շինեմ, թողում, տամ, ցաւիմ եւն:

Ածանցեալ է՝ որ կամ ածանցական անունէ կը շինուի. ինչպէս լուսաւորէն կըլլայ՝ լուսաւորեմ. վայրենիէն՝ վայրենանամ. հաճոյէն՝ հաճոյանամ. այլանդակէն՝ այլանդակեմ եւն: Կամ, երբոր նախատիպ բային մէջ տեղը՝ գիր մը, աննշան մասնիկ մը կը մտնէ, ու նշանակութիւնը կը սաստկացընէ, կամ միայն կանուշցընէ բայը: Սաստկացնող են ատ, ոտ, տ. զոր խածեմ և խածատեմ. կտրեմ և կտրատեմ. խոցեմ և խոցոտեմ. քակեմ և քակտեմ եւն: Անուշցընող է ան մասնիկը, որ գրեանց մէջ աւելի կը գտնուի. ինչպէս բեկեմ, բեկանեմ. անիծեմ, անիծանեմ. մտեմ, մտանեմ. ասանկ դագանեմ, ոտեղծանեմ եւն: Սակայն ասոնք բարդութեան մէջ նախատիպով կը գրուին. զոր ահաբեկեմ, երկրպագեմ, վերստեղծեմ:

Այս երրորդ կերպ ածանցական՝ որ բային յատուկ է, երբոր չեզոք բայից կը փակչի ուցանեմ, ու կընէ անցողական, որու վրայ իր տեղը խօսեցանք. (157. 164.)

Այսքան բաւական է բայերուն վրայ տեղեկութիւնը. գանք ասկէց ետքը Նախադրութիւնը տեսնենք.

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.

## Նախադրութեան վրայ.

210. Նախադրութիւնը զատ մասն բանի դրին քերթողները, որ տղաք դիւրաւ հասկընան անոր մասնաւոր գիտելիքը.

Նախադրութի՛ւն, առաջքը դրուած կամ դնելու բառ է. Այսինքն մէկ գիր մը կամ մասնիկ մը, կամ բառ մը որ ուրիշ բառերուն առաջը կը դրուի, ու անոնց հոլովքը կամ նշանակութիւնը կը փոխէ.

Յատուկ կ՚ըսուին նախադրութիւնը երբոր քովի բառին հոլովքը միայն կը փոխէ, կ՚ըսուի հոլովակերտք, այսինքն հոլով շինող, կամ նախդիր. և ասոնք են, 'ի, յ, 'ի յ, ց, զ, առ կամ առ'ի, ընդ, ն, ըն, ըմ, ըմբ, ներ, առ: Ասոնց վրայ գիտնալիքը խօսեցանք վերը, ու երբեմն որ առանց հոլով շինելու կը փակչին բառից սկիզբը, կ՚ըլլան բաղադրական մասնիկ:

Նախադրութիւն որ բառին նշանակութիւնը կը փոխէ կամ կորոշէ, կ՚ըլլայ որ քովի բառին հետը կը փակչի, և ան ատենը բաղադրական մասնիկ է. ինչպէս ըսերենք: (76. 77.) Եւ կ՚ըլլայ որ առանց կպչելու քովի բառին՝ զատ նշանակութիւն ունի, և կերպ կերպ հոլով կուզէ. և աս է որ սովորաբար նախադրութիւն կըսուի, և մասնաւոր անունով կըսենք հոլովառու, այսինքն հոլով առնող՝ կամ ուզող:

Իմացվեցաւ որ նախադրութիւնը երկու կերպ կը բաժնըվի. այսինքն հոլովակերտ և հոլովառու: Առջինին վրայ խօսերենք Անվան մէջը. և ծանուցերենք ալ թէ երբոր զատ նշանակութիւն կաւելցընեն անվան վրայ, կ՚ըլլան հոլովառու. (տես 118. 119. 125. 126.) ուստի հոս երկրորդին վրայ խօսինք:

## Հոլովառու նախադրութիւնք:

211. Հոլովառու նախադրութիւնը որ ինքիրեն նշանակութիւն ունի, երկու կերպ է. այսինքն պարզ և բաղադրեալ:

Պարզ նախադրութիւնը մինակ բառ մընէ՝ որ կամ հիչ ուրիշ մասունքէ չըլլեր. ինչպէս առ, ընդ, ենթ, ըստ, զերդ, ետ, թարց, վասն, քան, մինչ: Կամ թէ անուն է, կամ անունէ շինած, բայց նախադրութէ պէս կըբանի. ինչպէս վեր, դէմ, կոյս, կողմն, հետ, զնի, չափ, արտաքս, ներքոյ են:

Բաղադրեալ նախադրութիւնը կը ձևանայ այլևայլ բառէ. այսինքն կամ երկու անունէ. որպէս յառաջկոյս, 'ի վերկոյս: Կամ անունէ և դերանունէ. որպէս յայսկոյս, յայնկոյս: կամ նախադրութենէ և անունէ. որպէս. առանց, ընթեր, առընթեր, ընդդէմ: Հիմայ ամենուն նշանակութիւնը և գործածութիւնը ծանուցանենք:

## 212. Յաղագս պարզ նախադրութեանց:

Զերդ կամ զէրդ. ինչպէս, կիպի ըսել է, քովը հայցական. որ զերդ շուշան, շուշանի պէս: Ոտանաւորի մէջ կըբանի:

Իբր, կամ իբրև, իբրու. պէս, կիպի. հայցականով. որ իբր զոստայն, եօրիւմճէկի պէս. իբրև զաղաւնի. աղաւնու պէս:

Թարց կամ թանց. առանց ըսել է, քովը սեռական. որ. Թարց գոյ երկբայութեան. առանց շիւփէի մը: Աս քիչ տեղ կայ:

Վասն, համար ըսել է, քովը սեռական. որ. Վասն թագաւորաց. թագաւորներուն համար: յանցուածոց վասն. մեղքերու համար:

Ըստ, աւելի կամ եւել ըսել է, տեղ ալ կայ որ՝ իբրև, պէս կընշանակէ, քովը հայցական. որ. ըստ զարժանն, արժանէն աւելի: Ըստ զհատ մանանխոյ. հարտալի հատին պէս:

Ընդ. տակը, սեռականի քով. որ. ընդ տեսակաւ, տեսակին կամ նոյն տակը: Մինակ չիբանիր, այլ բարդած. ինչպէս կըսենք՝ ընթացայ, ընդադրել եւն:

Մինչ, մինչև. ինչվան, քովը նախդրիւ տրական. որ մինչև 'ի դժոխս, ինչվան դժոխքը: մինչև յերկինս, ինչվան երկինքը:

Հանդերձ, հետը ըսել է. քովը գործիական, երբեմն ալ սեռական. որ. հանդերձ մարբն, մօրը հետը: որդւոցն հանդերձ, տղերուն հետը կամ տղերովը: հանդերձ ամ ստացուածոց. ամէն ունեցածներուն հետը, կամ ամէն ունեցածներովը:

### Պարզ նախադրութեանց անուանք:

213. Շատ անուն կայ որ՝ ուղղականը կամ իրեն մէկ հոլովը նախադրութեան պէս կըբանի: ինչպէս.

Գեր. վեր, աւելի, զիատէ. հայցականի քով և երբեմն տրականի. որ. գեր զմարդիկ. մարդկանցմէ վեր: գեր օրինաց. օրէնքէ վեր կամ աւելի:

Պէս, փոխանակ. պէս, կիպի. սեռականի կամ տրականի հետ: որ քո պէս, իսրայէլացւոց պէս. քեզի պէս, իսրայէլացոց կամ հրէից պէս: շանց փոխանակ,

շներու պէս · Գառնանց որդւոց, տղաքներին պէս ։

Դէմ. դէմը, գարշը. կամ դէպ'ի, դի. ասանկ է Դէմը · տրականի հետ · որ · դէմ հզօրին · ուժովին դէմ. Դէմ յարևելս · արևելքի դին, դէպ'ի արևելք ։ Դէպ յեր, ծէր կողմը · Դէպ արեգական, արևու դին, կողմը ։

Կոյս, Կողմն · դի, կողմը, Թարաֆ · նախդրիւ տրականին հետ կըդրուին · որ · 'ի սեղանն կոյս, յայն կոյս · սեղանին դին, դէպ'ի քէնարը ։ 'ի կինն կողմն · կնկան կողմը, դէպ'ի կնիկը ։

Զատ · լինչվան, խըտար · գործիականի հետ կը-բանի ։ որ · արեամբ զատ, լինչվան արուն Թափելով · մահուամբ զատ, լինչվան մեռնիլը · ձեր զատ, ձեզի խըտար ։

Շուրջ, շուրջանակի · բոլորտիքը, չորս դին, Էթ-րաֆը · գործիական նախդրիւ, կամ սեռական կու-գէ ։ որ · շուրջ զտեղեաւն, ան տեղին բոլորտիքը կամ Էթրաֆը ։ շուրջանակի քաղաքին, քաղքին չորս դին ։

Յետ, ետքը · յետոյ, ետևը · յետուստ, ետևէն ։ Փոխան, փոխանակ · տեղը, խարշըլըխը ։ Արտաքս, ար-տաքոյ · դուրս, տըշարը ։ Ներքոյ, 'ի ներքոյ · ներսը, տակը ։ 'ի վեր, վերոյ, 'ի վերոյ · վեր, եօքարը ։ 'ի վերայ, վրան, իւստիւնէ ։ 'ի մէջ, մէջը · 'ի մէջոյ, մէջէն · 'ի մէջի · մէջը, ներսը ։ 'ի ձեռն, ձեռքովը, անով ։ Զհետ, զկնի, ետևէն ։ Զօրէն, պէս, կիպի ։ Յա-ղագս, աղագաւ, 'ի պատճառս, սակս կամ 'ի սակս, 'ի համար, 'ի վերայ · ասոնք ամենքը կընշանակեն՝ համար, իչին ։ Յաջմէ, ընդաջմէ, աջ դիմն, սաղ Թարաֆտան ։ 'ի ձախմէ, ընդձախմէ, կամ յահեկէ, ընդահեկէ, ձախ դիմն, սօլտան ։

Ասոնք ամենքը սեռական հոլով ունին քովեր-նին՝ առաջ կամ ետքը · որ · փոխան նորա, անոր տեղը · որդւոյն փոխանակ · տղուն տեղը ։ 'ի մէջ յեր, փորջուոց 'ի մէջ · 'ի վերայ բարձի · 'ի ճշմարտութե վերայ · եւն ։ Այլքն ալ տրական կուզէ, կամ զան նախադրութիւնով · որ · 'ի վեր զան սրբին · 'ի վերոյ երկնաւորաց · արտաքոյ այգւոյն կամ զան պայգին ։

214 · Դիտողութ · Աս օրինակներով կիմացվի որ՝ ինչպէս անուններն նախադրութի կըլլայ, կամ նա-խադրութե պէս կըբանի ։ Կան ուրիշ բառեր ալ

որ բուն ածական անուն են, և իրենց նշանակութեն յարմար հոլով մը կուզեն քովերնին. ինչպէս զատ, հեռի, գաղտ, ուրոյն, բաց կամ բայց, ջատ. որ ըսել է՝ հեռու, գաղտուկ, պաշխանձ ևն. ու ամմէնը բացառական կուզեն. օր. հեռի 'ի քաղաքէն. գաղտ 'ի ծնողաց. ուրոյն 'ի մարդկանէ. բաց յայնցանէ. ջատ 'ի մէնջ։

Ասանկ են հուպ, մերձ, մօտ, կից, շուրջ, կից, պէ-գիշիկ. նման, հանդէպ, փոխարէն ևն։ Ասոնք տրական վերջահոլով կամ նախդրիւ կուզեն. օր. հուպ արքային կամ առ արքայ։

---

## Բաղադրեալ նախադրութիւնք։

215. Ինչպէս վերը ըսինք (211) բաղադրեալ նախադրութիւն կըշինուի անունէ, կամ դերանունէ, կամ նախադրութենէ։ Ասանկ է առանց, որ կըձեւանայ առ նախադրութենէ, ու անց անունէ։

Առաջի, յառաջոյ, ընդդառաջ. առջևը, առջևէն, դիմացը։ Կըձեւանայ առ էն ու աջէն։

Որպէս, ինչպէս ըսել է. կըձեւանայ որ էն ու պէս էն. քովը հայցական. օր. որպէս արեգակն, ինչպէս արև, արևու պէս։

Ընթեր, առընթեր, քովը, մօտիկը։ կելլէ ընէն ու թերէն։

Ընդդէմ, դիմացը. դէմ ընդդէմ, դիմացէ դիմաց։ հանդէպ, յանդիման, դէմյանդիման. դիմացը։ ակնյանդիման, յայտյանդիման. դիմացը, բաց, էշկեարէ։

Ասոնք ամմէնը քովերնին կուզեն սեռական կամ տրական. ինչպէս, առանց յանցանաց. առաջի մարդկան. ընդդառաջ արքային. այր ընթեր. առընթեր աթոռին. հանդէպ տանն. յանդիման դրախտին։

Յայսկոյս, ասդին. յայդկոյս, ատ դին. յայնկոյս, անդին. յետկոյս, ետևի դին. 'ի վեր կոյս, դէպ 'ի վեր. 'ի վայր կոյս, դէպ 'ի վար։ Ասոնք սեռական ունին քովերնին. օր. յայսկոյս գետոյն, գետի աս դին։

Մեկուսի, մէկ դի կեցած, զատ, հեռու։ կըձեւանայ մէ էն ու կոյս էն, քովը բացառական. օր. մեկուսի յամբոխէն, հալխէն հեռու։

Դէպ վերոյ, ի վեր 'ի վերոյ. դէպ 'ի վեր, բարձր, խուս-տին. տրական հոլով կուզէն, կամ քան նախադրու-թի. ուստի կրավի, վեր 'ի վերոյ քան. այսպէս վեր քան, առաւել քան:

Այսր քան, ալ աս դի. անդր քան, ալ անդի. ար-տաքոյ, կամ արտաքս քան. ալ դուրս. յետոյ քան, ալ ետքը. յառաջ քան կամ նախ քան, ալ առաջ: Ասոնք ամմէնը հայցական կուզեն՝ քանին ուժովը:

Աւելի գիտնալիք կայ աս երեք յատուկ նախա-դրութեց վրա, Առ կամ առ'ի, Ընդ, Ըստ:

## Առ, Առ'ի:

216. Սովորաբար կընշանակէ՝ վասն, համար, 'ի-չիւն. քովը սեռական հոլով, տրական, բացառա-կան, երբեմն ալ գործիական: օր.

Առ ահէն, վախին համար: Առ'ի թաղելոյ, թա-ղելու համար: առ սէր ընչից, մալը սիրելուն հա-մար, կամ ըստակի սիրուն համար: առ 'ի քաղցուն, քակելու համար: առ 'ի չգոյէ, չըլլալուն համար: առ աղքէ, խախքութեն համար: առ ձանձրոյթ, թա-լիլթին համար:

Շատ տեղ կընշանակէ՝ քովը, մօտը, առջեւը, ատենովը, բաղդատելով. ու այլեայլ հոլովք կառ-նէ: զորօրինակ.

Առ դրանն, դրանը քով կամ առջեւ: առ որում գոյէ, որուն քով որ գտնէ: առ հոգեւոր մար-մնաւորեն, հոգեւոր հարստութեն քովը կամ բաղդա-տելով: առ ցորենոյն, ցորենին քով կամ բաղդատե-լով: առ Աբիաթարայ, Աբիաթար քահանային ատե-նը: առ լերամբ, լեռան մօտ:

Երբեմն ալ տրականի ու բացառականի հետ կը-նշանակէ՝ դէմ, ներհակ. օր. առ անզգամս, անզգ-ամներուն դէմ: օգնութի առ 'ի թշնամեաց, թշնամի-ներուն դէմ օգնութին, իմաստ:

Այս որ տրականի քով կիմացուի՝ կէօրէ, կամ բանի մը տեղ կամ սըրան. օր. առ 'ի վերա, բուն մօքին կէօրէ: առ պատուականս, առ անարգս, պատ-վաւորի տեղ, ցածի տեղ կամ սըրա:

## Ընդ:

217. Հասարակ նշանակութիւնը կիմացուի՝ հետը, միատեղ, մէկումը հետ. ու քովը կուզէ տրական, քիչ տեղ ալ գործիական. օր. ընդ իս, իմին հետըս: ընդ այնպիսեաց, անանկին հետը: ընդ մեզ գնան. մեր հետը կերթան:

Դարձեալ, կընշանակէ՝ վրան, համար, կամ տեղը, բանի մը կամ մէկումը տեղ. քովը սեռական կուզէ, քիչ տեղ ալ բացառական: օր. ընդ ամ դատարկ բանի. ամէն փուճ խօսքի համար: ակն ընդ ական, աչք աչքի տեղ կամ համար: ընդ կորուսելոյն, կորսընցընելուն համար:

Շատ տեղ կընշանակէ՝ տակը, ներքեւը, ու քովը կուզէ գործիական, երբեմն ալ սեռական: օր. ընդ ծառով, ծառին տակը: ընդ հողով, հողու տակը: Նուաճիլ ընդ խրատու ապաշխարութե. ապաշխարութե կանոններուն տակը մտնալ:

Կընշանակէ դարձեալ՝ մէջը, օրթան, արալըխը, մապէյն. ու քովը տրական կուզէ, և ընդը երկու հեղ կըդրուի: օր. ընդ երկինս և ընդ երկիր. երկինքի ու երկրի մէջը: ընդ իս և ընդ քեզ. իմ մէջը քու մէջը, մէջերնիս: ընդ բազմաւն և ընդ սակաւան, շատին ու քիչին մէջ:

Տրական հոլովի քով պաղի տեղ կընշանակէ՝ վրան, վրայովը. կամ, դէպ'ի, կողմը: օր. Նախանձիլ ընդ նա կամ ընդ նմա, անոր վրան: խռովիլ ընդ բանսն կամ ընդ բանն, խօսքին վրայ: ուրախանալ ընդ ճգնութեն, ճգնութեանը վրայ: շրջիլ ընդ երկնայնութեն, դէպ'ի երկինքը: տնկել ընդ արևելս, դէպ արևելք, արևելքի կողմը:

---

## Ըստ:

218. Սովորաբար կընշանակէ՝ պէս, կէօրէ. քովը սեռական կամ տրական. օր. ըստ հրամանի, հրամանին պէս: ըստ բանի քում, քու խօսքիդ կէօրէ: ըստ լեզուաց, լեզուի կէօրէ: ըստ գործոց, գործքին կէօրէ:

Ներքեւին ալ կընշանակէ՝ համար, սէպէպովը. որ ըստ յանցանաց, սուչին համար ։

Այս որ կընշանակէ՝ վրան, դէպ անոր ։ որ բառնալ ըստ անձին, իր անձին վրա առնել ։ ըստ ճանապարհին, ճամբուն վրա ։

Նախդրիւ տրականի հետ երբեմն կիմացվի՝ դուրս, տըշարը ։ որ ըստ հաստատութէ, ըստ երդումն, ղալէ՝ երդումէ դուրս ։ ըստ օրէնս, օրէնքէ դուրս ։ ըստ չափ, չափէ դուրս կամ անդին ։

Բացառականի հետ կընշանակէ՝ ետեւը, ետքը, վրան ։ որ. ըստ նոցանէ, անոնցմէ ետքը ։ ամ ըստ ամէ, տարի տարվան ետեւ կից վրա ։ այր ըստ առնէ, մարդ մարդու ետեւ կից վրան ։

Այսքան տեղեկութի նախադրութե վրա՝ հերիք է հոս տեղը. մնացածը կրնան աշակերտքը տեսնել ընդարձակ Քերականութե մէջը ։

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

## Մակբային վրա ։

219. Մակբայ, բային վրա կընշանակէ, ինչու որ բային վրայօքը բան մը կիմացընէ. ուստի կըսենք. Մակբայն է մասն բանի՝ նշանակիչ պարագայից բային կամ ներգործութեան ։ այսինքն մէկ մասն բանի մի է որ բային առաջը կամ ետքը դրվելով, անոր ընելուն կամ ըլլալուն կերպը կըցուցանէ, կամ ժամանակը, տեղը, չափը ։ Ինչպէս օրինակով ըսենք, գրեցի՝ բայ է. երբոր դնենք՝ այժմ գրեցի, կըցուցանէ գրելուն ժամանակը թէ հիմա գրեցի. աստ գրեցի, կըցուցանէ տեղը՝ թէ հոս գրեցի. ՚ի կարճոյ գրեցի, կըցուցանէ չափը՝ թէ կարճըճուկ գրեցի. գրեցի առանձին, կըցուցանէ կերպը՝ թէ պաշխաճա գրեցի ։

220. Շէնքին կողմանէ նայինք նէ, երկու կըբաժնըվի մակբայը, այսինքն նախատիպ կամ բնական, եւ ածանցեալ ։

Նախատիպ մակբայ է որ բուն ինք իրենն է, անու-

նէ կամ ուրիշ մասն շինած չէ · և աս կերպ քիչ կայ · զբ · աստ, հօս · այըր, հօտ · անտ, անտր, հօն · այժմ, որդ, հիմա · ուէրէ, ասօր · դէօ, տաւհա · մնաղ, երբոր · դէշա, ամենևինժիր · մէրը, սպասիքերէն · այն, հա · ոչ, չէ · հէյՏ, ինչու :

Ծանուցեալ մակբայ կըսվի ան որ ուրիշ բառով ձևացեր է, ու մակբայի նշանակութիւն կունենայ : Ասանկը երկու կերպ կայ, մէկը պարզ, որ պզտիկ մասնիկով մը կամ հոլովով մը մակբայ կը ձևանայ · մէկալը բաղադրեալ, որ երկու իրեք բառով կըշինվի :

Պարզ մակբայք մասնիկով շինուած :

221 · Մակբայ շինօղ մասնիկները ասոնք են · էն, էն, էք, է, է, էի, ջէ, էջա, ըէն, այն, ույն, իմէ : Ասոնկները բառին վերջը կըփակչին՝ անունի, դերանուանի, մակբայի ալ · և զատ կամ նման նշանակութիւն մակբայ կընեն · զբ ·

էն · Լնչէն, ինձմէ կամ ինձմով · սէնէն, քեզմով · անէն, անով · ճէնէն, մեզմով : Ասոնք դերանուանէ շինած են : Այրէն, դէպ հօս · այըրէն, դէպ հօտ · անտըրէն, դէպ հօն · այժմէն, հիմակուց : Ասոնք մակբայէ շինած են :

էն · Լնշնէն, ինքնիրմով · գիւմիւշէն, ճօլմօշէն · սիւսպիւթիւն · չամօշէն, կամքով, ուզելով : Ասոնք իրերը գործիականէն շինած են :

էք կամ էք · Լորէէք, անդամմը, կեանհիմն · առաջէք, տեղէմը · առջէք, տեղ մը :

է · Աշէ, ասկից · այշէ, անկից · անշէ, անկից · ուշէ, որ տեղէն · ճարէ, խիստ շատ, փէք · էօրօշէ, ինքիրեն :

է · Լունէ · բանով մը, մէկ կողմանէ մը :

էի · Ոսմանլըէի, խիստ ուժով, զօռով · ճըղմանէի, մէկ կողմէն, եամքուրի · ուղղանէի, շիտակ, տօտօղրու :

ջէ · Չէրքէզջէ, ձեռքով · նշանջէ, նշանով, իշարէթով · հայջէ, հայերէն · թաթջէ, թէքմէով :

էջա · Լորէջա, երկու հեղ · էրէջա, իրեք հեղ · ճանէջա, քանի հեղ :

բէն. Յունարէն, հռոմերէն. Հրէարէն, չըֆութերէն:
այն կամ եայն. Գիշերայն, գիշերանց, կէճէ իլէ:
Լռելեայն, սուսիկ, սէսսիզ:
ոյն. Կենդանոյն, ողջ ողջ, տիրի տիրի. Իսկոյն, շուտ մը, ան սահաթը:
իմբ. Ազգովիմբ, սօյով սօփով. Բոլորովիմբ, ամենեիմբ, պիւսպիւթիւն:

Պարզ մակբայք հոլովով յանգած:

222. Գործիական հոլովը շատ անգամ մակբայի տեղ կըբանի: Օր. դիւրաւ, հեշտիւ, խօլայութենով ըսել է. իրենց ուղղականը՝ դիւր, հեշտ: Ասանկ են ետևինները:

Բնաւ. ձիպ, պիւթիւն. Խստիւ, սէրթութենով. Կանխաւ, առջեւկուց, շատ ատենէ. Կամաւ, ուզելով. Ճշգրտիւ, սըխըյով. Ճշմարտիւ, իրաւցընէ. Մեղմով, կակղութենով. Բարւոք, աղէկ. Վաղիւ, վաղը. Արդեաւք, իրաւցընէ, աճապա: Ասոնց ուղղականը՝ բուն, խիստ, կանուխ, կամք, ճիշդ, ճշմարիտ, մեղմ, բարի (գործ. բարեաւք,) վաղ, արդ, (գործ. արդիւք կը գայ:)

Բացառական հոլովէն ալ մակբայ կըլլան: Օր. ՚ի բնէ, բնութենէ, զաթը, կը թէմէլէն: յառաջնմէ, յառաջոյ, առջեւկուց, էվվէլտէն: ՚ի վերջոյ, չըլչըլյալը: ՚ի նոյնէ, մէկ փայով, կտոր մը:

Սեռական և տրական հոլովէն մակբայի պէս կըբանին անվանք. Օր. տուընջեան կամ տուընջենոյ, առվօտան ատէնը, առավօտանց. Գիշերի, գիշերվան ատէնը. յերաւի, իրաւցընէ. յարժանի, արժանապէս, մուստահագ. յանչափս, չափէն աւելի, իֆրաթ:

Նմանապէս հայցական հոլովը երբեմն մակբայի ուժ ունի (121.) ինչպէս զնոյն, զսոյն, պապի տեղ կընշանակէ՝ նոյնպէս, սոյնպէս:

Ածանցեալ բաղադրեալ մակբայք:

223. Մակբայներուն շատը բարդած են անուանով կամ դերանունով, կամ ուրիշ մասունքով ալ:
Անունէ բարդած են՝ հարկաւորէն, հարկաւորաբար, հարկ-

ճապէս · զէրէ օրէն, եար, պէս, անուն են և կընը-շանակեն՝ կերպ, Թարզ:

Անուանք և դերանուանք կըբարդին, մակբայի պէս կըբանին, յայնժամ, ան ատենը · յայնմհետէ, անկէց ետքը · նոյնպէս, մէկ չափ, մէկ խըտար · այսօր, այնօր ևն: Ասանկ են որպէս, որչափ, որքան:

Նմանապէս նախադրութիւնով, ուրիշ մակբայով, ու շաղկապով ալ բարդած մակբայ կըլլան · իբր առժամայն, համօրէն, ընդհլայր, այլ ընդ այլոյ, ընդ ամէն կմ՝ ընդ ամենայն, հա ժամ չէաւ, եօք և եօք · և այլ շատք:

Շատ անգամ ալ երկու անուանք մակբայ կըձեւանայ, կմ՝ նոյն մէկ անունը կրկնելով · իբր միանգամայն, իբր միջն, ու անգամէն · 'ի հարկանէ · 'ի հարէն ու անցէն: Արագ արագ, առ սակաւ սակաւ ևն:

Ահա շէնքին կողմանէ ասանկ կերպ կերպ կըլլայ մակբայը · տեսնենք հիմա նշանակութեան կողմանէ քանի տեսակ կըլլայ:

---

## Մակբայից բաժանումը:

224. Մակբայը քանի կերպով որ բային պարագաները ցուցանէ նէ, անխըտար կըբաժնըվի · և գլխաւորքը տասներկու են · իբր Որակական, Քանակական, Ժամանակական, Տեղական, Թուական, Հարցական, Մաղթական, Արգելական, Բացասական, Հաստատական, Ցուցական, Ընտրական: Ասոնք մէկ քանի օրինակով իմացընենք:

225. Որակական կըսըվի ան որ ներգործութեան որակութիւնը, որպիսութիւնը կըցուցանէ · իբր ինչպէս ինչ կերպ ըլլալը, ասանկ կմ՝ անանկ ըլլալը, աղէկ կմ՝ գէշ, շիտակ կմ՝ ծուռ, յայտնի կմ՝ գող · իբր Այս-պէս, ասնդպէս, ասանկ, պու Թարզ · այդպէս, դոյն-պէս, այնպէս, նոյնպէս · նոյնօրինակ, միօրինակ · որպէս, ճշմարտ, բարւոք, բարւոքապէս · այլապէս, այլազգ: Յայտ-նապէս, մէկէն, մէկնօրէն · իբր խստակ, էշկերէ · լաւ 'ի լաւ, բաց, աչքէ · 'ի ծածուկ, ծածկաբար, գաղտնա-բար, գաղտուկ, կեղծ · բռնի, բռնաբար, զօրով · 'ի հարկէ, հարկաւ, չուզելով, նաչարի · ընդ, 'ի նո-ւէր, ընդվայրի, փուճ տեղը: Ահա աս մակբայներն և

այլ նմանները որ ընելուն կամ ըլլալուն կերպը կըցուցանեն, որակական կըսուին. ինչ երբ կըսենք, յայտնապէս խօսեցայ, հոս յայտնապէսը կիմացընէ խօսելուն կերպը՝ թէ բաց՝ աշկեարէ խօսեցայ, ոչ թէ գող մութ ըսի։ Սանկ յանգէտս ընթացան, կը-ցուցանէ ընդունելուն խապուլ ընելուն կերպը՝ թէ չգիտնալով չճանչնալով ընդունեցին։

226. Քանակական, կիմացուի ան մակբայը որ քա-ւի բային քանակը, ինչ ինչքանը չափը կըցուցանէ, շատ կամ քիչ, աւելի կամ պակաս, բոլոր կամ կի-սատ ևն։ Սանկ կըբանին վերբերական անվանք որ քանով չափով կըբարդին, այսքան, այնչափ, ևն. (տես 49.) Նմանապէս ասոնք, համօրէն, համանգա-մայն, 'ի միասին, առհասարակ, ինչ բոլոր մէկէն, ամէ-նը մէկտեղ։ յոյժ, յաւէտ, առաւել, շատ, աւելի, զիյատէ։ տահա, խայլի մի, ազող քէչ, գոյժի մի, քիչ, քիչ մը. ազ, ազճըգ։ Գոգը 'ի շատէ, քիչէն շատէն, ազտան չօքտան։ Սանկ երբոր կըսենք, գոգը 'ի շատէ գիտեմք կամ լսեմք, կիմացընենք գիտնա-լուն կամ լսելուն չափը՝ թէ քիչէ շատէ գիտենք, ոչ թէ բոլորը։

227. Ժամանակական, բային կամ ներգործութեան ժամանակը ատենը կընշանակէ, թէ երբ որ ատեն կըլլայ, շուտ թէ ուշ, առաջ թէ ետքը, երկան կամ կարճ ատեն, կամաց կամաց կամ թէզով ևն։ Սանկ են այժմ, այժմու, արդ, շիմտի, հիմա, շիմ-տի։ այժմէն, արդէն, հիմակուց, շիմտիտէն։ այսօր, 'ի ներքնեանս, ասօր, պուկիւն։ վաղիւ, վաղը։ երէկ, ... , երեկ, տիւն։ յետադարձն, երեկ չէ մէկալ օր։ ... , գիշերը։ ... , կէսօրվան դէմ։ այ-գուն, այգուց, առաւօտը։ վաղ, վաղորդեան, 'ի վաղուց, առաջուց, շատոնցմէ։ յայսմհետէ, այսուհետև, ասկէց ետքը։ յորմէ հետէ, քանի որ։ յետոյ, ապա, ... , ետ-քը, սօնրա։ Նորէն, ... , պազը քերէ։ Միշտ, ... , ... , ... , երբոր, հաչան։ ... , յար, յարաժամ, յաւէժ, յաւէտ. միշտ, ամէն իժիր, տայ-մա։ ... , ... , տաճա։ ... , ... , ... , քանի որ չէ։ ... , նոյն հետայն, հէմէն ան ա-տենը, օլ սահաթ։ յանկարծ, յեղակարծ, ղաֆիլ։ ... ,

արագապէս, ծոյլ, ձեռօք, շտապաւ. չուտ, շուտ մը, թեզով, աճըլըլը : հազիւ, զօրով, կիւճըլէլա : անագան, ոչ ուրեմն, ուշ, կէճօնէն կէճ : փոխա, կամաց, քիչ քիչ : Ասանկները ինչպէս ժամանակ ցուցանելը կուզես տեսնալ նէ, նայէ աս վկայութիւնը. * Եւ այժմ ասացի ձեզ՝ մինչչև եղեալ. զի յորժամ լինիցի, հաւատասջիք. || Հիմայ ու հիմայ ըսի ձեզի՝ ջանի որ չէ եղած. որ երբոր ըլլայ նէ, հաւատաք :

228. Տեղական, որ տեղ կամ որ դին ըլլալը կցուցանէ, հմ. հոս կամ հոն, մօտ կամ հեռու, վերը վարը, ներսը դուրսը, առջի դին ետեւի դին եւլն : Ասանկ են՝ աստ, աստանօր, աստէն, հոս, պուրտա : այդր, այդանօր, այդրէն, հոտ տեղ, շուրտա : անդ, անդր, անդէն, անդանօր, հոն տեղը, օրտա : յայսկոյս, յայնկոյս, ասդին, անդին : արտաքս, ՚ի դուրս, դուրս, տըշարը : ՚ի ներքս, ներքոյ, ներսը, իչէրտէ : հեռի, ՚ի բաց, ՚ի բացեայ, հեռու, ուզաք : մօտ, մերձ, հուպ, մօտիկ, եաքըն : ստորև, ՚ի վայր, վարը, աշաղը : ՚ի վեր, ՚ի վեր անդր, վերը : ուր, ուրանօր, ուր տեղ. ուր ուրեք, ուր տեղ որ : ուրեք, տեղ մը : յառաջոյ, յառաջ կուսէ, առջեւէն, առջի դիէն : յետոյ, յետուստ, յետ կուսէ, ՚ի թիկանց, ետեւանց, կռնակէն : յո, ընդ որ, յոր կոյս, որ դին որ : Ասանց օրինակ մը. * Եւ ոչ ասասցեն թէ աստ է կամ անդ. զի ահա արքայութիւն այ ՚ի ներքս ՚ի ձեզ է : || ու չըսեն քի հոս է կամ հոն. զէրէ իշտէ այ արքայութիւնը ձեր ներսն է :

229. Թուական, բային կամ ներգործութեան համարանքը կցուցանէ, կամ կարգը, սըրան, առաջ կամ վերջ ըլլալը, մէկ խաթ կամ շատ խաթ ըլլալը : Թուական անունները որ վերը դրեցինք (221) երբոր բային վրայ ըսվին նէ, մակբայի պէս կըլլան : Ասանկ են՝ երկիցս, երիցս, քառիցս եւլն : Նախ, առաջին, յառաջին, էն առաջ, առջի տեղը : միանգամ, մէկ հեղ : առ միանգամ մի, առ մի նուագ, մէկ հեղվան : մի ըստ միոյ, մէկ մը որ, մէկմալ որ : բազում անգամ, յոլովակի, յաճախակի, յոքնակի, շատ հեղ, չօք քերէ : դարձեալ, կրկին, անդրէն, միւսանգամ, թէքրար, կէնէ :

230. Հարցական, կըսվի երբոր ներգործութեան

վրայօք հարցում կընէ, թէ պատճառը կամ ինչպէ-սը, կամ տեղը ժամանակը կը հարցընէ. առաջ վե-րի դրած մակբայներուն շատը՝ հարցական ոյժ կունենան. որպէս երբ ըսել. ո՞ւր տեսեր. քանի՞ցս ասա-ցի. ընդէ՞ր եկիր. ևն: Ասանկներէն զատ՝ բուն հարցական կըսեպվին, է՞ր, չէ՞, չէ՞, հէ՞յ, ինչո՞ւ, ինչի՞ն. ընդէ՞ր, ընդէ՞ր, վասն է՞ր, է՞ր վասն, յո՞ր սակս, էր ո՞ւմ, ընդէ՞ր. ի՞նչ բանի համար, ի՞նչ պատճա-ռով: ընդէ՞ր, ի՞նչ, նէ՞: ո՞չ, ո՞չ ապաքէն. չէ՞ մի, ոչ յինչ-մի: Է՞ր, է՞ր իւիք, ինչո՞ւ, նէ՞իչի:

231. Ստորասական, կըսվի ան որ ներգործութիւնը հաստատել կըցուցանէ, հա՛ կամ իրաւ կըսէ. որպէս Այո՛, հա՛, հէ՛, պէլլի: արդարև, յիրաւի, անշուշտ, իրաւցը-նէ, հէմէն անանկ, կերչէք, հագըրդեթ: ապաքէն, արդեաւք, իրաւ որ, ըղորդ, տօղրուսու: գրեթէ, գոգ, գոգցես. սեպէ որ, սայքի: ծն և ծն, սանկ նանկ, ըէօյլէ պէօյլէ:

232. Երկբայական, կըսվի մակբայը որ ներգոր-ծութիւնը երկբայելի կըցուցանէ, յուսալու կամ վախ-նալու. և սանք են. գուցէ, գուցէ երբեք, ըըլլայ թէ, օլմայաքի: Խերբեւս, արդեւք, եթէ ոչ, եթէ չէ. ըլլայ որ, պէլքիմ, օլաքի: Միթէ, մի արդեօք, աճապա:

233. Ժխտական, կիմացվի ան մակբայը որ ներ-գործութեան վրայ չէ կըսէ, կամ արգելք մը կըցու-ցանէ. և են. ոչ, ոչ եւս, ոչ բնաւ, ամենևին ոչ. ոչինչ. ոչ եւս. մի, մի երբեք, ամենևին մի, մի իւիք. ծն անդր, քաւ: Ասոնց նշանակութիւնը յայտնի է. ու ոչը մի-նակ չ գիրով ալ կըսվի բային կպած. որպէս չասացես, չգիտեցես ևն:

234. Զատական, կըսվի մակբայը որ ներգործու-թեան վրայով զատել մը կըցուցանէ, կամ մինակ, մէ-կիկ մէկիկ ըլլալը. որպէս միայն, մեկին, լոկ, սոսկ. սալթ: միայնակ, միայն ընդ միայն, մինակ, մինակուկ: Մի մի, մէկիկ մէկիկ: Մեկուսի, առանձին, զատ, պաշկաճա: առանձինն, առանձնակի, ինքիրեն, մախսուսթան, եա-լընըզ:

235. Ցուցական, կիմացվի մակբայը որ ներգոր-ծութիւնը ցուցանելու պէս կընէ. և են. ահա, ահա-ւասիկ կամ աստուսիկ. ահաւադիկ կամ աստուդիկ. ահաւանիկ

կմ ՏԱՆԷՔ ․ ատոնք կընշանակեն՝ հընտա, իշտէ ։

236. Ընտրական, կըսուի մակբայը որ ներգործութիւը ընտրելու կըցուցանէ, կամ մէկ բան մը աւելի ընելու քան զմէկալը ․ ատոր համար յայտնի կմ ծածուկ ԽԱՆ նախադրութիւն կուննենայ ․ և են ․ ՆԱ, ՏԱՆԱՒԱՆԴ, ՆԱ ՏԱՆԱՒԱՆԴ ․ իլլէ, իլլէ որ, իլլաքի ․ ՅԱՒԷՏ, ԱՌԱՒԵԼ ․ աւելի, տահա զիատէ ։ ԹԷ, ԹԷ ՆԱ, իլլա, համտա ։

237. ԳԻՏԵԼԻՔ ․ Այսքան տեղեկութիւ որ սորվի աշակերտը մակբային վրայ, կրնայ տեղին կէօրէ ընտրել թէ որ բառը մակբայի պէս կըբանի, և ինչ տեսակ մակբայ ըսելու է ։ Այս բառ որ կերպ կերպ նշանակութիւն կէօրէ այլևայլ տեսակ կըլլայ ․ ինչպէս ՅԱՒԷՏԸ երբոր իմացուի՝ շատ, քանակական է ․ ԲԻՇՏ նշանակէ նէ, ժամանակական ․ ԱՒԵԼԻ ԽԱՆ իմացուի նէ, ընտրական ։ Նաանկ ալ նոյն մէկ բառը իր նշանակութիւը նայելով՝ կըլլայ հէմ անուն, հէմ նախադրութիւն, հէմ մակբայ, հէմ շաղկապ ։

---

# ԳԼՈՒԽ Ժ.

## Շաղկապին վրայ ։

238. Շաղկապ, մէկ տեղ կապող միացընող ըսել է, ու Քերականութիւն մէջը կիմացուի, ՆՈՐԱ ԲԱՆԻ՝ որ կապէ մօտէ ոյլ ՆՈՐԱՆՑ ԲԱՆԻ ․ օր ․ բառ բառի հետ կըկապէ, խօսք խօսքի հետ ․ ինչպէս երբոր կըսուի ․ * Որ ոք եթող զտուն, կամ զհայր կամ զմայր, կամ զորդիս ․ ‖ հոս կամը իրարու հետ կըկապէ անունները ։ Նմանապէս երբոր կըսուի ․ * Ո՞վ է մարդ՝ ի յիշես դու զնա ․ կամ որդի մարդոյ թէ այց ինչ արասցես դու նմա ․ ‖ հոս ոչն, կամը, թէն խօսք խօսքի հետ կըկապեն ։

239. Քանի կերպ շաղկապ ըլլալը, շինքին կողմանէ նայելով՝ երկուք է, պարզ և ածանցեալ ։ Պարզը՝ կամ ինք իրեն մինակ շաղկապ է, օր ․ Ե, ԵՒ, ՈՉ, ԹԷ ․ և կամ ուրիշ մասն բանի ալ կըլլայ ․ օր ․ ԱՅԼ, ՆԱ, ԱՅԼ, ԽԱՆ ։

Ածանցեալ շաղկապը ուրիշ բառէ շինած է կամ

բարդած. օր. Եւ եւս, քանզի, բայց արդ, վասն որոյ, առաւել, այսինքն. ևն:

240. Նշանակութիւնը նայելով, կը տարբեր կերպով բանի բանի կապելը, տասներկու կըբաժնենք. օր. Բաղհիւսական, Տրոհական, Բացառական, Ենթադրական, Մեկնական, Սկզբնաւորական, Պատճառական, Ամփոփական, Հաւաստական, Թուական, Ստորական, Թուարական: Ասոնց վրայ կարճ խօսքով իմացընենք:

241. Բաղհիւսական, կըսուի մասնաւորապէս այն շաղկապը որ բառերը կամ խօսքերը մէկ մէկու հետ կըհիւսէ՝ առանց զատ նշանակութիւն կամ գործք մը ունենալու: Այսինք են, եւ, եւս, ու, ալ, մի: Եւս եւ, եւեւս, այլ, այլ եւս, նաեւ, նոյն, դարձեալ, կամ, նա նոյն, և այս, ԹԷ, ԵԹԷ. իրենց նշանակութիւնը՝ ալ, հէմ, հէմ ալ, եւս, վերստին, կէրէք: Օրինակ ըլլայ երբ կըսենք, ԵԹԷ կենօք, և ԵԹԷ մահուամբ. օր. հէմ կենդանի, հէմ ալ մեռած. կամ, կէրէք ապրիմ, կէրէք մեռնիմ:

242. Տրոհական, բաղհիւսականին դէմ՝ անանկ կըկապէ բառերը կամ խօսքերը՝ որ անոնց մէկ մէկէ զատելը ու տարբերութիւն ալ կիմացընէ: Այսինք են կամ, և կամ, կամ ԹԷ, ԹԷ, ԵԹԷ: Երբոր կըսուի, կամ զմին սիրեսցէ, և զմին ատեսցէ, հոս կամը տրոհական է: Նմանապէս երբ կըսուի. գուշակա-նաւ եկեց՝ ԵԹԷ սիրով հոգւոյն, հոս ԵԹԷն տրոհա-կան է, եօխսամ կընշանակէ:

243. Բացառական, կիմացուի շաղկապը որ խօսքը խօսքի անանկ կըկապէ՝ որ առջի ըսածը չխափելու պէս կըցուցանէ. և են. Այլ. հապա, ամմա: բայց, սակայն, համայն. անճախ, լաքին: այլ սակայն, բայց սակայն. վէլաքին: բայց միայն, բայց ԵԹԷ. անճախ հէ-մէն: միայն, միայն ԹԷ, բաց ԹԷ. Փախատ:

244. Ենթադրական, կըսուի շաղկապը որ խօսքը կիսատ կըցուցանէ, ու ետեւի խօսքին հետ կապել կուզէ բացատրական շաղկապով մը. և են. ԹԷև, ԹԷպէտ, ԹԷպէտև, Փարազամ: ԹԷև ոչ, ո՛չ ԵԹԷ, ԵԹԷ ո՛չ ԵԹԷ. չէ՛ որ, եօք քի: ո՛չ միայն. չէ՛ որ միայն: Այս երկու շաղկապը իրարու հետ հաղորդութիւն ունին. ու մէկ օրինակով երկուքն ալ կիմացուի. օր * ԹԷ-

պէտ մարմնով հեռի եմ, այլ հոգւով ընդ ձեզ եմ ||. Ռմ. Փարագամ մարմնով հեռու կամ, ամմա կի անձամբ հոգւով ձեր հետն եմ:

245. Մեկնական, կիմացուի շաղկապը՝ որ առջի բառը մեկնելով ետեւինին հետ կը կապէ: Եւ են. Այս է, այն է, նա է, այսինքն, այսինքն է. կէօյա, կէօյա քի: որպէս, իբր, իբրեւ թէ, որպէս այն թէ, իբր այն թէ. ինչպէս թէ, եանի, եանի քի: ըստ որում, կէօյա քի. ըստ օրինակ, օրինակ իմն. մէսէլա, խուլասէսի քէլամ: Գր. * Ի քաղաք Դաւթի, այն է Քեբրոն ||. Հոս այն էն կը մեկնէ շաղկապը:

246. Սկզբնաւորական, կիմացուի սա շաղկապը որ սովորաբար նոր խօսք մը սկսելու կը բանի, ու սկիզբը կը դրուի. Եւ են. Արդ, եւ արդ, այլ արդ, Ապա արդ, Իսկ արդ. ամէ, ամէլիմալի, էյ: Մադամքէն. այնուհետ, նա առանց. հաշըլթէթ: Առջինները երբոր առեն նշանակեն նէ, ժամանակական մակբայ կըլլան. Գր. * Արդ արդ ոչ եւս գոյ ինձ տեղի 'ի կողմանս յայսոսիկ. || Ռմ. անձամբ հիմա չմնաց ինծի տեղ աս կողմերը: Սկզբնաւորական կիմացուի երբ ըսուի. * Արդ ո՞ւմ նմանեցուցից զմարդիկ ազգիս այսորիկ. || Ռմ. ամէլիմտի, որու՞ նմանցնեմ աս ազգին մարդիկը:

247. Պատճառական, կիմացուի շաղկապը որ վերի կամ ետեւի խօսքին պատճառը տալով հետը կը կապէ. Եւ են. Զի, քանզի, վասն զի. զէրէ, զիրա: որպէս զի, որ: որովհետեւ, փոխանակ զի, այնու զի. անով որ, չիւնքի: այն զի, նա զի, ինչու որ: Մինչ, չիւնքի: զար, ուր որ: որ, քի: Գր. * Իսկ որովհետեւ զայս աւետիս ունիմք, սրբեսցուք զանձինս մեր յամենայն պղծութենէ. || Ռմ. մէ՛ չիւնքի աս բարի միւժտէն ունինք նէ, մաքրենք մեզ ամէն մնտռութենէ: Հոս իմէն սկզբնաւորական է. որովհետեւը պատճառական է. զէրէ պատճառը կուտայ քի ինչու համար պէտք է մեզ մաքրենք:

248. Մակաբերական, կըսուի պատճառականին դէմ, անոր համար որ ետքի խօսքը առջի բառէն ելլելը կը ցուցանէ, առջինէն վրայ կը բերէ. Եւ են. Ապա, ուրեմն, ապաքէն, ապա ուրեմն, նա ուրեմն. անանկ նէ, եօյլէյսէ, իմտի: Ուստի, վասն որոյ, այսր աղագաւ,

ամէն էրէ, դմէն էրէ, նմէն էրէ. ատոր համար, պունուն իչին, օնտան եօթիւրիւ, օլ սեպեպտէն:

249. Համեմատական, նման է ընտրական մասնկային. կիմացուի շաղկապը որ երկու խօսքի մէջ համեմատութիւն մը, բաղդատութիւն մը կըցուցանէ, ու զմէկը միւսէն աւելի ըլլալ կըհասկըցընէ. և են. Քան, քան թէ, նէքի: առաւել, մանաւանդ, յաւէտ, նա. իլլա, իլլաքի: Թող թէ, Թող քի, չէ քի: Մինչ, մինչև, մինչ դէ, անգամ. ինչվան, անխըտար որ, պիլէ: որպ. * Լաւ է կոյր աչօք՝ քան կոյր մտօք. || Դու ալ աղէկ է աչքով կուրը քեօրը՝ նէքի մտքով կուրը: Տես որ կըբաղդատէ մարմնով կուրը հոգւով կուրին հետ, ու աւելի գէշ կըցուցանէ երկրորդը:

250. Եթէական, կիմացուի այն շաղկապը որ խօսք խօսքի կըկապէ՝ մէկը միւսին թէութիւն մը տի, կամ զաւըլի պէս: և են. Թէ, եթէ, էյէր: Եւ թէ, ապա թէ, ապա եթէ, կամ ապա եթէ, այլ թէ, և եթէ, որդ եթէ. հապա թէ, ամմա էյէր: Ապա թէ ոչ. հապա թէ չէ, եօղուսա: որպ. * Եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ հայրն երկնաւոր. Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր. || Եթէ թողուք կըներէք մարդկանց իրենց սուչը, թողու ձեզի ալ երկնաւոր հայրը Ա. Ծ. հապա էյէր չիթողուք մարդկանց իրենց սուչը, ձեր հայրն ալ չիթողուր ձեզի ձեր սուչը:

251. Սաստական, կիմացուի այն շաղկապը որ երկու բաներին մէկը ընտրել կըցուցանէ ակամայի պէս, անանկ որ տաւհա աղէկին յոյս չըլլայ նէ, պարէ մէկալը ըլլայ. և են. Գոնէ, գոնեա, գէթ, կընշանակեն՝ պարէ: Այսն են ֆարզա, ճաւար, որ աշխարհաբար կըսուի՝ մէկ կէր կամ մէյէր: որպ. * Թէև յԱյ ոչ երկնչիմ, գոնէ վասն աշխատ տանելոյ զիս այրւոյն՝ արարից նմ դատ: || Թէ Աստուծմէ ալ չեմ վախնար նէ, պարէ այս այրի կնիկը ինծի գլխացաւութիւն տալուն համար՝ իրեն դատաստանը տեսնեմ:

252. Թարմատար, փոխ աւելորդ ըսել է. կիմացուի այն շաղկապը որ խօսքը կըկապէ առանց հարկի մը, միայն ոտքը դալու համար, կամ զարդ մը ըլ-

լայ տեղի. ասանկ են. թէ, եթէ, և թէ, չէ, թող, թոյ, որ. ու ամէնը կընշանակեն՝ որ, քի. զր
* Լսես եթէ հաճոյ է. ‖ Նա տեսաւ որ հաց կընեն.
* Ասա՛ զի քարինքս այսոքիկ հաց լինիցին. ‖ ըսէ՛ որ աս քարերը հաց ըլլան. * Ասացի՝ թող ցրեցից զնոսա. ‖ ըսի որ ցրուեմ զանոնք.

Դիտողութիւն. Վերը ըսածին կերպէ (237) նայելու է որ նոյն մէկ շաղկապը այլ և այլ տեսակի կըլլայ տարբեր նշանակութեանը համար. աշակերտը փնտըռելով կընայ ընտրել.

---

# ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ.

## ՄԻՋԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ.

153. Ութը մասանց բանին վերջինը կըսենք միջարկութիւն. անոր համար որ մասնիկ մըն է կամ բառ մը խօսքի մէջ կըյնի՝ հոգւոյն կամ սրտի շարժմունքը իմացընելու համար.

Շէնքին կողմանէ՝ երկու է, մէկը յատուկ, որ ուրիշ մասն բանի չէ, այլ բուն մարդկային ձայնի մասնիկ մը. ինչպէս. վաշ, ոհ, այ, էհ, էյվա ևն. մէկալը ածանցեալ, որ անուանէ կամ բայէ առած է. ինչպէս, երանի, աւաղ, վայ, թէր, թող ևն.

Նշանակութեան կողմանէ՝ կըբաժնըւի ինչխըմտար որ մարդկային կիրք կամ ներսի շարժմունք կըցուցանեն. և աս ութն են. Ըղձական, Հրաշական, Աղաղական, Հեշտական, Հեգնական, Խրախուսական, Մաղթական, Շնորհակալական.

254. Ըղձական, կիմացուի ան որ սրտին իղձը, յօժարութիւնը, բաղձանքը կըցուցանէ. և են. Երանի, երանի թէ, Երնէկ, նէ՛մութլու. յանքարժ, էյէ՛ թէ, էյծէ, ոհ, օհ, օհ թէ, գո՛յշ, հարթա. և կընշանակեն՝ ըլլա՛ր որ, ո՞ւր է որ, օլայդը, պուլայդըմ, քէշքէ. Ասոնց մէջը աւելի բանուկ է երանի. երբոր քովը տրական անուն մը ըլլայ նէ, տակը էական բայ կիմացուի. զր երանի աղքատաց, կիմացուի. երանի է աղքատներուն. Երբոր քովը հայցական անուն ըլլայ նէ, տակը ներգործական բայ կիմացուի. զր

երանի՜ պաշտօնէայն, կամ երանի՜ է պաշտօնէին, յոր երանելի պարտ է համարել զպաշտօնեայն, կամ զպաշտօնէին :

255. Հրաշական, կըսուի երբոր զարմանք կամ գովասանք կըցուցանէ. և են. Ո՜, ո՜հ, ո՜հրբէ, բա՜բէ, վա՜շ, է՜հ. կընշանակեն՝ պա՛, փէհ, հա՛յ հա՛յ, այա՛ : Ասոնց քովը տրական կամ ուղղական անուն կըդրուի նէ, տակը էական բայ կիմացուի. որ. Ո՜վ սքանչելեացս, կամ ո՜վ զարհուրելի վճիռս : Բա՜բէ անոխակալութեն. բա՜բէ երանութիքն :

256. Սգական, կըսուի երբ սրտին ցաւը, վախը, տրտմութիւնը կըցուցանէ. և են. ա՜խ, ա՜ ա՜, ա՜հ, ա՜հ ա՜հ, էհ, ըհ, ըհը. որ ահ, ախ, ուխ : Վա՜յ, վա՜յ վա՜յ, ա՜ ա՜, ափսո՜ս, աղէ՜տ, աւա՜ղ, եղո՜ւկ, բա՜բէ. ասոնք կընշանակեն՝ վախ, եազըգ, հայըֆ : Մ՛ինակ ալ կըբանին, տրականի և ուրիշ հոլովի հետ ալ. որ. վա՜յ ինձ կամ ինծի : Եղո՜ւկ քեզ կամ քեզի. եղո՜ւկ եմ ես և այլն :

257. Հեշտական, կիմացուի երբոր սրտին ուրախութիւնը, հաճ ընելը կըցուցանէ. և են. վա՜շ, վա՜շ վա՜շ, ա՜հ ա՜հ. հէ՛յ, օ՛խ օ՛խ, խօ՛շ խօ՛շ : Տրականի հետ կըսուի, վա՜շ ինձ, վա՜շ քեզի :

258. Հեգնական, ծաղր, մասխարայ ընելու կըբանի. և են. վա՜հ, վա՜շ, ա՜հ, յէ՛հ, ա՞յ, է՛, էհէ, հը՛ հը՛, ոհոհ. կընշանակեն՝ լիւֆ, փիւֆ : Ասոնք մինակ կըբանին, միայն այ, է, ուղղական հոլովով. Ա՜յ չարագործ, է՜ տառապեալ :

259. Խրոխտական, թարկանալու, սաստելու, չըլ-խրչ ալշու տալու կըբանի. և են. ա՛յ, ա՛հ, էշա, հա՛ուշա, դէ՛ր, դէ՛. կընշանակեն՝ հօ՛յ, պրէ՛ :

260. Աղահրաման, մօտիկ հրամանի բնել է. կիմացուի յորդորանք սիրտ տալու բանը, կամ ապսպըրանք ընելու. և են Ա՜րդ, հա՛պա, օ՜ն, հա՛ : որ. ա՛յ, ա՛հիմայ, հայդէ, ա՛հկէօրէ՛իմ : Ասոնք հրամայական բայի հետ կըբանին. առջի երկուքը ուղղականի հետալ, ա՛րդ դու, հա՛պա աստուածք :

Ասանկ մօտով կըբանին աս հրամայականք ալ, բե՛ր, ա՛ծ, ե՛կ, բե՛ր. և ասոնց կարգն է ա՛րդ. որ հաւմէն առած է, կընշանակէ՝ բե՛ր :

261. Ողորմականք, ասանկ կըսուի հին քերականին

մէջ այն բառն որ գովասանքով շնորհակալութիւն ընել մը կըցուցանէ․ և կըղնէ՝ ԴԷՆ, ՈՒՐԷՆ, ԴԸՐ-ՍԱՏ․ գրեանց մէջ չեն երևնար ասոնք ։

---

## Խրատ ․

Ութը մասանց բանին յատուկ գիտնալիքը՝ յաջողելովն Ա՛յ կարճ կերպով լմնցուցինք ։ Պէտք է որ վարժապետը գրաբառ խօսքեր տայ աշակերտին՝ որ Աւետարանէն կամ ուրիշ գրքէ ըլլայ․ և աշակերտն ընտրէ քի որը Անուն կամ Դերանուն է, և ինչ հոլով․ որը բայ, և ինչ բայ է, ինչ թիւ կամ դէմք կամ ժամանակ․ նմանապէս որը նախադրութի, մակբայ կամ շաղկապ ։ Աս ալ նայելու է որ գրաբառը աշխարաբար դարձընէ ։

---

Ութից մասանց՝ բանին ուսող,
թէ մեծ շահից՝ ես փափաքող,
կամ՝ քեզ կանոն՝ խըրատ ազդող,
համայն ուսմանց՝ առաջնորդող ․
Խնդրեա՛ միշտ քեզ՝ ԱՆՈՒՆ բարի,
ո՛չ ԴԵՐԱՆՈՒՆ՝ ըռկ 'ի յարգի ։
ԲԱՅԻՑ գըլուխ՝ զայս միշտ կացո՛,
գործել կըրել՝ վասն Աստուծոյ ․
՛Որ ժամ կալ ջի՛ր ԸՆԴՈՒՆԵԼԻ,
զառոյգ հասակդ՝ մանկականի ․
՛ՆԱԽԴԻՐ գործոց՝ յա՛ր դիր ըզջան,
ՄԱԿԲԱՅ նոցին՝ զայն որ արժան,
Կցեքին այս՝ ընդ ՄԻՋԱՐԿԻՆ,
կապեն պըսակ՝ քեզ 'ի յերկին,
թէ զսէրն առցես՝ ՇԱՂԿԱՊ նոցին ․

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՄԱՌՕՏ

---

### ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ.

#### Ի վերայ բաղդատութեան տասանց բանի:

262. Մարդկային լեզուի բառերը զատ զատ նայինք նէ, կըսուին տասն բանի. այսինքն խօսուածքի մասը, կտորը. երբոր զանոնք մէկ տեղ բերելով բան մը կըհասկըցնենք նէ, կըլլայ բան, խօսուածք: Աս բառերուն միաւորելը կըսուի բաղդատութիւն, այսինքն միատեղ դասել, շարել, քովէ քով դնել: Ասոր բաղդատութիւն է Պատշաճ համաձայնութիւն տասանց բանի: այսինքն յարմար՝ կարգով կապելը բառ բառի հետ լեզուի կանոնաց կէօրէ, անանկ որ մտքի եղածը հասկըցնէ:

263. Քանի կերպով որ կըլլայ բառ բառի հետ կապելը, ասանկ գիտնալու է՝ որ անուն մը ուրիշ անունի կամ դերանունի հետ կամ իբրև անոր ածական կըդրուի, կամ իբրև բացայայտէն, կամ իբրև յա-հայցողէն, կամ իբրև խնդիր:

Բայը անուան հետ կըկապուի, որ կըլլայ իրեն կամ խնդիր, և կամ իբրև տէր կամ անուան բային: Նախադրութիւնը կունենայ քովը անուն կամ դերանուն մը իբրև իրեն խնդիր միայն:

264. Ըսածներըս օրինակով ծանուցանենք: Ածական և գոյական անուն ինչ ըլլալը՝ վերը իմացուցինք. (59.) երբոր քովէ քով կըլլան ասանկ, ծառ բարի, թէ որ մէկ հոլով և թիւ ունենան նէ, կըսուին համաձայն հոլովով և թուով, ինչպէս գրածը.

բայց թէ որ կամ հոլովը տարբեր ըլլայ, կամ թիւը նէ, կըսուի անհամաձայն հոլովով, կամ թուով. զոր օր. 'ի ԲԱՐԻ ԾԱՌԱՅ՝ հոլովը անհամաձայն է, գոյականը բացառական է, ածականը հոլոված չէ : 'ի ԲԱՐԻ ԾԱՌԱՅՑ, հոս թիւն ալ անհամաձայն է, գոյականը յոգնակի, ածականը եզակի. բայց երբոր ըսենք՝ 'ի ԾԱՌԱՅ ԲԱՐՒՈՅ, կամ 'ի ԾԱՌԱՅՑ ԲԱՐԵԱՑ, հոս հոլովն ալ՝ թիւն ալ համաձայն է : Աս կըսուի համաձայնութիւն մասանց բանի :

265. Գոյական անուն մը կըսուի ԲԱՑԱՅԱՅՏԻՉ կամ ՅԱՅՏՆԻՉ ուրիշ գոյականի՝ երբոր անոր ինչ ըլլալը կըյայտնէ. զոր օր. ծառ ըսենք նէ՝ չիմացուիր ինչ ծառ ըլլալը. քովը կըդնենք՝ ԹԶԵՆԻ կամ ՆՌՆԵՆԻ, կըբացատրէ թէ թզի կամ նռան ծառ է, ո՛չ թէ տանձի կամ խնձորի. ուստի կըսուին բացայայտիչ, իսկ ծառը կըսուի բացայայտեալ կամ բացայայտելի :

266. ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ կըսուի գոյականը՝ երբոր քովի անունը որուն ըլլալը կիմացընէ. զոր օր. ծառ, մինակ չիմացուիր ո՛ր տեղի կամ ո՛ր բանի ծառ ըլլալը. երբոր դնենք՝ ծառ ՊԱՐՏԷԶԻ, կամ ԴՐԱԽՏԻՆ, կամ ԳԻՏՈՒԹԵԱՆ, աս սեռականները կըցուցընեն որո՛ւ ծառ ըլլալը, կըլլան յատկացուցիչ, իսկ ծառը կըսուի յատկացեալ :

267. ԽՆԴԻՐ, ուզածը ըսել է. երբոր անունը կամ բայը կամ նախադրութիւնը կուզենայ քովը հոլոված բառ մը իրեն նշանակութեանը յարմար, անի կըսուի իրեն ԽՆԴԻՐ, իսկ ուզողը կըսուի՝ ԽՆԴՐԱԿԱՆ. զոր օր. ՓՐԿՈՒԹԻՒՆ 'ի ԹՇՆԱՄԵԱՑ, կամ ՓՐԿԵԱՑ ԶՄԵԶ 'ի ԹՇՆԱՄԵԱՑ, աստի 'ի ԹՇՆԱՄԵԱՑ բացառականը՝ կըսուի խնդիր ՓՐԿՈՒԹԵԱՆ. ԶՄԵԶ հայցականը և մէկալ 'ի ԹՇՆԱՄԵԱՑը խնդիր ՓՐԿԵԱՑին : Նմանապէս երբ ըսենք, ՎԱՍՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ, աս սեռականը կըսուի խնդիր ՎԱՍՆին :

268. ՏԷՐ կամ ԱՆՈՒՆ բայի կիմացուի անունը որ բային կամ ընդունելութեան քովը կըդրուի, ու կընշանակէ ընողը կամ ըլլողը : զոր օր. ՏԷՐ ՓՐԿԵԱՑ, կամ ՓՐԿԵԼՈՅՆ ՔՈ, կամ ՄԵՐՈՅ ՏԵՍԵԱԼ. հոս ՏԷՐ, ՔՈ, կըսուի տէր բային ՓՐԿԵԱՑ, ՓՐԿԵԼՈՅՆ, իսկ ՄԵՐՈՅ, տէր ՏԵՍԵԱԼին :

Ասոնք ամէնը մէկանց կերեւնան աս խօսքիս վրայ. * Յս որդի Դաւթի՝ ողորմեա՛ց ինձ.∥ (Ղուկ. ժը. 38.) հոս Յս անունը է տէր ողորմեա՛ց հրամայական բային. որդի, բացայայտիչ է Յսին՝ ո՛ր Յս ըլլալը

կիմացընէ․ Դաւթի, յատկացուցիչ է որդւոյն, որուն որդի ըլլալը կըցուցանէ․ Ինձը, տրական խնդիր է ողորմեային։

Աս կարճ տեղեկութիւնն որ տըվինք հիմայ, մէկիկ մէկիկ բացատրենք կարգաւ իւրաքանչիւր մասանց բանի․ միայն թէ՝ աշակերտը խօլայ հասկընայ ու միտք պահէ անի՝ կըբաղձանք որ վերը դըրած խօսքը սրտով ու բերնով յիշէ, և Յսի փրկչին շնորքը օգնութիւնը միշտ խնդրէ․ որ ասով մտքի աչքը պայծառ յիստակ տեսանէ ամէն գիտնալու բաները։

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

## Անուան բաղդատութեան վրայ։

269. Անունը ուրիշ անուան հետ կամ քովը կըդըրուի, մէկմը իբրև բացայայտիչ․ երկրորդ՝ իբրև յատկացուցիչ․ երրորդ՝ իբրև խնդիր․ չորրորդ՝ իբրև ածական, ինչպէս վերը ըսինք․ (263)։

Ասոնց վրայ զատ զատ խօսինք․ և ինչ որ անուան վրայ կըսենք նէ, իմանալու է ածական անուան ալ, դերանուան ալ, նաև աներևոյթ բային ալ, և ինչ որ անունի պէս կըբանի խօսից մէջը։

# ՅՕԴՈՒԱԾ Ա.

## Անուն բացայայտիչ և բացայայտեալ։

270. Բացայայտիչ անունը սովորաբար բացայայտեալ անունէն ետև կըդըրուի, թէպէտ կըլլայ որ երկուքին մէջը ուրիշ բառ ալ մտնէ։ Իրենց տակը կիմացուի զօրութեամբ մեկնական բառ մը, այսինքն, այս է, որ է իմա․ զոր օրինակ երբ կըսենք՝ Երկինք աթոռ Այ, հոս աթոռը բացայայտիչ է երկինքին, տակը կիմացուի՝ երկինք որ է, կամ այսինքն աթոռ Այ։

Աս ալ գիտնալու է որ մէկ եզական անուն մը կըրնայ ըլլալ բացայայտիչ կամ բացայայտեալ յոգնական անունի, և այլ շատ անգամ, երբեմն ալ ամ-

բոլոր բանի մը ։ Հետեւեալ կանոններուն մէջ կիմացվին ասոնք, և բերած օրինակներովը կըբացատրենք ամէնը իր տեղովը ։

Կանոն ա.

271. Բացայայտիչը պիտի բացայայտեալին հետ համաձայնի հոլովով և թիւով. այսինքն, եթէ որ բացայայտեալը ուղղական է, կամ տրական կամ հայցական, բացայայտիչն ալ կըլլայ ուղղական կամ տրական ևն. Նմանապէս թէ որ եզական է բացայայտեալը, եզական կըլլայ բացայայտիչն ալ, յոգնականին ալ յոգնական ։ օր.

* Եւ էին երկոքեան մերկ՝ Ադամ և կին իւր. || (ծննդ. բ. 25.) Հոս երկու ուղղականը Ադամ և կին՝ բացայայտիչ են ուղղական յոգնականին երկոքեան ։

* Տեսանել զեղբարսն իւր զորդիսն Իսրայէլի. || (գործ. է. 23.) Հոս զորդիսն բացայայտիչ է զեղբարսն, երկուքն ալ պարառական հոլով յոգնակի ։

* Մինչև ամ բնակչացն Ասիացւոց լսել զբանն Տն՝ Հրէից և Հեթանոսաց ։ || (գործ. ժթ. 10.) Հոս ետքի երկու յոգնակի սեռականը բացայայտիչ է բնակչացն՝ նոյն հոլով և թիւ. ուր կը տեսնես որ երկուքին մէջը ընկած բառերը, լսել զբանն Տն ։

* Յս քս որ 'ի ձեզ մեօք քարոզեցաւ՝ ինեւ և Սիղուանոսիւ և Տիմոթէոսիւ ։ || (բ. կորն. ա. 19.) Հոս ետքի գործիականները իրեքն ալ բացայայտիչ են մեօք դերանվան՝ որ յոգնակի գործիական է ։

Կըպատահի որ մէկ անունը անեզական կամ հանրական կըլլայ, ու մէկալը եզական ըլլինէ, տակաւին համաձայն կըսեպվի թիւով. օր. * Թողեալ 'ի բաց զփառսն հայրենի՝ զքահանայութիւնն ։ || (բ. մակ. ժդ. 7.) ուր զքահանայութիւնը բացայայտիչ է անեզական հայցականին զփառսն ։

* Այս ամենայն ինչ խառնիխուռն, արիւն և սպանութիւն, գողութիւն և նենգութիւն ։ || (իմաստ. ժդ. 25.) Հոս չորս ուղղականը բացայայտիչ են հանրականին ամ ինչ ։

Թէ որ երկուքին մէկը ըլլայ վերջահոլով տրական, մէկալը նախդրիւ տրական, տակաւին հա-

մաձայն կըսեռովլին հոլովով. որովհետեւ երկու հո-
լովը մօտ են։ (117) Օր.

* Զոր ինչ արարէք ընդ երկուս թագաւորսն ամո-
վրհացւոց, ընդ Սեհոնի եւ ընդ Ովգայ։ ‖ (Յեսու. Բ. 10.) ուր երկու յատուկ անուանքը վերջահոլով տրական՝ բացայայտիչ եղեր են նախադրին տրականին թագաւորսն։

272. Խոտորումն Ա. Սովորական կանոնէս դուրս կելլեն յատուկ անուանք տեղւոյ; որ երբ առաջ դրուած են նէ, շատ անգամ անհամաձայն հոլով ունին. այսպէս կըսենք, յԱնտիոք քաղաքէ, առ ափն Քոբար գետոյ. ուր պիտի ըլլէր, յԱնտիոքայ քաղաքէ, Քոբարայ գետոյ. որ երբեմն ասանկ ալ կըսուի. Օր. 'ի Հերմոնէ 'ի լեռնէ փոքու։ Բայց երբոր տեղւոյ անունը եաքը դրվինէ, միշտ հոլովը համաձայն պահելու է։

Յատուկ անուն տեղւոյ ըսինք. վասն զի մարդու յատուկ անունը՝ առաջ կամ վերջը դրած ըլլայ, համաձայնելու է, քիչ կըլլայ անհամաձայն. այսպէս կըսենք, 'ի Դարեհէ արքայէ. յաւուրս Հերովդէ արքայի. առ Ս. Եպիփանու Կոստանդիացւոյ. յՕգոստոս կայսերէ։

273. Խոտորումն Բ. Կըլլայ որ երբեմն բացայայտիչը տարբեր հոլով կը դրուի, անոր համար որ հետի բային կը յարմարի երկու հոլովնալ՝ կամ թէրեւ խնդիր, կամ թէրեւ տէր բայի. Օր. * Նուէր մատուցեալ երկոտասանեկուրդ առաջի քո արդարադատ, ոմանք առ մեզ միաբանակարգոյնք, եւ ես առաքեմ։ ‖ (Նար. ձգ. 1.) հոս ուղղականքը ոմանք, ես, բացայայտիչ են սեռականին երկոտասանեկուրդ. զերբ երկու հոլովին ալ կրնայ տէր ըլլալ ընդունելութեան մատուցեալ։ Ասանկ է այն շարականին բանն ալ. * Այսօր ծաղկեցեալ որբոցն 'ի միասին՝ երանելի առաքելոցն եւ նոր կուսանաց. ‖ աս երկու ուղղականքը՝ բացայայտիչ են սեռականին որբոցն։ (տես 380. 424)

274. Խոտորումն Գ. Որովհետեւ բացայայտիչին մէջը եւ բացայայտեալին մէկնական բառ մը կիմացուի՝ ըսինք վերը, (270) ասոր համար երբեմն բացայայտիչը չի համաձայնիր հոլովով. այլ մէկնական

բառին կըհետեւի. օր. * Ընդ Բառնաբայ եւ ընդ Պօղոսի՝ արք որք մատնեցին զանձինս իւրեանց ։ ‖ (գործ. ԺԵ. 26.) Հոս ուղղականը արք՝ բացայայտիչ է երկու տրականին Բառնաբայ, Պօղոսի. եւ կիմացվի՝ որք են արք ։

## Կանոն Է.

275. Երբոր բացայայտեալը նախդրով հոլովուած է, կամ նախադրութիւն ունի նէ, նախդիրը կամ առջինին միայն կըդրվի, եւ կամ երկուքին ալ՝ երբ մօտ են իրարու ։ օր. * Եւ ընտրեցին զՍտեփանոս՝ այր լի հաւատովք ... եւ զՆիկողայոս զեկն անտիոքացի ։ ‖ (գործ. Զ. 5.) Հոս երկուքն ալ կերեւնայ, առջինին բացայայտեալը միայն ունի զ նախդիր, երկրորդին՝ բացայայտիչն ալ ունի ։

Բայց ուր տեղ բացայայտեալին եւ բացայայտիչին մէջը ուրիշ բառ գտնվի նէ, նախդիրը կամ նախադրութիւնը երկուքին ալ կըդրվի սովորաբար. ինչպէս. * Ամենայն օրէնք ՚ի մի բան կատարին՝ ՚ի սիրեսցեսն զընկեր քո իբրեւ զանձն քո ։ ‖ (գաղատ. Ե. 14.) Հոս ՚ի սիրեսցեսն բացայայտիչ է ՚ի մի բանին ։ Նմանապէս. * Ոչ եթէ ՚ի ձեռագործ սրբութիւնս եմուտ Քս յօրինակս ճշմարտութեան ։ ‖ (եբրայ. Թ. 24.) Հոս յօրինակս՝ բացայայտիչ է ՚ի սրբութիւնսն. իսկ ձեռագործը անոր ածականն է ։

## Կանոն Ը.

276. Մէկնական բառը որ բացայայտեալին եւ բացայայտիչին մէջը կիմացվի զօրութ., իբր տակաւ, ուժովը, երբեմն կըդրվի ներգործութ., իբր յայտնապէս, որ է, այսինքն, ասել, իմա. եւլն ։

Սովորական կանոնն աս է ։ Երբոր դրվի, որ է, բացայայտիչը պիտի ըլլայ ուղղական. օր. * Զաւակի քում, որ է Քս ։ ‖ (գաղատ. Գ. 16.)

Երբոր դրվի՝ այսինքն, կամ այսինքն է, բացայայտիչը կըհամաձայնի հոլովով բացայայտեալին հետ. օր. * ՚ի ձեռն ճարտարագործին, այսինքն է՝ Տէրունոյն իւրոյ. ‖ երկուքն ալ սեռական ։ Կամ. * մատուցցուք պատարագ օրհնութեան, այսինքն է՝ պտուղ շրթ-

թանց. « Երկուքն ալ հայցական։ (Եբրայ. Ճ. 20. ժԴ. 15.)

Ուր տեղը կայ առեն, խմա, բացայայտիչը կամ կըհամաձայնի բացայայտեալին հետ, կամ հայցական կըդրուի խնդիր բային. օր. * Ուսանել զզօրութիւն իմաստից 'ի նորին պղատոնէ, 'ի յիշեալ առեն հաւաքէ։ » (Խոր. պատմ. Գ. 62.) Դարձեալ. * Ամենայն տնօրէնութեանցն քոց, զհնարն առաւել և զնախատեսութիւն և զնախախնամութիւն։ » (Յովհան. իմաստ.) Դարձեալ. * Իբրև զքարինս էր առնել և արծաթ յերկրի մերում, զհարստութիւն իմն և զզօրութիւն։ » (Լամբ. Ատեն. 11.)

---

# ՅՕԴՈՒԱԾ Բ.

## Անուան յարակցուցիչ և յարակցեալ.

277. Անուն մը կամ դերանուն մը որ ուրիշին որուն ըլլալը կիմացընէ նէ, կըսուի անոր յարակցուցիչ. (266) Ասանկ կըլլան չէ թէ դոյական անուանքը միայն, հապա ածականքն ալ երբոր մինակ են. աներևոյթ բային ալ անունի պէս կըբանի նէ, կըլլայ յարակցեալ կամ յարակցուցիչ։

Ընական կարգը նայելով, պէտք էր որ յարակցուցիչը ետքը դրուէր յարակցեալէն. բայց շատ անգամ առաջն ալ կըդրուի. ու երկուքին մէջ տեղը ուրիշ բառեր ալ կըմտնեն։

Ասոնց մէջ կըլլայ որ մէկ յարակցեալ անունը կունենայ երկու իրեք յարակցուցիչ. և յարակցուցիչն ալ կունենայ իրեն այլ յարակցուցիչ։ Ասամենը կիմացուի ներքևի կանոնաց օրինակներովը։

### Կանոն Ա.

278. Յարակցուցիչը պիտի ըլլայ սեռական հոլով. ինչ չըլլայ թէ յարակցեալն ինչ հոլով է, անանկ որ թէ և այն ըլլայ ուղղական կամ տրական կամ հայցական, կամ բացառական, կամ գործիական, ինքն միշտ սեռական կըդրուի. օր.

* Յուցանէ նմա զամ թագաւորութիւնս աշխարհի և զփառս նոցա։ » (Մատթ. Դ. 8.) հոս երկու յար-

կացեալք հայցական են, ու իրենց յարակացուցիչ-քը՝ սեռական. զերբ Թագաւորութիւն կըլնայ իմացվիլ երկնից թագաւորութիւնն ալ, նաև աս ազգին կամ ան ազգին թագաւորութիւնը. բայց աշխարհի դնելով կըյատկացընէ թէ աս աշխարհքի ամէն թագաւո-րութիւնը ցցուց. նմանապէս փառաց անորոշ է՝ որուն փառքը իմանալու է. քովը ազգաց դնելով, կիմացը-նէ՝ անոնց ան թագաւորութեանց փառքը, սալթա-նաթը :

* Երանի՛ աղքատաց հոգւով, զի նոցա է արքայու-թիւն երկնից : ‖ (Մատթ. Ե. 3.) հոս յարակացեալը ուղ-ղական է՝ արքայութիւն. որուն արքայութիւն կամ թա-գաւորութիւն է, կըսէ սեռական՝ երկնից :

* Ձեռանց բարեգործից հրամանաց ակնարկու-թեամբ. ‖ (նար. ծը. 2:) հոս բնական շարքը պիտի ըլլայ, առանց ակնարկութեան հրամանաց բարե-գործից : ակնարկութեամբ սեռական խնդիր կըուզէ առանց նախադրութեան. (215) հրամանացը յարակա-ցուցիչ է ակնարկութեանն. բարեգործիցը յարակացուցիչ հրամանացին. իսկ բարեգործը ածական անուն ըլլա-լով՝ մինակ յարակացուցիչ եղերէ, իր գոյականը զօ-րութեամբ կիմացվի՝ բարեգործ ձեռանց :

279. Ծանօթութիւն ա. Յարակացուցիչը շատ անգամ սեռական ըլլալու տեղ՝ կըհամաձայնի յարակացեալին հետ բացառական կամ գործիական հոլով է. որ.

* Հաստատեա՛ զխիստ քո պատուիրանօք միով հոգւով : ‖ (սաղմ. ժԹ. 5.) որ հոգւոյ պիտի ըսեր. Նմանա-պէս. * Ոչ էր արբեալ նորա այնչափ յօրէ ծննդենէ իւրմէ : ‖ (յուդիթ. ժբ. 19.) որ պիտի ըսեր՝ յօրէ ծննդեան իւրոյ :

* Իսկ յամբոխէն բազմութենէ յառաջ կալան զա-ղեքսանդրոս : ‖ (գործ. ժԹ. 33.) որ պիտի ըլ-լայ՝ 'ի բազմութենէ ամբոխին : Նմանապէս. * Իւ-րովք մարգարէական ձայնիւք : ‖ (Ագաթան. 157.) որ ձայնիւք մարգարէից իւրոց :

Երեսաներս օրինակացըս մէջ որ չէ թէ մինակ յարակացուցիչը կըհետևի յարակացեալի հոլովին, հապա իր ածական դերանունն ալ, կամ ուրիշ ածական ալ. ինչպէս (Նարեկ. խԹ. 1.) * Յօրին-

մամբ պայտանեօք վճռէր. ‖ թէ այրքանեաց վեհից ։ Ըս պատճառով կըլլայ որ Թէ և յատկացուցիչը սեռական հոլով դրվի, իր ածական դերանունը երբեմն կըհամաձայնեն յատկացեալին ։ Ըսանկ (Նարեկ. Ժ. 2.) * Զնորայն՝ խորհըրդն տուժեաց երէց տաժանմամբ. ‖ որ պիտի ըսէր, տաժանմամբ կրից իւրոց ։

280. Խոտորումն Է. Ըսոնց հոլովքը երբեմն իրարու կըփոխեն հեղինակք. թէ յատկացեալին հոլովը կուտան յատկացուցչին, ու յատկացեալը կըդնեն սեռական հոլով. օր. * Յանդգնեցայ շըթամէջ խօսից 'ի բանս երկրաւորս ։ ‖ (Նար. Ի. 2.) որ պիտի ըսէր, խօսիլք շըթանց ։ Նմանապէս. * Ընդունօղք լուսոյն ոչ եմք նոյն՝ որք 'ի ճարճն տաւոյ զնոյն պարփակեմք ։ ‖ (Ճառ. Պատար.) որ պիտի ըսէր, յաչս մարմնոյ պարփակեմք զնոյն, թէ զլոյսն ։

### Կանոն Է.

281. Երբոր յատկացեալը նախդրիւ հոլով է, թէ տրական կիմ հայցական կամ բացառական, նախդիրը սովորաբար կըդրվի որն որ առաջ է՝ յատկացեալ ըլլայ, յատկացուցիչ ըլլայ, կամ անոնց մէկին վերաբերեալ բառ մը ըլլայ ։ օր.

* Ո՛չ լիցի մեզ թողուլ զօրէնս և զիրաւունս մեր, և 'ի հրամանս դառնալ թագաւորի ։ ‖ (Ա. Մակ. Բ. 21.) հոս յատկացեալքը առաջ են, ուստի զ, 'ի նախդիրքը անոնց վրայ դրած են. ու յատկացուցիչքը՝ մեր, թագաւորի, առանց նախդրի են ։

* Այլ զի վրիպեցան յԱյ գիտութենէն և 'ի նորին օրհնութենէն ։ ‖ (Իմաստ. ԺԲ. 19.) հոս յատկացուցիչքը առաջ են, և նախդիրքը իրենց վրայ դրած են, որ պիտի ըլլայ, վրիպեցան 'ի գիտութենէ Այ, և յօրհնութենէ նորին ։

* Ընդունիցիք զանթառամ փառացն պսակ ։ ‖ (Ա. Պետր. Ե. 4.) հոս զ նախդիրը դրած է անթառամին վրայ, որ ածական է պսակին՝ որ յատկացեալ է, իսկ փառացը՝ յատկացուցիչ. բուն շարքը կըլլայ, զանթառամ պսակ փառացն ։

Կըլլայ շատ տեղ հայցական հոլովին նախդիրը

կը դրուի միայն եզակի յատկացուցչին վրայ ։ օր. * Գնա-
ւառս քաղցումս հատէք չէմայ ճշմարտութիւն . ‖ (Ա. մակ. ԺԵ.
29.) որ կիմացուի , գաւառս տէրութեան իմոյ ։
Նոյպէս կը դրուի . * Ո՞րանի՞ սակաւ են քարձէք
չնորհոյն ։ ‖ (մարկ . Ը. 19.) որ ըսել ուզէ , զքա-
նի՞ սակաւ կտորոյն ։

Շատ անգամ ալ զարդի համար՝ նախդիրը կը-
դրուի՝ յատկացեալին ալ , յատկացուցչին ալ , կամ այլ
անոնց քովի անուանց ալ , մանաւանդ երբոր մէջ
տեղը ուրիշ բառ ալ կը մտնէ , կամ յատկացուցիչքը
երկու երեք են ։ օր. * Ի պղծութեան մարդոյ ,
կամ յանասնոց պղծոց . ‖ (Ղեւտաց. Է. 21.) հոս
յ նախդիրը կրկնած է՝ յանասնոց ։ Դարձեալ . (անդ.
23.) * Զամենայն ճարպ զարջառոյ և զոչխարի և
զայծեաց մի ուտիցէք ։ ‖ հոս զ նախդիրը կրկնած է
երեք յատկացուցչի վրայ ։

* Ետես զտառապանս Իսրայէլի յոյժ դառնու-
թեանց ։ ‖ (Դ. Թագաւ. ԺԴ. 26.) հոս դառնութեանց
յատկացուցիչ է հայցականին զտառապանս . յոյժը ածա-
կան դառնութեանցին . և զ նախդիրը վրան կրկնած է ։
* Խաղաղութիւն արասցուք ընդ սոսա ընդ ազգիդ-
այդորիկ ։ ‖ (Ա. մակ. Զ. 58.) հոս ընդ նախադրու-
թիւնը կրկնած է յատկացուցչին առջեւ ։

Կանոն Դ.

282. Շատ անգամ յատկացեալը յայտնի չի դրուիր ,
կամ վերը մէկ անգամ դրածը՝ վարինին զօրութեամբ
կիմացուի ։ Ասանկ տեղ նախդիրը միշտ դնելու է
յատկացուցչին վրայ , ուր ծայրը դիմորոշ յօդ ալ կայ
շատին ։ օր. * Յօդի վախճանելոյ մի մայէ ՚ի հօր
և ՚ի մօր , յեղբօր և ՚ի քեռ ։ ‖ (Թուոց Զ. 7.) հոս
յ, ՚ի նախդիրը կրկնած է եռեւ չորս յատկացուցչին
վրայ , և կիմացուի , յօդի հօր , յօդի մօր , յօդի եղբօր
յօդի քեռ ։
* Որդիքն եբրայեցւոց իբրև լուան զբռնաւորքն ։ ‖
(Գ. մակ. Ե. 20.) հոս յատկացեալը զօրութեամբ կայ ,
զի զհրաման թագաւորին ։
* Օտարութեան ՚ի բաց խափանեցի . ‖ զօրութեամբ
կիմացուի , զգործս տղայութեան ։ Նոյն * Նոքա զի

չերզծանելի պատկն առնուցուն , և մեք չունեցեալ զնէն ։ Հոս պատէր կընկնել կիմացվի , որ զուգակն անեղծութեն ։ (Ա. Կորն. ԺԵ. 11. Թ. 25 ։)

283. Գիտելիք. Նայելու է որ ամէն սեռական՝ յատկացուցիչ չըլլալի . շատ տեղ կայ որ բացայայտիչ է . և մէկ խօսքի մէջ երկուքն ալ կրնայ գտնըլ . որ . * Գիրք ծննդեան յիսի քրի՝ որդւոյ դաւթի՝ որդւոյ աբրահամու ։ Հոս ծննդեանը յատկացուցիչ է գիրքին . յիսի քրի՝ յատկացուցիչ ծննդեանին . իսկ որդւոյ՝ բացայայտիչ է յիսի քրի . դաւթի՝ յատկացուցիչ որդւոյին . երկրդ որդւոյն՝ բացայայտիչ է դաւթին . աբրահամու՝ յատկացուցիչ որդւոյին . Որոշելու կանոնն այս է , սեռականն որ քովի անունը ուրիշ ըլլալը կընշանակէ , յատկացուցիչ է . երբոր նոյն կամ ինչ ըլլալը կընշանակէ , բացայայտիչ է ։

---

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

### Անուան խնդիր և խնդրառութիւն ։

284. Անունը շատ անգամ կուզէնայ քովը ուրիշ անուն մը կամ դերանուն մը իրեն խնդիր (267) որ ոչ է բացայայտիչ կամ յատկացուցիչ , հապա անոր վրայով բան մը ունենալը կըցուցանէ ։ Որովհետև անունը շատ տեղ բայի նշանակութիւն մը կուտայ , ըլլալով բայի արմատ կամ ածանցեալ , ատոր համար ինչպէս բայը կուզէ իրեն խնդիր , անունն ալ նմանապէս խնդիր կուզէ իրեն . և ասանկ կըլլայ թէ գոյական անուան , և թէ ածականին . հոս առաջ գոյականին վրա կըխօսինք , ետքը ածականին վրա. յօդ . դ ։

Նախատիպ անվանք , մանաւանդ ածանցեալքը (102) որ կըվերջանան ութիւն , ումն , ունդ , ուած , շատ տեղ կընշանակեն աներևոյթ բայի պէս , կամ ընդունելութեան պէս ներգործական կամ կրաւորական մտքով . որ . ծնունդ կընշանակէ՝ ծնանիլն , ծնեալ . փրկութիւն , փրկելն , փրկող , փրկիլ կամ փրկըվիլը . ասանկ տարբեր նշանակութեան կէօրէ՝ զանազան հոլովով խնդիր կառնեն . և կանոնքն այս են ։

Կանոն Ը.

285. Գոյական անուանք որ ներգործական աներևութի նշանակութիւն ունին, հայցական հոլովին տեղը (299) սեռական կառնեն ստորաբար, և յատկացուցիչ կանոնով կըլլայ. զր.

Առումն, անարգումն, ճաշակումն, տառապանումն, կորուստ, ծնունդ եւն. ներգործականի պէս կընշանակեն՝ առնել, անարգել, ճաշակել, տառապել, կորուսանել, ծնանել. Ասոնց հասարակ խնդիրը որ պիտի ըլլար հայցական հոլով, զր առնել զթշնամիս, անարգել զմեղս, ճաշակել զպտուղ եւն, կըդրուի ստորաբար սեռական հոլով, այսպէս.

* Դարձո՛ զգիրտ նորա յառնելութե թշնամւոյն մերոյ.‖ (Եսթեր. ժզ. 13.)

* Յանարգութենէ մեղաց. (զր զմեղս.) Յետ ընդունելութե գիտութե ճշմարտութեն.‖ զր յետ ընդունելոյ զգիտութիւն. (Եբրայ. Թ. 26. Ժ. 26.)

* Ճաշակման պտղոյն Խաչակեցին զգաստութիւն մեղաց.‖ (Շարակն.) զր ճաշակելով զպտուղն.

Աս օրինակներով կըհասկցուին ասոնք ալ. * Առ դժոխոցն ժառանգութի.‖ զր առ 'ի ժառանգել զդժոխս. * Օրինացն անկշռութիւն (զր ոչ կշռելն զփրկութիւն.) ուխտիցն մոռացութիւն.‖ զր զմոռանալն զուխտս. (Նար. Ի. 2. Խն. 2.)

286. Սակայն սանկ անուանք շատ տեղ ալ հայցական հոլովը կըպահեն. զր. * 'Ի ձեռն ծննդեանն Եւայի զԿայէն.‖ զր ծնանելոյն զԿայէն. (Յաճախապատ. 28.)

* Առաւել քան զարարչագործութիւն յոչնչէ զաշխարհս.‖ զր քան զարարչագործելն զաշխարհս. (Եղիշ. պատմ. 30.)

* Ամպ կրկին տեղացման, մինն նետից, և միւսն՝ քարանց.‖ զր տեղալոյ զնետս, զքարինս. (Նար. Ը. 2.)

* Օրհնութեանցն Իսահակայ Յակոբայ, և Յուդայի ըստ կատարածին, ոչ 'ի նոսա՝ այլ 'ի Թոռունս նոցա կատարեցան.‖ զր օրհնելն զՅակոբ, զՅուդա. (Սարգ. մեկն. 316.)

Ասանկ կիմացուի (Գործոց. Ը. 11.) * Լսեմք

խօսից նոցա 'ի մեր լեզուս զմեծամեծս ա̃յ. Մ̃ք լսեմք խօսելոյ նոցա զմեծամեծսն ա̃յ.

### ԿԱՆՈՆ Է.

287. Գոյական անուանք որ ներգործական ընդունելութեան պէս կընշանակեն, հայցական խնդիրը սովորաբար սեռական հոլով կառնեն, վերի կանոնին պէս. Օրինակ՝ նշանակ, փրկութիւն, հնարք, ընդունելութիւն, առիթ եւն, երբոր կիմացուի՝ նշանակող, փրկող, հնարող, ընդունող, առթող կամ ներգործող, խնդիրը սեռական կըլլայ. Օր. *Տկարաց եւ ընդունելութիւն. Մ̃ք ընդունող զտկարս. (Յուդիթ. Թ. 16.) *Ապստամբութեան նշանակ... Որ փրկութիւնդ ես անձանց... Հնարք նիրհման... Առիթ ստեղծուածոց. Մ̃ք նշանակող զապստամբութեան, փրկող զհոգիս, հնարող զնիրհումն, ներգործող զստեղծեալս. (Նար. Ի. 1. 3. ԾԴ. 1. ՂԴ. 1.)

288. Դիտողութիւն. Սեռական հոլովն որ ասանկ գոյական անուան քով կըգտուի, միշտ անոր խնդիրը չէ, այլ կրնայ ըլլալ յատկացուցիչ, կամ տէր բայի. Թէ որ նորասկսողը չիկրնայ զատել զնէ, յատկացուցիչ թող ըսէ, փոյթ չունի. Բայց զարգացողը կրնայ ասանկ որոշել. երբոր սեռական անունը կընշանակէ՝ ընողը, հոն տէր բայի է. երբոր կընշանակէ ընողէն բան մը առնող, հոն խնդիր է. իսկ առանց ասոր՝ յատկացուցիչ կըլլայ. Տես զայս վկայութիւնը. *Ըստ յառաջագոյն քարոզութեանն Յովհաննու մկրտութիւն ապաշխարութեան. (Գործ. ԺԳ. 24.) հոս քարոզութեան՝ անուն ըլլալով ներգործական պէս կընշանակէ, և կիմացուի՝ ըստ յառաջագոյն քարոզելոյն. ո՞վ է քարոզողը. Յովհաննէս մկրտիչ. ուստի սեռականը Յովհաննու՝ կըլլայ տէր բային. Ի՞նչ քարոզեց. Մկրտութիւն, եղաւ խնդիր՝ որ կրնար սեռական ալ դրուիլ՝ քարոզութիւն մկրտութեան. Ո՞ր բանին մկրտութիւնը քարոզեց, ապաշխարութեան. եղաւ յատկացուցիչ. Ասանկ քննելու է ուրիշ անուանց վրայ ալ.

Կանոն Է.

289. Գոյական անուանք որ կրաւորական բայի նշանակութիւն ունին, բացառական հոլով կուզեն իրենց հասարակ խնդիրը ։ (տես 399.) Այսպէս առաքումն, ծնունդ, կրաւորաբար կնշանակեն՝ առաքուիլ, կամ խրկուիլը, ծնանիլն ։ Ուստի երբ կըսուի * Որ զառաքումն առ 'ի հօրէ եւ 'ի հոգւոյդ բանին յաշխարհ մարգարէիւն ծանուցեր . || (Շարական.) երկու բացառականը՝ առ 'ի հօրէ, 'ի հոգւոյդ, հասարակ խնդիր են առաքումն անուան . սեռականը բանին, որ բայի է, այսինքն խրկուողը ։

Այսպէս . * Հրաշափառ ծնունդ քո 'ի մէջ կուսէն . || (շարական.) 'ի կուսէնը հասարակ խնդիր է ծնունդ անուան . քո, սեռական տէր բայի, այսինքն քու ծնանիլը սուրբ կոյս Աստուածածնէն ։

Կանոն Ը.

290. Գոյական անուանք որ չէզոք բայի արմատ են, կամ չէզոքի նշանակութիւն ունին, իւրաքանչիւրը զանազան հոլովով խնդիր կառնեն ։ Օր.

Մուտ յաշխարհ ։ Ապստամբութիւն յօրինաց ։ Համբերութիւն տանջանաց ։ Գալուստ յԵրուսաղէմ ։ Ելք յերկնից . եւն ։

Բայց կըլլայ որ ասանկ խնդիրը սեռական կդրուի՝ իբրեւ յատկացուցիչ . Օր. կըսուի, յանցանք օրինաց, փոխանակ ըսելու՝ զօրէնքը կամ ընդ օրէնս ։ Ելք ծառայի, կամ եգիպտոսի, փոխանակ, 'ի ծառայէ, յեգիպտոսէ ։ Ազատութիւն դիւաց . այսինքն 'ի դիւաց կամ 'ի կռոց ։ (Նար. ԺԸ. 2. ՀԵ. 8. 12.)

291. Դիտել . Շատ տեղ կայ որ գոյական անունը խնդիր ունի քովը, որ յատկապէս իրենը չէ, այլ զօրութեամբ էական բայ մը ունի, անորն է ։ Օր. երբոր կըսուի * Ազդ տեսակաւ, այլ ոչ համեղութեամբ . || (Նար. ԼԳ. 4.) երկու գործիականը տալին խնդիր չեն, այլ էական բայ կիմացուի . այսինքն ազդ եմ տեսակաւ կամ կերպարանաւ, ոչ թէ համ տալով ։

Ասանկ կիմացուի, ծնունդ 'ի ծննդոց . լոյս 'ի լուսոյ . Աստուածութիւն առ 'ի Բնէ . Էակայր առ 'ի հօրէ ծնեալ առ 'ի հօրէ . այսինքն

կեանք որ է 'ի կենաց. լոյս որ է 'ի լուսոյ. խաղաղութիւն որ է առ ա̃ծ. եղբայր որ է 'ի հօրէ, որ է 'ի մօրէ :

# ՅՕԴՈՒԱԾ Դ.

## Գոյական անուան խնդիր ածականի :

292. Ածական անուանքը թէ պարզ ըլլան, և թէ բաղադրեալ՝ բայի պէս նշանակելով, կամ թէ ուրիշ բաներու վերաբերութիւն մը, իլիշիկ մը ունենալով, խնդիր կուզեն զանոնք՝ որ շատը գոյական անուն են, երբեմն ալ ածական, կամ դերանուն : Ասով գոյական անունը, կամ ածականը, կամ դերանունը կըլլայ խնդիր ածականին. Ինչ հոլով պիտի ըլլայնէ, մէկ քանի կանոնով իմացընենք :

### Կանոն Ա.

293. Ածականք որ ներգործական նշանակութիւն ունին, հայցական հոլովի տեղը՝ սեռական խնդիր կուզեն սովորաբար, ինչպէս վերը : (287)

Այն ածականք որ ածանցեալ կամ բարդ են, շատը ընողի նշանակութիւն ունին, ինչպէս ող, իչ, ակ, որ վերջացածները. օ̃ր խնդրակ, խնդրող ըսել է. Ծառայիչ, մատնող. գործօն կամ գործուն, գործող. գործաւոր, բանող. Թախծողական, տրտմեցընող. ևն : Ասանկներուն սեռական կըդրուի. օ̃ր

* Տառապելոց ես խնդրակ. անյուսից ես փրկիչ : (Յուդիթ. Թ. 16 :)

* Գործօնացն գործոյն. (Գ. Թագաւ. ԺԸ. 14.) օ̃ր գործողաց զգործն :

* Անապատական աշխատութեանցն գործաւոր : (Իմաստ. ԺԷ. 16 :)

* Հոգւոյս ես թախծողական. (տրտմեցընող). Խորհրդութեան հաշտարարք. (հաշտեցընողք.) Սկզբնաձիր ողորմածութեան : օ̃ր առաջին շնորհող : (Նար. ԻԲ. 2. ԼԱ. 2. ՀԸ. 2 :)

Սակայն ասանկներուն շատ անգամ հայցական

ալ կուտան հեղինակք. որ. Օգնօղս անարգուք. (անարգօղ.) Արարիչ շինուած: Հաստողին պէս: Տածօղական շնորհաւ. (տածօղ, հոգացօղ:) Անգիտակ շնորհաբանութե. ‖ որ չգիտցօղ: Ասանկ կըսվի շարականին մէջը. Ընդունիչ շօղոյ. լցուցիչ շնոր: Երկու հոլովն ալ մէկ խօսքի մէջ կերևնայ. * Դատապարտօղք որս ոչ խոստովանողաց. ‖ սեռականը ոչ խոստովանողաց, խնդիր է դատապարտօղներին. հայցականը որս, խնդիր խոստովանողացին:

## Կանոն Է.

294. Ածականք որ կրաւորական ընդունելութե պէս կընշանակեն, բացառական հոլով կուզեն սովորաբար. ինչպէս վերը: (289)

Այսպէս կըսվի, շարժուն 'ի հողմոյ. որ շարժեալ կամ շարժելի: Ընտանեալ 'ի խղճէ, որ իմքնին զատեր: անխաբ 'ի դիւաց, որ ոչ խաբելի:

Բայց կըլլայ որ ասանկներուն, ինչպէս ընդունելութեց ալ, բացառականի տեղ սեռական կըդըրվի. որ Վիրաւորք սրոյ, ըսել է՝ վիրաւորեալք 'ի սրոյ: Կոխան ոտից, կոխեալ յոտից: Այսպէս * Կապեալք խաւարի, կաշկանդեալք գիշերոյ, (իմաստ. ժէ. 2.) որ 'ի խաւարէ, 'ի գիշերոյ:

## Կանոն Զ.

295. Ածականք որ կընշանակեն մօտ կամ նման ըլլալ, կամ յարմարութի մը, հակառակ մը ունին ուրիշի, կառնեն տրական վերջահոլով կամ նախդրիւ:

Ասանկ են Բաւական, Իշխան, Ծանօթ, Կարօտ, Արժանի, եւն: Ուստի կըսվի, բաւական արդարութե, կամ առ ամ ցանկութե: Իշխան մահու և կենաց: Աստղը դժնէից: Կարօտ հացի կամ առ հաց: Արժանի վարձուց:

Սակայն ասանկներուն ոմանք բացառական ալ կառնեն, և ընդհանրապէս ածանցեալքը ան և տ մասնիկով (76) տրական ալ կառնեն, բացառական ալ. ուստի կըսվի՝ կարօտ 'ի կերակրոյ: Ցգեստ հրոյ կամ 'ի հրոյ: Անման կամ անհաղորդ շնորհաց և 'ի շնորհաց, եւն:

Կանոն Զ.

296. Ածականք որ հեռու կամ պակաս ըլլալ կը-նշանակեն, սովորաբար բացառական կուզեն, բայց տրական ալ կըլլայ: Այսպէս են հեռաւորեալ, հեռի, արձակ, աղքատ, դատարկ, թերի, օտար, ազատամ եւն:
Ազատ կրակի, փախստեայ ՚ի չարեաց: Արձակ ՚ի կապոյ: Աղքատ ՚ի մեղաց: Թերի ՚ի շնորհաց: Անպարտ ՚ի յանցանաց: Դատարկ յօրինաց: Հեռի ՚ի տանէ, կամ արդարութենէ: Օտար ՚ի հօրէ, կամ աշխարհէ. եւն:

297. Դիտողութիւն. Դրած օրինակներով կիմացուի որ ածական անունք իրենց նշանակութեան կ՚օր՚ զանազան հոլով կընդունին: Գործիական հոլովը գրեթէ հասարակ է ամենուն. նմանապէս ներգոյական ըսած հոլովը. ուստի կրնայ ըսուիլ, Ազատ ընչից, կամ ընչիւք, կամ յընչս: Անպարտ ՚ի չարեաց կամ ՚ի չարիս: Անփոյթ գիտութե, զգիտութենէ, զգիտութեամբ:

Կանոն Է.

298. Ածականք գրական և բաղդատական, (66) երբոր աւելի կամ պակաս քան զուրիշը կըցուցանեն, խնդիր կառնեն սեռական հոլով, կամ բացառական, կամ ներգոյական, կամ նախադրութեան քան, առ, ՚ի վեր: զորօրինակ.

* Ամենեցունց բարձրագոյն մերոց հարազատագոյն և խոնարհագոյն: (Խոր. ա. 23.)

* Ոչինչ նուազ էր կոյսն արքային հաւանէ. || (Խոր. բ. 80.) թր ոչ պակաս էր քան զհաւան արքային:

* Մեծն տեառնողաց: Մեծն ՚ի չէնջ: Մեծն ՚ի մարգարէս: Մեծ քան զյաւիտեանս: ՚Ի վէջ իմաստնոց իմաստնագունին: || թր իմաստնագունին ՚ի մէջ իմաստնոց:

* Ներագոյնքն ՚ի նոցանէ: Յայլոցն վերագոյն: Կրտսերագոյն յորդւոց նորա:

299. Դիտողութիւն: Միջական անունք մեծ մասը ածական ըլլալով, (38) ածականաց կանոնին կ՚օրէ խնդիր կառնեն, աւելի բացառական հոլով, բայց սեռական ալ: զր.

Բացատրական. * Նշխ իբրև չէ ՚ի մէնջ. Դուստր

գոյ ուրուք 'ի ձեռանց ։ Ոչ ոք յամ ատատանաց ։ Ոչինչ յայտնեալ ։ Ո՞ ոք 'ի չէնջ ։ Խորտակեալ 'ի չէնջ ։ Ամնային 'ի ժամանակագրաց ։ Այսպէս թուական անուանքը, երկու 'ի նոցանէ, հինգն 'ի նոցանէ ։

Սեռական. * 'Ի վերայ դոյ լերանց ։ Երկուս հազարս երիվարաց ։ Անձնային ինչ շինուածոց սրբոցդ ։ Ձինչ և ձեռնարկեցէ ոչ վարժելոցն. թ 'ի վարժելոցն ։ Զ բնաւն ծայրագունին բարութեն. (թ զբոլորն 'ի ծայրագոյն բարութեն ։) Ոչ ոք ծերոց և տղայոց, և եթէ յաշակերտաց ոք ։ հոս երկու հոլովն ալ կայ ։

---

# ՅՕԴՈՒԱԾ Ն.

## Ածական անուան համաձայն գոյականին ։

Ածական անունը երբոր ներգործութ[իւն], յայտնապէս ունի իրեն գոյականը, կրնայ անկէց առաջ ալ դրուիլ, ետք ալ. որ կըսուի նախադաս, և յետադաս ։ Իսկ թէ ինչպէս պիտի համաձայնի գոյականին, հետևեալ կանոններով կըհասկըցուի ։

### Կանոն ա.

300. Ածականը մէկ կամ երկու իրեք՝ երբոր նախադաս է գոյականին, պարտական չէ համաձայնիլ անոր հոլովով և թւով. անանկ որ՝ եթէ գոյականը ըլլայ յոգնակի սեռական կամ տրական, իր ածականը կրնայ դրուիլ եզակի ուղղական ։ օր.

* Ազգին Հրէից՝ օգնական նեղելոց ուխտակցաց բարեկամաց մերոց ։ (ա. մակ. ժա. 33.) հոս իրեք ածականքը՝ եզակի ուղղական են, և գոյականը բարեկամաց՝ յոգնակի տրական ։

* Յաղթանակէր յաղթանակաւ զաստատանացն այ ։ (բ. մակ. է. 35.) հոս երկու ածականը նախըդիր միայն ունի եզական, և գոյականը՝ 'ի դատաստանացն՝ յոգնակի բացառական ։

* Կենդանի և մշտնջենաւոր բանիւն այ ։ (ա. պետր. ա. 23.) հոս գոյականը՝ բանիւն եզակի գործիական, և ածականքը ուղղական ։ Ասանկ վարի օրինակներուն մէջ ալ կերևայ ։

301. Ասացինք թէ նախադաս ածականը պարտական չէ համաձայնիլ. որով կիմացընենք ալ թէ համաձայնիլը արգիլուած չէ. կրնայ համաձայնիլ հոլովով ալ, թիւով ալ. անանկ որ շատ ածական եղած ատենը՝ հեռուինը կը համաձայնի, մօտինը անհամաձայն կը դրուի. զորօրինակ.

* Ի պղծոց և ՚ի նորաձայն բանից.‖ (Ա. Տիմ. Զ. 2.) հոն առաջինը համաձայն, երկրորդը անհամաձայն:

* Մեծաւն և կատարելովն և անձեռագործ խորանաւն:‖ (Եբր. Թ. 11.) առջի երկուքը համաձայն հոլովով, երրորդը՝ անհամաձայն:

Այսպէս կըսուի. * Հաստատուն և լուսաւորեալ վըկայիւք: Հանդերձելոյ և յաւիտենից բարութեանց:‖ (Պլտոյ. 342. 345.)

302. Դիտողութիւն. Նախադաս ածականին համաձայնութիւնը կըլլայ աւելի միավանկ կամ երկավանկ բառերուն. որպէս մեծ, նոր, աջ, դ, այլ, ամէ ևն: կամ բարի, բոլոր: Զր. ՚ի մեծի պահէն. նորոյ ուխտին. յաջում ձեռին. բարեաց առնելոյ. բոլորից արարածոց, ևն:

Նմանապէս ածանցեալ անունք որ կըվերջանան կան, ին, որ, գոյն, ելի, եղէն ևն, աղւոր կը համաձայնին. Զր. ՚ի բնաւորականաց են յանբնականացն ախտից. ածականացն բանից. ևն:

Բայց աս համաձայնութիւնը պիտի չիմացուի յոգնակի նախդիրիւ տրականին և հայցականին, երբ որ գոյականին անմիջապէս քովն է. վասն զի անշնորհք է դնել, յածայնս կամ զածայնս բանս. ՚ի բնաւս գործս. զբոլորս բարիս. զբազումս վկայս. ՚ի սակաւս աւուրս: Կրնայ ըլլալ միայն երբոր երկուքին մէջ տեղը ուրիշ բառ մտնէ. ինչպէս. * Յիշելով զմեծամեծս նորա զանչափ շնորհս.‖ (Ժամագիրք.) տես հեռուինը համաձայնեց, բայց մօտինը դրաւ՝ զանչափ:

## Կանոն Է.

303. Յետադաս ածականը՝ մէկ ըլլայ, շատ ըլլայ, գոյականին կը համաձայնի սովորաբար հոլովով և թիւով. զորօրինակ.

* Փեղկիւն աւելորդաւ յաւելլով ծածկեսցես:‖ (Ելք. ԻԶ. 12.) հոն երկու ածականը կը հա-

մաձայնի առաջ դրած գոյականին՝ ճեղքեան ։

* Աւելն ջրոց դաւաղուոյն ընդունելոյն . Աւելն ջերմ դաւաղո, անձկութեան ։ (Դատաւ. ժԸ. 7. 8.)

* Որ և լուիցէ զանուանէ քումմէ մեծէ, և զձեռանէ քումմէ հզօրէ, և զբազկէ քումմէ բարձրէ ։ (Գ. Թագաւ. Ը. 42.) հոս երեքն ալ պատմական հոլովով համաձայներ են ։

Նմանն կայ այլ անբաւ տեղ, որ վարի օրինակներով ալ կերևնայ, և կիմացուի սովորական համաձայնութիւնը ։ Տեսնենք անսովորը որ կերպ կերպ կըլլայ ։

304. Խոտորումն ա. Երբոր գոյականը դրուի երկու ածականի մէջ տեղը, շատ անգամ յետադաս ածականն ալ նախադասին պէս չի համաձայնիր, այլ նախդիր կամ նախադրութիւն մը կայ նէ՝ երկուքին ալ կըդրուի ։ զորօրինակ .

* Գեղեցիկ վարուց և առաքինի . որ սովորականին կըսէր պիտի ըլլար՝ առաքինեաց . բայց առաքինի դրուածքին պէս՝ գեղեցիկ ։ Նմանն կըսուի . * Ընդ անբաւ մնացեալ 'ի վերջին իմաստութեան՝ 'ի սուրբ և 'ի խաղաղարար . հոս նախդիրը միայն կրկնած է ։ Կար-ձեալ . * Ըստ հոգևոր մասին և ըստ մարմնաւոր . հոս նախադրութիւնը միայն կրկնած է, փոխանակ ըսելու, ըստ մարմնաւորին ։ (Յաճախապատ. 51. 238. և 236.)

* Հանդերձ անձնաւոր անուամբ և հաւասարելի . (փոխանակ՝ հաւասարելեաւ.) Ընտրագունի մարդկան և զօրաւոր . փոխանակ՝ զօրաւորաց ։ (Պիտոյ. 25. 131.)

* Պատուիրէ 'ի կրօնաւորական կարգէ, և սարգիս՝ յաշխարհական . փոխանակ՝ յաշխարհականէն ։ (Յովհ. կաթող.)

* Ես անտի տասն բանի տեղեկացեալ, կամ ևս աւելի՝ տասն . փոխանակ քսանի ։ (Մարգ. 150.)

305. Այս կերպ անհամաձայնութիւնը կըլլայ երբեմն ալ՝ երբոր գոյականը երկուքին մէջ տեղը չէ, մանաւանդ անցեալ ընդունելութիւն որ ըլլայ ածականը ։ զք. * Մխիթարեցան 'ի բանից անտի յուդայ՝ 'ի զօրէն և 'ի կենդանի . ուր գոյականը 'ի բանից, յոգնակի բացառական է . երկու ետևի ածականը ու-

նին միայն նախդիրը, որ սովորականը պիտի ըսէր, 'ի զօրեղաց և 'ի գեղեցկաց ։

Ասանկ են. * Քաղաքաց՝ և ընտանեայն և դաշտայինն. (Պլատ. 424.) Շնորհեա պահպանութիւն 'ի դիմամարտից՝ յաներևոյթն և յերևելէն ։ ‖ (Նար. ղը. 9.) որ պիտի ըսէր, ընտանայնոց և դաշտայնոց, յաներևութից և յերևելեաց ։

* Ծառոյ վարսաւորաց զանազանելոյ 'ի պտուղս. ‖ փոխանակ, զանազանելոց ։ (Խոր. ա. 15.)

* Աւանդակորոյս յեռայս աղտեղեալ մեզք. ‖ փոխանակ, աղտեղելոց ։ Աղփուսն կլեայն ձորձով պատեցեալ. ‖ փոխանակ, պատեցելոյ ։ (Նար. խէ. 3. կդ. 4.)

Ածականք որ եան կը վերջանան, նմանապէս եայ վերջացածը երբոր կարճ կամ երկավանկ է, շնորքով չեն հոլովիր. ասոր համար երբ յետադաս են գոյականին՝ սովորաբար անհամաձայն կդրուին ։ Օր. Խուղս նարդեան ։ 'Ի ցեղէն ճարճնեան ։ Պարսիկ ծայրեայ ։ Պսակաւ ճղեայ. եւն ։

306. Խորհրդոյ Է. Գոյականը և ածականը՝ վարպետ շարադրութեան մէջ կփոխեն իրենց հոլովքը ։ Մէկմը կըլլայ որ ածականը առանց նայելու գոյականին հոլովը՝ ինքը սեռական կդրուի յատկացուցչի պէս. Օր. * Նա շինեցին զամրակողմն զգլուխ քաղաքին 'ի պարիսպս ամուր, յաշտարակս հզօրաց. ‖ որ պիտի ըսէր՝ յաշտարակս հզօրս ։ (ա. մակ. ա. 35.) Ասանկ է (Յակոբ. գ. 8.) * Լի թունոյ մահաբերէն. ‖ յ̃ մահաբեր թունովք ։ Սորին հեղինակաց մէջ ալ շատ կայ այսպէս, մանաւանդ Նարեկին. Օր. Փառաբանչօքն անմահից. յ̃ անմահ փառաբանչօք ։ Ընդ արդարս երջանկաց. յ̃ ընդ երջանիկ արդարս ։ Ձեռամբդ նորոգողի, մատամբդ կենսաբաշխի. յ̃ նորոգող ձեռամբդ, կենսաբաշխ մատամբդ. եւն ։ (լդ. 8. ծր. 7. ղա. 3.)

Այս կերպ խոտորումն շատ կընեն անցեալ ընդունելութեան, ինչպէս. * Խմել արբեալ վասն ձեր հեղլոյ. ‖ որ դնելու էր՝ հեղլով. (Ղուկ. իբ. 20.) Դարձեալ. * Պատուհասիքն 'ի վերայ եկելոյն. ‖ յ̃ եկելովք ։ (Յաճախ. 231.) Նմանապէս նա-

րէկ. (Բ. 2. ԺԶ. 2.) Պատգամօքս 'ի սմա էջէ-լոց ։ Աջ մատամբքն տապանելոց, փոխանակ, եղե-լովք, տատանելովք ։

307. Երբեմն ալ ատոր ներհակ՝ գոյականը կըլլայ սեռական յատկացուցչի պէս, ու ածականը կանցնի գոյականին հոլովը. ատոր նման կըլլայ յատկացու-ցիչն ալ վերը ըսինք ։ (280)

Այսպէս կըսուի. * Աջակողմն թեւէն բեկանէր. ‖ ուր թեւը գոյականն է, իր ածականը աջակողմն, ու պէտք ըսէր՝ զաջակողմն թեւն ։ Նոյնպէս. * Ար-գելականք կուսանացն 'ի պարիսպս ընթանային, ‖ փխ. արգելական կուսանքն ։ (Բ. Մակ. Թ. 15. Բ. Մակ. Գ. 19.)

* Հակառակորդք բաղում են գործակցաց բանսար-կուաց. ‖ (Յաճախ. 239.) փոխանակ, գործակից բանսարկուին ։

* Եւ սաստէն պհանգիստ . . . յազգի ազգի տրտմութեց գեղեցկայնով քնոյ ։ ‖ (Խոստ. ժամ. 19. ձեռ.) փոխանակ, գեղեցկային քնով ։

* Պահպանաւ հոգւոյս ։ Ազգակցաւ պտղոյն. Ազգակցաւ մարմնոյդ. ‖ (Նար. ԺԹ. 1. ՂԶ. 2. ՂԷ. 1.) փոխանակ, պահապան հոգւոյս, ազգա-կից պտղոյն կմ մարմնոյդ ։

Այսքան տեղեկութի տըլլինք երկու խոտոր-մունքին վրայ՝ հեղինակները շիտակ հասկընալու համար. թէ չէ, շարադրութեն մէջ զգուշանալու է երկրորդ խոտորումը բանեցընել. վասն զի մութ կընծէ բանին միտքը ։

Կանոն Է.

308. Նախդիր, կամ նախադրութի՛ր՝ առջինին վրայ մինակ դնել բաւական է, գոյականը ըլլայ, ածականը ըլլայ ։ Աս է հասարակ կանոնը, ինչպէս վերը ըսինք. (281) և դրած օրինակներէն կի-մացուի ։

Բայց շատ տեղ նախդիր կըկնելը մէկ շնորք մը կուտայ, մանաւանդ երկուքին մէջ ուրիշ բառ ալ որ մտնայ. Օր. * Տէր, զազգ մի անգէտ և զարդար կորուսանիցես ։ ‖ (Ծննդ. Ի. 4.) ուր զ նախդիրը

գոյականին ալ դրած է, երկու ետքի ածականին ալ, որ կրնար ըլլալ, զոյգ մի անգէտ և արդար։

* Շրջեցաք ընդ ամենայն անապատն ընդ մեծ և ընդ ահագին. (Բ. օրէնք. Ա. 19.) հոս ընդ նախադրութիւնը կրկնած է իրեք ածականին ալ։ * Սաւ ցորեն ցարդացեալ 'ի վերայ նորա. (Դատաւ. Է. 31.) հոս ց նախդիրը դրած է գոյականին և ածականին։

* Յանապատէ եկեալ յերկիր. (Եսայ. ԻԱ. 1.) հոս ածական է յանապատէ, և յ նախդիրը կրկնած է ետեւի գոյականին ալ՝ յերկրէ։

Կըլլայ երբեմն որ նախդիրը չեն դներ առջինին, այլ ետքինին միայն, աւելի հայցական հոլովին. օր. * Ճանապարհ արքունեաւ գնասցուք. (Թուոց. Ի. 17.) որ պիտի ըլլար, զճանապարհ արքունի։ Նոյնպէս. (Ա. Մակ. Ա. 50.) * Զենուլ զխոզս և խառնուած պղծութեան. փոխանակ՝ զխառնուակ անասուն։

Կանոն Դ.

309. Երբ որ մէկ գոյական մը ունի մէկ քանի ածական՝ նախադաս կամ յետադաս, որ կամ և շաղկապով կապուած են, կամ առանց անոր, նախդիրը կրկնելուն կանոնը այս է։ Երբ որ դիմորոշ յօդ ունի՝ ն, դ, սովորաբար կրկնելու է նախդիրը։ Առանց դիմորոշի եղածին՝ ազատ է կրկնել, կամ չկրկնել։ օր.

* Առ հասարակ 'ի ձեռնհասուր պատերազմողացն պղնձապատ վահանացն նշոյլքն զլերամբքն փայլատակէին։ (Ա. Մակ. Զ. 39.) հոս իրեք նախադաս ածականներուն առջինին միայն դրած է 'ի նախդիրը։

* Ոչ հալէին զսառնանման զդիւրահալ զազգ անուշակ կերակրոյն։ (Իմաստ. ԺԹ. 20.) հոս երկու նախադաս ածականին կրկնած է զ նախդիրը։

* Յանբեր և յանկոխ և յանջուր և յանպտուղ երկրին։ (Երեմ. Բ. 6.) հոս չորս նախադաս ածականները և ով կապուած են, ու նախդիրը ամենուն կրկնած է, և ասանկ ընելու է սովորաբար։

* Զմեծն և հռչակաւոր Հոմերոս։ (Պղատոն. 56.)

հոս առջինին միայն դրած է շ նախդիրը ։ Նմանք․ * Յառաջին ընթանի և խաղաղ բնութէն ։ (Մարգ․ 28․) հոս ետքի երկուքը առանց նախդրի է ։

Յետադաս ածականներուն ալ նախդիրը կրկնելու օրինակ, * Ջուր դետոյն շնչօրն և շարժ․ (Եսայ․ Ը․ 7։) Իսկ ոչ կրկնելու․ * ընդ անապատն մեծ և ահագին ։ (Բ․ օրէնք․ Ը․ 7։)

Նմանք յետադաս ածականներուն՝ սովորաբար գոյականին քովը եղածը առանց նախդրի կըդրուի, հեռու եղածին վրա կըկրկնուի․ որ․ * Յազգ օտար և ՚ի չար․ յազգ անօրէն և ՚ի կոխեալ ։ (Եսայ․ ԺԸ․ 2։)

Կանոն Է․

310․ Ածական անունը երբոր հոլովով համաձայն է գոյականին, թիւով ալ համաձայն կըլլայ սովորաբար․ ինչպէս վերի օրինակներով կերեւնայ․ Եւ ուր որ վերջահոլով տրական, կամ բացառական, կամ գործիական հոլոված է ածականը, եզական կամ յոգնական կըդրուի՝ երբ գոյականն ալ եզական է, կամ յոգնական։ Բայց ուր որ ուղղական է, կամ նախդրիւ միայն հոլոված, պարտական չէ թիւով համաձայնիլ․ որ․ * Որով մեծամեծքն և պատուական աւետիք պարգեւեալ են մեզ ։ (Բ․ Պետր․ Ա․ 4․) հոս առջի ածականը համաձայն է թիւով, երկրորդը անհամաձայն ։

311․ Դիտողութիւն Ա․ Անեզական գոյականին (212) շատ անգամ ածականը եզական կըդրուի, թէև հոլովը համաձայն ըլլայ․ որ․ Մեծաց տանջանօք ։ Ամենայնի տեղւոյ ։ Փառաւոր աշխարհի ։ Նշանս գանձարանի ։ Մեծագոյն երախտեաց ։

312․ Դիտողութիւն Բ․ Համրական անունը, հաւաքականը, թուականը, և այլ բառեր որ նշանակութիւն կըշատցընեն, շատ անգամ եզական ձայնով յոգնակի ածական կուզենան, կամ սոր ներհակ՝ յոգնակի գոյականին եզակի ածական կըդրուի ։ որ․ * Նմանայն ծաղկերգութեանն էլէլոց յեղխայտանէ ։ (Յեսու․ Ե․ 4։) ուր ածականը էլէլոց յոգնական դրած է՝ համրական և հաւաքական անուանցը համար ամ ծաղկերգութեանն ։

Նման կըսուի. * Սատակեսցի ամ մարդ՝ դիմակաց թագաւորի։ ‖ (Յուդիթ. Բ. 4.)

* Սրբել զմիտս և զմարմինս յամ խղճէ չարէ՝ յերեւելեաց և յաներեւութից. ‖ (Յաճախ. 45.) ուր ամը կըշատցընէ խղճէն, քովի ածականը չարէ՝ եզակի է, բայց եւքի երկուքը յոգնակի։

Նոյնպէս կըդնեն, Եւթնհարիւր այր առաջնորդեաց. (ուր թուականը կըշատցընէ այրը, և եւեթ ածականը գրած է յոգնակի։) Բազմաց հայոց։ ՚ի Բազմաց Հայելեանց, ՚ի մէջ մեծի ժողովականաց։ Նախահաստատեալ էութիւն բնութեանս Ներհակք. միմեանց։ Նախածոյ գոհաբանութիւն. (հոս յոգնակի ածականը Նախծոյ՝ կըշատցընէ եզակի գոյականը՝ գոհաբանութիւն։) Նոր նման է, ՚ի բարձրագոյնն համարձակել յետաւութենէ։

Կայ տեղ ալ որ հաւաքական ածականն ալ՝ անհամաձայն թուով կըդնեն. որ. Նախաթախանձն ժողովորդ։ Նոյնպէս Եւթն առանձնութեանց։ շշարժանակէն Բան։ յառաջելոյ ողջախոհութեան եւն. (տես և 326.)

Կանոն Զ.

313. Շատ տեղ ընտիր շարադրութեան մէջ՝ ածական անունը կըդրուի գոյական՝ երկու կերպով։

Մէկ մը՝ գոյականին գործիական հոլովը կըդընեն, կամ նախադրութիւն մը. որ փոխանակ ըսելու՝ անքննելի, անհասանելի, անհամար, անկարգ, կըդնեն՝ առանց քննելոյ կամ անցանելոյ, առանց համարոյ, առանց կարգի. եւն։ Կամ փոխանակ ըսելու՝ ծոյլ, ցաւալից կեանք, խօսուն կամ բանաւոր պատարագ, կըդնեն՝ ծուլութեամբ կեանք. ընդ ցաւօք կեանք. խօսիւք պատարագ։

Մէկալ՝ սեռական հոլովով կըբացատրեն ածականը, անանկոր մէկալ գոյականին յատկացուցիչը կընեն. որ փոխանակ ըսելու, անճշմարիտ հաւատածովք, կըսեն՝ հաւատածովք անճշմարտութեան։ Նման կըսուի, աշխարհութեան մօրն, որ անկար մօրդ։ ՚ի բուն Բանին, թանձր քնով։ լսող Սրբազրութեան, լսող մտաւորացն։ ատամամբքն գազանութեան, գազանական ատամամբքն։

Այս ձևով կըլլայ որ նոյն խօսքի մէջ մէկը ածա-կան կըդնեն, մէկալը սեռական յատկացուցիչ. որպ. 'Ի վերայ աբրահամեան զաւակիս, 'ի սերոյ սահակայ, յորդիս յակոբայ. ‖ (դ. մակ. դ. 2.) ուր ինչպէս աբրահամեանը ածական է, ետքինները ալ կիմացուին, 'ի սահակեան զաւակէն, 'ի յակոբեան որդիս:

Նմանն կըսուի. * 'Ի ձերոց ունայնութենէ հայրենա-ւանդ գնացիցն. ‖ (ա. պետ. ա. 18.) իբր ունայն գնացիցն: * Ոչ յապականութենէ սերմանէն՝ այլ յանա-պականութենէն. ‖ ուր ետքինը ածական դրած է, առջինը սեռական, փոխանակ ըսելու՝ յապակա-նացու սերմանէն: Ասոնց նման կայ այլ հեղինա-կաց մէջ. որպ. 'ի հոգւոյ և 'ի մարմնական ախտից: Իա-րեփորձելոյ ունել զօրութիւն և ոչ տանջողական: Նման ողջոր և մխիթարութեն: Ոհանոյական կարգ և ներհա-կարութեն:

---

# ՅՕԴՈՒԱԾ Թ.

## Միջական անուանց վրայ:

Քանի կերպ միջական անուն ըլլալը՝ խօսե-ցանք իւր տեղը. (38) անոնք շատը ածական ըլ-լալով, գոյականին հետ ինչպէս պիտի համաձայ-նին նէ, վերի կանոններէն կրնայ իմացուիլ. Բայց մասնաւոր գիտնալիք ալ ունին, հոս զատ ծանու-ցանենք կարճ խօսքով:

### Թուական անուանք:

314. Թուական անուանց առջի կերպը բացարձակ կըսուի, մի, երկու, հինգ, տասն, հազար ևն:

Երբոր ասոնք նախադաս են գոյականին, հոլովով համաձայնիլը ազատ է: որպ. Ութսուն հազար արամբք. երկոտասան հազարաւ արամբ. և ութ հազար հեծեալ սպառազինաւ: ‖ (ա. մակ. Թ. 4. ԺԵ. 13.) հոս մի-ջինը համաձայնեցաւ, մէկալները անհամաձայն մնացին:

Սակայն առջի միաւորքը մի, երեք, չորք, սովո-

րաբար համաձայն հոլովով կըբանլին. ուստի չըս-վեր, մի վկայիւ, կամ երեք վկայից, 'ի չորք հողմոց եւն. այլ ըսելու է, Դող վկայիւ, Երեց վկայից, 'ի Չորեց հողմոց: Նմանք կըդնեն. 'ի Դոջէ մարդոյ. 'ի Դոան մարմնի. Դոջ պատարագաւ. առ Երկոսեան կամ Երեսեան վկայիւք եւն:

Երբեմն յետադաս են գոյականին, սովորաբար կըհամաձայնին հոլովով, ինչպէս այլ ածականք. (303) և ուր տեղ որ մեծ պզտիկ թիվ կան նէ, ետքինը միայն հոլովել բաւական է, թէպէտ երկուքն ալ հոլովելը արգիլած չէ. օր. Ամաց Վեցհարիւրոց: Զկամբք Հարիւր յիսուն և երից. անուանց իբրև հարիւր և քսանից. եղև թիւ մարդկան իբրև հազարաց հնգից:

Սակայն կայ որ յետադասն ալ անհամաձայն հոլովով կըմնայ. ինչպէս, ամաց յիսուն և ութ. ամաց հարիւր և քսան և երեքն: յաւուրց քառասուն: աս-պարիզօք հինգ:

315. Թուոյ համաձայնութեան կողմանէ, յատուկ կանոն է բացարձակ թուականներուն որ երբ նախադաս են եզակի կամ յոգնակի, իրենց ետևի գոյականը եզակի կըդրվի սովորաբար: Բայց ուր որ յետադաս են, առջևի գոյականը միշտ յոգնակի կըդրվի, թէպէտ և թուականը եզակի ըլլայ. օր. Քառասուն և ինը ամ էր 'ի թագաւորելն. || Հոս յետադաս գոյականը ամ՝ եզակի մնաց. Ամս քառասուն և ինը. Հոս նախադաս գոյականը յոգնակի է, ետևի թուականը մնալով եզակի. (Գ. Թագ. ԺԵ. 13. ԼԳ. 11.) Նմանք են հետևեալ օրինակներն ալ.

* Եւթն երինջքն՝ եւթն ամ են. (Ծննդ. ԽԱ. 26.) առջի գոյականը՝ յոգնակի, ետքինը՝ եզակի:

* 'Ի լայնութիւն կանգնոց երից, և յերկայնութիւն 'ի Վեց կանգնոյ. || (Յուդիթ. Ա. 2.) հոս նախադաս գոյականը՝ յոգնակի, յետադասը՝ եզակի: * Ընկա-նէին յաւուր յայնմիկ վիրաւորք իբրև երեք հազարք այր. (հոս գոյականը եզակի.) Արամբք իբրև Վեց հազարաւ. || հոս գոյականը յոգնակի, յետադաս ածականը՝ եզակի. (Ա. Մակ. Դ. 15: Ե. Մակ. Ը. 16:) * Եւ եղև քաղաքն յերեք մասն. || յետադաս

գոյականը եզակի։ (Յայտ ԺԴ. 19։) Ասանց նման շատ կայ այլ գրեանց մէջ։

316. Բացարձակ թուականը, բաց՚ի երկու, երեք, չորք համրանքներէն, երբոր գոյականի հետ են, յոգնակի նախդրիւ չեն բանիր. ու եզակի հոլովով ալ չեն դրուիր սովորաբար. որպէս կըսենք համարձակ, արս երկուս, յերիս աւուրս, ղամս չորս. բայց չըսուիր, արս հինգս, վեցս աւուրս ևն. այլ առանց սի կըգրուի, աւուրս տասն. լտերս հազար. հեծեալս ութսուն. ևն։

Նմանապէս չըլլար եզակի, տասնի աւուր կամ աւուրց տասնի, առաքելոց երկոտասանի ևն. այլ՝ տասն աւուր, կամ աւուրց տասանց. երկոտասան առաքելոց, կամ առաքելոյն երկոտասանից։ Սակայն երբոր առանց գոյականի ըլլան նէ, եզակի ալ կըհոլովին, և յոգնակի նախդրիւ ալ. ուստի կըսուի՝ հնգե-տաք։ Կերիցէ զքեզ և զյիսունս քո։ Ընտրեաց ՚ի նոցանէ երկոտասան։

317. Դասական թուականքը, առաջին, երկրորդ, չորրորդ, տասներորդ ևն. (40) իրենց բուն նշանակութեան կէօրէ եզակի գոյականի հետ եզակի կըբանին. յետադաս որ ըլլան նէ, հոլովով միշտ կըհամաձայնին, և նախդիրը կրնայ կրկնուիլ. նախադաս եղած ատենը՝ աւելի համաձայն հոլովով կըբանին, ու երբոր մեծ պզտի համրանք ըլլայ, իւրաքանչիւրը կըհոլովի։ Աս ամէնը օրինակով կերեւնայ. * Յամին վեցերորդի, յեւթներորդում ամսեանն. ՚ի վեցհարիւրերորդի և ՚ի միում ամի. յամսեանն առաջնում. ՚ի չորրորդում ազգի։ (Ծննդ. Է. 11. Ը. 13. ԺԵ. 16։)

* Յամին հարիւրերորդի յիսներորդի յառաջնում ... ՚ի հարիւրերորդի յիսներորդի յառաջնում. (Ա. Մակ. Է. 1։ Բ. Մակ. ԺԴ. 4։)

* Յերեքտասաներորդէ ամէ յովսիայ։ (Երեմ. ԻԵ. 3։) Ի սաղմոսին գրեալ է յերկրորդում։ (Գործ. ԺԳ. 33։) Առակ եօթանասներորդի երկրորդի սաղմոսին։ (Նար. Ա. 1։)

Ուր տեղ որ յոգնակի երևնան, որպէս երկրորդք, երրորդաց, չորրորդաց ևն. անանկ տեղ կամ միակ են առանց գոյականի, կամ նշանակութիւնը տարբեր է, կամ թէ անեզական գոյական կայ բուն։

318. Միջակ Թուականքը՝ երկոքեան, տասնեքեան եւն (42) իրենց ձայնովն ալ, նշանակութեամբ ալ յոգնական են. ուստի միշտ յոգնակի գոյական կուզեն, եւ կը համաձայնին հոլովով՝ նախադաս եւ յետադաս ըլլան. որ. Երկոցունց 'ի ձեռս. 'Ի սոցանէ յերկոցունց. 'Ի չորեցունց կողմանց. 'Ի ցլուցն երկոտասանեցունց. չորեքտասանեքեան աստիճանօք. Իսկ որ բացարձակ թուականը առանց համաձայնելոյ դրած է, չորսն աստիճանօք. (Դ. Թագաւ. Ի. 10.)

319. Զոյգական Թուականը՝ մէկ, երկեակ եւ (41) գոյականի հետ նախադաս կըլլան առանց համաձայնելու. որ չորեակ տարերցդ. (Պիտոյ. 287.) Երից եւ չորեակ տասանց . . . եւթնեակ շաւաղօք. (Նար. ԽԹ. 1. ԼԲ. 1.) Եօթնեկրեակ եւ յեօթնեկրեակ աւուրքս. (Յոհ. կաթողիկ.)

Այսպէս մինակ իբրեւ գոյական դրուի նէ, կամ բացարձակ եւ դասական թուականի պէս, կը հոլովուի. ինչպէս. (Նար. ԻԷ. 2.) երկեակ դասնեկի, ուր դասնեակը գոյականի պէս կառնուի կամ բացարձակի, կամ տասն, ուստի ինքը հոլոված է, իսկ երկեակը հոլոված չէ: Նմանապէս Յիշատակարանին մէջ կ'ըսէ, եօթներեակ յոբելինին, մասն դասնեկին. որ իններորդ յոբելինին, տասներորդ յոբելինին:

320. Կրկնական Թուականը որ կին մասնիկով շինուած է, (43) եզական կը հոլովուի, գոյականի հետ աւելի նախդիրով. քիչ տեղ ուրիշ հոլով. Ամէկուն որ պատիկ մասնիկով կըլլայ, մինակ կրնայ հոլովիլ, բայց գոյականի հետ նախադաս կըբանի նախդիրով հոլովով. որ. Զհարեւրապատիկն փոխանորդէ օգուտս. (Պիտոյ. 177.) Տասնապատիկ յաւելուածով. (Յոհ. կաթողիկ.)

Համրական անուանք.

321. Ընծեքեան, բոլորեքեան. (46) Ասոնց համաձայնութիւնը Միջակ թուականաց պէս է. յոգնակի գոյական առնլուն հետ՝ առջեւը կամ ետեւը հոլովով համաձայն. որ. Արբումք ամենեքեան: Ամենեցունց թագաւորացն: Ամենեքեան առաքինութիւնք: Բոլորեցունց հաւատացելոցն եւն:

Անուան կմ դերանուան նախադաս որ կըլլան, նախդիրը կմ նախադրութիւնը միշտ կուզեն. բայց յետադաս եղած ատենը, կրնան նախդիր առնել կմ չառնել. օր. զամենեսեան զհաւատացեալս ։ զամենեսեան զնոսա ։ յամենեսին 'ի մեզ ։ «Զան զնոսա ամենե-սին ։ 'ի ձեռնջ ամենեցուն ։ 'ի ցանկալիսն ամենեսին եւն ։

322. Ամն. գոյականի հետ կըվարի յոգնակի միայն սեռական կմ բացառական հոլովը, ուրիշ հոլովը եզակի. օր. ամենեց հոգւոց. յամենեց մասանց ։ Ամն նոքա ։ Սրբոյն ամենի ։

Բայց միմեակ՝ ուրիշ հոլով ալ կըբանի. օր. Զա-մենեսեան չերազանցեալ ։ Ամենաւ 'ի միջոյ եանց ։ (Պի-տոյ. 16. 122։)

323։ Ամենայն ։ Աս հանրականը շատ կըբանի, մանաւանդ եզակի. միմեակ ըլլայ նէ, կընշանակէ՝ ամ որ, ամ ինչ ։ Գոյականի հետ ալ՝ հէմ մարդու կըսվի, հէմ ուրիշ բաներու ։

Գոյականէն առաջ կմ ետեւ՝ թէեւ հոլովով հա-մաձայն ըլլայ, թիվը եզական կըպահէ սովորա-բար. քիչ տեղ յոգնակի կայ. ինչպէս * Պէտք մե-րոյ ամենայնց լինել մարդկան ։ Զամենայնսն դադարել չարեաց ‖ ։ (Պիտոյ. 5. 48։)

Բայց եզականի օրինակ. * Զետ այսր ամենայնի ա-ռաքինութեանց ։ (ա. եզր. ա. 25.) Զօրացն ամե-նայնի ։ (բ. մակ. թ. 9.) Եռանականօքն ամենայնիւ ։ (Խոր. բ. 47.) Ամենայնիւ պարտական չարեաց ։ Պատ-ճառ բարեաց ամենայնի ։ (Նար. հբ. 1. ձբ. 5։) Զա-մենայնիւ զմարդկեղէն խորհեօք ։ (Սարգ. 125։)

Ասանկ եզական կըբանի միշտ ուղղական եւ նախդրիւ հոլովքը՝ երբոր գոյականին քովն է. ուս-տի սովորաբար ըսելու է, ամ չարիք, կմ չարիքն ամ. յամ գործս. յիրս ամ. ըստ ամ աւուրս եւն ։ եւ չըսվիր՝ զամենայնս աւուրս. յամենայնս գործս. բայց եթէ ուրիշ բառ մտնէ երկուքին մէջ. ինչպէս. * Ամե-նայնսն պայծառացեալ լինելին հոգւք ։ Ընդ ամենայնսն էր անցեալ Բեթարութեան ‖ ։ (Պիտոյ. 91. 23։)

324. Հոլովոյն կողմանէ՝ գոյականին յետադաս է նէ, միշտ կըհամաձայնի. նմանապէս նախադաս եղած ատենը՝ երբոր երկուքին մէջը բառ մը կայ,

կամ դերանուն մը. ինչպէս վերի օրինակներով կերևայ ։

Բայց անմիջապէս գոյականէն առաջ՝ առանց հոլովելու կըբանի. ուստի սովորաբար կըսուի, յամենայն գործոց, ամ տարին, յամ չարէ. ևն. և ոչ յամն գործս. ամիւ տամբ. յամնում տեղւոջ ։ Բնաւ տեղ կայ հոլովով համաձայն. օր. ըստ ամենայնի իրաւանցս ։ (Բ. օրէնք. Դ. 8.) Ամենայնէ յայնպիսեաց անտի. (ղևտ. ԻԲ. 25։) Նախդիրը միշտ կուննայ՝ երբոր գոյականէն առաջ է. բայց գոյականին ալ դնելը, կամ թէ եւեր ըլլայ նէ՝ աւելի անուշ կուգայ նախդիրը կրկնել. օր. Յամ'ի չեմս քո ։ Ընդ քաղաքն ընդ ամ ։ Յամ 'ի բազում մեծութեան ։ յհպարտութի յամ ։

325. Բացառական հանրական ալ կայ, որ առաջ գրերինք. (47) ո՛չ ոք, ո՛չ մի ոք. որ մարդու վրա կըսուին, գոյական և եզակի հոլովելով մն և ոքը ։ Կայ ածականի պես ալ. օր. ո՛չ ոք ծառայ. և ուրիշ բաներու ալ կըսուի. օր. ո՛չ ոք ախորժակ ։

Նախդրիւ հոլովքին՝ նախդիրը կըդրուի մ կամ ոք մասնականներուն, օր. ոչ զոք, ոչ 'ի միջէ ևն. քիչ տեղ կայ ոչին վրա. օր. յոչ ոք ապաւինեցան. (Խոր. Գ. 44.) կամ. յոչ միոյ հակառակամարտէ. (Պլտ. 205։)

Ոչինչ. ո՛չ ինչ. ո՛չ մի ինչ. ո՛չ մի ինչ ։ Ասոնք ալ բացառական հանրական են, բաներու կըսուին, ածական են ։ Հոլովելը՝ մ և ինչ միայն կըհոլովուին եզակի, նախդիրն ալ իրենց վրա. օր. ոչ իմիք, ոչ զմի ինչ. ոչ միով իւիք. ոչ 'ի միջէ ինչ. և շըլլար. զոչ ինչ. զոչ ինչ. զոչ մի ինչ. յոչ միոյ իմիքէ ։

Միայն նախդրիւ տրական, կամ գոյականի քով նախդիր կըլլայ ոչին վրա. օր. յոչինչ պիտանացու. յոչինչ պէտս ։

## Վերբերական անուանք ։

326. Ասացինք առաջ (49) թէ իրեք բառէ կըձևանան վերբերական անուանք, օր. չափ, քան, պէս ։ Ասոնքը ածական են. չափէն բարդածը միշտ գոյականէն առաջ կըբանի, եզական միայն և նախդրիւ հոլով. օր. զայնչափ գանձս. յայնչափ քաջու-

թէ․ և չըսվիր, զայնչափս գանձս ։ Նմանապէս քան բառով ձևացածը՝ գոյականէն առաջ կըդրվի, և կընայ համաձայնիլ հոլովով և թվով․ որ․ Որքանեաց պարտուց․ այնքանեաց թագաւորի․ այսքանեաւ կարգի․ այնքանեօք չափովք ևն ։ Բայց առանց նախդրիւ հոլովը յոգնականին չըսվիր՝ յայսքանս բարիս․ զայսքանս շնորհս․ բայց եթէ գոյականէն հեռու ըլլան․ տասնի կըսվի․ յայսքանս և 'ի սոյնպիսիս և յևս ընտրելական երգս ։

Իսկ պէս բառով ձևացածը՝ գոյականէն ետև առաջ կընայ դրվիր․ միայն որպիսին միշտ նախադաս կըլլայ․ հոլովով և թվով ալ շատ անգամ կըհամաձայնի․ որ․ Օրանս այդպիսիս․ այսպիսի գործովք․ յազգէ այնպիսեաց ։ Նոյնպիսեաւ շնորհի․ յայսպիսեաւ շփոթման ։ Որպիսեաց իրաց ։ Կոչմամբ այսպիսեաւ ։ այդպիսեաւ ջերմութեամբ․ այսպիսեօք բարեօք ։

Ասոնք շատ տեղ եզակի կըմնան յոգնակի գոյականին հետ․ որ․ * Եւթն երինջք եղանէին՝ որպիսի ոչ տեսի յամ երկրին ‖․ (Ծննդ․ խա․ 19․) փոխանակ, որպիսիս ։ Նմանապէս կըսվի, յայնպիսում կապանաց․ այդպիսում անուանց․ այնպիսում խոնարհացն․ որպիսում պսակաց ։

## Հարցական անուանք ։

327․ Հարցականքը Ո՞վ, ո՞, (48) յատուկ գոյական են, և մարդու վրա կըսվին․ երբեմն ուրիշ բաներու ալ ։ Շատ տեղ ալ կըբանին որ մասնականին հետ, երբեմն ածականի պէս ։

Նախդրիւ հոլովքի՝ առջինին միայն կըդրվի նախդիր․ մեկալ հոլովքը երկուքն ալ կըհոլովվին, որ․ զո՞ ով․ ընդ ո՞ւմ ունէր․ ո՞յր ունէր․ յումմէ՞ ունէիր ։

Ածականի պէս կըիմացվին․ Ո՞վ ով խորև զիստայր ։ ո՞ ով 'ի ձեռնջ հայր ։

Եզական ձայնով յոգնականի տեղ ալ կըբանին․ որ․ ո՞ այնոքիկ իցեն․ որ պիտի ըսեր, ո՞յք այնոքիկ ։ Ո՞վ և ո՞վ իցեն ։ Ո՞վ էիք․ ո՞վ ով նոքա իցեն ։

328․ Ո՞ր, հարցական և վերբերական․ ածական է՝ մարդու ալ, ուրիշ բաներու ալ կըսվի ։ Գոյականին առաջը կըբանի, հոլովով և թվով համա-

ձայն սովորաբար. օր. Որո՞ց այսորիկ. յորո՞ւմ աշ-խարհն է։ որո՞վ նմանութեան։ որո՞յ զօրութիւն։ որո՞յ խնդրոց։ վասն որո՞յ յուսոյ։ որո՞վ կամօք։

Յոգնակի ուղղականը, կամ իր նախդրիւ հոլովով չըլլար, որք անկարգութիւնք, յորս տեղիս, զորս բանս. բայց եթէ ուրիշ բառ ըլլայ մէջ տեղը. օր. * Ո՞րոց հնչեցից շրթանց և լեզուաց բանից։ ‖ (Նար. Ի. 2։)

329. Այս որը՝ մասնական ոքին հետ՝ որ ոք, կը-նշանակէ՝ ով որ. (47) գոյական է, բայց ածականի պէս ալ կըլլայ. օր. որ ոք եղբայր։

Նախդիրը՝ ոքին վրայ միայն կը դրուի. օր. զոր ոք. և աղէկ շարադրութեան մէջ երկուքին միջոցը բայ կամ այլ բառ կը մտնէ. օր. որ ոք կամիցի՝ ըսելու տեղը, կըսեն՝ որ կամիցի ոք։ Ասանկ, որ ուտիցէ ոք. որ ապստամբի ոք։ Որ՚ի բանութեան ոք. են։

330. Որ ինչ, կամ ինչ որ. գոյական և ածական կըլլան, մարդու վրայ չըլլար, բայց մէկ երկու տեղ. օր. որ ինչ քաղաքացիք։

Հայցական հոլովին նախդիրը երկուքին ալ կըր-նայ դրուիլ, զոր ինչ, որ զինչ. զինչ որ. բայց ուրիշ հոլովի նախդիրը՝ միայն որին կը դրուի, յոր ինչ։

## Մասնական անուանք։

331. Ոք, ոմն. ածական են, մարդու կըսուին, և երբեմն ուրիշ բաներու ալ՝ աւելի յոգնականը։ Գոյականէն ետև առաջ կը դրուին, և սովորաբար համաձայն հոլովով և թուով. օր. Է՞ ոք այդր այր. փոխանակ ըսելու, այր ոք։ Հարիւրապետի ու-րումն։ Արս ոմանս. զոմանս եղբարս. ոմանք արք. ումեմն երիտասարդ. ծերովք ոմամբք. յումեմնէ ոչ պարտա-ւորէ. յընդդիմակցէ ումեքէ։ Արեգակնայինք ո-մանք. կշռօք ոմամբք։

Նախդիրը որ սովորաբար նախադաս բառին վրայ դնելու է, կըլլայ որ յետադաս մասնականին կը-դրուի, կամ երկուքին ալ. օր. շատ զոք, որ պիտի ըլլար՝ զշատ ոք։ զ[illegible] զոմն. թագաւոր զոմն. իբրև զհաւասարապատիւ զոք։ Ոքը շատ տեղ յոգնականի մտօք բանիլը՝ ըսերենք առաջ, (44)։

333. Մի. իբրև մասնական անուն, գոյականէն

ետև առաջ կըդրուի համաձայն հոլովով . որ . առն
գոչ , կմ՝ գոյ առն . արամբ գոչ . 'ի հովուէ գոչէ . գոչ
խոկ հաղմով ։

Երբեմն իր հոլովքը իրարու տեղ կըդրուին . որ .
առ ծովեզերբ գոտ , փոխանակ՝ մօտ ։ 'ի գոտ կող-
մանէն , փոխանակ՝ 'ի միջէ ։

Կրկնելով , գ գ , ըսել է՝ մէկ մէկ կամ ամէն
մէկ . գոյականէն առաջ կըդրուի , և երկուքն ալ
կըհոլովուին համաձայն . որ . գ գ այր ։ ըստ գոյ գոյ ա-
ռաքինութեան ։ գոյ գոյ չարեաց ։ զգոյ գոյ զառաջ-
նոցն ։ 'ի գոչէ 'ի գոչէ ։

334. Ինչ , իմն . իբրև մասնական ածական՝ մար-
դու չեն ըսուիր՝ բայց քիչ տեղ . որ . * Իբրև զհեր-
քեալ իմն խոշտանօք ։ ( Սար . հէ . 3 ։ ) կամ , 'ի հնա-
րաւոր ինչ 'ի մարդկանէ ։ ( Պիտոյ . 390 . )

Մինակ իրենքնախադաս չեն ըլլար գոյականին .
և չըսուիր , ինչ գործ . իմն բան . զիմն բարի ։ Այլ
կամ գոյականէն ետև , կմ իրենցմէ առաջ ուրիշ
բառ մը կուզեն . որ . Օ [illegible] ինչ մեծ . ( հոս գոյա-
կանէն ետև . ) [illegible] ինչ դատաստան . հոս գոյա-
կանը ետքն է , բայց [illegible] առաջ դրած է ։ Նմանկ .
* Եթէ ունիցիս ինչ ընդ ումեք [illegible] . խօսեցաւ
ինչ [illegible] քո [illegible] . || [illegible] բանս ինչ , չարութիւն ինչ ։
* Օտարոտի իմն դիցս ։ Այսպիսույ իմն սահմանի ։
Ընդ կրկ[illegible] իմն . [illegible] ։

335. Յոգնակի գոյականի քով՝ միշտ եզական
կըդրուին և առանց հոլովելու . ինչպէս օրինակնե-
րէն կերևայ ։ Հոլովել պէտք ըլլայնէ , [illegible] մասնի-
կին հոլովքը կըդրուի եզական . (44) որ . Առանց
[illegible] յանցանաց ։ 'Ի մարմնաւոր կարեաց [illegible] ։ պա-
կաս [illegible] , փոխանակ՝ իւիք ։ Ընդ օրինակաց [illegible] .
փոխանակ՝ ումանց ։

Նմանք շատ անգամ ուրիշ անուան կամ բայի
կամ մակբայի քով կըդրուին՝ միայն զարդարանք
տալու համար . առանց կըսուի . * Յայտ իմն այսպէս
առնէր ։ Ո՛չ առ բազում ժամանակս ինչ ։ Իբրև
կամէին իմն թէ փոխեսցուք զնա ։ || ( [illegible] . մակ . [illegible] .
9 . [illegible] . 13 ։ [illegible] . մակ . [illegible] . 63 ։ )

336. Կրկնելով կըսուի , ինչ ինչ . [illegible] պաղի պաղի .

գոյական կրկնի առանց հոլովելու. որ. ԻՆՉ ԻՆՉ դժուարինաց. Որ վն ԻՆՉ ԻՆՉ, որ վն զանազան իրաց. Կայ քիչ տեղ իբրեւ ածական. որ ԻՆՉ ԻՆՉ տեղեկութիւն.

Ասանկ կըլլայ ԻՄՆ ԻՄՆ. ածական, եզակի կրկնի հոլովելով. որ. վն ԻՐԻՔ ԻՐԻՔ տեսչութեանց. Պատճառանաց ԻՄԻՔ ԻՐԻՔ.

Ասոնք մի մասնականներն հետ կրկնելին, մի ԻՆՉ, մի ԻՄՆ. գոյական և ածական, առջինը երկուքն ալ կըհոլովի. միոյ իրիք. 'ի միոջէ իմեքէ. միով իւիք. առջինը մն կըհոլովի մինակ. միոյ ինչ, միով ինչ ևն.

337. Միւս կմ միւ. (44) ածական, գոյականէն առաջ եզակի հոլովով կըհամաձայնի սովորաբար. որ. 'ի միւսում աւուր. 'ի գալ միւսոյ շաբաթուն. Մասամբ միով ուրախացաւ, և միւսով մասամբ տրտմեցաւ.

Ուրիշ տեղ յետադաս կըլլայ, կմ անհամաձայն. որ. 'ի գալ ամին միւսոյ ; 'ի միւս կողմանէ գետոյն.

338. Այլ. ածական, սովորաբար գոյականէն առաջ կըդրուի, և ազատ է համաձայնիլ հոլովով և թուով. որ. Այլոց ազգաց. վն այլոյ աւուր. այլում քահանայի. յայլմէ ազգէ. այլովք բանիւք. Կամ. առ այլ երնջովք. յայլ մարգարէից. այլ յօրինուածոյ.

Յետադաս ալ կըլլայ, միշտ համաձայն հոլովը և թիւը. որ. Առն այլոյ. ազգի այլում. յայր այլ. զսիրտ այլ. զազգս այլս. կրկին առակաւն այլով, փոխանակ այլովք կրկին առակօք. (Իգնատ. Մեկն. ղուկ. 229. 333.)

339. Ուրիշ մասնականաց հետ կրկնի, այլ ոք, այլ ոմն. մարդու կըսուին՝ գոյական և ածական. Եզակին առաջինը մինակ կրնայ հոլովիլ. որ այլոյ ուրուք կմ այլ ուրուք. յայլմէ ումեմնէ, կմ յայլ ումեքէ ևն. բայց յոգնակին երկուքն ալ հոլովելու է, այլոց ոմանց. զայլս ոմանս. այլովք ոմամբք.

Այլ ինչ, այլ իմն. ուրիշ բաներու կըսուին՝ մինակ կամ գոյականի հետ. քիչ տեղ մարդու. որ յայլ իմն նորոգ իմիք. (Մարգ. 208.) Հոլովիլը՝ առաջինը երկուքն ալ կրնայ հոլովիլ. որ այլ իրիք կամ այլոյ իրիք, այլում իմիք, ևն.

340. Իւրաքանչիւր. ամեն մէկ։ Իւրքանչիւր, երկուքն ալ ըսել է. իրենց հոլովքը տես (42. 44.) Ածական են, գոյականէն առաջ կըդրուին սովորաբար, և համաձայնիլը ազատ է. Օր. յիւրաքանչիւր մասս, յիւրաքանչիւրում ժամանակի։ Իւրքանչիւր ծայրիւք. յիւրքանչիւրոց կողմանցն. իւրաքանչիւրոց նոցա։

Իւրաքանչիւրը՝ ուղղական հոլովով կըբանի սեռականի և տրականի տեղ, ինքը եզակի մնալով՝ թէ և քովը յոգնակի գոյական ըլլայ. Օր. * Նստաւ իւրաքանչիւր 'ի վերայ նոցա.» (Գործ. Բ. 3.) որ պիտի ըսեր, 'ի վր̃ իւրաքանչիւրոց նոցա։ Ասանկ կըսուի. 'ի դարս իւրաքանչիւր. փոխանակ, յիւրաքանչիւր դարս։ 'Ի դառնալ ձեզ իւրաքանչիւր. փոխանակ, ձեզ իւրաքանչիւրոց։ Գրօշից անգամ իւրաքանչիւր. փոխանակ, գրօշից իւրաքանչիւրոց։

Այս կըվարի ոք մասնականին հետ, մարդու ալ՝ ուրիշ բաներու ալ կըսուի. հոլովիլը ոքը մինակ. Օր. իւրաքանչիւր ուրուք սպասու, կամ պիտոյից։ Ասանկ իւրաքանչիւր ինչ. որ մարդու չըսուիր։

Այսքան տեղեկութիւն որ տըվինք Անուան բաղդատութեան վրայ իրեն զանազան տեսակին կէօրէ, բաւական է աշակերտին միտքը բանալու. և ասով կընայ հասկընար ինչ որ տահա աւելի գրած է ընդարձակ քերականութեան մէջը։

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

## Դերանուան բաղդատութեան վրայ.

341. Դերանունը թէ որ մտածենք բային հետ, կըլլայ դէր կամ խնդիր բայի. և ասոր վրայ բային մէջը պիտի խօսինք։

Անուան հետ բաղդատելով, կըլլայ անոր խնդիր, (284) բացայայտիչ կամ բացայայտեալ. (271) յատկացուցիչ։ (277) Ասոնց վրայ գիտնալիքը դրերենք Անուան բաղդատութեան մէջ։ Նախադրութեան ալ

խնդիր կըլլայ. որ իր տեղը խօսերենք. (211)։

Կըմնայ հոս ծանուցանել, մէկ մը՝ թէ ինքնիրեն ինչպէս կըքանի դերանունը. մէկմալ թէ անուան հետ ինչպէս կըկապուի իբրև անոր գոյականը, կամ ածականը։

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### Անձնական դերանուանք Ես, Դու, Ինքն։

342. Ասոնք գոյական են, իրենց ածական կուննենան անուն մը, կամ ընդունելութիւն մը, կամ ուրիշ դերանուն մը. ետև առաջ կըդրուին համաձայն հոլովով և թուով։ Որ. Մեք անմիտք. հոս ան-
Մեքը ածական է Մեզին, երկուքն յոգնակի ուղղական։

Ասանկ են. Մասն յէր կեղծաւորաց։ Ընտրեալ ’ի յէնջ շինողաց։ փրկեալքս մեզ։ հրեշտակեալքս ինչ։ եւ գերեալք։ օտարս եւ։ յեւ ’ի մեղաւորս։

Ինքն, երբոր նշանակէ՝ բուն, ա՛սըլ. (52) ածական կըվարի անվան հետ ետև առաջ. եականին հետ ալ յետադաս և միշտ համաձայն։ Որ. Տեղին ինքն. ինքն ամուրն. այսինքն ա՛սըլ տեղը. ա՛սըլ բերդը։ Ընդդիմամարտ իմն ինքեան անձէն. այսինքն ա՛սըլ իր անձին։

Դերանվան հետ. Ես ինքն մարդ եմ։ Դու ինքն։ ինչ ինքեան։ ’ի մեզ ինքեանս։ ’ի ձեզ ինքեանս։ իւր ինքեան։

### Ցուցական Սա, Դա, Նա։

343. Ասոնք յատկապէս գոյական են. ետև առաջ կուննենան ածական՝ համաձայն հոլովով և թուով. Որ. Դոքա չեւինք։ Նոցա չամոքելոյն, ևն։

Մարդու կամ անձին վրա կըսվին սովորաբար. կայ որ ուրիշ բաներու ալ կըսվին։ Ասանկ եղի վրա կըսէ (Ղուկ. Է. 33.) * Որ ոք տայցէ ’ի դման է այլազգւոյն։‖ Նմանապէս թզենի ծառին կըսուի. (մատթ. իա. 19.) * Եկն ’ի նա, և ոչ եգիտ ’ի նմա։‖ Ասանկ կըսուի. Յաճախ են սոքա. այսինքն այսպիսի բանք։ կամ. Նա ոչ գմի ոք ’ի սոցանէ. այսինքն ’ի փառանդամաց։

Երբեմն դերանուանց հետ կրկնին՝ նշանակութիւնը սաստկացընելու համար. Ես ինքն. Դու ինքն. Սա այս. Այն սա. եւն ։

Յաղագս Սոյն, Դոյն, Նոյն ։

344. Իրենց նշանակութեան կողմանէ ածական են, աւելի կուզեն դոյականին նախադաս ըլլալ քան վերջը. եւ համաձայնիլը ազատ է. ուստի կըսուի, 'ի նոյն աւուր, կամ 'ի նմին աւուր ։ նոյն մանկանցն, կամ նոյին մանկանց ։

Աւելի չորրորդ կըհամաձայնին հոլովով, թէպէտ թուով միշտ չէ ։ Որ. Առ նմին բանից ։ վասն նորին մեղաց ։ նոյին աւետեաց ։ նովին հոգւով կամ շաւղօք ։ նովիմբ + բարեզարդութեամբք ։ զնոյնանց զհերձուածողաց ։

Սոյն նախդրիւ հոլովքին յետադաս կըլլան դոյականին, եւ նախդիրը կըկրկնեն. Որ. Յորոգայթ 'ի նոյն ։ Ճանապարհ ընդ որ եկն՝ ընդ նոյն դարձցի. կմ ընդ նոյն ճանապարհ ։ Այլ զոր զնոյն զքս 'որ առնիցիք ։

345. Առանց եւս առաջ դնելոյն պատճառովը՝ նախդիրն ալ կերպ կերպ կըդրուի. Որ. * Ընդ այնուհետեւ չընդունայն եղեալ 'ի նոյն խորհուրդս ։|| (Եղիշ. 18.) փոխանակ, 'ի նոյն ընդունայն խորհուրդս ։

* Մեծատանց եւ աղքատաց միապէս բաժանեաց իբրեւ եղբարց՝ աջս ամենեցուն զնոյն, ձեռս եւ ոտս զնոյն ։|| (Մանդակ. ճառ Է.) կմ զնոյն աջս, զնոյն ձեռս ։

* Տեղի մի եւ զնոյն ցուցանեն երբեմն ։|| (Իգնատ. 127.) կմ զնոյն տեղի ։ Դարձեալ. * նոյն զաղօթսն կատարեմք՝ զոր յեկեղեցին ։|| (Նամբ. Պատար.) կմ զնոյն աղօթս ։

Առանց հոլովքը իրարու տեղ. Որ. Այդն նմանութք, փոխանակ՝ սովին ։ նմին օրինակաւ, փոխանակ նովին ։ 'ի նոյին իսկ յառաքելականացն դասուց, փոխանակ 'ի նոցունց ։ նովին ախտից, փոխանակ նոցին ։

346. Մէկալ ցուցականաց հետ կըվարին եւս առաջ, սովորաբար համաձայն, երբեմն անհամա-

ձայն, և նախդիրը կրկնելով. այսպէս. սոյն այս, 'ի դոյն յայդ, ևն: որ. սմին այսմիկ: այնորիկ նմին իրի: վն սորին իրակ այսորիկ: 'ի սմին յայսմ ժամանակի: սոյնմէ սա այսոսա: Նոյն այսմ և պօղոս վկայէ: 'ի սոցանէ յայսցանէ: յայսմ և 'ի սոյն: 'ի սոյն իւր յայսոսիկ:

347. Ասոնց ալ կըյարի ինքն դերանունը՝ յետադաս, սոյն ինքն, դոյն ինքն. մինակ ըլլան նէ՝ գոյականի պէս կընշանակէն փոխանակ ըսելու՝ սա ինքն, դա ինքն: Ասանկ (Նար. ԻԶ. 4.) * Նոյն ինքն որ զայս բանս տպաւորեաց.‖ կամ. * Սոյն ինքն մտացուցին առնէ.‖ (Հե. 12:) Այսպէս. * Նա ոչ նորին ինքեանս գիտէն:‖

Նախդիրը ցուցականին վրայ կըդրուի, և գոյական որ ըլլայ քովը՝ անոր ալ կըդրուի, թէպէտ ուրիշ հոլովքի շատ անգամ չեն համաձայնիր: որ. Զդոյն ինքն զգրիգոր. (Ագաթ. 358:) Գոյ տեսանել 'ի նոյն ինքն 'ի մեզ հաստատեալ: 'ի նոյն ինքն 'ի նա: (Խորհ. 78:) Նմին ինքեան քմի: նորին ինքեան հրեշտակին. ևն: Զնոյն ինքն զքահանայսն: նոյն ինքն յինէն առելով ձեռամբն, փոխանակ, նովին մասամբն: նոյն ինքն հօտապետին, կին փրկչին: 'ի նոյն ինքն յանձպետութէն: 'ի նոյն ինքն 'ի վերայ այրին. որ 'ի վերայ նոյն այրին:

Այս դերանուանք մինակ որ ըլլան առանց գոյականի, կըդրուին յոգնակի, սոյնք, 'ի նոյնս, զնոյնս. բայց գոյականի հետ ըլլալը՝ սոյնք խորհուրդք, 'ի նոյնս գործս, զնոյնս չարչարանս. այլ կամ եզակի կըդրուին, սոյն խորհուրդք, 'ի նոյն գործս. և կամ սորին խորհուրդք, 'ի նոսին գործս ևն:

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### Ցուցական դերանուանք Այս, Այդ, Այն:

348. Ասոնց վրայ զատ յօդուածով կըխօսինք, վն զի աւելի գիտնալու բաներ ունին:

Ցուցականք ածական են, մարդու և ուրիշ բաներու ալ կըդրուին. մինակ սա, դա գոյականի պէս ալ կընշանակէն: որ. * Այս ամենեքեան էին.‖ որ

սոքա ամենեքեան ։ (ա. եզր. Թ. 36։) Նոյս * Մատ- եւ ամաչեցեալք դարձցին ։|| ծն դոքա ։ (ը. մակ. ժդ. 39։)

Գոյականէն առաջ որ դրուին նէ, աւելի կըրա- նին այս հոլովքը, այսր, այսմ, այսց եւն ։ երբոր ետքը ըլլան, մէկալ հոլովքը աւելի, այսուրէն, այսմէն, այսո- րէն ։ (տես իր տեղը 53.) Համաձայնութեան կանոն- ները դնենք ։

Կանոն ա ։

349. Գոյականին նախադաս որ կըլլան, սովորա- բար կըհամաձայնին հոլովով եւ թուով. եւ նախդի- րը առջինին միայն կըդրուի ։

Այսպէս կըսենք. այսր աւուր. զայն օր. յայնմ ա- ւուր. այսու օրինակաւ. յայնց ժամանակաց. այդց պար- ծանաց. եւն ։

Բայց յոքնակի նախդիրքը չըսուիր, յայնս գործս, զայնս բանս. այլ կամ եզակի կըդրուի, յայն գործս, կամ, յայնոսիկ գործս, զայսոսիկ բանս եւն. միայն մէջ տեղը ուրիշ բառ մը ըլլայ, կամ գոյականը զօրու- թենէ իմացուի նէ, կրնայ ըլլալ ։ որպ. Օ այնս եւ ամ- բոյս ։ (Յոհ. կաթող.) կամ. * Յաւելցես քեզ այլ- եւս երիս քաղաքս յայնս երիսն ։|| (բ. օրէնք. ժթ. 9.) ծն յայն երիս քաղաքսն ։

Նմանապէս բացառականը սովորաբար չըդրուիր, յայսմանէ գործոյ. յայնմանէ օրէ. յայսցանէ կե- նաց. յայնցանէ պատճառաց. այլ կըսուի. յայսմ գործոյ. յայնմ օրէ. յայսց կենաց. յայնց պատճա- ռաց ։ Իսկ ուր տեղ որ առջինը կայ նէ, կամ մէջ տեղը ուրիշ բառ մնացած է, կամ նախդիրը կըկնած է. որպ. * Ոչ ինչ յայնցանէ մնացեալ բարեաց.|| ծն յայն- ցանէ բարեաց ։ (Պիտ. 347.) Յայնմանէ եւ տեղ- ւոջէ ։ (Յոհ. կաթղ.) Յերկոցունց յայսցանէ յեր- կասիրութեանց ։ յայսցանէ 'ի գործոցս. յայսցանէ 'ի տա- ռանցս ։ (Նար ։)

350. Այս դերանուանց հոլովքը շատ անգամ իրարու տեղ կըդրուին. նմանապէս եզականը յոքնա- կանը իրարու կըխառնուին. ասով անհամաձայն կերեւան գոյականին հետ. որպ.

Յայնմ ժամանակաց, (փոխանակ յայնց.) զայն ժամու, (փոխանակ զայնր.) զայսոսիկ աւուրբք. (փոխանակ զայսոքիւք.) այսմ խորհրդով. (փոխանակ այսու.) այսր յաւիտենից. (փոխանակ այսու,) ըստ այսոսիկ կանոնի. (փոխանակ այսմ.) այսր երախտեօք. (փոխանակ այսոքիւք.) այնմ սիրոյն. (փոխանակ այնու.) զայնց ժամանակի. (փոխանակ զայնր.) յայսմանէ իրակութեց. (փոխանակ յայսցանէ:) Նմանապէս երբեմն յետադաս են գոյականին. Որպ. բոցովքս այսմիկ. (փոխանակ այսոքիւք,) 'ի քաղաքացն այնոցիկ. (փոխանակ յայնցանէ.) յիշատակօքս այսոսիկ. (փոխանակ այսոքիւք.) զարդ զայդ. զբանսն զայն. (փոխանակ զայդոսիկ, զայնոսիկ:)

Երբեմն իրենցմէ առաջ կայ մէկ ածական մը նախդրիւ հոլովով, սովորաբար իրենց ալ կըդրուի նախդիրը. բայց տեղ զանց կառնուի. Որպ. զմեծ զայս մարմինս. զգերաշխարհիկն զայն տնօրինութիւն: 'Ի նորոգս այս փոխադրութի. զորբանուէր այս օծելութի. զսովորականն նորա այս խորհուրդ:

351. Գիտելի. Վարպետ շարադրութե մէջ՝ նախադաս ցուցականը՝ և իր գոյականը ուրիշ բառեր կունենան միջերնին. և իրենց համաձայնութիւնը կըփոխուի. նախդիրը կամ ցուցականին միայն կըդրուի, և կամ ետեւի գոյականին ալ: Որպ. * Զայն որ յառաջ քան զշակաւին մի պատուեալ էր Տէրդն. (Իմաստ. ժդ. 20:) ընդ զայն մարդն:

Նմանապէս. * Զայն որ փոքր մի յառաջ խաւարութե լցեալ էր զտաճարն, ուրախութե ընուլ: (Գ. Մակ. Գ. 30.) ընդ զայն տաճարն:

* Որոց զայս ընդ միմեանս երդմամբ արարեալ էր: (Գործ. ԻԳ. 13.) ընդ զայս երդմունս:

* Զայն զնոսա բերէր 'ի մարտս: (Յոհ. կաթողիկէ.) ընդ յայն մարտս:

## Կանոն Է:

352. Յետադաս ցուցականքը՝ ուրիշ ածականաց կանոնին կ'երթան (303.) կըհամաձայնին նախադաս գոյականին հետ հոլովով և թւով, բայց 'ի խոտորումն որ վերը գրինք. (350)

Նախդրիւ հոլովքին՝ երբոր ըլլայ 'ի , ց , զ , ը , սովորաբար ցուցականին ալ կըդրուի․ առը չկրկնըվիր․ ըստ , ընդ , նախադրութիւնը ազատ է կրկնել կամ չկրկնել ։

Իսկ նախադաս գոյականը՝ կունենայ դիմորոշ յօդ համեմատ ցուցականին ։

Աս ամէնը կերևնայ ետևի օրինակներով ։ * Յերդմանէդ յայդմանէ․ հոս երկուքն ալ եզակի բացառական , յ նախդիրը կրկնած․ և գոյականին կպուցած դ դիմորոշը՝ համեմատ այդ ին ։

Նմանկ են․ * 'Ի տարւոջս յայսմիկ ։ ցոսկերսդ յայդոսիկ ։ 'ի պատուիրանացս յայսցանէ ։ զանունս զայսմանէ ։ Թղթովդ այդուիկ ։ ընդ այրդ ընդ այդ ։ ըստ բանիս մեծի այսորիկ ։ ընդ առնս ընդ այսմիկ ։ ըստ արձանս ըստ այս ։

Այս տեղ որ դիմորոշ յօդ հետ չի դրուիր գոյականին․ կամ անոր տեղը կըդրուի ստացական դերանուն , կամ սոսէ , այսէ ։ զր 'ի ժամանակի յայսմիկ ։ յորոգայթէ յայսմանէ ։ նշանք այսոքիկ․ ևն ։ Կամ․ 'ի տեղւոջէ սոսէ յայսմանէ ։ ժողովրդեան յոսմ այսմ ։ ծառայից սոց այսոցիկ ։ 'ի ժամանակի սոսա յայսմիկ ։

253․ Դիտելիք Ա․ Երբեմն ցուցական դերանունը նոյն խօսքի մէջ աւելորդ տեղ դրած կըլլայ՝ կամ նոյն մէկ ցուցականը , և կամ նմանը․ զր․ * Զայս ամ որ ինչ միանգամ 'ի ձեռն Յասոնեայ յուցեալ է , զայս ամ ջանասցուք ։ ևն ։ (Բ մակ , Բ․ 24 ։) Դարձեալ․ * Զայն մովսէս զոր ուրացանն , զնա ած առաքեաց ։ (Գործ․ Է․ 35 ։)

Այս որ ցուցականը և իրեն ցըցուցածն ալ կըդըվի մէկ խօսքի մէջ․ զր․ * Զճշդեցն և զճշմարտեցն՝ զայն առաջնոյն թողաք ։ (Բ․ մակ․ Բ․ 29 ։) հոս զայնը աւելորդ էր՝ բայց զարդի համար դրած է ։

354․ Դիտելիք Բ․ Վարպետ շարադրութեան մէջ կըլլայ որ ցուցականը հեռու իր գոյականէն կըդրուի նոյն մէկ բայի խնդիր , և անանկ կընէ որ գոյականը իբրև նորէն կըցուցանէ․ և հոլովը կամ անոր կըհամաձայնի , և կամ անոր յարաբերականին ։ զր․

* 'Ի հպարտութեան ամբարտաւանութեան յեցեալ՝ յայս

որ 'ի հնոց ժամանակաց հետէ ունէին ։ (Գ. մակ. Գ. 11։) հօս նախադրիւ տրականը յայն՝ կըկրկնէ իր գոյականը 'ի հպարտութենէ . և կիմացվի , այն հպարտութեններ կըսեմ որ հին ժամանակէ ունէին ։

* Նո՞րք ուսանիցիք զպաշտմանթիւ անուանս աստուածոց նոցա , այն որ չիք ուրեք 'ի միջի և ոչ մի ։ (Նորին. 153.) հօս այնը կըցուցանէ սեռականը աստուածոց , բայց ուղղական դրած է համաձայն որ յարաբերականին . որ հասարակ կանոնին կեօրէ պիտի ըսէր , այնոց կմ այնոցիկ աստուածոց՝ որոց և ոչ մին գոյ ։

* Զխորամանկութի՛ առաջին օձին զգեցեալ են , այն որ մատնեաց պատրել զմարդն ։ (Մարգ. 577.) փխ այնր օձին ։

# ՅՕԴՈՒԱԾ Գ.

## Ստացական դերանուանց ։

Բանի կերպ ստացական դերանուն ըլլալը խօսեցանք առջի գրքին մէջ . (54.) անոնք ամէնը ածական ըլլալով , տեսնելու է հիմայ՝ ինչպէս կը-բանին մինակ , կմ գոյականին հետ ։

### Կանոն Ա.

355. Առանց գոյականի դրած ստացական դե-րանունը՝ դիմորոշ յօդ կունենայ սովորաբար , կմ անոր նմանը սդ , նդ . (տե՛ս 352.) Օր. * Բո՛ւ է ամ ինչ , և 'ի քոյոց տուաք քեզ . (Ա. մնաց. իթ. 14։) հօս 'ի քոյոց դիմորոշ դ ունի , իր գոյականը կիմացընէ , 'ի քոյոց արարածոց ։

Նմանէ է . * Հանգեաւ ամ յիւրայոյն . (Ծնըն. Բ. 10.) փխ յիւրոց գործոց ։ Ամենայնովս քոյայնովդ ծանուցանող հրաշալեօք ։ (Նար. խր. 1.) հօս երկու ստացականը ունին դիմորոշ ս , դ ։ Իսկ այլ տեղ կըր-վի , 'ի նորայոց անդի , 'ի քոյոց այդի ։ (Նար. խր. 3. հէ. 1։)

Բայց տեղ կայ որ առանց յօդի կմ նման բառի

դրուի . որ . * Օխնեալդ որ զայլայ ունիս , ինչ 'ի քոյ-
ում մեծարիս ։ ‖ ( Սարգ Հրր . 213 ։ )

Կանոն Ե .

356 . Ածանցեալ ստացականքը իմայէն կամ իմոյէն , և այլոց ևս , ( 55 ) երբոր գոյականին հետ են , միշտ նախադաս կըլլան . և զխմորոշ յօդ կայ 'կամ իրենց վրայ , և կամ գոյականին ։

Համաձայնութեան կողմանէ , այէն վերջացածը նախդրիւ հոլովին կամ ուղղականին միայն կը համաձայնի . որ . * Այս որ զկնի քոյէնքն գալոց են ալքէ . ‖ ( Խոր . յուլ . ) որ և որք զկնի գալոց են քոյին ազգքն ։ Նման կըսուի , իմոյէնս համազու-գաւ ։ մերոյէն նախնեացն ։ քոյէն մարմնով ։ ձերոյէն բնութիւս ։

Ստացականքը որ այն կամ այէն կըվերջանան , սովորաբար համաձայն կերթան հոլովով և թւով . քիչ տեղ անհամաձայն . որ . մերայնոյ փառացն ։ Իսս սորայում բանի . ձերայոյն հոմանցեղից ։ դորայովք ան-սութիւ ։ մերայօք համազգօք . ձերայէն ծոցոյն ։ նոցայցն կըից ։

Կանոն Զ .

357 ։ Նուն ստացականքը իմ , քո , մեր , ձեր , նոր , գոյականին ետև առաջ կըդրուին , զխմորոշ յօդ ալ շատ տեղ մեկին կամ մեկալին . համաձայն կըլ-լան հոլովով և թւով . և նախդիր կայ նէ , առջի-նին միայն կըդրուի ։ Աս ամենը կերևնայ մէկ օրի-նակովս . * Որ 'ի մերում մտի , և 'ի խորհրդեան մերում էք . ( Նսթեր . ժդ . 1 . ) հոս մեր ստացականը երկու գոյականի քով , մեկին առաջ , մեկալին ետքը դրած է , ներգոյական հոլով եզակի , և նախդիրը միայն առջինին ։

Նման են . * Իսս ազգի նորում ։ յոսկերաց իմոց ։ յատնէ նորմէ ։ աչօք քոյէ ։ Եղբարցս իմոց ։ 'ի քումմէ բարերարութենէդ ։ պարգևիդ քում ։ 'ի քում ակամդ ։ յականէ քումմէ ։ ձերով մարմնովդ ։ առ 'ի ձերոյն ցանկութենէ ։ առ չարեօքս իմովք՝ դժոյդ բա-րութիւ ։ ‖

Սակայն ինչպէս վերը ըսինք, ( 302. 323. 328.) յոքնակի ուղղականը և նախդրիւը չըսուիր, բանք իմք, 'ի բանս իմս, զգործս քոյս, 'ի վարս իւրս. եւն. այլ դնելու է. բանք իմ, 'ի բանս իմ եւն. որ շատ տեղ Հայկան դերանուան սեռականն է, և կըլլայ յատկացուցիչ: Ասանկ ուրիշ տեղ ալ կըգտնեն. Հօր իւր. իմ կորուսելոյ. դարձին իմ. թօշակաց ձեր. մարմնոյ իմ. բանիւ քո. եւն. որ չէ թէ անհամաձայն ըսելու է, այլ սեռական յատկացուցիչ:

Յոքնակի նախդրիւ կրնայ ըլլալ՝ երբոր նախադաս են գոյականին, և մինչեւ մէջն ալ ուրիշ բառ որ մտնէ. որպ. * Ես ձեռամբ խորտակելով զորդէս :|| (Պիտոյ. 9:) Օձորմն առ մեզ հրաշագործեաց զօրութիւնս: * Օրհնեն խոհերս. մեղմիւ խամծանօղն :|| (Նար. Ժ. 2. խն. 2. ձզ. 2:)

358. Ասացինք թէ դերանուն յօդը կըդրուի կամ ստացականին, կամ իրեն գոյականին: Երբոր ստացականը նախադաս է, աւելի շնորհքով կըլլայ իրեն դնել դերանունը. բայց յետադաս որ ըլլայ, հիչ չըդրուիր. որպ. կըսուի՝ բանիցս իմոց, կամ՝ իմոց բանիցս, կմ իմոցս բանից. բայց ո՛չ՝ բանից իմոցս: Անուշ կըսուի՝ քոյդ կուսութիւն, բայց հիչ չըսուիր՝ կուսութիւն քոյդ:

Նախդիրն ալ առջինին միայն կըդրուի ըսինք, բայց թէ որ մէջ տեղը ուրիշ բառեր մտնեն, շատ անգամ նախդիրը երկուքին ալ կըդրուի (տե՛ս 308.) երբեմն ալ քովէ քով ըլլան նէ. որպ. յիւր 'ի փառս և 'ի վայելչութիւն. (Բ. պետ. ա. 3.) Օ՛ իմս պարտակս: (Նար. կթ. 1:)

359. Դիտողութիւն. Ինչպէս ցուցական դերանուան համար ըսինք, (350) ստացականն ալ շատ տեղ անհամաձայն կըլլայ կամ հոլովը, կմ թիւը. որպ. եղբարքք իմոյ. ( փոխանակ իմովք. ) առ քոյդ երախտիս. ( փոխանակ առ քոյս. ) իմոյս ձեռօք. ( փոխանակ իմովք. ) 'ի քոյդ լռութի. ( փոխանակ 'ի քումդ. ) քոյդ նշանաւ. ( փոխանակ քով. ) իւրոյ աշակերտացն. ( փոխանակ իւրոց. ) մերոյ բանից. ( փոխանակ մերոց. )

# ՅՕԴՈՒԱԾ Դ.

## Յարաբերական դերանուն Որ ։

Բառը որ, երբեւ հարցական և վերբերական անուն՝ ածական է. և իր համաձայնութեան վրայ առաջ խօսեցանք ։ (328)

Բայց երբեւ յարաբերական դերանուն՝ միշտ գոյական կըմնի, և կըլլայ տէր կամ խնդիր բայի, յատկացուցիչ, խնդիր անվան կամ նախադրութեան ։

Կանոն Ա.

360. Յարաբերականը երբոր ներգործութիւն ունի իրեն յարաբերեալ անունը, բնական կարգը նայելով՝ պիտի յետադաս ըլլայ. և սակայն ալ կը-պահվի սովորաբար. ինչպես. * Աչս՝ որոց ոչ տե-սանիցեն, և ականջս՝ որոց ոչ լսիցեն ։ ‖ (Հռովմ. ժա. 8.) հոս աչս, ականջս, յարաբերեալ են, և որոց յարաբերականը՝ երկուքին ետեւը դրած է ։

Բայց խոտորումն կայ, որ վարպետ շարադրու-թեան մէջ շատ անգամ յարաբերականը առաջ կըդրվի, և յարաբերեալը՝ ետքը, ու երկուքին մէջ ուրիշ բառեր ալ կըմտնեն. օր. * Դուք որ գործէին զամ-բարտաւանութիւն զՊտղոմայեցիսն՝ խայտառակեցէք. ‖ (Գ. Մակ. Է. 3.) հոս յարաբերեալը զՊտղոմայեցիսն՝ ետքը դրած է. որ բնական շարվածքով պիտի ըլ-լար. Դուք զՊտղոմայեցիսն որ գործէին զամբար-տաւանութիւն՝ խայտառակեցէք ։

Ասանկ է. * Զի եթէ որ ՚ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ բանն՝ հաստատուն եղեւ ։ ‖ (Եբրայ. Բ. 2.) որ բնական կարգով դնելու էր. եթէ բանն որ ՚ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ եւն ։ Այս կերպ խոտո-րումն վարի խօսքերուն մէջ ալ կերեւայ ։

Կանոն Բ.

361. Շատ տեղ յարաբերեալը յայտնի չըկայ, այլ զօրութիւն կիմացվի ցուցական դերանուն մը. և ասանկ տեղ այն հոլովով կըդրվի յարաբերակա-նը՝ ինչ հոլով որ պիտի ըլլար յարաբերեալը ։ Օր.

* Եւ առ՝ յորոց ածէրն ձեռամբ իւրով պատարագս ։ (Ծննդ. ԼԲ. 13.) հօս ընական շարքով պիտի ըսէր․ էառ ձեռամբ իւրով պատարագս յայնցանէ զորս ածէր․ բայց յարաբերեալ բացառականը զօրութիւն ըլլալով, իր յարաբերականը դրաւ յորոց ։

Ասանկ իմանալու է․ * Երեւի որոց ոչ թերահաւատեն 'ի նմանէ ։ ‖ (Իմաստ. Ա. 2.) այսինքն երեւի այնոցիկ որք ոչ եւն ։

* Արժանի ըստ որոց մեղարն՝ անց է քեզ ։ ‖ (Յոբ. ԺԱ. 6.) այսինքն ըստ այնց գործոց որովք մեղարն ։

362. Բայց կայ տեղ որ յարաբերականը կըդրուի ան հոլովով ինչ որ իրեն բայը կուզէ, աւելի երբոր տէր բայի է․ եւ երկու կերպով ալ կերեւայ այս բանիս վրայ, * Որում խնդրէ 'ի քէն՝ տուր․ եւ որ կամի փոխ առնուլ 'ի քէն, մի դարձուցաներ զերեսս ։ ‖ (Մատթ. Ե. 42.) հօս առջի մասը կանոնի կեօրէ՝ տրական կըդնէ, որովհետեւ յարաբերեալը պիտի ըլլար, տուր այնմ որ խնդրէ․ իսկ երկրորդ մասը ուղղական կըպահէ՝ տէր բային համար․ որ առջինին կեօրէ պիտի դնէր՝ յորմէ կամի փոխ՝ մի դարձուցաներ զերեսս ։

Ասանկ կիմացուի․ * Զի որ 'ի ներքս անդ էին, ինքնին յուդա նետ եւ զէն մատուցանէր․ ‖ (Բ. Մակ. ԺԴ. 20,) որ փոխանակ ըսելու, որոց 'ի ներքս էին՝ մատուցանէր եւն, կըդնէ՝ որք, տէր բային՝ էին ։

363. Գիտելիք․ Կայ ներհակ սովորութիւն մը որ՝ յարաբերականը զօրութիւն թողած է, ու յարաբերեալը յայտնի կըդրուի․ ասոր վրայ յիշեցինք վերն ալ․ (291.) որպէս. Ցուցանելով զոր 'ի խոնարհութենէն օգուտն, եւ զոր 'ի հպարտութենէն վնասս ։ ‖ (Շնորհ. Ըհան. 37.) հօս առջի մասին դրած է զոր՝ փոխանակ դնելու որ, վասն զի յարաբերեալը հայցական է․ այսինքն ցուցանելով զօգուտն որ լինի 'ի խոնարհութենէն․ իսկ երկրորդ մասին յարաբերականը զօրութիւն թողած է․ եւ պիտի ըսէր, զվնասս որ 'ի հպարտութենէն ։

Ասանկ կիմացուի․ * Անցաւորք են՝ եւ թագաւորքն, եւ 'ի նոցանէ սպառնալիքն ․ ‖ (Նարգ. 240.) այսինքն սպառնալիքն որ 'ի նոցանէ ։

## Կանոն Գ.

364. Երբոր յարաբերականը ունի ներգործու-թիւն յարաբերեալը, ինքը այն հոլով կը դրուի որնոր իրեն բայը կուզէ, այսինքն որուն որ ինքը տէր է, կամ խնդիր, կամ անունը որուն որ յատկացուցիչ է ։

Յայտնի կերեւայ այս կանոնը առջեւի խօսքովս . * Ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն՝ զոր եդ ժառանգ ամենայնի . որով և զյաւիտեան-սն արար . որ է լոյս փառաց ։ (Եբրայ. Ա. 2. 3.) հոս՝ որդւովն յարաբերեալ է . իր յարաբերականը զոր՝ հայցական է, եւ բային խնդիր, ետքը որով գործիական, խնդիր արար բային . ետքը որ ուղղա-կան, տէր բային՝ է ։

365. Ասկայն երկու կերպ խոտորումն կայ ։ Մէկ մը՝ յարաբերականը կը դրուի այն հոլովով որով որ յարաբերեալը ներգործութիւն դրած է . օր . * Պատմեաց մովսէս ահարոնի զամենայն պատգամ-սն՝ զոր առաքեաց զնա տէր ։ ‖ (Ելք. Դ. 28.) հոս առաքեաց բային խնդիր պիտի ըլլար տրական՝ առ որ, բայց հայցական կը գտնէ, ինչպէս յարաբե-րեալը՝ պատգամսն ։

Նմանկ կիմացուի . * Ի վերայ սեղանոյ ողջակի-զացն, որոյ նոր արարին ։ ‖ (Ա. Մակ. Դ. 53.) որ պիտի ըսէր՝ զոր արարին, բայց սեռական դրաւ, ինչպէս յարաբերեալը՝ սեղանոյ ։

366. Մէկալ խոտորումը ասոր ներհակ, յարա-բերեալը կը գտնէ յարաբերականին հոլովովը . օր . * Ընդոծինք և արծաթագինք՝ որ էին յազգաց օտա-րաց, թլփատեաց զնոսա ։ ‖ (Ծննդ. ԺԷ. 27.) հոս երկու յարաբերեալը պիտի հայցական ըլլար՝ խնդիր թլփատեաց բային . բայց ուղղական դրած է, զի-րէ յարաբերականն ալ ուղղական է ։

Նմանկ կիմացուի . * Ամենայնի որոց ոչ իցեն թեւք և թեփ, պիղծ իցէ ձեզ այն ։ ‖ (Ղեւտաց. ԺԱ. 12.) հոս ամենայնի տրական դրած է՝ որոցին համար . որ ուղղական պիտի ըսէր, այն ամենայն ձուկն որոց ոչ իցեն թեւք, պիղծ լիցի ։

Կայ այլ տեղ որ նոյն մէկ խօսքի մէջ երկու խո-

տորումն ալ կը բանեցընեն, իբր յարաբերականը և յարաբերեալը իրարու կը փոխեն իրենց հոլովքը. Գր. * Առաքելութիւն ուսուցանես 'ի մովսիսէ՝ որոց 'ի հեթանոսս ամ հրէայք են։ || (Գործ. իա. 21.) որ սովորական կանոնով պիտի ըսեր. ապըստամբութիւն ուսուցանես ամ հրէից որք 'ի հեթանոսս են։

Այս երկու կերպ խոտորումը շատ կայ Ածաշնչին, և ուրիշ հեղինակաց մէջ. որ քերականութեան առաջ գացողը պիտի նայի չիտակ ընտրել։

Կանոն Դ.

367. Թուոյ համաձայնութիւնը՝ բնական է որ ինչ թիւ է յարաբերեալը, այն թիւով դրուի յարաբերականն ալ, իբր եզական կամ յոգնական՝ երբ յարաբերեալը եզական է կամ յոգնական։ Եւ ասանկ կը պատահի շատ անգամ. ինչպէս վերի օրինակներով ալ կերևայ. տես զասոնք ալ. * Պաշտօնեայք՝ որովք հաւատացէք։ (Ա. Կորն. Գ. 5.) Յաւուրս Նոյի՝ յորս տապանն կազմէր։ || (Ա. Պետր. Գ. 20.) ուր յոգնակի կը դրուի որովք, յորս, վասն զի յոգնակի են յարաբերեալքն՝ պաշտօնեայք, յաւուրս։

Սակայն որ բառը անորոշ ըլլալով մէկի կամ շատի ըսելու, ազատութիւն մը եղեր է որ շատ տեղ յոգնական յարաբերեալին՝ եզակի կը դրուի յարաբերականը, մանաւանդ պազի հոլովքի, իբր ուղղականին, տրականին, հայցականին և գործիականին. նմանապէս երբոր յարաբերեալը է անուն անեզական, հաւաքական, կամ մէկ քանի եզական։ Աս ամէնը կերևնան վերը յիշած օրինակներով. նայէ աս ալ. * Մայր իմ և եղբայր իմ սոքա են՝ որ լսեն զբանն այ և առնեն. || (Ղուկ. Ը. 21.) հոս որը կը յարաբերէ երեք բառը, մայր, եղբայր, սոքա։ Ասանկ կըսուի * Ամենայն մարդիկ՝ որ ըմպեն։ Ամ ուրուք որոյ իցէ։ || Եւն։

Բայց ասանկ չըլլար երբոր յոգնական յարաբերեալը զօրութեամբ դրած է. զէրէ անանկ տեղ յարաբերականն ալ յոգնակի կը դրուի. տես Է կանոնին տակը. (361.) ինչպէս աս ալ. * Եղիցին

վկայ նորա առ ամ՛ մարդիկ՝ որոց տեսերն և լուար ։ (Գործ. իբ. 15.) զօրութիւն կիմացուի, վկայ այնոց՝ զորս տեսեր եւն ։

## Կանոն Է.

368. Ուր տեղ որ յարաբերականը է յատկացուցիչ, կամ խնդիր, կամ տէր բայի, միշտ անուանէն կամ բայէն առաջ կըդրուի, և ոչ երբէք ետեւը ։ Աստի չըսուիր, իմաստութիւն որոյ. նման որում. հեռի յորմէ. տեսեալ որոյ. տեսեալ զոր. զարմացեալ ընդ որ, եւն ։ Այլ ըսելու է. որոյ իմաստութիւն, յորմէ հեռի, որոյ կամ զոր տեսեալ եւն ։

Միայն պարզ նախադրութենց ետեւ կըդրուի. օր. վասն որոյ. առանց որոյ. առ որով, ըստ որում, զհետ որոյ ։

Երբոր նախադաս է անուան կամ ուրիշ հոլոված բառի մը, թէ նախդիր կամ նախադրութիւն մը ունինէ, կամ յարաբերականին վրայ կըդրուի, կամ յետադաս բառին, և կամ երկուքին ալ. մանաւանդ երբոր մէջ տեղը ուրիշ բառ ալ մտած ըլլայ ։ օր. * Յորոց դուռն 'ի խնդիր երթեալ էիր ։ (Ա. Թագաւ. Թ. 2.) Հոս որոցը յատկացուցիչ է խնդրելին, և նախդիրը երկուքին ալ դրած է. կրնայ ալ ըսել, յորոց խնդիր, կամ որոց 'ի խնդիր ։

Նաև կըսուի. * Որոց կեցոյց զորդին ։ յորոց ձեռս տայցին ։ յորոց շիջանելն ։ որոց 'ի խռովելն ։ որոց զալխանն ։ որոց ընդ հարսն ։ ընդ որոց ընդ գեղն ։ Որոց իբրև անցանիցէ՝ ոչ գոյ զհետն գտանել ։ զոր զհետ. եւն ։

## Կանոն Ը.

369. Շատ անգամ յարաբերականին հետ կըդրուի ուրիշ անուն մը կամ դերանուն մը, որ իբրև բացայայտիչ կըլլայ իրեն՝ համաձայն հոլովով, կամ թուով ալ ։ օր. * Առ որ մատուցեալ 'ի վէմ կենդանի ։ (Ա. պետ. Բ. 4.) Հոս նախդրիւ տրականը 'ի վէմ՝ աւելի դրած է, ու իբրև թէ կըբացայայտէ առ որը. ինչպէս թէ ըսէր. առ որ, այսինքն առ վէմն

կենդանի։ Ասանկ կըսուի. * Զոր տալոց ես գա-նանցական վրէժս. (զոր, այսինքն զվրէժս.) Յորոց մի՛ 'ի գիտնական խրատուց. (յորոց. այսինքն 'ի խրատուցն։) Առ որս ամենայն առ սոյն. (հոս դերանուն է. առ որ, այսինքն առ սոյն։) Տեղիդ յորում կաս դու 'է դմա. Զորոյ դուք չարախօսէքդ զդմանէ։ ||

370. Գործել. Յարաբերական որը կերպ կերպ գործածութիւն ունի սովորական կանոնաց դուրս։ Շատ տեղ կըդրուի զարդի տեղ, կամ խօսքին կարգը բերելու համար. ինչպէս Նարեկին մէջը ու շարականին կերևնայ։

Իրեն ուղղականը կըդրուի հայցականի տեղ, կամ բացառականի, կամ գործիականի. օր. * Տեսեալ զայն՝ որ յառաջն ուրանային։ || (Իմաստ. ժբ. 27.) փոխանակ, զոր։ * Որ 'ի սմանէն լեալս ոք առնելով. || (Պիտ. 29.) փոխանակ, զորս։ * Յաղգե-յայնմանէ՝ որ իրաւունք ոչ տարամերժեալ տրահեալ է 'ի նոցանէ։ || (Յոհ. կաթող.) փոխանակ յորմէ։ * Այնու որ պակաս դատար։ || (Սարգ. 107.) փոխանակ, որով։

Գործիական հոլովը երբեմն շաղկապի պէս կընշանակէ՝ որովհետև, փոխանակ զի. այսինքն չիւնքի. օր. * Որով 'ի սակաւուց հաւատարիմ եղեր, 'ի վերա բազմին կացուցից։ || (Յաճախ. 64։) որ ըսել է. չիւնքի քիչ բանին մէջ հաւատարիմ եղար նէ, շատին վրա դնեմ ձեզ։

371. Բանի մէջ կրկնելով, կընշանակէ՝ ոմն, ոմանք, իմն, մասն ինչ եւն։ օր. * Ժողովեցին որ շատ, և որ սակաւ։ || (Ել. ժզ. 17.) այսինքն ոմն շատ, ոմն սակաւ. աշխարհաբար ալ կըսենք, որը շատ, որը քիչ։ Ասանկ կըսուի. * Որ 'ի մահ, 'ի մահ. և որ 'ի սուր, 'ի սուր։ ||(Երեմ. ժե. 2.) այսինքն այնք որ 'ի մահ. եւն։ * Զոր 'ի տախտակս, և զոր յայլ ինչ կահս։ || (Գործ. իէ. 44.) այսինքն զոմանս տախտակօք, և զոմանս այլ կահօք.

# ՅՕԴՈՒԱԾ Ե.

## Դիմորոշ յօդ, ս, դ, ն ։

372. Ասոնց վրայ կարճ ծանօթութիւն մը տուինք առջի գրքին մէջ. (50) և կարգին կէօրէ ուրիշ տեղ ալ յիշեցինք. հոս մէկ քանի գիտնալիքը դընենք իրենց գործածութեան կողմանէ ։

Մեր լեզուին մէջ ասոնցմով կիմացընենք անձանց դէմքը, կամ ուրիշ բաներուն կարգը՝ մօտը, մէջինը, հեռուինը ։ Ուստի իրենց բուն ուժը կամ պաշտօնը աս է՝ որ երբոր խօսքի մէջ կըպակսի դերանուն մը, ասոնց մէկովը կիմացընենք. օր. դուն թագաւոր՝ ըսելու տեղը, կըսենք, Արքայդ, կամ թագաւորդ ։ Այս տեղի՝ ըսելուն, կըսենք, տեղիս ։ Այն որդի, կամ տուն ըսելուն, կըսենք՝ որդին, տունն ։ Ասանկ ալ, ես տեսանեմ, դու եկիր, նա սիրէ՝ ըսելու տեղ, կըսենք. տեսանեմս, եկիրդ, սիրէն ։

Ասկէց կըլլայ որ երբ ուրիշ անուն մը կըպակսի խօսքի մէջ, օր. կամ յատկացեալը, կամ գոյականը, կամ այլ անուն, դիմորոշ յօդ կըդնենք յատկացուցիչին վրայ, կամ ածականին. օր. * Կերպարանիմ զդաւթին. || կիմացընէ, զնմանութիւն դաւթի. կամ * Իմաստութիւն ասեմ ոչ զաշխարհիս, || կիմացուի, ոչ զիմաստութիւն այսր աշխարհի. կամ * Ծերութիւն պատուական՝ ոչ բազմաժամանակեայն է, || կիմացուի, ոչ ծերութիւն բազմաժամանակեայ. և այլ ասոնց պէս շատ ։

Սակայն առանց այս պատճառներուս ալ՝ սովորութիւն եղեր է շատ տեղ զարդի համար գործածել այս տառերը, որ բառէն ուժ մը կուտայ. միայն թէ ամէն բառի և ամէն տեղ չիդրուիր ։ Յատուկ նախադրութիւնը, շաղկապը, միջարկութիւնը, յարաբերական որը, և վերբերականքը ով, ո, ինչ, ոք, ոմն, իմն, ասոնք չեն առներ յօդ ։ Մնացած մասունք բանին՝ անունը, դերանունը, բայը և մակբայը կառնեն. հիմայ ծանուցանենք ինչ կերպով որ պէտք է բանեցընել ։

## Յօդուած Զ.

373. Գոյական անունը թէ՛ նախադաս ըլլայ, թէ՛ յետադաս, կրնայ վրան յօդ առնուլ. բայց աւելի շնորհքով կ'ըլլայ նախադասին դնել, թէ՛ գոյականը ըլլայ, թէ՛ ածականը կամ յատկացուցիչը կամ խնդիրը. ուստի ընդհանրապէս միշտ աղէկ է նախադասին վրայ դնել:

Ասանկ կըսուի. ՈՐԴԻՔ քո սիրելի. հոս Ք յօդը նախադաս գոյականին դրած է. նմանապէս կրնայ ըսուիլ, զսիրելի որդիք: ՃՇՄԱՐԻՏՔ երկրպագուք. հոս նախադաս ածականին դրած է. բայց կ'ըլլայ, Ճշմարիտ երկրպագուքն. Զսրբութեն օրէնս, հոս յատկացուցչին դրած է. կրնայ ալ, զսրբութեն օրէնսն: Զինչ իցէ 'ի մեռելոցն յառնել. հոս խնդրին դրած է, կ'ըլլայ ալ, 'ի մեռելոց յառնելն:

Երբոր գոյականը ունի ետևէն ցուցական կամ ստացական դերանուն մը, յօդը իր վրան կառնու սովորաբար: ( տես 352. 355. )

374. Յետադաս ածականին մինակ յօդ դնելը՝ քիչ տեղ կայ. օր. Արանց ԽՈՆԱՐՀԱՑԴ այցելիկ: Տէր ամենակալն: Բարերարն քեզն: Ասացի, մինակ ածականին, վասն զի երբոր նոյն յօդը կրկնուի գոյականին ալ, անժամանակը ածականին ալ կըդրուի ուր որ ըլլայ. նմանապէս յատկացեալը և յատկացուցիչը կրնան մէկ յօդ առնել, մանաւանդ երբ մէջերնին ուրիշ բառ մտնէ: օր. Զան զարդք մնեալք աւքեղ: Յարանցս յայսմանէ եկելոցս ընդ մեզ: Յանվարժից ձիոյն: Զանձինք զպարտականք մահու զանբուժելիք բեկութի: Յանդամոցս անարգացս. ևն:

Յոքնակի նախդրիւ հոլովքին՝ որ ս ունի, շատ անգամ դիմորոշ ս ալ կըդրուի, անոր համար որ եզական չըլլայ: օր. զմարիս մեծամեծս: զմեզս զայսոսիկ: զերիս թագաւորս: յերս յայս: 'ի հարսանիս: զՆորհաց որդիս: զայսպիսիս. ևն:

## Յօդուած Է.

375. Լական դերանուանք որ դնեմք, ինչ հոլով

կամ թիւ ըլլան, կառնուն իրեք յօդն ալ. որ. եսս, եսդ, եսն. մեքս, մեքն, զմեւքդ. ինձն. ինևս. զինս։ կամ, դուդ. դուն. դուքդ. քեզն. ձեզդ. ձեզս. ևն։ Նմանապէս կըսուի, ինքնս, ինքնդ. բայց չըլլար, դուս, դուքս։ Իսկ էականը իւր, կառնու միայն ն յօդը. որ. իւրն, իւրեն, կամ զիւրեաւն. բայց իբրև ստացական՝ իրեք յօդն ալ կառնու։ (տես 357.) Այս էականքը, նմանապէս ցուցականքը, երբոր քովերնին ունին բացայայտիչ կամ ածական անուն մը, անոր վրա կըդրուի յօդը. որ. Առ քեզ իշխանդ. մեզ վկայիցս. ձեզ հաւատացելոցդ. ես հովիւս. դուքս ոչխարքդ. օտարս ես. ևն։

Ական ցուցականքը՝ սա, դա, նա, կառնուն միայն իրենց արմատ յօդը, մէջ տեղն ալ յ դիր. այսպէս, սայս, դայդ, նայն. որ. Ո՛ր դայդ մարդա-բեանայ։ Ո՛ր նայն առնէ։ Ո՛ր դորայդ անօրի-նէն։ Ասանկ կըսուի. նմայն, ՚ի նմանէն, զնովայն, նորայն. ընդ նոսայն. ևն։

Ցուցականքը այս, այդ, այն, մինակ կամ գոյակա-նի հետ յօդ չեն ուզեր. և քիչ տեղ կայ յօդով. որ * Որ զայսն կամին։ (Բ. պետ. Գ. 5.) ուրիշ տեղ ալ կըսուի, այսս ազօթից։ Պէտք ըլլայ նէ, իր գոյականին կըդրուի։ (տես 352.)

Մէկալ ցուցականաց վրա, սոյն, դոյն, խօսերէնք վերը. (344) ուր կերևայ՝ որ մինակ եղած ատե-նը կրնան յօդ ունենալ. բայց գոյականի հետ, կամ ընդ դերանուան հետ՝ անոնց կըդրուի յօդը. Նմա-նապէս ստացականաց, մեր, մերայէն և այլն, խօսե-ցանք։ (356)

## Ծանօթութիւն Դ.

376. Բայից կողմանէ, հրամայական եղանակը միայն յօդ չառներ, այլ մնացած եղանակ, ժամա-նակ, դէմ և թիւ կրնան իրեք յօդն ալ առնել։

Երբոր բայէն առաջ յարաբերական որ կայ, յօդը միշտ բային վրա կըդրուի. որ. զոր ընտրեացդ. զոր խորհեցայս. որ գթայն. զոր ուտէն. որ կամս, որ կամդ. որ կամն. որ ասիդ. որ ասէդ. որ խօսիմս. որ խօսիդ. որ խօսինս. զոր գրեցիդ. որ հարկանե-

լոյն էին. որ հզօրացեալն է. որ արբեալք էք. զոր ընթեռնուցուքդ. զոր տեսանիցէքն. եւն։

377. Որ տեղ որ բայէն առաջ անուն մը կամ դերանուն կայ իբրեւ տէր կամ խնդիր բային, նմանապէս ընդունելութի մը կայ դիմաւոր բայէն առաջ, գրեթէ միշտ յօդը անոնց վրա կդրուի, եւ ոչ ետեւի բային. զր. մինչ յարդն տային. (փխ զյարդ.) Որ յաւիտենիցն եմ։ Որ ընդ աջմէն իցեն։ Որ ամուլն կոչեցեալ էր։ Որ 'ի բանտն տայի։ Որ 'ի մէջ նոցայն մեռաւ։ Որ զհետն երթային։ Որ զկնիդ գայ։ Ընդ որում եւ համարձակեալք խօսիմ։

Բայց ասանկները երբոր շարքը փոխեն, նախադասին կդրուի յօդը. ուստի կըսուի, որ կոչեցեալն էր ամուլ. որ իցենն ընդ աջմէ. եւն։ Ասանկ. Որ յիմն մեղանչէն. որ առեալն զիս։ Մինչ էաքն մարմնով. որ օրինօքն էին. մեռեալն էիք. ուր էաքն ժողովեալ։

Ընդունելութիւնը անցեալ կամ ապառնի՝ երբոր իբրեւ անուն վարին նէ, յօդ կառնեն ուրիշ ածականաց պէս. զր. կոչեցեալն. զհեռացեալքս. աշխատեալք. գալոցդ. զխափանելեացս. եւն. Նմանապէս իբրեւ բայ ուրիշ դիմաւոր բայի առջեւ՝ յօդ կունենան. ինչպէս վերի օրինակները կըցուցանեն. ասանկ կըսուի, զոր խօսեալն էր. որ եկեալն էր։

Բայց մինակ առանց դիմաւորի յօդ չառներ. վասն զի ան ատենը բայի նշանակութիւնը կըկորսնցընէ, անուն կըլլայ։

## Ծանօթութիւն Է.

378. Մակբայը երբոր դիմաւոր կամ աներեւոյթ բայէ առաջ է, կառնէ յօդ, ու շնորհքով ալ կըլլայ. զր. Ո՛ր յանդիմանն տեսի։ Որ մօտաւորն ծառայեաց։ Այժմդ տեսանէ. այժմն կեամ։ Կանխաւն առէք։ Այնպէսն գնայցեն։ Յաճախն ընծեռել. 'ի շատն մատուցանել. յառաւելն ողորմել, եւն։ Ասանկ բացասական ոչ կամ չ մակբայը կառնէ ն, դ. զր. Որ ոչն ունիցի. որ ոչդ երկնէիր. որ չեւդ էք սրբեալ։

Բայց ետև որ դրած են բայէն՝ չըլլար ըսել, ծառայեաց մոտադիւրն. կեամ այժմս. կամ թէ ան֊ցեալ ընդունելութեան հետ չըլլիր, կանխաւն ասա֊ցեալ. այնպէսմն գնացեալ ։

Այսքան գլխաւոր տեղեկանալիքը միտք որ առ֊նէ աշակերտը, մնացածը ինքիրեն կրնայ քննել իմանալ ։

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.

### Բայի բաղդատութեան վրայ ։

Բայը երկու կերպով կըբաղդատի անուան և ուրիշ հոլովելու մասանց հետը. մէկմը՝ իբրև իրեն տէր. մէկմալ՝ իբրև իրեն խնդիր ։ (263) Ասոնց վրա զատ զատ խօսելու է ։

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### Տէր բային ։

Ըսացինք իւր տեղն (268) թէ տէր կամ անուն բայի՝ կիմացվի ներգործութեան ընօղը կամ կրօղը ։ Ասոր համաձայնութիւնը բային հետ՝ կըմտածվի մէկմը թէ ինչ հոլով պիտի ըլլայ. երկրորդ՝ ինչ թիւ. երրորդ՝ ինչ դէմ պիտի դրվի ։

### Կանոն Ա.

379. Դիմաւոր բային տէրը պիտի ըլլայ ուղղա֊կան հոլով ։

Այս կանոնը բնական և յայտնի է. միայն կարգի համար մէկ երկու օրինակ դնենք. * Խորհուրդք թիւրք անջատեն յԱյ ։ ‖ (Իմաստ. ա. 3.) հօս ներ֊գործական բայը անջատեն՝ ունի իրեն տէր՝ ուղղա֊կանը խորհուրդք. անոր ածական է թիւրք. բացառա֊կանը յԱյ, խնդիր բային ։

Նմանկ է. * Անունս մեր մոռասցի ժամանա֊կաւ ։ ‖ (անդ. բ. 4.) հօս կրաւորական է մոռասցի, որ մոռացեալ լիցի, մոռցըվի. ուղղականը՝ անունս

տէր է. ծառայական՝ խնդիր ։ Ասանկ գիտելու է այլ խօսքերն ալ որ վերը վարը դրած են ։

Գիտելի. Միջ տեղ կայ որ սահմանական դիմաւոր բայի սեռական հոլովով դրվի տէրը. զր. * Այլ մեր 'ի մերոց սատի խօսիմք ընդ նմա ։ || (Յոսոր. ժամ. 69. ձեռ.) փոխանակ, մեք խօսիմք ։

* Լուսաւորաց որ յերկինս՝ յորժամ տեսին զտէրն իւրեանց՝ 'ի խաչին ձաղեալ բասրանօք, զարհուրեցան յոյժ ։ || (Շնորհ. մեկն, բարձր.) փոխանակ, լուսաւորքն զարհուրեցան ։ Ասանք դրինք հասկընալու համար, ոչ թէ հետեւելու ։

## Կանոն Է.

380. Առանց դէմքի բայը, ինչպէս աներեւոյթ եղանակը եւ անցեալ ընդունելութիւնը, շատ անգամ ուղղականի տեղ՝ սեռական տէր բայի կառնեն ։

Ասանկ անդէմ բայերու ուղղական ալ կընդրվի. ինչպէս աներեւութին. * Մի՛ եւս լինել 'ի նմա բնակել 'ի մարդոյ մինչեւ ցանասուն ։ || (Երեմ. ծա. 62.) հոս բնակելը տէր է լինել աներեւութին ։ Նմանապէս անցեալ ընդունելութեան. * Ծառայք հանդերձ տերամբք տանջեալ, եւ տեարք թագաւորաւն զնոյն չարչարեալ ։ || (Իմաստ. ժը. 11։) հոս ուղղականքը, ծառայք, տեարք, են տէր ընդունելութեցը՝ տանջեալ, չարչարեալ ։

381. Բայց աւելի սեռական հոլով տէր բային անուշ է, մանաւանդ աներեւոյթ եղանակին, անանկ շատ կըլլանի. զր. աներեւութին. * Մինչեւ բազմաց իսկ ասել թէ մեռաւ. || (Մարկ. թ. 25.) հոս սեռականը բազմաց՝ տէր է աներեւութին ասել ։

Ասանկ. * Բանալ երկնից, եւ իջանել հոգւոյն սրբոյ, եւ գալ ձայն յերկնից ։ || (Ղուկ. գ. 21. 22.) հոս երկու հոլովն ալ կերեւայ, առջինը ուղղական, ետքի երկուքը սեռական ։

Ընդունելութեան օրինակ. * Տեսեալ արդարոց՝ ծիծաղեցան. անարատն՝ եւ արհամարհեաց ։ || (Յոբ. իբ. 19.) հոս սեռականքը արդարոց, անարատն, տէր են տեսեալ ընդունելութեանը, որ առջինին զօրութիւն կիմացվի ։

Ասանկ գրած է. * Ո՛վ որ առեալ անչափագեղոյն և փառաւորութեան որին վայելչական։ (Խոր. Ա. 8.) Հոս ընդունելութիւնը առեալ՝ երկու հոլովն ալ ունի, այսինքն երկու ածականը՝ սեռական, իսկ գոյականը՝ ժողովր-դեան քովի ածականովը՝ ուղղական։ (տես 273.)

Կըլլայ որ անցեալ ընդունելութիւնը ունենալով քովը ուրիշ դիմաւոր բայ մը, տակաւին սեռական կըդրուի տէրը. օր. * Ո՛ չարն՝ չար ասէ՝ որոց զնոյն առաջեալ ունէին. (Առակ. Ժ. 14.) Հոս որոց սեռա-կանը՝ տէր է երկու բային ալ. որ հասարակ կա-նոնով պիտի ըլլար, որ զնոյն առաջեալ ունէին։ Ասանկ է. * Զորմէ բոլոր երբեմնեբրայն խուսափեալ փախչին. (Պիտ. 209.) փոխանակ, բոլոր բարե-ւերքն։

382. Դիտողութիւն. Գործածութեան կողմանէ ասանկ որոշելու է, որ անցեալ ընդունելութիւնը շատ տեղ կառնէ տէր ուղղական հոլովով ալ, սեռականով ալ։ Իսկ աներևոյթ եղանակը՝ երբոր գործիական հոլոված է, օր. գործելով, խօսելով, ծանրանալով, լինելով ևլն. կառնէ համարձակ ուղղական տէր. բայց իր ուղղականը, կամ նախդրիւը քիչ տեղ ուղ-ղական տէր կունենայ. ուստի անուշ չիգար ըսել, լսել ինձ. գործել պետրոս. գնալ յորդին. լինել տուն. նմանապէս շնորհքով չըլլար, 'ի լսել ինձ. 'ի գործել պետրոս. ևլն. այլ ըսելու է. լսել կամ 'ի լսել իմ, գործել կամ 'ի գործել պետրոսի։ Ասանկ սովորաբար կըսենք, 'ի ծնանելն յսի. 'ի ծագել արեւու. 'ի կա-տարել աւուրցն. 'ի լինել ընթրեաց. ևլն։

383. Աս ալ գիտնալու է որ երբոր տէրը աներ-ևոյթ բային մէկ անուն մընէ, միշտ սեռական կը-դրուի. նմանապէս երբոր աներևոյթը հոլոված է սեռական կամ գործիական, իր տէրը անուն ըլլայ, դերանուն ըլլայ, սեռական կըդրուի. օր. իջանե-լով քո, տեսանելոյ կամ տեսանելով նորա. երթա-լով իմ. 'ի յանցանել պետրոսի. 'ի գործել որդւոյ. և այլն։

Բայց երբոր աներևոյթը ուղղական է կամ նախ-դրիւ հոլոված, և իրեն տէրը դերանուն մընէ, միշտ ուղղական հոլով կըդրուի. ուստի կըսուի. Անյա-

նել ինձ կամ նմա . 'ի գալն ձեզ . ըմբռնել նմա . 'ի դառնալ ձեզ . բնակել ինձ . տեսանել ինձ ։

## Կանոն Գ.

384. Որոշեալ անցեալ ընդունելութիւնը կանէ սեռական տէր բայի, կըլլայ որ երբեմն եզական բայով կըձեւանայ յարակատար և գերակատար ժամանակ, (205) եզակի երրորդ դէմը կունենայ սեռական տէր բայի ամէն դէմք, ու ամէն թիւ . այսինքն բայը կդրուի երրորդ դէմ եզակի, իսկ տէր բային կըլլայ առջի և երկրորդ դէմքն ալ, եզական ալ, յոգնական ալ ։

Ասանկ կըսուի . տեսեալ է իմ, տեսեալ է քո, տեսեալ է նորա ։ տեսեալ է մեր, ձեր, նոցա ։ տեսեալ էր իմ, քո, նորա . մեր, ձեր, նոցա . օր. * Ոչ գիտէր յակոբ թէ ռաքէլայ կնոջ իւրոյ գողացեալ էր զնոսա .|| (Ծնընդ. լա. 32.) հոս եզակի սեռական երրորդ դէմքի է տէրը՝ ռաքէլայ . որ կրնար ըսել . ռաքէլ գողացեալ էր ։

* Որոց զմանկունսն իւրեանց թլփատեալ էր .|| (ա. մակ. ա. 63.) հոս յոգնակի սեռական է տէրը . որ ուղղական չէր ըսուէր՝ որք թլփատեալ էր, այլ՝ թլփատեալ էին ։

* Զայն այր և տեսեալ չէր մեր .|| (բ. մակ. ժբ. 32.) այսինքն ոչ տեսեալ է մեր . որ պիտի ըսուէր, ոչ եմք տեսեալ մեք ։

Ասանկ կըսուի . * Մինչչև կարդացեալ իցէ նոցա . (եսայ. կե. 24.) մինչչև ձեր խնդրեալ ինչ իցէ 'ի նմանէ ։|| (մատթ. զ. 8.) հոս երկուքին ալ բայը եզական երրորդ դէմ, իսկ իրենց տէրը յոգնակի՝ մէկը երրորդ դէմ, մէկալը՝ երկրորդ ։

385. Ասացինք թէ այս սովորութիւնը՝ որ յատուկ է հայոց լեզուին, կըլլայ երբեմն բայը եզակի երրորդ դէմ է . բայց կայ մէկ քանի տեղ որ յոգնականի ալ, երկրորդ դէմքի ալ սեռական տէր առուած է . օր. * Որոց որդւոց իւրեանց բարւոք վերակացու լեալ իցեն .|| (ա. տիմ. գ. 12.) կամ . * Որոց զկռապաշտութիւն յանձինս ընկալեալ իցեն .|| (Ագաթ. 227.) որ հասարակ կանոնի կէօրէ ըսելու էր, որոց

լեալ իցէ, ընկալեալ իցէ · կամ, որք լեալ իցեն, ընկալեալ իցեն ։

Դարձեալ · * Մինչեւ քո խօսեցեալ իցէ · ‖ (Մանդակ · ճառ Գ ·) փոխանակ ըսելու, քո խօսեցեալ իցէ, կամ դու խօսեցեալ իցես ։

## Կանոն Գ ·

386 · Հայցական հոլովը չըլլար տէր բայի ։

Այս կանոնը հասարակ է ամմէն լեզուի · թէ որ մէկ քանի տեղ դրած կայ հայցական՝ յայտնի տէր բայի, կանոնէ դուրս է ։ Բայց ամմէն տեղ անանկ սեպելու չէ · վասն զի կայ տեղ որ հայցականը չէ թէ քովի բային տէր է, այլ խնդիր հեռու եղած բային · օր · * Զոր իբրեւ լուաւ հանեալ 'ի ցամաքն ։‖ (մատթ · ժԴ · 47 ·) հոս անանկ կերեւայ թէ զորը՝ տէր է լուաւին · անիկայ խնդիր է հանեալին · (տես եւ 423 ·)

Կայ տեղ որ տէր բային զօրութիւն ըլլալով, հայցականը տէր բայի կըկարծըւի · օր · * Եդ 'ի գերեզմանի՝ զոր էր փորեալ 'ի վիմէ ։‖ (մարկ · ժԵ · 46 ·) այսինքն զոր Յովսէփ արեւմաթացին փորեալ էր ։

387 · Երբեմն տեղեր ալ կերեւնայ թէ հայցական անունը տէր է կրաւորական բայի մը · բայց հոն ներգործականի նշանակութիւն ունի · օր · * 'Ի տասանորդէ զմաքս ձեզ թողեա՛լ լիցի . . . զքաղաքն պտողոմայեցւոց տուեա՛լ լիցին նոցա պարգեւ ։‖ (Ա · մակ · Ժ · 31 · 39 ·) ուր ըսել է, զմաքս թողումք, զքաղաքն տամք ։ (տես եւ 195 ·)

Վերջապէս, կայ մէկ եղանակ մը՝ աւելի հոռոմի ոճով, որ կրաւորական ընդունելութեն, եւ աներեւոյթ եղանակին՝ մանաւանդ էական բային՝ տէր բայի սեռական դնելու տեղը՝ հայցական կըդնեն, անոր համար որ անանկ տեղ ներգործական բայ մը կայ յայտնի կամ ծածուկ · օր · * Գուցէ կարծիս ինչ տացէ թագաւորին՝ իբրեւ դաւով ինչ 'ի նմանէ կամ 'ի հրէից անտի զայրն վնասեալ ·‖ (Բ · մակ · Գ · 32 ·) հոս վնասեալը կրաւորական ընդունելութիւն է, ու պիտի ըսեր՝ առնն վնասեալ · բայց որովհետեւ ըսելը՝ կարծիս տացէ թագաւորին, կիմացուի ներգործական՝

կարծեցէ թագաւորն, անոր համար հայցական կրէ, կարծեցէ զայրն փախստեալ 'ի հրէից:

Նմանն է. *Յանձն առաք և զայս ազգ առանց խռովութեան լինել.‖ (Բ. Մակ. ԺԴ. 25.) փոխանակ ըսելու, այսր ազգի լինել. բայց զայս ազգ դրաւ որ կ'իմացուի, յանձն առաք զայս ազգ՝ զի լինիցի առանց խռովութեան:

Այսքան տարբեր կերպը ծանուցինք որ՝ ուսանողը կարենայ ընտրել թէ հայցական անունը ինչ մտքով դրած է:

## Կանոն Է.

388. Գլխաւոր բային տէրը սովորաբար կը համաձայնի թւով. այսինքն եզական կըլլայ՝ երբոր բայը եզական է, կամ յոգնական՝ երբոր բայը յոգնական է:

Կանոնըս ինք իրմէն յայտնի է. մէկ օրինակ մը դնենք կարգի համար. *Ընդարձակ է դուռնն, և համարձակ ճանապարհն՝ որ տանի 'ի կորուստ. և բազումք են որ մտանեն ընդ նա:‖ (Մատթ. Է. 13:) առջի մասին եզական է տէրը, դուռն, ճանապարհն, որ, և բայերն ալ՝ է, տանի, եզական. երկրորդ մասին՝ բազումք յոգնական է. բայն ալ՝ են, մտանեն յոգնական: Ասացի, գլխաւոր բային կը համաձայնի. վասն զի անդէմ բայը, այսինքն անցեալ ընդունելութիւնը և աներևոյթը ինքիրեն թիւ չունի, ուստի անոնց տէր բայի կըլլայ եզական ալ, յոգնական ալ: (տես կան. Բ. Դ.)

Բայց մէկ քանի դիտելիք կան այս կանոնիս վրայ:

389. Դիտողութիւն ա. Երբոր մէկ քանի եզական անուն շաղկապով կապած՝ կըլլան մէկ բայի մը տէր, սովորաբար բայը յոգնական կը դրուի. բայց եզական ալ կը դրուի՝ թէև բոլոր անվանց մէջը յոգնական ալ գտուի: Օր. *Ատելի են Այ՝ ամպարշտեալն և ամպարշտութիւն իւր. զի գործն և գործիչն առհասարակ տանջեսցին:‖ (Իմաստ. ԺԴ. 9, 10.) հոս երկու մասին ալ բայը յոգնական է: Դարձեալ. *Եղև նորա ոչխար, և արջառ յոյժ, ծառայք և աղախնայք:‖ (Ծննդ. Լ. 43.) հոս բայը եզական է,

թէև վերջի երկու անունը յոգնական է. իսկ վարը (լը. 4.) բայը յոգնական դրած է. եզէն իմ արջառ և ոչխար ։

390. Դիտելիք ե. Անուն մը որ ձայնը եզական է, բայց նշանակութիւնը շատի է, իրեն բայն ալ հեմ եզական, հեմ յոգնական կրնայ ըլլալ ։ Ասանկ բացարձակ թուականքը՝ երկու, երեք, հինգ ևն, նմանապէս հանրականը, հաւաքականը, մասնականն ալ, տեղ մը եզական բայի հետ կըլլան, տեղ մը յոգնականի, երբեմն մէկ խօսքի մէջ ալ կըհանդիպի. օր. * Հինգն 'ի նոցանէ յիմարք էին. (մատթ. իե. 2.) հոս բայը յոգնական ։ * Հինգ ձագ երկուց դանգաց վաճառի. ‖ հոս բայը եզական ։ (Ղուկ. ժբ. 6 ։)

* Եւ ժողովեցան առ նոսա այր ամենայն՝ որ ապստամբ եղեալ էր յօրինաց անտի ։ ‖ հոս հանրականին բայը առաջ յոգնական դրած է, ետքը եզական ։ (Ա. մակ. ա. 55 ։) Ասանկ դարձեալ. * Գումարեցաւ այր եփրեմի, և կալան իւրեանց զանցս ջրոյն ։ ‖ (դատաւ. է. 24 ։) Դարձեալ հոն. (բ. 10.) * Յարեաւ այլ ազգ՝ որ ոչ ճանաչէին զտէր ։ ‖

* Եւ ժողովուրդն ակն ունէր զաքարիայ, և զարմանայր ընդ յամելն նորա ։ ‖ (Ղուկ. ա. 21.)

* Զի մի լուիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ ։ . . . Ասէ իւրաքանչիւր ցեղբայր իւր ։ ‖ (Ծննդ. ժա. 7. լբ. 21 ։)

* Եկն միաբան բազմութիւնն և խռովեցաւ, զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօսել նոցա ։ ‖ (գործ. բ. 6 ։)

391. Դիտելիք զ. Անեզական անուանք, կամ անոնք որ աւելի յոգնական կըբանին, աւելի յոգնական բայի տէր կըլլան, մանաւանդ Աստուածաշունչի մէջը. բայց շատ տեղ եզականի ալ կըլլան, և մէկ խօսքի մէջ ալ ։ օր. * Թուլացեալ լինէր 'ի մէնջ ձեռք մեր ակամայ ։ ‖ (Ա. մակ. ժգ. 39 ։) Դարձեալ. * Զամենայն հարուածս որ են 'ի քեզ. որ յառաջագոյն բերեալ 'ի հանուր քում. . . թէ և 'ի քեզ եկեսցէ ։ ‖ (բ. օրին. ա. 5. 9 ։)

392. Դիտելիք է. Վերի դրած իրեք գիտելիքը՝ սովորական կանոնի դէմ չեն. բայց կայ կանոնէ

խոստորում որ եզական բայի յոգնական տէր տըված է, որ Աստուածաշունչի մէջ ալ կերևայ. Նմանապէս կայ ուրիշ գրեանց մէջ աւելի՝ որ յոգնական բայի եզական տէր դրած է ։ Որ. * Ազդ եղեն Ռեբեկայ բանքն Եսաւայ ։ ‖ ( Ծննդ. ԻԷ. 42. ) բայը եզական, տէրը յոգնական ։ Ասանկ. * Ամենայն զօրք նորա զերծան 'ի նմանէ . . . Անկան 'ի կողմանցն Նիկանովրայ իբրև արք հինգհարիւր . ‖ ( Ա. Մակ. Է. 11, Է. 32 ։ )

Ասոր ներհակը. * Այլ յաղթական էին համայնից քոյդ հրաշագործութիւնք . ‖ ( Նար. ՀԴ. 3. ) հոս բայը յոգնական, տէրը եզական ։ Ասանկ. * Յորժամ պատուէրանապահութիւնն 'ի ներքս մտին ։ (Սարգ. 210 ։)

Կանոն Զ.

393. Դիմաւոր բայը երբոր մէկ անուն կամ դերանուն մը ունի իրեն տէր, կը համաձայնի նմա դէմքով. այսինքն տէրը ինչ դէմք է նէ, բայն ալ ան դէմքով կը դրուի ։

Յայտնի է, բայց մէկ օրինակով իրեք դէմքն ալ ցուցանենք. * Ես ընտրեցի զձեզ և եդի զձեզ, զի դուք երթայցէք և պտղաբերք լինիցիք, և պտուղն ձեր կացցէ ։ ‖ ( Յովհ. ԺԵ. 16 ։ )

Երբոր մէկ խօսքի մէջ այլևայլ դէմքի անուն կայ, և բայը մէկ մինէ, ան ժամանակը բային դէմքը կը հետևի կամ մօտիկ անվանը, կամ գլխաւոր դէմքին ։ Որ. * Կշտամբեսցէ զքեզ քո բերան՝ և ոչ ես ։ ‖ ( Յոբ. ԺԵ. 6. ) Հոս բայը երրորդ դէմք դրած է, զերե քովի անունը՝ քո բերան երրորդ դէմքի է ։ Ասանկ է. * Այլ թէ դու, կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ ։ ‖ ( Գաղատ. Ա. 8. ) Հոս ալ բայը կը հետևի քովինին՝ հրեշտակ. Դարձեալ. * Վաղիւ դու և որդիք քո ընդ քեզ անկցին ։ ‖ ( Ա. Թագ. ԻԸ. 19 ։ ) ուր երրորդ դէմ անկցին՝ կը հետևի որդիքին, և ոչ դուին ։

Մէկալ կերպն ալ. * Դու և որդիքդ պատուեսջիք ։ ‖ ( Ա. Մակ. Բ. 18. ) Հոս բայը պատուեսջիք՝ հետևեցաւ ոչ երրորդ դէմքին որդիք, այլ դուին, որ գլխաւոր է քան զերրորդ դէմքը ։ Ասանկ է.

* Յորժամ դու և նա միայն էիք ։ ‖ (մատթ. ժը. 15.) բայը էիք՝ հետևեցաւ հեռու եղած դուին, և ոչ քովի նային ։

## Ծանօթութիւն.

394. Գործածութեան կողմանէ այլևայլ կերպ ունին բայը, և իրենն տէրը ։

Նախ. Կայ տեղ որ տէր բային զօրութիւն դրած է. բայց կիմացուի բային դէմքէն, կամ բանին կարգէն. որ * Տուք, և տացի ձեզ. ‖ հոս տէր չիկայ. բայց դէմքէն կիմացուի, դուք տուք, և այն կամ ֆոխանցէնն տացի ձեզ։ Բայց երբ որ անցեալ ժամանակի բայ ըլլայ՝ երրորդ դէմ եզական, որ վերը յիշեցինք, (384) կրնայ կրաւորական երևնար բայը, և անով տէրն ալ չփոխել. ասանկ տեղ քովի խնդիրէն և բանին կարգէն որոշելու է. որ. * Ոչ յերկիր ուրուք մտեալ եմք, և ոչ 'ի բաժին յուրուք տարապարտուց յեան բռնութեամբ տիրեալ է. ‖ (ա. մակ. ժե. 33.) հոս տիրեալ է բայը չունի տէր, կրնայ մէկը կրաւորական կարծել, կամ երրորդ դէմքի վրա, մնեալ է նա ։ Բայց ներգործական ըլլալը յայտնի է աննախնդիր հայցականէն՝ յեան. և առջի դէմքի ըլլալը կիմացուի մէկալ բայէն, մտեալ եմք. ասով իրենն տէրն ալ կիմացուի թէ ձեռն տիրեալ է մեր ։

Այս կերպը շատ տեղ կայ. ինչպէս * Ոչ թէ արդէն առեալ իցէ, կամ արդէն կատարեալ իցեմ. . . . զառ 'ի յետոյսն մոռացեալ է, և 'ի յառաջադէմսն նկրտեալ եմ։ ‖ ( փիլիպ. գ. 12. 13.) հոս առջի դէմքի ըլլալը կիմացուի մէկալ բայերէն. կատարեալ իցեմ, նկրտեալ եմ. ուստի ըսել է, առեալ իցէ եմ. մոռացեալ է եմ ։

395. Երկրորդ. Կայ տեղ որ բայը զօրութիւն թողած է, որովհետև կամ վերի բայը կիմացուի, և կամ բանին մտքէն կըհասկըցուի, մանաւանդ էական բայը ։ որ. * Մեք կաւ, և դու ստեղծիչ մեր. ‖ (եսայ. կդ. 8.) հոս էական բայը թողած է. որ մեք կաւ եմք, և դու ստեղծիչ մեր ես ։

396. Երրորդ. Տեղ մ'ալ կայ որ՝ բայն ալ, իրեն

տէրն ալ զօրութիւն թողած է. օր. * Այսօր մաքուր հագեկիր, և վաղը մոլի խելագար. ‖ (Նար. Հտ. 3.) ուր կիմացվի. այսօր ես եմ մաքուր, վաղը ըլլեմ ես մոլի:

397. Չորրորդ. Կայ տեղ ալ որ դերանուն տէր բային աւելորդ կըկրկնեն, որու նմանը վերն ալ յիշեցինք. (353) օր. * Մեք անպակաս յամ ժամանակի . . . յիշեմք զքեզ: ‖ (Ա. մակ. ժբ. 11:) Նմանապէս * Դուք որ եկիք իմ . . . նստջիք և դուք յերկոտասան աթոռ: ‖ (Մատթ. ժթ. 28:)

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ԽՆԴԻՐ ԲԱՅԻ:

398. Բայը բաց ընողին կամ ըլլողին՝ որ կըսվի տէր բայի, կունենայ քովը ուրիշ հոլովելի բառ մըն ալ, որ կըսվի խնդիր բայի: (267)

Երկու կերպ խնդիր կայ, այն է ուղիղ, և թեքեալ: Առջինը կիմացվի այն հոլովեալ բառը՝ որ բայերը իրենց հասարակ նշանակութեան կեօրէ կուզեն. ուստի կըսվի ուղիղ, այն է ալէսէվլիէ իրեն սօյինը: Երկրորդը կըսվի թեքեալ, որ իւրաքանչիւր բայ իր մասնաւոր բնական նշանակութեն կեօրէ կուզէ, մէր աս հոլով, մէր ան հոլով:

Չեզոք բայերը ունին միայն խնդիր թեքութեն, որ իւրաքանչիւրը իր նշանակութեն կեօրէ այլևայլ հոլով կուզէ:

Ներգործական և կրաւորական բայերը կունենան երկու խնդիրն ալ: Առաջ դնենք սեռի խնդրին կանոնը:

### Կանոն Ա.

399. Ներգործական բայը իրեն սեռի խնդիր կառնէ հայցական հոլով:

### Կանոն Բ.

Կրաւորական բայը սեռի խնդիր կուզէ բացառական հոլով:

Երկու կանոնն ալ քովէքով դրինք, որ մէկ օրինակով մը բացատրենք. զր. * Զի նա ետ ինձ զանվրէպ գիտութիւն զեղելոցս ։ ‖ (Իմաստ. Է. 17.) հոս ներգործական բայ է ԵՏ. (175) ՆԱ, իր տէրը. ԶԳԻՏՈՒԹԻՒՆ հայցականը՝ իր սեռի խնդիր. որուն զ նախդիրը ածականին վրայ դրուած է՝ ԶԱՆՎՐԷՊ. (308) տրականը ԻՆՁ, բնութեան խնդիր է. իսկ ԶԵՂԵԼՈՑՍ, կամ պատմական հոլով խնդիր է ԳԻՏՈՒԹԵԱՆՆ. (284. 414.) կամ անոր յատկացուցիչն է՝ զ նախդիրը վրան ։ (281)

Կրաւորականին ալ օրինակ. * Զի 'ի տեառնէ տուաւ ձեզ հարստութիւն ։ ‖ (Իմաստ. Զ. 4.) հոս ՏՈՒԱՒ, կրաւորական է. իր տէրը՝ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ. բացառականը՝ 'Ի ՏԵԱՌՆԷ, սեռի խնդիր. տրականը ՁԵԶ, բնութեան խնդիր ։

Այս օրինակով իմացուեցաւ որ ներգործական բային եւ կրաւորականին՝ սեռի խնդիրը միայն տարբեր հոլովք կըլլայ, այսինքն առջինին՝ հայցական, ետքինին՝ բացառական. բայց բնութեան խնդիրը՝ երկուքին ալ մէկ հոլով կըլլայ ։

Սեռի խնդրին օրինակ ըլլան ասոնք ալ. * Ճանաչեմ զԻՄՍ, եւ ճանաչիմ յԻՄՈՑՍ ։ ‖ (Յովհ. Ժ. 14։) * Սիրեսցեն նախ զԱՐԲԵՑՈՒԹԻՒՆ (այսինքն զգինի) եւ սիրեսցին 'ի ՆՄԱՆԷ ։ ‖ (Ագաթ. 271։) * Պատուեմք զՀԱՅՐՆ մեր, եւ պատուիմք 'ի ՆՄԱՆԷ ։ ‖ (Սարգ. 681։) * Հայհոյեն զՏԷՐ, յաղագս այսորիկ եւ 'ի ՆՄԻՆ հայհոյեսցին ։ ‖ (Լամբ. Ատեն. 37։)

Հիմայ երկու կանոնին վրայ մէկ քանի դիտելիք դնենք ։

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ Ա ԿԱՆՈՆԻՆ.

400. ԱՌԱՋԻՆ. Ներգործականին հայցական խնդիրը շատ անգամ զօրութեամբ կիմացուի. զր. * Եթէ տկարանամք, ԶՕՐԱՑՈՒՑԱՆԷ. ‖ (Նար. Ծա. 2.) զօրութեամբ կիմացուի, ԶՄԵԶ ։

ԵՐԿՐՈՐԴ. Հայցականը շատ տեղ առանց ԶԻՆ կըդրուի, եւ յոգնականը ՍԻՆ տեղ ՔՆ կըպահէ. ասոնց ինչպէս ըլլալը խօսեցինք առաջ ։ (120. 113.)

401. ԵՐՐՈՐԴ. Կան ներգործական բայեր՝ որ

իրենց հասարակ հայցականէն զատ ունին ուրիշ հայցական ալ, որ նշանակութիւնը ուղղականի է, կամ տրականի, կամ գործիականի։ Այսանկ են անուանեմ, առնեմ, կարծեմ, հարցանեմ, համարեմ, ուսուցանեմ։ Օր. * Հարցից զձեզ բան մի. ‖ որ կիմացուի, հարցից ձեզ զբան մի։ Կամ. * Դու զո՞ առնես զքեզ. ‖ իբրև թէ ո՞վ առնես։ կամ, * Զայս միայն աղաչեսցուք զձեզ. ‖ ձեզ յայս, կամ այսու։ Կամ. * Զնախանձն իմացեին զպատճառն. ‖ փոխանակ, պատճառ։ կամ. * Ուսուցանեն զվերինսն զայն ինչ. ‖ փոխանակ, վերնոյն, կամ յայն ինչ։

402. Չորրորդ. Ներգործական բայը շատ տեղ իրեն արմատը կամ բայանունը, կամ անոր նոյնանշան բառ մը կառնէ հայցական հոլովով, որ նշանակութիւնը գործիականի ուժ ունի. Օր. կըսուի, հարկանել հարուածս, մեղուցանել մեղս, զսէր սիրել եւն, փոխանակ ըսելու, հարուածովք, մեղօք, սիրով։

Այսանկ կըլլայ նաև չէզոք և կրաւորական բայերուն. Օր., հիւանդանալ հիւանդութիւն, ամաչել զամօթ, առողջանալ զանախտաւորութիւն, կորնչել սատակումն, ննջել զքուն, պսակիլ զպսակ. որ կիմացուի, հիւանդութեամբ, ամօթով, անախտաւորութեամբ, սատակմամբ, քնով, պսակաւ։

403. Հինգերորդ. Շատ ներգործական բայք չէզոքի պէս նշանակելով՝ իրենց հայցական խնդիրը կըփոխեն ուրիշ հոլով։ Այսանկ կըսուի, լսել զձայն կամ ձայնի. կամիլ զհաստատութիւն կամ ընդ հաստատութիւն. խորհել զխորհուրդ կամ խորհրդեան. հարցանել զողջոյն և զողջունէ. վկայել զայս և այսմ. անիծանել զայլ և այլոց. հովուել զհօտ և հօտին. աղաչել զնա, առ նա, նմա. արբուցանել զխաշինս և խաշանց։

Ասոր ներհակ՝ կան չէզոք բայեր որ ներգործականի տեղով հայցական հոլով կառնեն։ Այսանկ կըսուի, խնդալ զհանդէսն, կանխել զանհնարինս, մաղթել կամ պաղատել զձեզ, նայել զնախագաւորութիւն, զգուշանալ զփրկութիւն, սքանչանալ զողորմութիւն եւն։

Այս ուրիշ կերպ մը որ չէզոք բայը, նաև էականն ալ հայցական հոլով կառնեն այն անունը որ կը-

նշանակէ չափ, ժամանակ, համրանք, ճամբայ, եւն․ Օր․ գնալ ՃԱՆԱՊԱՐՀ․ լինել ԱՄԻՍՍ ինչ․ բարձրանալ ՀՆԳԵՏԱՍԱՆ ԿԱՆԳՈՒՆ եւն ։

404․ ՎԵՑԵՐՈՐԴ․ Ներգործական բայը իւրեն աննախնդիր հայցականին հետ միանալով, պարզ բայի մը պէս կըդրուի, եւ նոր հայցական կառնէ՝ որ պիտի ըլլար յատկացուցիչ կամ խնդիր բնութեան ։ Օր․ Աւար հարկանել, աւարը աննախնդիր հայցական է, բայց աւարեմ բայի մտքով կըսուի, աւար հարկանել ԶՊԱՐՍՍ ։ Թողութիւն առնել, իբրեւ թողուլ նշանակութեան կըսուի, թողութիւն առնել ԶՕՐԷՆՍՆ, այսինքն թոյլ տալ օրինացն ։ Ասանկ կըսուի․ քարոզ կարդալ ԶԱՅՍ, այսինքն քարոզել ։ Հարցփորձ առնել ԶՆՈՍԱ, փոխանակ, նոցա ։ Բուռն հարկանել ԶՈՏՆ․ այսինքն ըմբռնել, կամ բուռն հարկանել ոստոյն ։

405․ ԵՕԹՆԵՐՈՐԴ․ Երբեմն ներգործականին հայցական խնդիրը՝ կըդրուի սեռական, երբոր բայը անդէմ է, այսինքն աներեւոյթ կամ ընդունելութիւն ։ Ասանկ կըսուի, բաղխելով ՄԱԳԼԱՑՆ, փոխանակ, զմագիլսն ։ Նմանապէս․ * ԲԱՂՁԱՆԱՑՆ մատաղ մանկութեան ԱԾԷՆ յարուեստ դպրութեան ։ ‖ (Ագաթ․ 274․) փոխանակ, զբաղձանս ածել ։ Այսպէս․ (Նար․ Գ․ 1․) * Ոչ ԹԻԿԱՆՑ դարձուցանելի, ոչ ԴԻՄԱՑ ընդ երկիր մածուցանելի․ ‖ այսինքն ոչ զթիկունս դարձուցանել, ոչ զդէմս մածուցանել ։

## Ծանօթութիւնք Է կանոնին ։

406․ ԱՌԱՋԻՆ․ Կրաւորական բային սեռի խնդիր տեսանք բացառական հոլովը ։ Բայց ամեն բացառական անուանք սեպելու չէ, այլ ինչպէս վերը ծանուցինք (399,) թէ որ անոր ներգործականին ալ նոյն բացառականը կառնուի նէ, ան ատենը բնութեան խնդիր կըլլայ․ Օր․ * Ես ընտրեցի զնոսա յաշխարհէ․ ‖ հոս ներգործականին տուած է բացառական հոլով․ ուստի երբ կրաւորականին ալ կըսուի․ ընտրեցան նոքա յաշխարհէ, բացառականը բնութեան խնդիր է․ բայց երբոր ըսուի, ընտրեցան յԱյ, հոս բացառականը սեռի խնդիր է․ զի ընտրողը Ած է ։ Ասանկ նայելու է ուրիշ տեղերն ալ ։

407. Երկրորդ. Կրաւորականին բացառական խնդիրը՝ երբեմն անցեալ ժամանակին կրդրվի սեռականով, որ վերն ալ յիշեցինք. (294) Որ. * Նորին տէրն նոյն ուր մերոյ զարկուցեալ հրեայքն. ‖ (Մար. Գ. 2. ձեռ.) ոյր 'ի նոյն 'ի քնէ զարկուցեալ: Նմանչ. * Թէ և նոյն իսկ որբոյն Տաղարդի էին տասցեալ ամենայնքն. ‖ (Նորհ. Թղթ. 263.) փոխանակ, 'ի մէջն մաշտոցէ էին տասցեալ: Նմանչ է (Նար. Հ. 3.) * Կոչեցեալք պաշտպանողէդ. քաւեցեալք հնարաւորէդ. բժշկեալք անախտաճանէդ ‖ եւ. ոյր 'ի պաշտպանողէդ եւ:

408. Երրորդ. Կան կրաւորական բայեր, որ հասարակ բայի պէս հայցական խնդիր կառնեն. ու կրաւորական նշանակութիւն ունենալով բացառականն ալ կառնեն. ասանկ են հրամայեմ, հարցանեմ, պահանջեմ: Ասոր կրավի: * Ի տորինայնոցն հրամայէն աշխարհացն 'ի վեր անբաւութեան. ‖ (Նորհ. Ներբող հրեշտ.) Նմանապէս. * Զոր ես ոչ յայս հարցանէ: ‖ (Մար. Ա. 3:) * Զպատուական աղօթից պահանջեմ յայս: ‖ (Մար. 6:)

---

Խնդիր Չէզոքեան:

409. Չէզոքները իրենց մասնաւոր նշանակութեան կէօրէ զատ զատ հոլով որ կուզեն նէ, խնդիր չէզոքին կըսուի. որու վրա ընդհանրապէս դիտնալու է:

Առաջին. Սեռական հոլովը կըլլայ խնդիր միայն եական բային, և այլ քիչ բայերու: Ուր տեղ որ սեռական հոլով կայ դիմաւոր կամ անդէմ բայի քով, նայելու է որ կամ էր բայի է, կամ յատկացուցիչ, կամ բացառականի տեղ:

Երկրորդ. Գործիական հոլովը, ներգործականը, կամ նախադրութեք գրեթէ ամենն բայի կրդրվի:

Երրորդ. Ներգործականին բնութեն խնդիրը՝ իր կրաւորականին ալ նոյն է. ինչպէս ըսինք. (406) ուստի միակերպ կըլլայ: Տամ զեղ, և տացի զեղ. Նասց, և տասցաւ առ նոյն. Խնդրեաց, և խնդրեցաւ 'ի նմանէ. փորձեաց, և փորձեցաւ 'ի հօրէ. եւ:

410. Չորրորդ. Կան բայեր որ մինակ չեն առներ մէկ հոլով մը, բայց ուրիշ անվան հետը վարելով

կառնեն ․ որ չըսվիր, առնեմ զնմանէ ․ բայց կըսվի, խօսս առնել զնմանէ ․ Անփոյթ առնել այսմ, պայմանէ, պայման ։ Ասանկ չըսվիր, ունիմ այնմ ․ բայց կըսվի, Անի ունել յառաջ ․ Ուշ ունել երամանց ։

Հինգերորդ ․ Շատ բայ զանազան հոլով կառնէ անոր համար որ՝ կամ տարբեր նշանակութիւն կունենայ, և կամ զանազան հայվածքով կառնըվի ․ ասանկ կըսվի, զնեմ Թագաւոր, 'ի գլուխ, 'ի տուն, զգլխով ։ Անցանեմ 'ի տեղւոջէ, ընդ տեղի, յերկիր, զօրինօք են ։

Այսուհետև գնենք մասնաւոր կանոնները ․

---

## Խնդիր Բնութեան ներգործական բային ․

### Կանոն ա ․

411. Ներգործական բայը որ ներգործութեան շիտակ ծայրը ունի քովը, ուղղական հոլովով կառնէ զանիկա ։ Ասանկ են, առնեմ, առեմ, անուանեմ, դաւանեմ, կարգեմ, գիտեմ, մատուցանեմ են ։

Օրինակ կըսվի ․ Արար զնա հայր ։ Ասիցեն զքարն բարի ։ Որդի ոչ զանձն իւր անուանէ են ։

### Կանոն բ ․

412. Կան մէկ քանի ներգործականք որ գին կամ արժէք, կամ դաշն նշանակող անվանքը կառնեն սեռական հոլովով ։ Ասանկ կըսվի, տալ արծաթոյ ․ ստանալ հարկեր ուխտի ․ վաճառել քսան դահեկանի են ։ Բայց ասանկները գործիականով ալ կըլլան կամ նախադրութեամբ ․ որ տալ կամ ստանալ արծաթով, ընդ արծաթոյ ։

### Կանոն գ ․

413. Ներգործականք որ իրենց ներգործութիւնը դէպ ուրիշը կըցուցանեն, կառնեն զան տրական վերջահոլով կամ նախդրիւ ։

Ասանկ կըսվի, ասել նոցա, ցնոսա, առ նոսա ․ հարցանել վարդապետաց, ցվարդապետս ․ քարոզել ժողովրդ-

դէմս, առ ժողովուրդն. աղօթել կամ մաղթել այ, առ ած. սկիզբն առնել բանին, ՚ի բանս. նուիրել ընծայեցաւոյ, ընծայեցիս։

Կանոն Դ.

414. Այն ներգործականք որ ուրիշէն ըլլել մը կընշանակեն, կամ հեռանալ, վերցըվիլ, պակսիլ, բացառական հոլովով կառնեն։ Ասանկ կըսվի, ազատել ՚ի բանդէ. հանել ՚ի տանէ. առնուլ յարքայէ. զրկել յընչից. բժշկել ՚ի հիւանդութենէ են։

Այսքան կանոն որ դրինք ներգործական բայի խնդրին վրայ, բաւական է հասկընալու ամէն բայի վրայ, որ իրենց նշանակութիւնը նայելու է, և անով ինչ հոլով խնդիր տալու է նէ՝ դիւրաւ կիմացվի։ Ուստի երբոր կըտեսնես որ ուրիշի վրայով բան մը ընել կընշանակէ, պատմական կուզէ. երբոր ուրիշի բոլորտիքը կամ ներսը բան մը ընել կընշանակէ, կառնէ պարառական կամ ներգոյական հոլով, կամ նախադրութիւն։

Ասով կիմացվի չէզոք բայերու խնդրառութիւնն ալ. և պարզ կանոնը այս է։ Չէզոք բայը որ ներգործականի մօտ նշանակութիւն ունի նէ, անոր բնութեան խնդիրը կառնէ ինքն ալ։

---

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

### Աներևոյթ եղանակին վրայ։

415. Առջի գրքին մէջը ծանուցինք Աներևոյթ եղանակին շէնքը կամ ձևանալը. և թէ ինչպէս բայի պէս ալ կըբանի, անունի պէս ալ. (198) հոս խօսինք անոր գործածութեանը վրայ։

Իբրև անուն գոյական, շարադրութեան մէջ կըլլայ յատկացուցիչ, բացայայտիչ, տէր և խնդիր բայի, խնդիր անվան և նախադրութեան։

Իսկ իբրև բայ, կունենայ տէր բայի ; և խնդիր սեռի կամ բնութեան։ Ասոնց վրայ տեղեկանալիքը դնենք։

Ծանօթութիւն ա.

415. Աներևոյթը նախդրիւ տրականով շատ տեղ ժամանակական մակբայի ուժ ունի, այսինքն յորժամ, մինչ. և սաստիկ տեղ դիմորոշ յօդ ունի ինքը, կամ քովի անունը. օր. * Ի տեսանելն զքեզ՝ բերկրեսցի 'ի միտս իւր ... յերթալդ քո և 'ի դառնալդ յեգիպտոս :|| (Ելք. Դ. 14. 21.) որ ըսել է, յորժամ տեսանիցէ զքեզ. մինչ երթայցես և դառնայցես. Այլ որ իրեք աներևոյթն ալ դիմորոշ յօդ ունին, առջինը 'ի տեսանելն՝ խնդիր է բերկրեսցի չէզոքին. զքեզը սեռի խնդիր տեսանելին. Մէկալներուն ալ դերանունը՝ սեռական տէր բայի է. նախդրիւը յերթալդոյ, անոնց խնդիրն է. Սա օրինակով տեսար որ աներևոյթը ինչպէս կը վարի հէմ անուն, հէմ բայ.

Սանկ կըսվի. * Ի կորնչել սկայիցն ամբարտաւանից :|| (Իմաստ. ԺԴ. 6.) հոս դիմորոշը ն, դրած է սկայիցին վրայ, որ տէր բայի է. և ըսել կուզի. յորժամ կորեան կամ կորնչելոց էին սկայքն ամբարտաւանք.

Ծանօթութիւն բ.

416. Երբեմն տեղ նախդրիւ, կամ առ նախադրութեան կընշանակէ՝ վասն. օր. 'ի լսել, վասն լսելոյ. առ 'ի ճանաչելոյ, վասն ճանաչելոյ. առ տալ կամ առնելոյ, վասն տալոյ. Սանկ կընշանակէ առանց նախդրի ալ, երբ կըսվի. եկիր կորուսանել. կոչեաց հարցանել. այսինքն վասն կորուսանելոյ, հարցանելոյ.

Ծանօթութիւն գ.

417. Շատ անգամ անուշ շարադրութեան մէջ ուր որ սեռական կամ տրական խնդիր նախադրութեան պիտի դրվէր նէ, առանց հոլովելու կըդրվի. օր. Սա կազդուրել, ըսել է՝ ասոր կազդուրելոյ կամ զօրելոյ. Սան անմարդի կացուցանել. փոխանակ, կացուցանելոյ. Յետ զերկիւղն իմ հասցել. փոխանակ, հասցելոյ. Առանց զփոխան խօսել. այսինքն խօսելոյ. Փոխանակ համառօտիւ առնել, այսինքն առնելոյ.

Այս ուրիշ կերպ ալ որ սեռականի տեղ՝ գործիական կըդնեն. օր. Յաղագս 'ի թշնամեացն պա-

հելով. փոխանակ, պահելոյ։ Նա ՚ի գաղանակուր լինելով. փոխանակ, լինելոյ։ Փոխանակ զանձինս աներկիւղս ունելով. ի̅ ունելոյ։

## Ծանօթութիւն Դ.

418. Աներևոյթը կրկնելով իրեն գլխաւորին հետ, նշանակութիւնը կըսաստկացընէ. և աս կըլլայ մէկ մը գործիական հոլովով. ի̅ օրհնելով օրհնեցից. գալով գայցեմք. գնալով գնացին. հարկանելով հարեր ևն։ Մէկալ առանց հոլովելու, որ աւելի հայու ոճ է. ի̅ տալ ետու. ընթանալ ընթանամ. ունել ունէր. ցուցանել ցուցանէ. գիտել գիտէր։ Կամ հայցականով. սիրելն սիրեն. գործելն գործեն են։

Անցեալ ընդունելութիւն ալ երբեմն կըդնեն աներևութի տեղ. ի̅ երթեալ երթիցէ. լինեալ լինէին. պահեալ պահէին. տուեալ տալ են։

## Ծանօթութիւն Ե.

419. Յիշեցինք վերը (387) թէ կրաւորական ընդունելութեան կամ աներևութին քովը հայցական անուն կըդրուի, որ իր բայի կերևնայ. բայց անանկ չէ։ Հոս քիչ մը աւելի բացատրենք. ասանկ կըլլայ չէզոք բային, և մանաւանդ եական բային աներևոյթը, որ պիտի ըլլար խնդիր ներգործական բայի մը. և սակայն ինքը անփոփոխ մնալով, իրեն իր բային կըլլայ հայցական։ ի̅. * Քանզի հաստատեաց ՚ի լինել զամ̅։ (Իմաստ. ա. 14.) փոխանակ ըսելու, հաստատեաց զլինելն ամենայնի. ուր աներևոյթը սեռի խնդիր է հաստատեացին, և ամենայնին՝ իր լինելին։

Ասանկ. * Ասա զիմաստութիւն քոյր քեզ լինել։ (Առակ. է. 4.) փոխանակ ըսելու. ասա զլինելն իմաստութեան քոյր քեզ։

* Կարծեցեալ չէին հասանել նմա յօգնականութի։ (Եղիշ. 48.) փոխանակ, կարծեցեալ զհասանել դիցն յօգնականութի։

* Վասն զի չէին ուսալ միանալ ՚ի մէջ ՚ի ձեռն

աղօթից ։ ‖ (Նար․ ԼԶ․ 5․) փոխանակ, ուսաք զմիանալն քո՚ ի մեզ ։

* Եւ ըմբռնեալ վասն խոնարհութեան արդարանալ վկայէ ։ ‖ (Իգնատ․ 310․) փոխանակ, վկայէ զարդարանալ միւսոյն վն խոնարհութեան ։

# ՅՕԴՈՒԱԾ Դ․

## Ածական բային վրայ ։

420․ Ածական բայը արմատ ըլլալով ամէն բայի, և իրեն նշանակութիւն ալ շատ ընդարձակ ըլլալով, ամէն հոլով կրնայ խնդիր առնել ։

Հայցական հոլովը չյարմարիր նշանակութենը․ բայց երբոր անունը ժամանակ կամ տեղ կընշանակէ, կառնէ հայցական․ զերծ անանկ տեղ բային նշանակութիւն ալ կըփոխուի ։ Որ․ * Եւ էր Մովսէս ՚ի լերինն անդ զքառասուն տիւ․ ‖ (Ելք․ ԻԴ․ 18․) ուր ըսել է, կայր ՚ի լերինն ։ Ասանկ կըսուի․ * Ընդ ձեզ եմ զամ աւուրս ։ Ընդ ձեզ զամ ժամանակս եղէ․ ‖ Նոյն ։

421․ Ուղղական հոլովը աւելի յատուկ է էական բայից, մանաւանդ եմին, գոյին․ վն զի ուրիշ հոլովքի հետ իրենց նշանակութիւնը քիչ մը կըփոխուի․ և սովորաբար երբոր բայը յոգնական է, ուղղական խնդիրն ալ, նաև նախդրիւ տրականն ալ յոգնական կըլլայ ։ Որ․ Եղիցուք տն մերում ծառայք ։ Եղիջիք դուք մեզ՚ի ծառայս ։ Եղերուք արք․ Լեր դու ինձ յորդի ։

Այս ուղղական խնդրին կողմանէ խոտորումն կայ, որ երբ էականին ընդունելութիւնը հոլոված է նէ՝ իր ուղղական խնդիրն ալ նոյն հոլովով կըդրուի․ ասանկ կըլլայ ուրիշ կրաւորական և չէզոք ընդունելութեանց ալ ։ Որ․ * Վասն որդւոյ իւրոյ․․․ սահմանելոյ որդւոյն այ․ ‖ (Հռովմ․ Ա․ 3․ 4․) ուր ուղղական պիտի ըլլար, սահմանելոյ որդի այ ։ Ասանկ․

* Ի զաւակէ աժդահակայ՝ մարդոյ եղելոյ Թագաւորի․ ‖ (Խոր․ Բ․ 8 ։) փոխանակ, աժդահակայ եղելոյ Թագաւոր մարդոյ ։

Ուրիշ հոլով խնդրառութեան օրինակ գտնել զանց կառնենք. զի որ յայտնի է։

422. Գործածութեան կողմանէ, շատ տեղ եղական բայը միայն՝ ունի դիմազուրկ բայի ուժ մը. օր. փոխանակ ըսելու, որչափ արժան էր ցուցանել, կըսուի, որչափ ցուցանել էր։ Ասանկ, ոչ գոյր նմա մերձենալ, ըսել է, ոչ էր օրէն մերձենալ։ Զինչ ինչ առնել էր. այսինքն առնել պարտ էր. եւլն։

Դարձեալ. Եմ եղականը կրկնելով նոյն դիմաւ եւ թուով, որ խօսքին ուժ կուտայ. օր. Ե՛մ եմ եւ ես մարդ։ Ե՛ն էն արդարեւ աւանդք այրեաց։ Է՛ է առաջնորդ մեղաց։ Է՛ր էր յետոյ քան զմարգարէն։

Նոյն եղականը՝ յարաբերական որ ին հետ կընշանակէ մասնական անուանի պէս. օր. Են որ մեծացուցանեն, են որ խոնարհեցուցանեն։ (այսինքն ոմանք.) Տայր պտուղ՝ էր որ հարիւրաւոր. էր որ վաթսնաւոր եւլն. այսինքն ոմն հարիւրաւոր, ոմն վաթսնաւոր։

---

## Այլ ընդհանուր գիտելիք խնդրառութեան վրայ։

423. Առաջին. Երբ պատահի մէկ խօսքի մէջ որ այլեւայլ սեռի բայ կըդրուի, այսինքն ներգործական, չէզոք կամ կրաւորական, եւ ասոնց խնդիր որ պիտի տրուի նէ, սովորաբար մօտ եղած բային կէօրէ կըդրուի։ օր. * Կացէք մնացէք պահեցէք զուք առ մեզ վերոյն հաւատ։|| (գ. մակ. Յ. 27.) ուր հայցական դրաւ, խնդիր քովի ներգործականին պահեցէք, եւ ոչ հեռու չէզոքներուն՝ կացէք մնացէք։

Բայց շատ անգամ առանց նայելու քովի բայը՝ հեռու բային ուզածը կըդնեն. ասանկ կընեն անուանց ալ։ օր. * Առհասարակ ողջոյն անկեալ մատուցանէին առ ողորմածն տծ.|| (բ. մակ. Ը. 29.) ուր հայցականը ողջոյն՝ չէ թէ քովի անկեալ չէզոքին խնդիրն է, այլ հեռու ներգործականին՝ մատուցանէին. եւ բնական շարքը պիտի ըլլար, առհասարակ անկեալ՝ ողջոյն մատուցանէին առ ողորմածն։

Ասանկ է. * Զի առնու ելանէ զլրութիւն նորա'ի հանդերձէն։|| (մատթ. Թ. 16.) ուր հայցականը

անուանին է. որ եղանակ անուն գլխութեան ։ (տես առ բայ. կան. դ ։)

* Ո՞ւր բողոքեմ զպատուհասաւորս բարկութի, ո՞ւր փախչիմ, յո՞ ապաւինիմ, չիքէ նորեաց ։ (Պիտոյ. 440.) հայցականը չիքէ՝ հեռու դրած բողոքեմին խնդիրն է ։

* Ոչ գոսանալ ձեռաց կափողաց հրամայեցեր օրհնեալ գոգաբանդ ։ (Նար. լդ. 2.) հոս սեռականը գոգաբանդ է խնդիր կափողացին. որ ոչ հրամայեցեր գոսանալ ձեռաց կափողացն զօրհնեալ գաղաւթն քո ։

* Ու այս ազատութիւն ՚ի Նմանէ կատարեալ լինի ՚ի գերեաց անտի ։ (Իգնատ. 99.) հոս բացառականը ՚ի գերեաց՝ ոչ է խնդիր կատարելոյն, այլ ազատութենին. որ և այս կատարեալ լինի ՚ի Նմանէ՝ ազատութիւն ՚ի գերեաց անտի ։

* Կամելով յամօթ առնել զմարդն, զհնազանդութիւն արարածոցս պատմէ արարչին ։ (Սարգ. 593.) հոս տրական է արարչին, և խնդիր դրած է ոչ պատմելին, այլ հնազանդութենին. որ կամ յամօթ առնելոյ զմարդն՝ պատմէ զհնազանդութիւն արարածոցս առ արարիչն ։

424. Երկրորդ. Այն բայերն որ այլևայլ հոլով խնդիր կառնեն, երբեմն մէկ խօսքի մէջ ալ կըհանդիպի որ մէկ անունը կամ դերանունը այս հոլով կըդրուի, մէկալը ուրիշ հոլով. զոր. * Հայեաց ՚ի Ձէ աբրահամեան զաւակս, յորդիս յակոբայ ։ (Դ. մնկ. Է. 3.) հոս հայեմ բային խնդիր դրած է առաջ նախադրութիւ, ետքը տրական, որովհետև երկուքն ալ կըլլայ ։

Նման է. * Օրհնէ և մեռեալ ասեն զնա ընդ շամիրամայ ։ (Խոր. ա. 19.) հոս ասեմ բային պատմական և հայցական տրուած է ։

* Ընդէ՞ր ՚ի քաջ ծառայութեան և ՚ի վատթարութեան զնոյն պահանջէս ։ (Պիտոյ. 16.) հոս պահանջեմ բային տրուած է բացառական և ներգոյական ։

* Օրհնութեանց և շնորհակալութեան հեղգութիւ կենացս զեկուցանէ ։ (Շնորհ. մեկն. բարձր.) հոս զեկուցանեմ բային տրուած է պատմական և հայցական ։

Ասանկ կայ ուրիշ տեղվանք ալ ոչ միայն բայերուն, հապա անվանց ալ, նախադրութեանց ալ. որ երբոր այսպէս հոլով խնդիր կառնեն նէ, կըպատահի նոյն խօսքին մէջ ալ որ մէկ անունը այս հոլով կըդրուի, մէկալը այլ հոլով։ Ասանկ կըլլայ ըսինք բացայայտելէն. (273) ինչպէս անուանս անդր կառնէ բացառական և գործիական. ուստի նոյն խօսքին մէջ կըսուի. * Թէև յայտնեցէք անհամաձայնաբար ըղձալիցս անպարտ ես, սակայն և ոչ այսու։ (Շնորհ. Թուղթ. 183.)

Այսպէս նախադրութիւնը առ, կառնէ սեռական և գործիական. (216) ատոր համար նոյն տեղ կըլլայ որ ածականը մէկ հոլովը կըդրուի, և իր գոյականը մէկալ հոլով։ Օր. * Փոքր ինչ գտանի չարչարանքն ձեր առ մեծի չարչարանօքն քում։ (Նարգ. 496։) տես վարն ալ. 427։

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.

### Նախադրութեան շարադասութեան վրայ։

Նախադրութիւնը ինչ ըլլալը, և քանի կերպ բաժնուիլը՝ ծանուցինք իր տեղը. (210) հիմայ գործածութեան կողմանէ մէկ քանի գիտնալիքը խօսինք։

#### Կանոնութիւն Ա.

425. Բուն նախադրութիւնքը առ, ընդ, ըստ, զկն, ետք, վերայ, նմանապէս առանց, բայց, մինչ, որպէս, միշտ առաջ կըդրուին իրենց խնդիրէն։ Մնացած յատուկ և անյատուկ նախադրութիւնքը՝ տեղուն կեօրէ ետև առաջ կրնան դրուիլ։

#### Կանոնութիւն Բ.

426. Կըպատահի մէկ խօսքի մէջ՝ որ նոյն կամ նման նախդիրը, կամ նախադրութիւնը կըբանեցընեն. Օր. 'Ի չար ընդ այն հայելով մարդկան. (Պետ.

124.) հոս 'ի, ընդ նախդիրը կրկնած է նոյն հոլովին, որ պիտի ըսեր, հայելով մարդկան յոյժ չարն ։

Նմանն է. * Երկուցեալ 'ի կրկնապատիկն վասն հաստատելոյ չարիս .‖ (Պիտ. 134.) հոս 'ի վասն, կրկնած է մէկ նշանակութ՟ի, զի երկուցեալ վասն կրկնապատիկ չարիս հաստատելոյն ։ (տես 125.)

Նմանապէս, * Ա.— որ ըստ մ զխասատկարութիւնք խարդախութեանց . . . իբր ընդ վիմեղէն լերին ընդդութեն բաղխեցեալ ցնդին ։‖ (Նար. ըէ. 2.) հոս ալ, ընդ, նոյն նշանակութեամբ դրած են, առջինին նախդրիւ տրական, ետքինին վերջահոլով ։

Ասոնց նման կըսուի . * ընդ իւրաքանչիւր ընդ վրանս ։ ընդ արս ընդ ազգիդ ։ շուրջ զսահմանօք հանդերձ ։ Մերձ առ ծննդեանն . մերձ առ գերեզմանաւն ։ առ զօտին հաստատուն պահելոյն պատճառաւ ։ վասն աշակերտս գտանելոյ աղագաւ ։

## Յաւելուած Գ.

427. Երբեմն մէկ նախադրութիւն որ զանազան հոլով խնդիր կառնէ, նոյն խօսքի մէջ ալ երկու հոլովը կունենայ. զոր օրինակ ընդը երբոր տակը կընշանակէ, սեռական ալ կառնէ, գործիական ալ. (217) ուստի կըսուի. * Ընդ գողութեան անուամբ և բամբասանօք արկանէ զմարդ ։‖ (Շնորհ. ընդհան. 28.) որ պիտի ըսեր, ընդ անուամբ և բամբասանօք գողութեան ։

Նմանն է. * Օգնէ այն ամի որ ընդ չարչարանօք 'ի ներքոյ անկանի, կամ ընդ աղքատութեամբ, կամ ընդ ախտիւք, կամ ընդ մեղօք ։‖ (Անդ. 272.)

## Յաւելուած Դ.

428. Երբ ըսինք թէ աներևոյթ նախադրութեան խնդիրը որ կըլլայ, երբեմն անհոլով կըդրուի, կամ սեռականի տեղ կըդրուի գործիական. (417) անանկ կըլլայ ընդունելութեան ալ. զոր. * Մեծապէս վասն 'ի տեսողացն պակուցեալք . կամ թէ յաղագս գործոյ յոգնահարեալք յուսմքն .‖ (Պիտ. 138.) զի փխ պակուչելոյն կամ երկնչելոյն 'ի տեսողաց . յաղագս հարստահարելոյն յուսմքն ։

### Յօդուած Ե.

429. Շարադրութեան մէջ զանազան շարք կունենան նախադրութիւնքը, իրենց խնդիրն՝ եւ առաջ, կամ մէջը ուրիշ բառ մտնալով, նախդիրը փոխելով կամ կրկնելով. որ. * Նարիա 'ի բարեաց վերայ : Մատն զորդիս իւրեանց Փղշտացւոց : Զխնդ բարուց չէին : չէին երթային զպօղոսի եւ զբառնաբայ : զբարեաց չէին երթայք : 'ի պէտպէս փորձութեանց 'ի մէջ : իւրեանց զնա խնդրի. (որ մէջ խնդրի իւրեանց :) Դժնդակն հանդերձ մահու. (որ հանդերձ դժնդակ մահուամբ :) Փոխանակ որ մինչեւ ցայժմ հայհոյութեցն. (որ փոխանակ հայհոյութեցն :) յերկուց մէջոյ քերոբէիցն. եւն :

Այս օրինակներով կերեւայ որ սեռական ուզող նախադրութիւնքը շատը անուն ըլլալով, սեռականը յատկացուցիչ է իրենց. եւ յատկացուցելի կանոնով կըբանի :

### Յօդուած Զ.

430. Որ տեղ որ նախադրութիւնը շատ խնդիր ունի, անոնց վրայ նախադրութիւնը կրկնելու է սովորաբար. որ. * Բազմեսցին ընդ աբրահամու, ընդ սահակայ եւ ընդ յակոբայ :

Բայց շատ անգամ երբեմն զանց կառնուի նախադրութիւնը, մանաւանդ երբոր եւ շաղկապով կապած են. թէ որ նախդիր կայ նէ, ան կըդրուի : որ. * Վայ 'ի վայի վերայ, եւ գոյժ 'ի գուժի : Որ եղեն յառաջ քան զիս եւ զքեզ : (որ քան զքեզ :) Յերկինս՝ 'ի վերայ քերոբէիցն, եւ յերկրի՝ անասուն կենդանեացն. (որ 'ի մէջ անասուն կենդանեաց :) Երկինք զնա մարդոյն, եւ մարդն՝ պատուիրանին. (որ մէջ պատուիրանին.) 'ի վերայ խաչանց իմոց մեռանիմ. յորոց խաչանց. 'ի հարթուցելոյն, 'ի փախուցելոյն, 'ի գաղանակուր եղելոյն : (որ 'ի մէջ որոց խաչանց. 'ի մէջ հարթուցելոյն են :) Մի երբէք զհամբարձումն ձեռաց ամբարշտեալն յակոբու, եւ զանիրաւութիւն բաբելոնի : (որ իբրեւ զանիրաւութիւն.) Եղական բնութիւնքս ընդ անտիւ չարչարա-

նաց անկանին. իմանալիքն՝ հոգեկան կրիւք։ (ըն̃ ընդ հոգեկան։)

Նաև զանց առնելը նախադրութիւնը՝ որ հեղինակք շատ կըբանեցընեն, հիմ կարճ կըձգէ բանը, հեմալ շնորք մը կուտայ. ինչպէս գրած օրինակներումը կերեւնայ. նայէ զատնք ալ. * Փառաց վասն, ընչից աղագաւ, կամաց կատարելոյ, երկայնակեաց լինելոյ. ‖ (ուր եօքի երկու մասին զօրութիւն կիմացվի, վասն կատարելոյ կամաց եւն։)

Նմանապէս. * Գթայր 'ի վերա նորա իբրև հայր յորդւոյ. ‖ ըն̃ 'ի վերա որդւոյ։ (Սարգ. մեկն. 162. 500.)

## Ծանօթութիւն Է.

431. Այսպիսի զանցառութիւն կըլլայ երբեմն բուն նախադրութեան խնդիրին. անանկ որ խնդիրը զօրութիւն իմանալու է. որ. * Հայեաց 'ի վերայ աբրահամեան զաւակիս, 'ի մէջ սահակայ. ‖ փոխանակ ըսելու, 'ի վր̃ զաւակի մէջն սահակայ։

Նաև կըրնայ. * Հանդերձ որք բոլորովին են անշունչք. ‖ փոխանակ, հանդերձ այնոքիւք։ Փոխանակ զմերս հաստատեաց. ‖ ըն̃ փոխանակ նորա։ * Զոմանս քան պիղծս դատելոյ, և զայլս՝ քան բարիս. ‖ փոխանակ, քան դատելոյն բարիս։

## Ծանօթութիւն Ը.

432. Նախադրութիւնը երբեմն, որպէս, քան, հոյցական հոլով կուզեն. (212. 215.) բայց սեռականի կամ տրականի հետ ալ կըլլան, ու կընշանակեն նմին. զորօրինակ. իբրև ժողովրդեան. իբրև հրոյ մեծի. որպէս էծի. եւն։

Իսկ այլ տեղ ուրիշ հոլովք ալ կառնեն քովի անուան կամ բային պատճառովը. որ. 'ի սրահսն իբրև յանտառի։ 'ի ճանապարհաց մերոց իբրև 'ի ողջածութեանց։ Նոցին որպէս ծախուէից։ Երկրին սոդոմացւոց՝ քան քաղաքին այնմիկ։ Փափաքէ 'ի մահ քան 'ի կեանս։

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

## Մակբայի բաղդատութեան վրայ:

Ինչ է մակբայը, և քանի կերպ ըլլալը սորվեցաւ աշակերտը առջի գրքին մէջ. (219) իրեն գործքը կամ պաշտօնը՝ ան է որ բային կամ ներգործութեն պարագաները ցուցանէ. ասոր համար ոչ միայն բային վրայ կըսվի, այլև ընդունելութեց, բայանվանց, ածական անվանց ալ. ու անոնց հետ ետև առջև կըդրվի: Հոս դնենք մէկ քանի գլխաւորք գործածութեն կողմանէ:

### Կանոնութիւն Ա.

433. Շատ տեղ պարզ կամ բարդ ածական անունը՝ բայի վրայ ընկնելով, մակբայի պէս կընշանակէ ու կըբանի. և կըլլայ որ անունը կամ հիչ չփոխվիր, և կամ փոխվելով մը կունենայ դերանուն մը, մասնիկ մը, կամ գիր մը ղ, ք, ա: Օր. Ուղղակ խօսել, կընշանակէ՝ արդարապէս, արդարութեամբ, շիտակ հախով խօսիլ. ուստի ասանկ տեղ գործիական ուժ կունենայ:

Ասանկ կըսվի. Բարձրաձայն կարդալ: (իմ մեծ ձայնով.) Քաջաբար տարածանել. (իմ քաջասրտութեամբ.) Համառօտս խորտակել. Բերբերս դառնալ. Երագս ընթանալ. Նոյն օրինակ տանջիլ. (իմ նոյնպէս.) օրինակ զայս գրել. (իմ այսպէս.) Սոյն զուարճանալ. (իմ սոյնպէս.) Անպատճառս հարկանել կամ հարկանիլ. (իմ սակաւ, քիչ.) Արտասուալից իմն յեղանակել. (իմ ողբական կերպիւ.) Բազումս մեռանել. (բազում անգամ.) Մեծ իմն մխիթարիլ. (մեծապէս.) Փոքունս սասանիլ. (թեթև եղանակաւ.) ևն:

### Կանոնութիւն Բ.

434. Մերինին ներհակը՝ երբեմն բուն մակբայը ածական անունի պէս կըբանի. Օր. Արջառ յոյժ. (իմ բազում.) Զիարդ և հնարիւք. (իմ որպիսի

ևիցէ) շինել կոյսն· շինել փառաբանութիւն· (դր մշտնջենաւոր·) առ յոյժ յիմարութեան· (վասն սաստիկ յիմարութեան·) յերբեմն ժամանակի· (՚ի միում ժամանակի·) ՚ի տեղւոջ ուրեք· (՚ի տեղի մը·) և այլն։

Ըսացի՝ բուն մակբայը· վասն զի յայտնի է՝ ուրիշ մակբայք որ անունէ ձևացած են, (223) անունի պէս ալ կըլլային· դր· Ճարտարօրէն իմաստք· ծածկապէս խորհուրդ· անճառ ներգործութի· բնական արարածոց· երբեմն միտք, կամք· ևն։

Դասօրինակ Գ·

435· Շատ անգամ նոյն մակբայը, կամ անոր նմանը խօսքի մէջ կըկրկնուի զօրդի համար, կամ ուժ տալու համար· դր· * Յանկարծակի յանկարծօրէն ժամու զամ̄ քաղաքն ՚ի բուռն առնուլ·|| (ա̄· մակ· Ն·28·) հոս երկու ժամանակական մակբայ դրած է։

* Յուսալ վերստին անդրէն դարձեալ նախապարգևիցն փառազարդութեանց դարձեալ հասանել։|| (Ղար· ժա̄· 1·) հոս չորս թուական մակբայ կրկնած է։

Աս կերպով են, ստէպ ստէպ· արագ արագ· յոյժ յոյժ· ճոյլ ընդ ճոյլ· այո՛ այո՛· մի՛ և մի՛, ևն։

Բացասական մակբայը ո՛չ մէկ խօսքի մէջ կըկրկնուի ու բացասական կըպահէ խօսքը· ասանկ կըսուի· * Ո՛չ ագահք, ո՛չ կռապաշտք զարքայութիւն ա̄յ ո՛չ ժառանգեն։

Դասօրինակ Դ·

436· Երբեմն մակբայը խօսքի մէջ զանց կառնուի, կամ մէկ մասը կըճատ կըդրուի· դր փոխանակ ըսելու, որպէս ես, նոյնպէս և դու, կըլլայ որ նոյնպէսը կըձգուի, երբոր ըսենք· * Որպէս զօրք իմ, զօրք քո· և որպէս երիվարք իմ, երիվարք քո·|| ուր զօրութն կիմացուի, նոյնպէս զօրք քո, նոյնպէս երիվարք քո։

Կրճատել կըլլայ, երբոր փոխանակ ըսելու, այնպէս, նոյնպէս, որքան, յորժամ, այլազգ, կըսուի միայն, այն, նոյն, որ, յորում, այլ· դր· * Բայց

այնքան միայն՝ որ լոկ կենդանական շնչովս.॥ (Պիտ. 328.) փոխանակ, որքան.

* Յայսմ հետէ՝ յորժ ծանուցայ ձեզ. (փոխանակ, յորմէհետէ.) մեծին այլայլ ծառայանալ, և փոքուն՝ այլ. (փոխանակ, այլազգ.) Բայց եթէ այսպէս, և եթէ այն. (փոխանակ, այնպէս.) Ոմն այսպէս կարծեօք, և ոմն այն. (այնպէս.) Հայեաց յայսկոյս՝ և յայն. (փոխանակ, յայնկոյս.) Նոյն օրինակաւ խօսել է մանուկն, և այլ է ծերն, այլ է յանցաւորն, և այլ է բարեգործն. Որպէս այժմ, նոյն և յայնժամ.॥ էջ նոյնպէս.

## Ծանօթութիւն Է.

437. Մակբայք կան որ վարպետ շարադրութեան մէջ իրենց սովորական շարքէն դուրս կըդրուին. կամ բարդ մակբայը կըբաժնուի, մէկ մասը զատ ու ետև առաջ կըդրուի.

Նաջի կերպին օրինակ. * Նոյն փրկեր խոկ ընդէր զայլոց արարածս.॥ (Եղնիկ. 242. ձեռ.) որ սովորաբար ըսելու էր, ընդէր փրկեր.

Նսանկ բացասական մակբայը. Որոնայ ոչ. գրեցաւ խսկ ոչ. տկարանայ ինչ ոչ. գիտէի ոչ. որ սովորականը կըսուի, ոչ որոնայ. ոչ գրեցաւ ևն.

Նսանկ մակբայքը՝ առաւել, քան. * Քան յանձն իւր՝ առաւել 'ի նա էր յուսացեալ.॥ (Եղիշ. 95.) որ սովորական շարքը կուզէ, առաւել 'ի նա՝ քան յանձն իւր յուսացեալ էր. Նմանապէս. * Նախ քան բանիւք՝ գործովք փառաւորեսցուք.॥ (Խոսր. 52.) փոխանակ, նախ գործովք՝ քան բանիւք փառաւորեսցուք. Նսանկ. * Բուռն հարեալ քան զինոց գործոց՝ զքոյդ շնորհաց.॥ (Նար. լա. 2.) փոխանակ, բուռն հարեալ զքոյդ շնորհաց քան զինոց գործոց.

Իսկ բարդ մակբայը զատելու օրինակ. * Յաւուրցն ժամանակաց հետէ յորժ անջատաք.॥ (Ա. Մակ. Ա. 12.) փոխանակ, յորմէ հետէ. * Մինչ նա դեռ կամէր քաջութիւն ինչ առնել.॥ փոխանակ, մինչդեռ. (անդ. Ե. 67.) * Մի համարիր այլ ինչ այլ արարեալ առ քեզ յայտնութիւն.॥ (Յոբ. Խ. 3.) փոխանակ, այլազգ ինչ արարեալ ևն.

# ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ.

## Շաղկապին շարադասութեան վրայ։

Շաղկապին առջի գիտնալիքը խօսեցանք իր տեղը (238) հիմայ գործածութեան վրայ մէկ քանի բան ծանուցանենք։

### Ծանօթութիւն ա.

438. Շաղկապքը՝ և, թէպէտ, թէ և, եթէ, խօսքի մէջ կուզեն իրենց ետևէն մէկալ շաղկապները՝ նաև այնորէն, սակայն, ապա ևն։ Բայց շատ տեղ զանց կառնըվի. ոճ. * Իսկ եթէ սկիզբն սուրբ, և զանգուածն. և արմատ, ապա և ոստքն.‖ (Հռովմ. ժա. 16.) հոս առաջ կըպակսի ապա, ետքը՝ եթէն. որ պիտի ըսեր. իսկ եթէ սկիզբն սուրբ է, ապա և զանգուածն. և եթէ արմատն սուրբ է, ապա և ոստքն։ Նմանկ. * Իսկ ոչ էք դուք որդիք, (վասն այնորիկ) առաքեաց ած զհոգի որդւոյ իւրոյ ... եթէ որդի, ապա և ժառանգ։‖ (Գաղատ. դ. 6. 7.) * Թէպէտև որդի էր, (սակայն) ուսաւ 'ի չարչարանաց անտի զհնազանդութիւն։‖ (Եբրայ. ե. 8.)‖

Նմանկ բանի մէջ երբեմն բայցը առաջ կըդրվի թէպէտէն. ոճ. * Բայց թէպէտ և տեսանէին զեղբարս իւրեանց 'ի մեծ վիշտս, ոչինչ տրտում և տխուր զերեսս ցուցանէին։‖ (եղիշ. 41.) որ սովորաբար ըսելու էր. թէպէտ և տեսանէին, բայց ոչինչ տրտում ևն։ Այլայ որ թէպէտին կէսը կրճատ կըդրվի, ինչպէս մակբային ըսինք (ծան. դ) ոճ. * Թէպէտ յառաջ քան զայլ կերակուրս, և թէ յետոյ, անվնաս են երկոքին‖. ու և թէպէտ յետոյ։ (Շնորհ. Թղթ. 251.)

### Ծանօթութիւն բ.

439. Շատ տեղ շաղկապը և, ինչպէս թէպէտն ալ, երբոր կընշանակեն՝ հէմ, կէրէք, կրկին կըդրվին. ոճ. * Զարեաց արուեստագէտք՝ արժանի այնպիսի յուսոյ և՛ որք գործէին, և՛ որք փախ-

քէն, և՛ որք պաշտենն ։» (Իմաստ. ԺԵ. 6.) օր, հէ՛մ գործօղքը, հէ՛մ փափաքօղքը ևն ։ Նմանկ. * Անհամեմատ գտցէ՝ թէպէտ մեծութիւն, թէպէտ քաղցրութիւն ։» (Մարգ. 56։)

Բայց և առանց հարկի ալ, աւելորդ տեղ կըդրուի ուժ մը տալու համար. օր. * Մինչդեռ աղօթեմն՝ և վախկիմ. յընթանալս խոհում և կամիմ . . . որ պատրաստեալ և ինձ ։» (Նար. հտ. 2. հթ. 2.) * Նա երկիւղի անկանելոյն զարհուրեալ և թմրեցի ։» (Մարգ. 50.) * Որպէս ը ճանաչելն և անծանօթացաք ։» (Յամբ. Ճառ. համբարձ.)

Ծանօթութիւն Գ.

440. Շաղկապքը թէ, չէ, որպէս չէ, որ թարմատար կամ պատճառական են, սովորաբար կուզեն իրենց ետևէն գիմաւոր բայ. օր. Նսա՛ զի օգնեսցէ։ Նտես եթէ հաճոյ է։ Որպէս զի տացէ նոցա. ևն ։

Բայց կայ որ անդէմ աներևոյթ կըդրուի. օր. * Արձակեաց բազում պատուիրանաւ՝ չէ գայուգայ զռամբ արձակել, և զգունդն ամ ցրել։» (Ա. Մակ. ԺԴ. 13.) փոխանակ, արկանիցէ, ցրեսցէ ։

* Աղաչէր թէ զմեկնեալն 'ի նոցանէ մի առնուլ։» փոխանակ, մի առնուցուն ։ (Գործ. ԺԵ. 38.) * Որպէս զի 'ի լռութեան նստեալ լռել 'ի տուէ և 'ի գիշերի ։» փոխանակ, լռեսցէ ։ (Մարգ. 728.)

Ծանօթութիւն Դ.

441. Շաղկապները ունին սովորական տեղ որ փոխելը զգուշանալու է. ինչպէս թէ, եթէ, թէև, թէպէտ, վասն զի ևն, ասանկները չեն դրուիր անունէն կամ բայէն ետև. օր. չըսուիր. բարի թէև էր, տեսանէր թէպէտ, արծաթ վասն զի ոչ ունէր, և այլն ։

Կայ մէկ քանին որ կրնան տեղ փոխել ։ Բայց առօգականը էայց, «ոչայն», յետադաս դրած է. * Օչ սակայն և այս յօժարութի է ոչ այ. » փոխանակ. սակայն զի և այս ։ * Տես սակայն նմին միաբան. » փոխանակ, սակայն տես ։ ( Ժողով. Ա. 17. Է. 15։)

Մակաբերականքը՝ ապա, ուրեմն, ապաքէն, երբեմն շնորհքով ալ ետքը կը դրուին. որ. * Սպաներ ուրեմն։ Հաստատութիւն ուրեմն պահեն։ Նայս ցուցանէ ապա. ևն։

Համեմատականը՝ անգամ, ( 249 ) սովորաբար անունէն կամ բայէն ետև կը դրուի, բայց առաջ ալ դրած կայ. որ. * Մինչև անգամ աղօթիւք և խնդրուածովք. ‖ փոխանակ, աղօթիւք անգամ։ ( Պիտ. 49. եւ 77. 171. ) * Զոր անգամ և ոչ յիշեմք. ‖ փոխանակ, և ոչ յիշեմք անգամ։ (Փարպ. 189. ) * Որ անգամ և հետք մի երևեցին. ‖ փոխանակ, և հետք անգամ։ ( Սարգ. 321։ )

Թէականը թէ, եթէ, առաջ կը դրուի անունէն կամ բայէն. որ թէ գազան իցէ, եթէ կամիս ևն։ Բայց կայ որ շնորհքով ալ յետադաս կըլլայ անունին միայն, և ոչ բային. որ. * Սով եթէ լինիցի, ժանդ եթէ լինիցի։ Մեծութի թէ առուլու գայցէ։ Ընդ իս եթէ ոք մտանիցէ։ Իմ եթէ չէր եկեալ, ևն։

Այսքան բաւական է ութը մասանց բաղդատութիւնը գիտնալու, հասկընալու և գործածելու. աւելին ուզողը կընայ գտներ ընդարձակ քերականութեան մէջը։

# ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ.

## Շարադրութեան վրայ։

442. Ութը մասունք բանին երբոր կարգով կը շարուին, և բան կը ձևացընեն, որ լման խօսուածք մը կընեն՝ որ միտքի եղածը կիմացընեն, այն կարգով շարուածքը կըսուի շարագրութիւն, կամ շարադրութիւն։

Երկու կըբաժնուի. հարազատ կամ ընտանի, և օտար կամ խորթ։

Հարազատ շարադրութիւնն է՝ որ լեզուին յատուկ կանոնով և բառերով կը ձևացընէ շարուածքը։ Օտար շարադրութիւնն է՝ որ օտար բառեր, և անյատուկ կանոն կը բանեցընէ։ Քերականութեան պարտքն է՝

որ ինչ լեզու կուզէ՝ սորվեցընել նէ, անոր հարազատ կանոնները հասկըցնէ, և օտարը դուրս հանէ. ինչպէս մենք ալ իւրաքանչիւր տեղ ծանուցինք համառօտ կերպով։

443. Հարազատ շարադրութեան վրայ խօսելով, իրեք տեսակի կըբաժնուի. այս է պարզ, Դժուար, և Խրթին։ Ասոնց տարբերութիւնը չէ՛ թէ բառերուն կողմանէ կառնուի, կամ թէ բանին հասարակ կամ խորունկ մտայը, այլ իրենց շարուածքէն դատելու է։

Ուստի պարզ կըլլայ շարադրութիւնը, երբոր մասունք բանին բուն սովորական կանոնին կէօրէ կըտեղաւորին, թէ և մէջը խրթին բառ մը ըլլայ, կամ մութ միտք մը գտնուի։

Դժուար շարադրութիւն է՝ երբոր բառերուն շարուածքը քիչ մը տարբեր կըլլայ սովորական կանոնէն։

Խրթին շարադրութիւն է՝ երբոր շարուածքը շատ կըհեռանայ սովորական եղանակէն։

Ասոնցմէ պէտք առաջ սորվելու է պարզը, որ աշակերտը վարժի նախ առանց սխալի շարադրել. երբոր առաջ կերթայ ու սխալմունքէն կազատի, ան ատենը միջակին ետևէ ընկնայ։ Իսկ խրթին շարադրութիւնը բուն վարպետներուն պահուած է. որ չըլլայ թէ բան մը ցուցանեմ տէլ, օտար, խորթ շարադրութեան մէջ ընկնի։

444. Իսկ թէ ինչ բանով պարզ շարադրութիւնը կըլլայ Դժուար, կամ Խրթին, ասանկ գիտնալու է, որ պարզը կըլլայ Բնական շարադրութեամբ. այս է երբոր կըպահուի բնական շարքը և սովորական կանոնը լեզուին, ասանկ որ բանին մէջ էն առաջ դրուի տէր բային, քովը իր ածականը կամ բացայայտիչը կամ յատկացուցիչը, թէ որ ունի նէ. ետքը բայը, քովը մակբայը, կամ խնդիրը, և ինչ որ անոնց հետ կապ մը ունի։

Հապա երբոր այս կարգը չիպահուիր, ըսած մասունքները ետև առաջ կըդրուին, կամ իւրաքանչիւրը հասարակ կանոնին կէօրէ դրած չէ, աս կըլլայ և կըսուի Շրջուն շարադրութիւն, ու պարզէն կանցնի կըլլայ Դժուար կամ Խրթին։

Օրինակ մը տանք. * Դուք էք լոյս աշխարհի. || աս ամենեւին պարզ է. առաջ դրած է տէր բային դուք. եւ բայը էք, եւ բային ուղղական խնդիրը լոյս. եւ աշխարհի, որ սեռական անուն նէ՝ կըլլայ յատկացուցիչ լոյսին. այլ թէ որ տրական անուն ըլլի, խնդիր կըլլայ էքին: Հիմայ փոխենք աս շարքը, ըսենք. Աշխարհի լոյս էք դուք. կամ, դուք աշխարհի լոյս էք. կամ, Աշխարհի լոյս դուք էք. ասոնք եղան միջակ: Հապա քիչմը ալ խրթին կըլլայ երբ ըսենք, դուք աշխարհի էք լոյս:

445. Շեղուած շարադրութիւնը կըլլայ քերականական ձեւ բանեցընելով. որ հինգ կերպ է. այսինքն՝ զեղջումն, յաւելադրութիւն, բաչառութիւն, արտաշաւղութիւն, փոխադրութիւն:

Զեղջումն կիմացուի ծածկելը, կըձգուելը. և կըլլայ երբոր շարադրութեան մէջ բառ մը կամ գիր մը ձգած է՝ անանկ որ զօրութիւնը կամ տակովը կըհասկցուի. ինչպէս երբոր նախդիր մը կամ նախադրութիւն մը ձգած է. (430. 431.) կամ բայը կամ տէր բային ձգած է. ( 394. 395. 396.) կամ յատկացեալը, ( 282 ) կամ գոյականը. (62.) կամ շաղկապը. (438) կամ բառին մէկ մասը: (436)

446. Յաւելադրութիւն, վերինին ներհակն է, երբոր զարդի համար աւելի նախդիր կամ նախադրութիւն կըդրուի. ( 281. 426 ) կամ աւելի տէր բայի ( 397 ) մակբայ, շաղկապ, ( 435. 439. ) եւն:

447. Բաչառութիւն, կիմացուի երբոր անուն մը կամ բայ մը անհամաձայն դրած կերեւայ հոլովին կամ թւին կողմանէ, բայց ծածուկ համաձայնութիւն կայ. ինչպէս երբոր տէր բային եզական է, և բայը յոգնական. ( 390. ) կամ բացայայտիչը և բացայայտեալը տարբեր հոլով. ( 273 ) կամ ածականը ուրիշ հոլով, և իր գոյականը ուրիշ:

448. Արտաշաւղութիւն, Ճամբէ դուրս ելլելը ըսել է. կիմացուի երբոր բառերուն բնական շարքը փոխուած է. այսինքն ածականը գոյականէն հեռու, կամ գոյականը երկու ածականի մէջ դրած. յատկացուցիչը յատկացեալէն առաջ կամ հեռու ձգած. նախադրութիւնը խնդիրէն ետքը՝ բարդ մակբայը ըս-

տած. կամ նախդիրը ուրիշ բառի վրա դրած :

449. Փոխադրութիւն, կիմացուի՝ երբոր մէկ հոլով մը կամ թիւ մը ուրիշ հոլովի կամ թուոյ տեղ կը դրուի. Զի յատկացուցիչը սեռական դնելուն՝ դրած է բացառական կամ գործիական. կամ ածականը մակբայի տեղ. կամ եզականը յոգնականի տեղ :

Ահա այս ձեւերը կիմացուին ինչ որ վերը խօսարան կըսէինք իւրաքանչիւր մասանց բաղդատութեան վրա. հոս մէկ քանին յիշեցինք տեղովը, ուսանողը նորէն թող բաղդատէ, և լաւ հասկընայ ձեւերուն ուժը և գործածութիւնը :

450. Այսուհետեւ դնենք մէկ երկու օրինակ զանազան շարադրութեան, որոնց վրա կերեւնան վերի ըսած ձեւերը. և շարադրութիւնը լուծանելու կամ պարզելու կերպն ալ ցուցանենք :

ՊԱՐԶ. * (1) Այն է իրաւացի՝ յորժամ ոք առնուցու ինչ արժանի ընդ այնց գործոց՝ զորս գործեաց : ‖

ՄԻՋԻՆ. * (2) Իրաւացի այն է՝ յորժամ առնուցու ինչ ոք արժանի ընդ այնց զոր գործեացն : ‖

ԽՐԹԻՆ. * (3) Բայց իրաւամբք այն է՝ յորժամ

(1) Այս շարադրութիւնը ունի իր բնական շարքը և սովորական կանոնը : Ասոր ցուցականը՝ տէր բային . քովը բայն՝ է . եւս ուղղական խնդիրը՝ Իրաւացի : յորժամ, ժամանակական մակբայը . ոք եզական տէր բային առնուցու . ինչ, աննախդիր հայցական սեռի խնդիր առնուցու ներգործականին . արժանի, ածական համաձայն ինչին . ընդ, նախադրութիւն . իր տրական խնդիրը գործոց . համաձայն ցուցականովը այնց : զորս, յարաբերական գործոցին՝ համաձայն թուով . իր հոլովը հայցական՝ սեռի խնդիր ներգործականին գործեաց :

(2) Հոս [illegible] մասու . երբոր խնդիրը Իրաւացի՝ առաջ անցաւ, ետքը տէրը և բայը . նմանապէս առնուցուին տէրը ոք՝ ետք անցաւ խնդիրէն ինչ, ու մէջը ընկաւ ածականին՝ արժանի : Զեղջում այլ մասու, այնցին գոյականը զանց առնելով . որ կիմացուի՝ ընդ այնց գործոց . Փոխադրութիւն թուոյ մասու, յարաբերականը եզական դնելով զոր, փոխանակ յոգնականի՝ զորս . և ասոր բայը գիծերուն յօդ ունեցաւ՝ գործեացն . որ աւելադրութիւն է, զարդի համար դրած՝ և ոչ հարկի :

(3) Տես թէ բնական շարքը և հասարակ կանոնը ինչպէս փոխուեցաւ . ասոր մաս աւելի արտաքսութիւն, զեղջումն, փոխադրութիւն, աւելադրութիւն և բակառութիւն : Ածական ուղղական Իրաւացի դնելուն տեղը՝ ըսաւ գոյական գործիական՝ Իրաւամբք : Որ պիտի ըսեր՝ ընդ այնց գործոց զորս . դրաւ՝ ըստ որոց . որ զեղջումն կայ . յարաբերականը պակաս է . և փոխադրութիւն . բակառու

արժանի ըստ որոց գործեայն ոք ինչ առնուցու ։ ‖ (Եզնիկ. 36. ձեռ. )

Նոյն օրինակ.

Գրաբար. * (1) Այն են ճշմարիտ փառք՝ զի ոք լինիցի պատճառ փառաւորութեան անուանն տ̃ր 'ի ձեռն գործոց բարեաց ։ ‖

Աշխարհ. * (2) Ճշմարիտ փառք այն են՝ որ 'ի ձեռն բարեաց գործոց՝ անուանն տ̃ր լինիցի ոք փառաւորութեան պատճառ ։ ‖ (Շնորհ. Ը̃հն. 44 ։ )

---

## Խրատ.

451. Այս օրինակներուն կերպէ պէտք է աշակերտը կրթութիւն ընէ, գրեանց խօսքերը քակելով, և իւրաքանչիւր մասը ընտրելով՝ որը որին կերթայ, ինչպէս կը համաձայնին ևն ։ Առաջ սկսանի պարզ շարադրած գրքի վրայ վարժիլ. ինչպէս է Նոր Աւետարանը, և շատ աղօթագիրք ։ Ետքը միջակ կամ զարդարուն շարադրածը. ինչպէս Գործք Առաքելոցը, Ս̃բյն Պօղոսի թղթերը, և այլնմանք ։ Երբոր աղէկ մը բացվի ընտրութիւնը, ան ատենը խրթին գրվածներուն խելք թող տայ ։

Բայց աւելի, հիմայ է ժամանակը գրաբար շարադրութիւն ընել. վարժապետը կարճ աշխարհաբար խօսքեր տայ աշակերտին, որ գրաբար դարձընէ.

թէ ալ կայ՝ որ հայցական խնդիր բային ըլլալու տեղը, տրական դրած է՝ յարաբերեալն հոլովը դնելով ։ (տես 361.)

(1) Շարքը սովորական կանոնաց կերպէ դրած է. Նոյն՝ տէր բային էն, որու ուղղական խնդիր՝ ածականը քովը ճշմարիտ փառք է. Թարմատար շաղկապ, եաեէն զի, տէր լինիցի՝ ստորադասական եղանակին. պատճառ, ուղղական խնդիր. անոր յատկացուցիչ՝ փառաւորութեան, ասոր ալ յատկացուցիչ՝ անուան. ասոր ալ յատկացուցիչ՝ տր ։ 'ի ձեռն, նիւ նախադրութեն, անոր յատկացուցիչ կամ խնդիր յաջնակի 'սեռականը՝ գործոց. ասոր ածական համաձայն հոլովով և թվով՝ բարեաց ։

(2) Տես ինչ ընտիր աւանդութիւն կայ, որ բային խնդիրը էն վերջը ընկաւ, ու բայը երկու յատկացուցիչի մէջ մտաւ. կայ նաև փոխադրութեն հոլովի՝ որը յարաբերական առնելով՝ գործիականի տեղ դրած. փոխանակ ըսելու. Այն են ճշմարիտ փառք՝ որով ոք 'ի ձեռն բարի գործոց լինիցի պատճառ են ։

յետոյ վարժապետը նայի շարադրածը, սխալը սրբագրէ. և որչափ որ առաջ կերթայ կըվարժի անսխալ շարադրելու, երկան խօսք կամ պատմութիւն շինել տայ աշակերտին, որ ասով թէ գրաբառին աւելի կըբացվի, և թէ բան ձևացընել կըվարժի. ու ետևէն ճամբայ կըբացվի ճարտասանութիւն մտնալու:

# ԳԼՈՒԽ ՈՒԹՆԵՐՈՐԴ.

## Վերծանութեան վրայ.

Քերականական կարգաւորեալ բանը՝ իրեն յարմար կարդալը և գրելը կուզէ. և այս ուսումը կըսվի վերծանութիւն. այսինքն. խօսքը աղէկ կարդալով, շիտակ արտաբերելով, կարգով գրելով, բանին միտքը վեր հանել ծանուցանել:

452. Վերծանութիւնը երկու գլխաւոր բան կիմացընէ. այսինքն. Առոգանութիւն, և Տրոհութիւն. ասոնց վրայ համառօտ տեղեկութիւն տանք: Առոգանութիւն, կընշանակէ՝ մէկ բան մը աղէկ ըսել. և կիմացվի յարմար արտաբերութիւն ձայնին, ժամանակին, բարակ կամ հաստ հնչելուն. և իրեն գլխաւոր նշաններն են շեշտ, բութ, պարոյկ, երկար, սուղ, թաւ, սոսկ, ենթամնայ:

453. Շեշտ, կամ շեշտանշան է այս գիծը (՛) և կըդրվի ձայնաւոր տառի վրայ ուր որ ձայնը սուր պիտի հանվի. ուստի բառին որ ձայնաւորն որ վեր զարնելու է, անոր վրայ կըդրվի. այսպէս. տե՛ս, հայեա՛ց, մ՛ հայեր. Ե՛ս եմ. ա՛նդ անկաւ. ա՛րքայ. հզօ՛ր արքայ. յաւէ՛տ յաւէտ, կա՛մ յա՛ւէտ յաւէտ, կամ յաւէ՛տ յաւէ՛տ. ասոր կեօրէ ուրիշ բառերն ալ կիմացվի:

454. Բութ կամ բթանշան է այս (՝) շեշտին ներհակ, կըդրվի ձայնաւոր տառին որուն ձայնը վար կիջնի, կըցածնայ. և այս կերևնայ երգերու վրայ. Իսկ հասարակ շարադրութեան մէջ կըդրվի ան բառին՝ ուր շունչը վար կիջնի, կամ քըվի բառէն զա-

տեղ պէտք կըլլայ. զոր. Ո՛րդ՝, այնչէ՝, նախ՝ ։ կամ, ո՛չ ես՝ այլ դու ։ Ձա՛ն մարդոյ հանգիստ. եւն ։

455. Պարոյկ կամ ոլորակ այս նշանն է (՞, ՞) որ երգոց մէջ կըդրուի ձայնաւորի վրայ, ուր որ եղանակը առաջ կըբարձրանայ ու ետքը վար կիջնի. իսկ շարադրութեան մէջ կըդրուի զարմացական բառի վրայ, կամ հարցականին, կամ կոչականին. զոր. Ո՞վ անմտութեան. Օ ի՞ հարկանես. Աւա՜ղ սաւուղ. եւն. Բայց երբեմն ասանկ տեղ շեշտն ալ ձեռք կուտայ.

456. Երկար. այս է (⌒). սուղ, (°) ասոնք ալ երգոց կամ բանաստեղծութեան մէջ կըդրուին, ուր տեղոր ձայնաւոր մը կամ վանկ մը երկան ձայն ունի, կամ կարճ։ Միայն սուղը կըդնեցընենք ոտանաւորի մէջ ուր որ վանկը գլորելով մը անցնիլ պէտք կըլլայ. զոր. Տէրն յետ °ստեղծման° արարածոց։ Երկար նշանն ալ կըդրուի միջարկութեան վրայ, կամ ուր որտի կիրք մը ցուցանել պէտք է. զոր. բա՜րէ. երուսաղէ՜մ երուսաղէ՜մ. եւն.

457. Թաւ կամ Բթանշան, որ է (^), և սուր, որ է (ˈ) ասոնք երկուքը հնարած է բաղաձայն տառից նշան. որ հաստ ձայն ունեցողին վրան կըդնէին թաւը. զոր. թ̂, հ̂, խ̂, ց̂. իսկ բարակին կըդնէին սուրը, զոր. տˈ, րˈ, կˈ. ծˈ. և պատճառն էր որ օտարները չխառնեն մէկ գիրը մէկալին հետ, որ չըլլայ թէ Թուր, Քոյր, Ցէր ըսելու տեղը, ըսեն կամ գրեն, Տուր, Կոյր, Ծէր, որով նշանակութիւնը կըփոխուի. Հիմայ այս սովորութիւնը դադրեցաւ. միայն ետքի ժամանակը ոմանք խոթեցին ուրիշ սովորութիւն մը, որ թաւ նշանը կըդնէին աւ, եւ, իւ, ու, ձայնաւորաց վրայ, որ վեւլի ձայն հանէ տեղի. այսպէս, հարա̂ւ. երե̂ւակ. թի̂ւ. թո̂ւական.

458. Ենթամնայ, որ է (‿) հին ժամանակը կըբանեցընէին բարդ կամ ածանցեալ բառից տակը, որ կապած մէկանց կարդացուի տեղի. զոր. Նորընծայ, օրէնսուսոյց. հրեշտակային. հայրէն. Նմանապէս ուր որ տողին վերջը կիսատ գիր մը կամ վանկ մը կըմնար, տակը կըդնէին՝ ետեւի վանկին հետ միացընելու համար.

459. Առջի սովորութիւնը հիմայ խափանեցաւ. բայց երկրորդը պիտանի ըլլալով հիմա ալ կըպահվի. ու տողադարձ կամ գծադարձ կըսուի, ուր որ ամբողջ բառը չիսըղմիր, պէտք կըլլայ մէկ երկու վանկ ետեւի տողը անցընել: Բաժնելու կանոնն այս է. ո՛ր բառին որ միայն ձայնաւոր մը վանկ կընէ, կըրնայ տողին վերջը գըրվիր այսպէս, ե-րազ. ե-ղոյց. ա-կն: Բայց ներհակն՝ միայն բաղաձայն մը հիչ չիգըրվիր տողին վերջը. այլ հետը ձայնաւոր ալ պէտք է. օր. չըլլար կ-ամառ. կ-առօք. այլ կա-մառ. կա-ռօք:

Բաղաձայնով և ոչ ձայնաւորով պէտք է սկսիլ ետեւի տողը. օր. ա-կա-նայ. բայց եթէ բաղաձայնը ըլլայ բնական առջի բառին. օր. չըլլար՝ ար-ար-եր. բայց կըլլայ ա-րա-րեր:

Այն վանկն որ երկու բաղաձայն ունի, մէկը տողադարձին կըդըրվի, մէկալը հետեւեալ տողին. օր. բար-կու-թեան: Բայց թէ որ շատ բաղաձայն ունենայ, մէկը միայն ետեւի տողը կանցնի, օր. ընդ-հա-նուր-շարժ, խորտ-կա-նալ: Այսքան բաւական է նոր ուսանողաց համար:

---

Տրոհութեան վրայ:

460. Երկրորդ պաշտօնը կամ գործքը վերծանութեն ըսինք տրոհութիւն. որ կընշանակէ զատել, երբոր մէկ ամբողջ խօսքի մասունքը՝ մտքին յարմար կըբաժնըվի կարդալու կամ գրելու ատենը, ուր որ պէտք է շունչը կախ թողուլ, կամ քիչ մը կենալ, կամ բոլոր դադրեցընել: Տրոհութեան նշանը կըսուի կէտ. և իրեք է, ստորակէտ, միջակէտ, վերջակէտ:

461. Ստորակէտ է այս սրածայր նշանը (,) որ կըդըրվի անկատար բանէն ետեւ, ուր բանին միտքը կըսկսի ու կախ կըթողու, ետեւի մասին հետ միաւորել կուզէ. օր. *Եւ իբրեւ այգ եղեւ, || կիմացընէ թէ երբոր առաւօտ եղաւ, կախ կըմնայ միտքը, ետեւէն ուրիշ բան կուզէ. ուստի ասանկ տեղ ստորակէտ կըդըրվի:

462. Միջակէտ է այս քառանկիւն նշանը (.) որ կըդըրվի ուր որ բանին միտքը կըլմննայ, կախ

չմնար · ինչպէս վերի բանը դնելով ըսենք · * Եւ իբրև այգ եղև, կոչեաց Յս զաշակերտսն իւր ։‖

463· Վերջակէտ է այս չուխտ կէտը (։) որ կըդրուի ուր բանը ամբողջ կըլմննայ, շունչը կըհանգչի · ու ետևէն նոր բան կըսկսի գլխագրով · ինչպէս · * Եւ իբրև այգ եղև, կոչեաց Յս զաշակերտսն իւր · և ընտրեաց 'ի նոցանէ երկոտասանս՝ զորս և առաքեալս անուանեաց ։ Զսիմոն զոր և պետրոս անուանեաց ․‖ ևն ։

Այս ըսածներըս կերևայ բոլոր քերականութեերըս մէջ, և այլ գրեանց մէջ · բաւական է որ ուսանողը բաց աչքով նայի, որ մանր դիտէ փընտռէ ։

464· Ստորակէտը բանեցընելու տեղը ասանկ գիտնալու է, որ շատ մակբայ, շաղկապ, նմանապէս ուր տեղ յարաբերական որ կըսկսի բանը, կամ դրադէմանցեալ ընդունելութիւնով, ասանկ տեղվանք միտքը կախ կըմնայ · ուստի ստորակէտ դնելու է · օր· * Յորժամ տկարանամ,‖ միտքը կախ մնաց, և լման կըլլայ դնելով * յայնժամ զօրանամ ։‖

Ասանկ իմանալու է · * Եթէ 'ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ կամ գործ, քակտեսցի ։ Որ ատէ զեղբայր իւր, մարդասպան է ։ Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն ․‖ ևն ։

465· Ուր տեղ որ զանազան բայեր կան իրենց խնդիրով, կամ շատ անվանք իրենց ածականով, յատկացուցիչով, ստորակէտ դնելը աղէկ է · նմանապէս զանազան անվանք որ իւրաքանչիւրը բայ կուզեն ։ օր· * Հարին զնա 'ի հարուածս մեծամեծս, և ջնջեցին զնա, և զմնացորդսն 'ի հարկի կացուցին՝ տալ նոցա հարկ ամ յամէ ․‖ (Ա· մակ· Ը· 4·) Ո՞վ մեկնեսցէ զմեզ 'ի սիրոյն քի, նեղութի, թէ անձկութի՞ւն, թէ հալածա՞նք ։‖ ևն (Հռովմ· Ը· 75·) Բայց ուր տեղ որ շատ անվանք և բայք առանց շաղկապի մէկ մէկու ետևէ դրած են, հարկաւոր չէ ստորակէտ ։

## Այլ նշանագիրք ։

Կան մէկ քանի նշանագիրներ կամ գծվածք, որ գրագիրները հնարքերեն դիւրութեան համար, և

այլ բանի նշան մը ըլլալու։ Ասոնք են ապաթարց, պատիւ, սիւն, երկորեակ, փակագիծ, պատուագիր։

466. Ապաթարց կըսուի ստորակէտի նման կէտը (') որ նախդիր ինին վրայ կդրուի 'ի, — 'ի, անոր համար որ իմացուի թէ ինին յատուկ բնական չէ բառին, այլ նախդիր է. ուստի ոմանք ուրիշ նախդիրներ ալ կդնեն, ի͞պ 'յ, 'ղ, 'զ։

467. Պատիւ, ըսուեցաւ այս (՟) որ թուր, թաղ ալ կըսուի. անոր համար որ սրբազան անուանց պատիւ ըլլայ տեղի, բոլոր անունը չէին գրեր, այլ միայն առջի և վերջի գիրը կդնէին, վրան գիծը ասանկ. ա͞ծ. ա͞յ. ք͞ս. յ͞ս. տ͞ր. ա͞ն։ Նաեւ սովորութիւն եղաւ շուտ ու կարճ գրելու համար՝ ուրիշ բառեր ալ անանկ գրել, միջի ձայնաւորը կամ բաղաձայնը ձգելով. և սովորականը ասոնք են, ա͞մ, ամենայն. ն͞ր, նորա. ն͞ք, նոքա. զ͞նս, զնոսա. ն͞ց, նոցա. վ͞ս, վասն. ո͞պ, որպէս. ի͞էլ, իսրայէլ. ե͞ղ͞մ, երուսաղէմ։

468. Սիւն կըսուի այբին մէկ ձուղը, որ է այս (ւ) և կդրուի բառին մէջ տեղը այբի նշան. ինչպէս, արրծ, արարած, մրդսէր, մարդասէր։

469. Երկորեակ է այս չուխտ գիծը (") որ կդրուի բառին վրան ուր տեղ որ ձայնաւոր գիր մը ձգած կըլլայ ասանկ. բ"ր"կամ, բարեկամ. ք"ղ"ք, քաղաք։ Արձան բառին վերջն ալ կդրուի. կան". կանոն. գալստ". գալստեան. յոհ". յոհաննէս։

470. Փակագիծ է այս կիսաբոլոր երկու գիծը ( ) որ շատ տեղ ալ բանեցուցինք, ու ենթափակայ ալ կըսուի. շինած է իբրև նշան մը միջանկեալ բառի կամ բանի, որ զատուի մէկալ խօսքէն. ինչպէս մենք ալ կդնենք ուր տեղ որ գրքին կամ հեղինակին անունը կամ տեղը կըյիշենք։

471. Պատուագիր կըսենք այն նշանագիրները որ ամբողջ բառ մը կըցուցանեն, ու կըձեւանան կամ մէկ երկու տառով նոյն բառին, և կամ անշան գծով մը. ինչպէս, ա͞յ. որ ըսել է՝ այս կամ այսինքն. և͞ա, և այլն. ղ͞բ, ղորբերնակ. ը͞գ, ընդ. ը͞ս, ըստ. ը͞մ, ըստ այնմ. կ͞, կամ. ք͞, քան։ Անշան գծով. ա͞շ. աշխարհ. ո͞պ. որպէս. ա͞մ. ամենայն։

# ՅԱՆԿ

## Գլխաւոր գլխոցն նշանակեալ թղթահամարովն ։


Ա, կէտ ա, բացասական մաս-նիկ · 50 ։
Ածական անուն · 43 ։ Բաժա-նումն նր · 45 ։
Ածականք առանց գոյականի · 44 ։
Ածանցական անուն · 55 ։
Ածանցական գերան'' · 39 · 69 ։
Ածանցական բայ · 113 ։
Ածանցականակերտ մասնիկք · 56 ։
Աներեւոյթ բայ · 72 · 108 · 204 ։
Անկանոն բայ · 72 ։
Անուն զինչ է եւ քանի · 4 ։ բաժանումն նր · 43 ։
Անուն բայի · տես տր բայի ։
Անցեալ ժամանակ · 71 ։
Անցողական բայ · 78 ։
Ապառնի ժամանակ · 71 ։
Ար, բաղադրական մասնիկ · 51 ։ Նախդիր · 114 ։ Նախադրու-թեն հոլովառու · 118 ։
Առոգանութիւն · 224 ։
Առաքական բայ · 70 ։
Արտուղի բայ · 72 · 89 ։
Արտուղութիւն, ձեւ քերականա-կան · 221 ։
Աւելադրութիւն, ձեւ քերակ · 221 ։
Բ · իբր բացասական մասնիկ · 50 ։
Բակառութիւն, ձեւ քերակ · 221 ։
Բաղադրեալ անուն · 50 ։
Բաղադրեալ բայ · 112 ։
Բաղդատութիւն · 3 · 134 ։
Բաղդատութիւն անուան Ը այլ մասանց · 136 ։
Բաղդատութիւն բայի · 189 ։
Բաղդատութիւն դերանուան · 169 ։ էականք · 170 ։ ցուցականք · 172 ։ ստացականք · 176 ։ յա-րաբերական · 179 ։
Բաղդատութիւն մակբայի · 214 ։
Բաղդատութիւն նախադրութեան · 210 ։
Բաղդատութիւն շաղկապի · 217 ։
Բաղդատական ածականք · 45 ։
Բայ · 70 ։ բաժանումն նր · 70 · 71 ։
Բան · 2 ։
Բառ · 2 ։
Բարդ անուն · 50 ։
Բարդ բայ · 112 ։
Բացայայտիչ եւ բացայայտեալ · 135 · 136 ։ որպէս հնչյնի · 137 ։
Բացառական հոլով · 64 ։
Բութ · 224 ։
Գերադրական ածականք · 45 ։
Գերակատար ժամանակ · 81 ։
Գիր · 1 · բաժանմունքն · 3 ։
Գլխաւոր մասունք քերականու-թեան · 1 ։
Գոյական անուն · 44 ։ բաժա-նումն նր · 46 ։
Գործիական հոլով · 65 ։
Գրագարձ · 226 ։
Դերանուն · 34 ։
Դերբայ · 109 ։
Դէմք բայից · 72 ։
Դէմք դերանուանց · 34 ։
Դիմաղուրկ բայ · 72 · 104 ։
Դիմորոշ յօդք · 34 ։ ՚ի վր ան-ուան · 186 ։ ՚ի վր դերանուանց · 186 ։ ՚ի վր բայից · 187 ։ ՚ի վր մակբայի · 188 ։
Դրական ածականք · 45 ։
Եղանակ բայից · 72 ։
Ենթամնայ · 225 ։
Երկար · 225 ։
Երկօրեակ · 228 ։
Զ, նախդիր · 6 · 64 · բաղադրա-կան մասնիկ · 50 ։
Զեղջումն, ձեւ քերակ · 221 ։
Է, միջարկութիւն · 132 ։
Էական բայ · 75 · կիրառութեն նր · 207 ։
Էական դերանուանք · 35 ։
Ըն կէտ ըն, մասնիկ, նախդիր · 50 · 114 ։
Ընդ, նախդիր · 114 ։ Նախադր · հոլովառու · 119 ։

Ընդունելութիւն · 109 ·
Ընդունելու՛ · Էալ · 110 ։
Ընդունել՛ · Լի · 111 ։
Ընդունել՛ · Լոց · 111 ։
Ընդունել՛ · ող · 110 ։
Ըստ, նախադրութիւն · 119 ։
Թաւ գիր · թաւ կամ թաւանշան · 225 ։
Թիւք անուանց · 5 ։ զինչ է և քանի · 60 ։
Թիւք բայից · 72 ։
Թուական անուանք · 25 ։
Ժամանակ կամ ամանակ բայից · 71 ։
Ի, նախդիր · 114 ։
Լծորդութիւնք բայից · 72 ։
Լուծմունք չարագրութեց · 222 ։
Խնդիր և խնդրառու · 135 ։
Խնդիր ածական անուանց · 148 ։
Խնդիր ածականաց յանգելոց 'ի ել · 148 ։
Խնդիր գրական և բաղդատական անուանց · 150 ։
Խնդիր բայի · 198 · 202 ։
Խնդիր բնութե ներգործական բայից · 203 ։
Խնդիր գոյական անուանց · 144 ։
Խնդիր եական բայից · 207 ։
Խնդիր թուական անուանց · 151 ։
Խնդիր հարցական անուանց · 151 ։
Խնդիր մասնական անուանց · 150 ։
Խնդիր չէզոքական բայից · 204 ։
Խնդիր սեռի կրաւորին բայից · 198 · 201 ։
Խնդիր սեռի ներգործական և հասարակ բայից · 198 · 199 ։
Խոնարհմունք բայից · 72 ։
Կանոնաւոր բայ · 72 ։
Կէտ, կիսի, 226 ։
Կոչական հոլով · 7 ։
Կրաւորական բայ · 71 ։
Կրաւորակերպ բայ · 71 · 106 ։
Կրկնածանց անուն · 59 ։
Համաձայնութիւն · 3 ։
Համաձայնութիւն ածական անուանց ընդ գոյականաց · 151 ։
Համաձայնութիւն թուական անուանց · 159 ։ հանրական անուանց · 162 ։ վերբերական անուանց · 164 ։ հարցական անուանց · 165 ։ մասնական անուանց · 166 ։
Հայցական հոլով · 63 ։
Հանրական անուանք · 31 ։
Հասարակ անուն · 47 ։
Հասարակ բայ · 71 ։
Հարցական անուանք · 32 ։
Հաւաքական անուն · 47 ։
Հոլովմունք անուանց · 5 · 66 ։
Հոլովք անուանց · 5 · 62 ։
Հոլովք և հոլովմունք դերանուանց · 35 · 69 ։
Հրամայական եղանակ · 72 · 107 ։
Ձևք անուանց · 49 ։
Ձևք բայից · 112 ։
Ձևք դերանուանց · 68 ։
Մակակէտ · 228 ։
Մակբայ · 120 · բաժանմունք մակբայից · 120 ։
Մասնական անուանք · 29 ։
Մասն բանի · 2 · 134 ։
Միջակ չարագրութիւն · 220 ։
Միջական անուանք · 24 ։
Միջակէտ · 226 ։
Միջարկութիւն · 131 ։
Յ, նախդիր, առաջի ձայնաւորի · 6 · 63 · 65 ։
Յարակացուցիչ և յարակացեալ · 135 · 140 · իւ զանազանի 'ի բացայայտչէն · 144 ։
Յատուկ անուն · 46 ։
Յարաբարդ անուն · 50 ։
Յարաբերական դերանուն · 40 ։ գործածութիւն նր · 179 ։
Յարակատար ժամանակ · 81 ։
Նախադրութիւն · 113 ։ հոլովակերտ · 114 ։ հոլովառու · 114 ։ յատուկ պարզ · 115 ։ բաղադրեալ · 117 ։
Նախատիպ անուն · 55 ։
Նախատիպ բայ · 113 ։
Նախատիպ դերանուն · 69 ։
Նախդրիւ տրական · 6 · 63 ։
Ներգոյական հոլով · 7 · 63 ։
Ներգործական բայ · 71 ։
Ներկայ ժամանակ · 71 ։
Նշանագիր · 227 ։
Շաղկապ · 127 ։
Շարագրութիւն · 219 ։
Շեշտ · 224 ։
Ողորակ · 225 ։
Ուղղական հոլով · 5 · 62 ։
Չ, բացասական մասնիկ · 50 ։
Չեզոք կամ չէզոքական բայ · 71 ։
Պակասաւոր բայք · 72 · 91 · 98 ։

Պատիւ · 228 :
Պատմական հոլով · 7 · 65 :
Պատուագիր · 228 :
Պարագայք անուանց · 4 · 48 :
Պարագայք բայից · 71 · 112 :
Պարագայք գերանուանց · 68 :
Պարագայք ընդունելութեանց · 110 :
Պարառական հոլով · 7 · 65 :
Պարզ անուն · 50 :
Պարզ բայ · 112 :
Պարզ շարադրութիւն · 220 :
Պարոյկ · 225 :
Սահմանական եղանակ · 72 ·
Սեռական հոլով · 62 :
Սեռք անուանց · 48 :
Սեռք բայից · 71 :
Սիւն, նշան · 228 :
Սուղ նշան · 225 :
Ստացական գերանուն · 38 · 69 :
Ստորադասական եղանակ · 72 ·
Ստորակէտ · 226 :
Վանկ · 2 :
Վերբերական անուանք · 33 :
Վերծանութիւն · 224 :
Վերջակէտ · 227 :
Տ, բացառական մասնիկ · 50 :
Տառ · 1 :
Տեսակք անուանց · 55 :
Տեսակք բայից · 112 ·
Տեսակք գերանուանց · 69 :
Տէր կամ անուն բայի · 135 · 189 :
Տողադարձ · 226 :
Տրական հոլով · 5 · 63 :
Տրոհութիւն · 226 :
Ց, նախադիր տրականի · 6 · 63 :
Ցուցական գերանուն · 36 :
Փակագիծ · 228 :
Փոխադրութիւն, ձև քերակ · 222 :
Քերականութեան անունն, պատճառն, մասունքն · 1 :

4-62

2004